

652

8(082)

U-79

063 - 107<sup>7</sup> - 78

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՍԵԱՆԻ № 60

8-2(082)  
4-79

ԳՐԻԳՈՐ ԱՐԵՏԵԱՆ

# Թ Ա Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն

## Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն

### I հատր

1. Սիբսր հանկուկ է
2. Վեռօյի գաղսնիք
3. Ընչպէս բողիւն նրանի ծխելը
4. Առաջարկութիւն
5. Էս էլ քեզ 200000
6. Կանցի ցանցաւորիւն



800  
287-ԱԻ

Տ Փ Խ Ի Ս

Էլիբար. սպ. Օր. Ն. Աղանւանի. Պոլից., 7.

1911

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՊԻԷՍՆԵՐ

Արէլեան Ա. Էքսպրոպրիացիա. կատակ. մի գործ. երեք պատկերով . . . . .	20
» Գիւլի վարժապետ. պիէս երկու գործ. . . . .	30
» Անկոչ հիւր, պէս մի գործ . . . . .	25
» Խելագար Մինաս, պիէս մի գործ . . . . .	20
» Մկիճի հարսանիքը, պիէս մի գործ . . . . .	20
» Պօէտի երազը, պիէս մի գործ. . . . .	20
Արաքսեան Պ. Ժողովրդական թատրոն ժող. Ա. 1 »	
Եւս Նոյնի ժողովածու Բ. հատոր . . . . .	1 »
Իիերնսօն, Նորասպակներ, կատակ. երկու գործ. թարգմ. Յովհ. Տէր-Մարտիրոսեանց . . . . .	60
Բօզրի Սգիւստ Վաքըրի, կոմեդիա. դրամա չորս գործողութեամբ . . . . .	50
Գօլուբին, Փակուած դրան մօտ, պատ. մե- նախօտութիւն, թարգմ. Վ. Տէր-Գրիգորեանց Գրիգորեան Ռ. Մուխոմ-ամի, դրամ երեք արարուածով (պատահել է Ն. քաղաքում) . . . . .	25
Իը-Կիւրեկ Ֆ. Նոր կուռք, թատերգ երեք արարուածով, թարգմ. Տ. Վ. . . . .	30
Երիցեան Ա. Սխալ հաշիւ, կոմիդ. 4 գործ. . . . .	50
Դադեան Բարի է Սուրիկը. մանկական պիէս 2 գործ . . . . .	15
Եսայեան Յ. Սօնայի նշանագրէքը կամ Մօցի- բուլի վրէժը. վողելի մէկ գործողութեամբ . . . . .	15
Եակովլե, Կանացի հետաքրքրութիւն կամ Ա- դամ ու Եւա, կատակ. 2 գործ., թարգմ. Վրոյր Էմմասէոս Էմանուէլ, ռդրերգ 5 արար . . . . .	80
Թառայեան Ս. Թագնուած կայծեր, դրամա հինգ գործողութեամբ . . . . .	1 25
Իբսէն, Հասարակութեան նեցուկները, դրա- մա չորս գործ. թարգ. Լ. Բաբայեան . . . . .	50
Լուազօն Արիւնի Աւետարանը, դրամատ. մի անցք, 1 գործող. թարգմ. Տ. Չաւէնի . . . . .	25
Լիսինկօ-Կօնիչ Ի Կ. «Ընդունելութեան օրը» վող. մէկ. գործ. թարգմ. Գ. Մելիքեան Լէնինի. Նիօրէ կամ Մարմարեայ վար- ժուհին, Փարս երեք արարուածով . . . . .	20
Հաուպաման, Չուլհակներ, դրամա 4 գործ. թարգմ. Տիկ. Ս. Արտեմեան . . . . .	40
Ղաղարեան Յակ. Եադ՛Աստ, վողելի մէկ արարուածով և երկու պատկերով . . . . .	25
Մանուէլեան Մ. Դրամատիկական էտիւդ- ներ, գիրք առաջին (6 պիես) . . . . .	35
» Դօկտ. Երևանգ Բօշայեան, կոմ. չորս գործ. . . . .	50
» Վերածննդի արարուած. արամա երեք արարուած. . . . .	35

800  
287-ԱԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Գ. ԳԱԼՍԵԱՆԻ № 60  
24 MAY 2005  
2 OCT 2009

ԳՐԻԳՈՐ ԱՐԵՏԵԱՆ

193

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ

8 (082)  
Ս-79

ԳՐԱԴԱՐԱՆ

Այս



I հատոր

1. Սիրեր հանելուկ է
2. Վէրօչի գաղտնիք
3. Ինչպէս բողիք նրանք ձխելը
4. Առաջարկութիւն
5. Էս էլ ինք 200000
6. Կանացի ցանցառութիւն



Թ Ի Յ Լ Ի Ս

Էլիբեթ. սպ. Օր. Ն. Աղաճեանի. Պօլից., 7.  
1911


1001  
0854

111111 111111

800  
111-111

111111111111

1111111111



1111111111  
1111111111  
1111111111  
1111111111

# ՄԻՐՏԸ ՀԱՆԵԼՈՒԿ Է

Կոմեդ. 3 արար. Լեօ Իվանովի

Թարգ. Գ. Ս. Ա. Ի. Ե. Տ. Ե. Ն.

Настоящая пьеса подъ названіемъ „Сердце-Загадка“ разрѣшена Намѣстникомъ Е. И. В. на Кавказѣ для представленія на сценахъ края.

Октября 26 дня, 1905 г. гор. Тифлисъ

Предсѣдатель Комитета Гакель


Секретарь Н. Меликъ Нубаровъ

Ա Ն Ձ Ի Ն Ք

ԻՎԱՆ ՍԵՐԳԵՆԻԻՉ ՉՈՒԳՐԵՆԵՈՎ  
 ՄԱՐԻԱ ԴՄԻՏՐԻԵԻՆԱ, նրա կինը  
 ՕԼԳԱ ԻՎԱՆՈՎՆԱ, (Լեօրեա) նրանց աղջիկը, 19  
 տարեկան  
 ԼԻԻԴՄԻԼԱ ԱՆԴՐԵՅԻՆԱ (Միլօչկա) ՎԱՍԻԼԿՈՎԱ,  
 20 տարեկան  
 ԳԵՆՆԱԴԻՅ ԿԱՐՊՈՎԻՉ ԲԵՐԵՃԿՈՎ, Չուգրե-  
 նեովների հարևանը  
 ԻՊՊՕԼԻՏ ՎԻՏԱԼԻԵԻԻՉ ՊԱԼԻՑԿԻ, փաստաբան  
 ԴԱՇԱ, աղախին  
 ՇԱՊՏՕԼԵՆԿՕ, այգեպան, պաշտօնաթող զինուոր-  
 ներից:

Գործողութիւնը կատարուում է Մօսկւային մօտ  
 ամառանոցներից մէկում:


I և II արարածները կատարուում են մի օրում,  
 իսկ III-ը երկու շաբաթ յետոյ:



I, II և III արարածների բեմը. այգի է:

Ա, ջ և ձախ հասարակութիւնից:

1 նստարան, 2 մուտքի դուռը, 3 կլոր սե-  
 դան, 4 սեղան սփռոցով, 5 աթոռներ, 6 ցան-  
 կապատ:



## Ա. Ա. Ր. Ա. Ր. Ի. Ա. Ծ

### ՏԵՍԻԼ 1.

ԴԱՇԱ, յետոյ ԲԵՐԵԺԿՈՎ

ԴԱՇԱ.—(նստարանները մաքրելով) Օհ...  
ամա քնում են հնմեր օրիորդները... ժամը 1-ն  
է, իսկ նրանք դեռ խորմփացնում են:

ԲԵՐԵԺԿՈՎ.—(աջից) Մ... Դաշինկա:

ԴԱՇԱ.—Օ՛խ, ինչպէս ինձ վախեցրիք, Գեն-  
նադիյ կարպովիչ:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Մի չարանաք, իսէր Աստծոյ,  
ես անգիտակցաբար: Ձերոնք ամեն են:

ԴԱՇԱ.—Պարոնը միայն տանը չէ, կայա-  
րան է գնացել, իսկ մեզ մօտ նոր հիւր է եկել,  
պարոնի ազգականն է, մի ուրախ օրիորդ, չա-  
րածճի... չէինք էլ սպասում, յանկարծ լոյս ըն-  
կաւ:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Իրաւ:

ԴԱՇԱ.—Ի՞նչ է, չէք հաւատում, սուտ խօ-  
չեմ խօսում:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Այսինքն ես այդ չէի ուզում  
ասել:

ԴԱՇԱ.—Եւ միշտ դուք այն չէք ասում, ին-  
չի մասին որ մտածում էք. գոնէ ամուսնանա-

յիք, գուցէ ձեր կինը ձեզ խելքի բերէր:

**ԲԵՐԵԺԿՈՎ.**—Պսակելուն հակառակ չեմ, բայց սարսափելի է:

**ԴԱՇԱ.**—Ամենքն էլ պսակուում են, դուք առաջինը չէք. կինը գայլ չէ, ձեզ չի ուտի, Խնչից էք վախենում:

**ԲԵՐԵԺԿՈՎ.**—Ապա Խնչպէս... չէ՞ որ այդ փլաւ ուտել չէ, չի կարելի յանկարծ... Ուզում ես, չես ուզում՝ առաջարկութիւն արաս:

**ԴԱՇԱ.**—Յայտնի բան է, առաջ տղան պիտի առաջարկութիւն անի:

**ԲԵՐԵԺԿՈՎ.**—Ես էլ հէնց այդ եմ ասում է... Թէկուզ հէնց այս ըոպէին, ուրախութեամբ կը պսակւեմ, թէկուզ հարիւր անգամ, միայն թէ առանց առաջարկութիւնների գլուխ գայ այդ ամենը: Բայց հէնց որ միտքս է ընկնում, թէ պէտք է օրիորդի հետ խօսեմ, նրան սէր յայտնեմ, յետոյ առաջարկութիւն անեմ, յետոյ հարսնատեսութեան պիտի լինի, նշանտուք... մարմնովս սառսուռ է անցնում: Կառքի անիւնների տակ ընկնելը աւելի հեշտ է: Ամեն տեղ էլ խօսել է հարկաւոր, բայց իմ բառարանը շատ աղքատ է: Ա՛յ, Օլգա Իվանովնան էլ է բարկանում, ինչոր խօսում, ասում եմ, բոլորը նա անտեղի է համարում:

**ԴԱՇԱ.**—Լաւ, եթէ վախենում էք, էլ ինչո՞ւ էք ամբողջ ամառը խեղճ օրիորդին յուզում ի

դուր տեղը, այդպիսով միայն փեսացուներին էք փախցնում:

**ԲԵՐԵԺԿՈՎ.**—Ի՞նչ էք ասում, Դաշինկա, ես գիշեր-ցերեկ միայն նրա մասին եմ մտածում: Մեր տանը Սօդօմ-Գոմոր է, մայրիկս հառաչում է, հայրիկս բարկանում. «յիմար, վաղուց դու պէտք է պսակւած լինէիր, ասում է, իսկ դու շարունակ միայն գիտար ես ածում»:

**ԴԱՇԱ.**—Դուք էլ ինչո՞ւ էք լռում. խնդրեցէք օրիորդի ձեռքը և պրծաւ-գնաց:

**ԲԵՐԵԺԿՈՎ.**—Լաւ էք ասում, յանկարծ եթէ մերժեմ, որովհետեւ ես ինքս էլ եմ հասկանում, որ այդպիսինը ինձ համար չէ նշանակւած: Եթէ շէժքը ցոյց տան՝ այնժամանակ: Ես կը մեռնեմ ամօթից:

**ԴԱՇԱ.**—Ոչինչ, չէք մեռնի: Մէկ էլ որ չեն մերժի: Ձեզ ընդունում են լաւ, նամանաւանդ հիմայ, հիւր է եկել, ուրախ են տրամադրւած:

**ԲԵՐԵԺԿՈՎ.**—Լաւ ես խօսում, Խնչ ասեմ:

**ԴԱՇԱ.**—Կը տնաւորէք, գտակներդ ծուռ կը զնէք, կինդ կռանդ տակ... էլ Խնչ լաւ բան կարող է լինել: Եթէ վախենում էք Օլգա Իվանովնայից, խօսեցէք հօր հետ, նա օրիորդին կը համոզի:

**ԲԵՐԵԺԿՈՎ.**—Ձը փորձեմ արդեօք... Ձէ, գընամ նախ մօրս հետ խորհրդակցելու, նա այդ բանը լաւ գիտէ, Ձ4 տարւայ ամուսնացած կին է:

Բայց տես, Դաշա, եթէ գործս գլուխ եկաւ, հարիւր արշին շորացու եմ նւիրելու քեզ, հագիր, քէֆ արա: Ես այս ըոպէին... (վազում է աջ):

ԴԱՇԱ.—(միայնակ)—Լաւ տղայ է, խօսք չը կայ, բայց ինքզնիս գնաս այդպիսի թրջւած հաւին: Ասած է՝ մարդը տան գլուխն է, բայց սա ինչ գլուխ է: Ամբողջ մի տարի է օրիորդի յետևից է ընկել, բայց վախենում է նրա առաջ սիրտը բացել:

## ՏԵՍԻԼ 2.

ԴԱՇԱ, ՉՈՒԳՐԵՆԵՆՈՎ, ԵՍՈՅ ՄԱՐԻԱ, ԴՄԻՏՐԻԵՆԻԱ

ՉՈՒԳՐ.—(քեմի ետեւ)—Այդ հար, Գեհնադիյ Կարպովիչ... ինչ... Տես, տես, ինչպէս է վագում... (Դաշային) նախաճաշը պատրաստ է:

ԴԱՇԱ.—Պատրաստ լինելը—պատրաստ է, միայն թէ օրիորդները դեռ քնած են:

ՉՈՒԳՐ.—Արթնացրու նրանց, մինչև երեկոյ հօ չէն քնելու:

ԴԱՇԱ.—Լաւ (զնում է):

ՉՈՒԳՐ.—(միայնակ) Ա՛յ թէ շոգ է հա...  
ՄԱՐ. ԴՄ.—(տնից) Ա՛, Իվան Սերգէևիչ,

վերադարձա՞ր արդէն:

ՉՈՒԳՐ.—Վերադարձայ, կնիկ, վերադարձայ և քաղցած եմ 40000 գայլի նման: Չարմանալի կարգ ու կանոն է տիրում մեր պօստատանը. մի

շաբաթ է նամակս ընկած է և մինչև այժմ չեն ուղարկել ըստ հասցէին: Բերեժկովին տեսա՞ր:

ՄԱՐ. ԴՄ.—Ո՛չ, նա միթէ այստեղ էր:

ՉՈՒԳՐ.—Այս ըոպէին փողոցի դռանը հանդիպեցի: Շատ լաւ երիտասարդ է, մեր մայրաքաղաքի երիտասարդների նման չէ բոլորովին. սիրալիր, համեստ, չէ խմում, չէ ծխում, կարծես օրիորդ լինի: Թուղթ չէ խաղում, պարտք չի վերցնում, աւելորդ բաներ չի խօսում:

ՄԱՐ. ԴՄ.—Նա, ասենք, առանց այն էլ քիչ է խօսում:

ՉՈՒԳՐ.—Եւ շատ լաւ էլ անում է, այդ բանի համար նրան միայն յարգել կարելի է և այնպիսի էլ խոնարհ որդի է:

ՄԱՐ. ԴՄ.—Ինչ ասեմ, Գեհնադիյ Կարպովիչը շատ պատուական տղայ է:

ՉՈՒԳՐ.—Տաղանդաւոր տղայ է, նրանից լաւ փեսացու դժւար է գտնել:

ՄԱՐ. ԴՄ.—Աւելի լաւ: Բայց դու այնուամենայնիւ չասացիր ինձ, ումից է նամակը:

ՉՈՒԳՐ.—Ճիշտ, ես էլ մոռացայ: (Քացելով) «Րաստովցև»: Պաւել Միխայլովիչն է գրում, նայիր ինչպէս է գրել, կարծես կատու է շանգըտեւ թուղթը: Տեսնենք ինչ է գրում: (Վարդում է) «Թանկագին բարեկամ, Իվան Սերգէևիչ, այս քանի օրը Ուրալից վերադարձաւ որդիս: Յիշում ես, քեզ հետ միասին մտածում էինք բարեկա-

մանալ, այժմ ամենայամար ժամանակն է իրագործելու մեր մտադրութիւնը: Գու ապրանք ունիս, ես՝ վաճառական: Գուցէ երիտասարդները իրանց մանկութիւնը յիշելով՝ հաւանեն մէկ մէկու: Միւս շաբաթ ես Վասեանի կողարկեմ քեզ մօտ, իբր գործի համար, դու նրան ոչինչ մի աւսի, գուցէ ճակատագիրն ինքն որոշի: Յոյս ունիմ, դրա համար անբաւական չես լինի ինձանից: Քո Պաւել Բաստովցեալ»:

ՄԱՐ. ԴՄ.—Պաւել Միխայլովիչը տարօրինակ ֆանտազիաներ ունի:

ՉՈՒԳՐ.—Գիտե՞ս, ինձ դուր են գալիս այդ ֆանտազիաները. Բաստովցեաները շատ հարուստ են, ինչ կալւածք ունին, Պետերբուրգում մի հրաշալի տուն, իսկ փողը 200000-ից էլ անց է և բացի այդ, Վասեան էլ նրանց միակ որդին է:

ՄԱՐ. ԴՄ.—Ի՞նչ անենք որ, այժմ արդէն ուշ է:

ՉՈՒԳՐ.—Չես կարող չը հակաճառել, ամենևին էլ ուշ չէ:

ՄԱՐ. ԴՄ.—Ես գիտեմ, քեզ համոզելը դժուար է. միայն նայիր, որ վերջը վատ չը լինի:

ՉՈՒԳՐ.—Այդ արդէն իմ գործն է: «Հարկաւոր է միշտ լսել կնոջը, բայց երբէք նրա խորհրդներին չը յետևել», ասում են չինացիները և ես լիովին համաձայն եմ նրանց հետ:

ԴԱՇԱ.—(մտնելով)—Օրիորդները խնդրում

են իրանց չը սպասել, նրանք չեն նախաճաշելու:

ՉՈՒԳՐ.—Աւելի լաւ, մեզ շատ կը մնայ, մեր պարտքն էր միայն նրանց իմաց տալ: Հրամայիր Շապտուկենկօին գնալ Չերմանոցը, ես իսկոյն կը նախաճաշեմ և կը գամ այնտեղ:

ԴԱՇԱ.—Իսկոյն: (Գնում է):

ՄԱՐ. ԴՄ.—Դէ, չինացի, գնանք նախաճաշելու:

ՉՈՒԳՐ.—Այնուամենայնիւ Լեօլեան Բոստովցեան կը գնայ: (Գնում են ստուն):

### ՏԵՍԻԼ 3.

ՄԻԼՕԶԿԱ և ԼԵՕԼԵԱ (մտնում են տնից)

ՄԻԼ.—Աննաման է, հրաշալի է, ձեզ մօտ այստեղ այնքան տխուր է, որ եթէ ես քո տեղը լինէի, վաղուց արդէն փախած կը լինէի:

ԼԵ.—Լաւ, ի՞նչ անեմ:

ՄԻԼ.—Ի՞նչպէս թէ ինչ, ապրել մարդու նման: Ասենք, ես զարմանալի եմ, կարծես թէ չը գիտեմ ում հետ եմ խօսում. դուք մարդիք ի՞նչ չէք, ձկներ էք: Միայն ձուկն է կարող ապրել լճում, կանգնած ջրում, նրանք այնտեղ իրանց շատ բաղաւոր են զգում: Ասենք, մի փոքրիկ զանազանութիւն կայ, նրանց եթէ տապալկեն իւրի մէջ, շատ համեղ կը լինեն, իսկ ձեզ

եթէ շաքարով էլ տապակեն, միևնոյն է բան չի դուրս գալ:

ԼԵ.—Ես ինքս էլ եմ ուզում զւարճանալ, պարել, բայց ո՞ր տեղ, ո՞ւմ հետ, կարծես անպատում ենք ապրում:

ՄԻԼ.—Օրինակ մի յետ ընկած հարեան-բան չը կա՞յ ձեզ մօտ, թէ տղամարդկանց համար մուտքը ձեր տուն խստիւ արգելւած է:

ԼԵ.—Մեզանից ոչ հեռու ապրում են Բե-րեժկոֆները:

ՄԻԼ.—Լինում ես նրանց մօտ:

ԼԵ.—Շատ քիչ, հետաքրքիր մարդիկ չեն: Բացի այդ հայրիկը չէ սիրում հիւր գնալ և հիւր ընդունել:

ՄԻԼ.—Ապա ինչո՞վ է նա զբաղւում:

ԼԵ.—Ծաղիկներով, հաւերով:

ՄԻԼ.—Չէ, դուք բոլորովին վանականներ էք դառել: Եւ դու ու մայրիկդ սառնասիրտ տանում էք այդ ամենը, հաշուել էք ամեն բանի հետ:

ԼԵ.—Հաշուելը՝ չենք հաշուել, բայց ի՞նչ անենք:

ՄԻԼ.—Դարձեալ այդ յիմար պատասխանը. ի՞նչ անենք: Հասկացնել քեռուն, որ անկարելի է այսպէս ապրել:

ԼԵ.—Նա իսկոյն կը համաձայնուի, բայց տասն ըոպէից կը սկսի քեզ էլ համոզել հակառակը:

ՄԻԼ.—Ասենք քո ծնողները պառաւներ են, իսկ դու ինքդ, դ՞ու ի՞նչ էիր շինում այստեղ:

ԼԵ.—Միլօշկա, անկեղծ, ես մեղաւոր չեմ:

ՄԻԼ.—Մի՞թէ ամբողջ ամառը չես կարողացել մի բօման ստեղծել: Կարելի է դու թըթ-ւեղէնի և մուրաբաների մասին էիր մտածում: Մտածիր, դու միայն 19 տարեկան ես, ո՞ւր է քո երիտասարդութիւնը: Մի՞թէ՞ դու երբէք չես հրճւել լուսնի լուսով, սոխակի դայլայլիկով... Մի՞թէ՞ ոչ ոքի պատկերը քեզ չէ հետամուտ եղել ամարային երեկոյի տաք լութեան մէջ:

ԼԵ.—Այդ ինձ համար շատ պօօտիքական է: Ճիշտ է, ինձ հաւանում է մի երիտասարդ պարոն, այդ Բերեժկոֆների որդին և հետամուտ է լինում, բայց...

ՄԻԼ.—Օ՛հ, վերջապէս... ներում եմ մեղքերիդ կէսը, որ այդպէս է: Ի՞նչպէս պատահեց այդ, պատմիր հոգիս, չափազանց սիրում եմ: Նա ի հարկէ քեզ բացեց իրա սիրտը երեկոյեան, սկզբում դողալով... դու ի հարկէ այնպէս ցոյց տւիր, իբր զլուխդ է ցաւում, աչքերդ խոնարհեցիր... ի հարկէ այդպէս... չէ...

ԼԵ.—Ոչ մի այդպիսի բան:

ՄԻԼ.—Ի հարկէ խօսած կը լինէք յաւիտենական սիրոյ մասին, մինչև մահ չը դաւաձանել մէկ մէկու, երգւած կը լինէք մեռնել միասին, անյաջողութեան ըոպէին փափչել մի որևէ

անմարդաբնակ կղզի, ուր կը բաւականանաք խոտէ ապուրով միայն...

ԼԵ.—Ամենևին ոչ:

ՄԻԼ.—Լաւ, այդ ի՞նչ համբերի ու խուլերի սիրահարութիւն է, թոյլ տուր հարցնել: Նամակագրութիւն եղել է, գոնէ համբուրել էք:

ԼԵ.—Ի՞նչ ես ասում, ի՞նչպէս կարելի է այդպէս յանկարծ:

ՄԻԼ.—Շատ տարօրինակ է: Ի հարկէ նա չէ հասկացել, դու էլ անյարմար ես գտել: Իսկ ի՞նչպէս են վերաբերուած այդ ամենին ձերոնք, մի գուցէ սովորական աչքերով չի նկատուած, պէտք է խոշորացոյցով նայել:

ԼԵ.—Ընդհակառակը մերոնք հիացած են: Հայրիկը բաւական պարզ ակնարկում է, որ վատ չի լինիլ, եթէ ես գնամ Բերեժկովին, որովհետեւ նա հօր մահանից յետոյ ինչոր 100000 պիտի ստանայ, իսկ մայրիկս արտասուխառն աչքերով նայում է, նայում ինձ և հառաչում:

ՄԻԼ.—Լաւ, էլ ի՞նչ ես քնել: Արթնացիր և ամուսնացիր նրա հետ:

ԼԵ.—Ես թէկուզ հէնց այս ըոպէին, բայց հօն ես ինքս չեմ կարող առաջարկութիւն անել: Այդ ընդունւած չէ, իսկ նա ինքը բաւականին ամաչկոտ է: Քանի անգամ եմ նրան ակնարկել, որ շատ եմ սիրում ծաղիկներ, իսկ նա գոնէ հասկանար և մի փունջ ընծայէր:

ՄԻԼ.—Լաւ, էլ ի՞նչ է քեզ դէպի նրան քաշում:

ԼԵ.—Ծնողներիս խնամակալութիւնից եմ ազատուել ուզում: Վերջապէս ընտրութիւն անել էլ դժուար է, որովհետեւ փեսացուներ չը կան:

ՄԻԼ.—Լսիր, ուզում ես, ես խօսեմ քեռու հետ և ամեն բան գլուխ բերեմ: Ափսոս որ դու այստեղ վայրենացել ես և ինքդ չես կարող դուրս բերել, թէ չէ դրանից հեշտ ի՞նչ կարող է լինել: Այնպէս կը դժուարանէի նրան, որ... Այ օրինակ այստեղ գալիս, գնացքի մէջ հանդիպեցի մի պարոնի, որի հետ Զինա քեռակնոջս մօտ եմ ծանօթացել: Նա փաստաբան է, Պալիցկի, ոչինչ, վատ չէ... նա էլ այստեղ էր գալիս մի ինչ որ ընկերոջ մօտ: Այնքան ես նրան խօսքատակ տւի, որ սկսեց ոտանաւորներ կարգալինձ: Եթէ մէկ էլ ընկնէր ձեռքս, կենդանի չէր դուրս պրծնի: Եւ շատ բնական է, բայց քո և այդ Բերեժկովի սէրը ինձ շատ տարօրինակ է թուում: Ամենայն դէպս մի տխրի, յայտնեցիր ինձ վրայ: Բայց անա և քեռին: Որպէս թուեցի:

4580



ՏԵՄԻԼ 4 7/31-1922

ՆՐԱՆԲ և ՉՈՒԳՐԵՆԵՑՈՒՄ

ՉՈՒԳՐ.—Ա՛, բարեհաճեցիք վերջապէս վեր կենալու անկողնից, անամօթներ, ժամը մինչև

2-ը քնում էք:

ՄԻԼ.—Այս քեռի, այնպէս չէի ուզում վեր կենալ, հրաշալի երգաներ էի տեսնում: (Համքորում է նրա ծնորդը) բօն ժուր:

ՉՈՒԳՐ.—Երևի ամբողջ գիշեր կչկչում էիք, ի հարկէ ամեն մի ցանցառութիւն էլ կը մտնէր ձեր գլուխը:

ՄԻԼ.—Քեռի, ես ձեզ տեսայ երազումս, իսկ միթէ դուք ցանցառութիւն էք:

ՉՈՒԳՐ.—Դու դարձեալ նոյնն ես, առանց յիմարութիւնների և ոչ մի քայլ չես կարող անել:

ՄԻԼ.—Ինչո՞ւ փոխուել;

ՉՈՒԳՐ.—Դէ, չարածճի, թոյլ աուր նայեմ վրադ:

ՄԻԼ.—Դէ, նայեցէք և հիացէք:

ՉՈՒԳՐ.—Ոչինչ, լաւ մեծացել ես:

ՄԻԼ.—Եւ ոչ օրերով, այլ ժամերով, երևի անգործութիւնից: Մայրիկս էլ չարանում է, ո՞ւր ես այդպէս ծագում, ասում է, կարծես ես մեղաւոր եմ:

ՉՈՒԳՐ.—Հն, հն, հն, ճիշտ է, ճիշտ է... Էհ, ի՞նչպէս, հաւանում ես մեր կալածքը:

ՄԻԼ.—Ոչինչ, մի քիչ հեռու է: Այստեղ հասնելու համար ես օգտուել եմ ամեն բանից, թէ երկաթուղով, թէ շոգենաւով և թէ ձիաներով, միայն թէ օդապարիկ չեմ նստել: Իմ կարծիքով լաւ անապատ էք քաշել:

ՉՈՒԳՐ.—Բայց ի՞նչ օդ է, հիացք: Այնու-

ամենայնիւ շատ լաւ ես արել, որ եկել ես, գոնէ Լեօլիչկան կը բացւի մի քիչ:

ՄԻԼ.—Քեռի, կարծես, խօսք մէկ ենք արել, մի փոքր առաջ ես դրա համար էի հայնոյում նրան: Թոյլ տւէք սեղմել ձեր ձեռքը:

ՉՈՒԳՐ.—Մէկ նայիր Միլօչկին, մարդու քէֆն է գալիս, երիտասարդութիւնը կաթկթում է նրանից: Կրակ է, կրակ...

ԼԵ.—Հօ չեմ կարող ես միայնակ պարել, թռչկոտալ, ուրախանալ:

ՉՈՒԳՐ.—Քեզ հետ խօսել չի կարելի: Գընանք Միլօչկա, քեզ ցոյց տամ իմ ջերմանոցը:

ՄԻԼ.—Մի բոպէ, քեռի, ես ցանկանում եմ ձեզ հետ մի բանի մասին լուրջ խօսել: Քեռի, համեցէք դուք այստեղ, Լեօլեա, դու նրատիր այդտեղ, իսկ ես այստեղ: Ահա այդպէս: Ժողովը բացւած է և ես ինքս էլ ինձ նախագահ եմ ընտրում: Ի՞նչ կասէիք, քեռի, եթէ ես գտնեմ Լեօլեայի կեանքի ընկերոջը, այսինքն մի խօսքով նրա համար մի փեսացու:

ՉՈՒԳՐ.—Հն, հն, հն...

ԼԵ.—Չէ որ դու ինքդ էիր իմ վզին փաթաթում նրան:

ՉՈՒԳՐ.—Ե՛ս:

ԼԵ.—Այո, և հասար նպատակիդ. Բերեժկովը ինձ արդէն դուր է գալիս, ես կարծում եմ դու ինքդ էլ նկատել ես այդ:

**ՉՈՒԳՐ.**—Ամենևին էլ չէ դուր գալիս քեզ:  
 Լե.—Բայց թոյլ տուր...

**ՉՈՒԳՐ.**—Դու ինքդ քեզ երևակայել ես. «ախ,  
 ահա իմ իդէալը» ասա խնդրեմ, ինչ լաւ բան  
 կայ նրա մէջ, թըշուած հաւ է նա, ուրիշ ոչինչ:  
 Այդպիսի տղամարդիկ երբէք կանանց դուր չեն  
 գալիս:

**ՄԻԼ.**—Դուք քեռի, դատում էք տղամարդու  
 պէս, բայց չէ որ կանանց ճաշակը բոլորովին  
 տարօրինակ է:

**ՉՈՒԳՐ.**—Բանն էլ դրանումն է, որ եօթից  
 վեց անգամ կանայք իրանք էլ չեն իմանում, թէ  
 ինչ են ուզում: Ես ուրիշ փեսացու ունիմ և ես  
 հաւատացած եմ, որ իմ ընտրութիւնը նրան ա-  
 լելի դուր կը գայ:

**ՄԻԼ.**—Այդ դեռ հարց է:

**Լե.**—Ես ուրիշին չեմ գնալ. կարող ես հա-  
 լատացած լինել:

**ՄԻԼ.**—Լսում էք, քեռի:

**ՉՈՒԳՐ.**—Լսում եմ, բայց ինձ չէք համո-  
 զիլ: Դու նախ իմ փեսացուին տես:

**Լե.**—Եւ չեմ էլ նայի: Այս բոլորը ինչո՞վ  
 պէտք է վերջանայ: Այսօր գնա սրան, վաղը նը-  
 րան, միւս օրը երրորդին... ձանձրացայ, կար-  
 ծես ես երեխայ լինիմ... Դո՛ւ չես հօ մարդու  
 գնում, կարծեմ ես եմ գնում, ուրեմն թոյլ տուր  
 ինձ էլ կարգադրել իմ ուզածի նման: Դու այս-

պէս էլ իմացած եղիր, որ ես Բերեթկովից գատ  
 ուրիշին չեմ գնայ, չեմ գնայ: (Դուրս է գնում  
 տուն):

## ՏԵՍԻԼ 5

**ՉՈՒԳՐԵՆԵՈՎ և ՄԻԼՉԿՍ.**

**ՄԻԼ.**—(նրա յետևից) Եւ լաւ էլ կանես:

**ՉՈՒԳՐ.**—Այ հէնց այդպէս էլ գիտէի, որ  
 դու իմ Լեօլիչկին փշացնում ես:

**ՄԻԼ.**—Այ քեզ տրաքոց: Այժմ էլ ուրիշ օ-  
 պերայից սկսեցիք երգել:

**ՉՈՒԳՐ.**—Եւ ինչ ես քիթդ խօթում: Դեռ  
 նոր ես եկել, Լեօլեան արդէն սատանան գիտէ  
 թէ ինչ է դառել:

**ՄԻԼ.**—Լաւ, վերջապէս ո՞վ է այդ գաղտնի  
 «նա»-ն:

**ՉՈՒԳՐ.**—Անտեղի հետաքրքրութիւն. կը  
 գայ և կը տեսնես:

**ՄԻԼ.**—Ա՛, հասկանում եմ: Երևի ես նրան  
 ձանաչում եմ և դուք վախենում էք իմ կրիտի-  
 կայից: Մի վախենաք, ես խստապահանջ չեմ  
 լինի:

**ՉՈՒԳՐ.**—Սօսք չունիմ, գործի համար է  
 եկել: Յարգելի պաշտօն է ստանձնել, լարել աղջ-  
 կան հօր դէմ:

**ՄԻԼ.**—Ինչո՞ւ է հայրը ի չարը գործ գնում

իւր իրաւունքը:

ԶՈՒԳՐ.— Ի՞նչ լօգիկա. ես լեօլիշկին բարիք եմ ցանկանում:

ՄԻՆ.— Ախ քեռի, բարիք ցանկանալը, անել չէ նշանակում:

ԶՈՒԳՐ.— Ահա ձեզ, ահա ժամանակակից կրթութիւնը: Եւ ի՞նչ էք ուտում, որ այդպէս խելօք էք: Ձեր ծնողները քայլ անել չեն կարող, որ դուք չը բղաւէք. կամակորուծիւն է, չարութիւն է, ոճրագործութիւն է: Ով խօսի, չը խօսի, դու դեռ լռիր: Դուք մեզ պէտք է լսէք, մենք աւելի խելօք ենք:

ՄԻՆ.— Լաւ, իսկ եթէ հարցը շուռ տանք. դուք իբրև խելօք կողմը, փեսայ ընտրելիս հը պատակել էք ձեր խելքին, որ բանում է արագ, կարի մեքենայի նման. տիկ տակ, տիկ տակ...

ԶՈՒԳՐ.— Դրա փոխարէն ձերը հանդարտ, թրխկ, թրխկ...

ՄԻՆ.— Բայց լեօլեան, ինչպէս թոյլ կողմը, փեսացու ընտրելիս, լսել է իր սրտին:

ԶՈՒԳՐ.— Այ քեզ յիմար. չէ որ ձեր սրտերը թռչում են, կարծես հրդէհ հանգցնելու են վազում. թափ, թափ, թափ...

ՄԻՆ.— Մենք երիտասարդներ ենք, իսկ ձերը հազիւ հազ, մածուն տանողի նման ըհ, ըհ, ըհ...

ԶՈՒԳՐ.— Ինչ փիլիսոփայուծիւն... լաւ,

թոյլ տւէք գոնէ ձեզ հարցնել, թէ դրանից ինչ է դուրս գալիս:

ՄԻՆ.— Այն, որ եթէ ես լինէի լեօլեայի տեղ, սենեակումս կը փակէի մինչև որ ինձ Բերեժկովի հետ չը պտակէիք, չէի դուրս գալ:

ԶՈՒԳՐ.— Ի՞նչ կայ որ, այդ էլ սովորացրէք նրան էլի, վերջացրէք ձեր խնամքը:

ՄԻՆ.— Թոյլ էք տալիս, մեծ ուրախութեամբ: (Նրզում է Փառաստից):

Իմ խորհուրդն է. մինչ նշանդէք,

Դուռը մի բացէք:

Հա, հա, հա...

ԶՈՒԳՐ.— Թիւ... (արագ գնում է):

ՄԻՆ.— Դէ, քեռին ինձ երկար չի մոռանալ:

### ՏԵՍԻՆ 6

ՄԻՆՉԵՄ, ՄԱՐԻԱ, ԴՄԻՏՐԻԵՆԱ և ԼԵՕԼԻՉԵՄ

ՄԱՐ. ԴՄ.— Ի՞նչ է պատահել, ի՞նչ կայ:

ՄԻՆ.— Արտասովոր ոչինչ: Պատերազմեցինք մի փոքր:

ՄԱՐ. ԴՄ.— Ախ, Միլօշկա, բանդ կտրւել է: Դու չը գիտես, որ նրան դժւար է համոզել: Ձինացիները մօտ այդ ընդունւած է:

ՄԻՆ.— Ո՛չ, ես ոչ մի պայմանով չեմ զիջի նրան, այդ դուք էք նրանից վախենում, նա ինձ համար ամենակին սարսափելի չէ: Նախ և առաջ

մի պատերազմական ժողով կազմենք. (կանչելով)  
գեղեցկուհիս, համեցէք այստեղ: (Մտնում է  
Լեօնան լալով) ես այդպէս էլ գիտէի: Լալիս ես  
թանկագինս, լաց, լաց, այդ ոչինչ, արտասու-  
քը թեթևացնում է մարդու սիրտը:

ՄԱՐ. ԴՄ.—Լեօնիչկա, հոգիս, ի՞նչ է պա-  
տահել քեզ:

ԼԵ.—Ախ, Մայրիկ:

ՄԱՐ. ԴՄ.—Խղձուկս, անբաղդ աղջիկ...  
(Երկուսով լալիս նն):

ՄԻԼ.—Այդ ի՞նչ է, չը լինի ցանկանում էք  
դուէտով լալ: Տիկին, լալով ոչինչ օգուտ չէք  
բերի: Դէ, բաւական է: Քեռին,—այդ թող յայտ-  
նի լինի ձեզ,—Լեօլայի համար փեսացու է գը-  
տել: Դէ, դադարիր դու և լսիր ինձ. ես չը կա-  
րողացայ իմանալ, թէ ով է նա, քեռին ինձ շա-  
սաց ոչ նրա անունը և ոչ էլ ազգանունը:

ՄԱՐ. ԴՄ.—Պաւել Միխայլովիչի տղան է:

ՄԻԼ.—Այդ ի՞նչ Պաւել Միխայլովիչ է:

ՄԱՐ. ԴՄ.—Րաստովցե, նրանք հին ըն-  
կերներ են: Երբ դեռ Լեօլեան փոքր էր և սե-  
ղանի տակն էր մտնում, այն ժամանակ Վասին-  
կան էլ փոքր էր և նրանք միասին խաղում էին:

ԼԵ.—Ես, մայրիկ չեմ յիշում նրան:

ՄԱՐ. ԴՄ.—Իսկ դու կարծում ես, քո հայ-  
րիկը շատ է յիշում նրան, նա 25 տարի է չէ  
տեսել նրան: Դէմքն էլ չէ յիշում:

ՄԻԼ.—Լաւ, ինչո՞ւ յանկարծ յիշեց նրան:

ՄԱՐ.—ԴՄ.—Ծերուկից նամակ է ստացել.  
«ցանկանում եմ ազգական դառնալ» գրում է  
նա: Դէ սա էլ իսկոյն վճռեց, երկար մտածելու  
գլուխ չունի ամենեին: Մէկ մէկու երես ան-  
գամ չեն տեսել, յանկարծ, առանց դէսուդէնի,  
համեցէք, պսակեցէք: Այդ մօդա է այժմ, չի-  
նացիները այդպէս են անում: Ամեն մի բոպէ  
նրան է սպասում, այդ փեսացուին:

ՄԻԼ.—Ո՞ւր էր մինչև հիմայ այդ ձեր Վա-  
սինկան, ինչո՞ւ նրա մասին ոչինչ չեմ լսել:

ՄԱՐ. ԴՄ.—Այնտեղ, Ուրալի մօտերքն էր  
ծառայում: Սուր դանակ է ինձ համար այդ ու-  
րալցին, սիրտս ինչ որ չի քաշում նրան:

ՄԻԼ.—Քեռակին, ուրե՞մն դուք չէք համակ-  
րում այդ պսակը:

ՄԱՐ. ԴՄ.—Ո՞վ կը համակրի:

ՄԻԼ.—Իսկ դու, Լեօլեա:

ԼԵ.—Ի հարկէ ոչ:

ՄԻԼ.—Ուրե՞մն լաւ, վաղը Լեօլեան կը յայ-  
տարարի Իերեժկովի հարսնացուն, այդ ես խօսք  
եմ տալիս:

ՄԱՐ. ԴՄ.—Ա՛խ, քնած ժամանակս էլ այդ  
մասին եմ մտածում միայն:

ԼԵ.—Նրա հետ գոնէ հանդիստ շունչ կը քաշեմ:

ՄԻԼ.—Հիանալի, ոչ մի խօսք ոչ գբի: Մի-  
այն անա ինչ, քեռակին դուք ձայն ո՞ւնիք:

ՄԱՐ. ԴՄ.—Երիտասարդ ժամանակս հրաշալի էր, սօսորանօ. Ի վան Սերգէկի շը, ձայնիս համար սիրահարւեց ինձ վրայ:

ՄԻԼ.—Ախ, ես այդ մասին չեմ հարցնում, դուք ձեր տանը ձայն չճենիք միթէ:

ՄԱՐ.—ԴՄ.—Ես բոլորովին խելքս կորցրել եմ, չը գիտեմ, թէ ինչ պատասխանեմ, աբա, ինչ ուզում ես, բոլոր յոյսս քեզ վրայ է: Ես գնամ, թէ չէ պատերազմողս կը գայ և կը սկսի բղաւել, ճղաւել:

ՄԻԼ.—Դու էլ գնա, Լեօլեա, և ինձ առանձին թող, որ մի լաւ մտածեմ անելիքիս մասին: Ես յաջող ելք եմ խոստանում:

ԼԵ.—Փորձիր, բայց դժւար թէ: (Գնում է):

ՄԱՐ. ԴՄ.—Ցանկանում եմ քեզ յաջողութիւն, բայց այնուամենայնիւ առանց աղմուկի չի անցնի:

## ՏԵՍԻԼ 7

ՄԻԼՕԶԿԱ, փոքր յետոյ ՊԱԼԻՑԿԻՅ

ՄԻԼ.—Աղմուկ կը լինի, լաւ, տեսնենք: Ի՞նչ չից սկսեմ: Այս ո՞վ է, ով որ վազեց, այստեղ է գալիս, ինչ որ տղամարդ, արդեօք կուտանձորը — Վասինկան խօ չէ: Ինչ որ բան է ասում կառապանին, պայուսակն է վերցնում, դէ լաւ, շուռ արի, ախ այդ նա է, Պալիցկին, որի հետ հան-

դիպեցի գնացքում: Գտաւ աւազակը այնուամենայնիւ ինձ: Չէի սպասում, որ այդքան յանդուգն է: Լաւ, ես էլ այնպէս դիմաւոր եմ, որ...

ՊԱԼ.—(ընձի տեսլ) Ոչ ոք, երևի այս կողմ: (Մտնում է):

ՄԻԼ.—Ապա որ կողմ, ի հարկէ այս:

ՊԱԼ.—Ախ, այդ դժուր էք, ինչ սիւրպրիզ ինձ համար:

ՄԻԼ.—(տնազելով) Ասացէք, խնդրեմ, դուք մինչև անգամ զարմանալ էլ էք կարողանում... իբր չէիք սպասում ինձ այստեղ հանդիպել:

ՊԱԼ.—Մոտտովանում եմ:

ՄԻԼ.—Դուք չը գիտէիք, որ ես այստեղ եմ և այնուամենայնիւ յետևիցս էք ընկել և եկել ուղղակի այստեղ: Պարոն Պալիցկիյ, դուք ամենևին կեղծել չը գիտէք:

ՊԱԼ.—Այդ Էս եմ կեղծում:

ՄԻԼ.—Բաւական է, յարգելի պարոն, հասկացէք, որ ես օտար մարդու տանն եմ, այդ յանդգնութիւն է, ոյժով մտնել ուրիշի տուն, իմ գլուխն առանց այդ էլ պտտուում է, պակասն էլ դուք լրացրիք:

ՊԱԼ.—Թոյլ տւէք ասել...

ՄԻԼ.—Ես կայարանում դիտմամբ փախայ ձեզանից աննկատելի կերպով, որ վերջ դնեմ բոլոր յիմարութիւններին, իսկ դուք վեր էք կենում և յետևում ինձ: Այդ վատ է, տգեղ է, հաս-

կանոնում էք, տգեղ է: Կարգին մարդիկ այդպէս  
չեն վարուում:

ՊԱԼ.—Այ քեզ և ընդունելութիւն:

ՄԻԼ.—Իսկ դուք կարծում էիք, որ ես կը  
փաթաթւեմ ձեր վզին հա:

ՊԱԼ.—Ասենք, ես այդ չէի մտածում: Ճիշտ  
է, ես շատ բարդաւոր եմ ձեզ տեսնելով, բայց  
երդուում եմ, որ եկել եմ բոլորովին ոչ ձեր պատ-  
ճառով: Այս պատահմունք է, ուրիշ ոչինչ:

ՄԻԼ.—Ձէ, այդ ինձ շատ դուր է գալիս,  
ոնում մօտ էք ուրեմն եկել:

ՊԱԼ.—Իմ հին բարեկամի մօտ:

ՄԻԼ.—Դուք ի՞նչ է, ծանօթ էք քեռու հետ:

ՊԱԼ.—Ի՞նչ քեռու:

ՄԻԼ.—Ի՞նչ քեռու. ի՞նչ յիմար հարց էք  
տալիս: Ի հարկէ իմ քեռու, Ի վան Սերգէսիւն  
Չուգրենեովի հետ:

ՊԱԼ.—Առաջին անգամ եմ լսում այդ ազ-  
գանունը:

ՄԻԼ.—Ուրեմն այդ ի՞նչ հին բարեկամ էք  
փնտռում այստեղ: Դուք սուտ խօսել էլ չէք կա-  
րողանում, դեռ փաստաբան էք:

ՊԱԼ.—Իմ բարեկամը, այս կալւածքի տէ-  
րը, պաշտօնաթող սպայ Նիկօլայ Նիկօլաևիչ Սու-  
խօզօլսկին է:

ՄԻԼ.—Ի՞նչ պատահեց ձեզ, չը լինի կառ-  
քի հարելուց հարւել է և ձեր ուղեղը, հա... ի՞նչ

յիմարութիւններ էք դուրս տալիս:

ՊԱԼ.—Այդ ի՞նչու:

ՄԻԼ.—Որովհետև ձեր բարեկամը դեռ անց-  
եալ տարի է տւել իւր կալւածքը քեռուս վար-  
ձով և ինքն էլ տեղափոխւել արտասահման:

ՊԱԼ.—Այ քեզ տրաքոց: Երկու տարի է մենք  
նամակագրութիւն չունէինք, այնպէս որ ես այդ  
չը գիտէի: Այժմ տեսաք, որ ես բոլորովին ան-  
մեղ եմ և ի դուր էք վրաս բարկանում:

ՄԻԼ.—Դուք երկար էիք մտադիր մնալ ձեր  
բարեկամի մօտ:

ՊԱԼ.—Երկու-երեք շաբաթ:

ՄԻԼ.—Կը նշանակի ինքը ճակատագիրն է  
ձեզ ուղարկել. այժմ ես մինչև անգամ շնորհա-  
կալ եմ, որ եկել էք այստեղ:

ՊԱԼ.—Շնորհակալութիւն, չէի սպասում:

ՄԻԼ.—Եւ անա իբրև պատիժ, դուք կօգ-  
նէք ինձ մի բանում, որ ես հնարել եմ: Եւ այդ-  
պէս դուք մնում էք:

ՊԱԼ.—Ընդհակառակը, ես իսկոյն վերա-  
դառնում եմ:

ՄԻԼ.—Ուրք չունիմ ասելու, շատ քաղա-  
քավարի էք: Լսեցէք, ինչ եմ ասում, դուք մո-  
ռացէք, որ փաստաբան էք: Ես մի հօրեղբոր աղ-  
ջիկ ունիմ, կոտորաւող, փալաս, ճիշտ է, ոչ այն-  
քան գեղեցիկ, որ նրա պատճառով Տրօյացոց պա-  
տերազմ սկսելի, այնուամենայնիւ... նա ցան-

կանուժ է ամուսնանալ, քեռակիհս համաձայն է նրա հետ, հայրը ոչ, ուստի մենք մի երրորդութիւն ենք կազմել հօրը դիմադրելու համար:

ՊԱԼ.—Երրորդութիւն... յուսալի չէ:

ՄԻԼ.—Սատանան ձեզ տանի: Քեռիս մտածում է նրա կամքի հակառակ ամուսնացնել նրան ոչ նրա հետ, ուժ նա է ուզում, այլ մի ուրիշի, որին սպասում է ժամ առ ժամ: Բայց ես երգւել եմ նրան հակառակել և այդ պատճառով խոնարհաբար խնդրում եմ ձեզանից...

ՉՈՒԳՐ.—(ընմի յետեւից) Սատանան գիտէ թէ ինչ է... Երբէք ոչ մի բանի համար հոգս չեն անում:

ՄԻԼ.—Ախ, քեռին...

## ՏԵՍԻԼ 8

Նրանք և ՉՈՒԳՐԵՆԵՈՎ

ՉՈՒԳՐ.—(մտնելով) Այ թէ մարդիկ են հա... մարդու հոգին կը հանեն նրանք, հոգին... (Տեսնելով Պալիցկուն) Այս էլ ո՞վ է... ո՞ւմ հետ պատիւ ունիմ...

ՄԻԼ.—Ա՛յդ... բայց մի՞թէ դուք չէք ճանաչում, այդ նա է...

ՉՈՒԳՐ.—Ո՞վ նա, ի՞նչ նա, դարձեա՞լ քո բաներն են:

ՄԻԼ.—Ախ սի... և ինչո՞ւ էք իզուր ինձ

կշտամբում, քեռի... (Պալիցկուն կամաց) ես յոյսս դնում եմ ձեզ վրայ... (ըտուն) Այդ վաղուց սպասուող և ցանկալի հիւրն է... Դէ, ինչո՞ւ էք աչքներդ չուել:

ՉՈՒԳՐ.—Վասինկան...

ՄԻԼ.—Ի հարկէ: (Պալիցկուն) Ես մեղաւոր չեմ, քեռին ինքը:

ՉՈՒԳՐ.—Ինքն է, ինքը... իսկոյն ճանաչեցի, բոլորովին հայրը...

ՄԻԼ.—Կարծեմ, ուրախ էք:

ՉՈՒԳՐ.—Դու ամեն տեղ հասնում ես: Սիրելիս, թոյլ տուր համբուրեմ... Երևակայիր, նստած եմ ջերմանոցում, լսում եմ ինչ որ կառք կանգնեց, իսկոյն սիրտս զգաց, կարծես նախագում էի:

ՄԻԼ.—Այո, քեռի, այո, նախազգացումը շատ, շատ մեծ բան է:

ՉՈՒԳՐ.—(Պալիցկուն) Այդ ինչպէս յանկարծ վճռեցիք:

ՊԱԼ.—Գիտեք... Ես... այսինքն... (նայելով Միլօզկին):

ՄԻԼ.—Քեռի, նա վաղուց էր պատրաստում ձեզ մօտ գալու, դեռ երբ Ուրալումն էր գտնւում. այսպէս նստած է սարերի վրայ, մտածում է, մտածում և յանկարծ վճռում ու գալիս է: Յետոյ նրա հայրն էլ շարունակ ասում էր նրան, դու, Վասեա, զնա, անպատճառ զնա

Չուգրենեոյսերին տես, նրանք շատ սիրալիր մարդիկ են:

ՉՈՒԳՐ.— Դու սրտեղից դիտես:

ՄԻԼ.— Այս ըոպէին ինքը պատմեց:

ՉՈՒԳՐ.— Ճաճանակ, թոյլ տուր իրան մի խօսք ասելու գոնէ:

ՄԻԼ.— (Պալիցկուն) Գոնէ պաշտպանեցէք ինձ:

ՊԱԼ.— Ընդհակառակը, ես շատ շնորհակալ եմ օրիորդից, առանց նրան ես բոլորովին կորած կը լինէի... Ես անչափ զգացւած եմ... նա ինձ այնպէս սիրալիր դիմաւորեց:

ՄԻԼ.— Ահա տեսաք, քեռի... իսկ դուք ինձ մեղադրում էք... Նա խոր զգացւած է, նայեցէք, մինչև անգամ արտասուում է ուրախութիւնից:

ՊԱԼ.— (Ժաշկինակով սրբելով աչքերը) Այո, այո, դուք ճիշտ էք ասում, ես արտասուում եմ, ես չէի սպասում... Թոյլ տւէք ձեզ համբուրել:

ՉՈՒԳՐ.— Այստեղ, այստեղ, կրծքիս վրայ, Վասինկա: Բայց այս ինչու վերարկուդ չես հանում, հանիք, Վասինկա, հոգիս, հանիք... (հանում է, տանում միւս վողմ):

ՄԻԼ.— Երևակայեցէք քեռի, նա մինչև անգամ յիշում է Լեօլեային էլ:

ՉՈՒԳՐ.— Ինչպէս, Լեօլին էլ ես յիշում:

ՊԱԼ.— Այո, ինչպէս չէ, մի չարաձճի փոք-

րիկ տղայ էր, շարունակ ծառն էր բարձրանում: ՄԻԼ.— Ի՞նչ էք ասում, ի՞նչ էք ասում, Լեօլեան քեռուս աղջիկն է:

ՉՈՒԳՐ.— Երևակայիր, Վասինկա, եթէ ես քեզ մի ուրիշ տեղ տեսնէի, չէի ճանաչիլ, բոլորովին մեծացել ու փոխւել ես:

ՄԻԼ.— Միթէ այդպէս փոխւել է, քեռի:

ՉՈՒԳՐ.— Ի հարկէ... այն ժամանակ միայն այս դիտէր. բայ—բայ, նեւմ—նեւմ, տպրո՛ւ... ո՛ւա...

ՄԻԼ.— Այո, այժմ նա կարգին խօսում է:

ՉՈՒԳՐ.— Այ, սիւրպրիզ, Վասինկա, որ սիւրպրիզ...

ՄԻԼ.— Այո, քեռի, ում համար չէ, բայց ձեզ համար մեծ սիւրպրիզ է:

ՉՈՒԳՐ.— Ճիշտ է, Միլօչկա, ճիշտ է... Թոյլ տուր մէկ էլ համբուրել, Վասինկա:

ՊԱԼ.— Անճարը կերել է բանջարը... Ուրախութեամբ:

ՉՈՒԳՐ.— (համբուրում է Պալիցկուն եւ ասում Լեօլին) Այժմ տեսնենք ո՞վ ում կը յաղթի:

ՄԻԼ.— Կը տեսնենք, ասաց կոյրը:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

ՏԵՍԻԼ 1.

ԲԵՐԵԺԿՈՎ, յետոյ ՄԻԼՕՉԿԱ.

ԲԵՐԵԺԿՈՎ.—(Փրակով, ձեռքին ցիլինդր, ման է զալիս յուզած եւ ժամանակ ժամանակ նայում է կամ դռանը կամ ժամացոյցին) Ուղիղ մի ժամ և մի քառորդ է... նրանք դեռ սեղան են նստած, ինչպէս չեն ձանձրանում: (Հազում է) Կ՛ը, Կ՛ը, Կ՛ը... չեն լսում... Ո՛վ է այդ պարոնը, առաջին անգամն եմ նրան տեսնում... Գիթս բարձր չը սրբեմ արդեօք, գուցէ ուշքի գան: (Սրբում է) Ո՛չ, այնպէս են զբաղւած հիւրով, որ եթէ թնդանօթ էլ արձակես, նրանք ուշքի չեն գալ: Մէկը Լեօլիչկի հօրեղբօր աղջիկն է, իսկ այն մէկն ո՞վ է... Ահա, վեր են կենում վերջապէս, ո՛չ, էլի նստեցին, հոգիս դուրս կը գայ սպասելով: Մայրիկս ասում է. «դու, Նադեա, մի վախի՛ր, հաւաքի՛ր ոյժդ և միանգամից սկսի՛ր»: (Ոտը գետնին քսելով եւ զլուխ տալով շարունակ դէպի դուռը) Ամենայարգելի Իվան Սերգէևիչ, այսպէս թէ այնպէս... էլ չեմ կարող... սիրտս, այսպէս ասած, չարչարում եմ... (Միջոցկան դուրս գալով, կանգնում է դռան մէջ եւ

զարմացած նայում նրան)... իմ սէրը... իմ զգացմունքը... իմ յարգանքը... (զլուխը բարձրացնում է, տեսնում է Միլօչկին, ապշում, իրան կորցնում է եւ զլուխ տալիս) Յարգանքներս:

ՄԻԼ.—Բարեաւ ձեզ, բարեաւ... երևի պատիւ ունիմ տեսնելու պարոն Բերեժկովին:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Այո... բայց... բայց այդ ի՞նչպէս յանկարծ կարողացաք ձանաչել:

ՄԻԼ.—Ես այնքան շատ եմ լսել ձեր մասին:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Այդ դէպքում... ը՛ր՛... Խոնարհաբար շնորհակալ եմ ձեզանից:

ՄԻԼ.—Դուք շատ ժամանակ է, ինչ այստեղ էք:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Բաւականին:

ՄԻԼ.—Ուրեմն ինչո՞ւ ներս չեկա՞ք:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Ամաչում էի:

ՄԻԼ.—Ախ, ես մոռացայ բոլորովին, որ դուք օրիորդ էք... Իէ, ծանօթանանք... Ես Լեօլիայի քոյրն եմ, Լիւդմիլա Անդրէևնա Վասիլիովա:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Շատ ուրախ եմ:

ՄԻԼ.—Այժմ նստենք և խօսենք ձեզ հետ... (նստում են) Նախ և առաջ ասացէք ի՞նչ է նշանակում այս զգեստը:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Այնպէս...

ՄԻԼ.—Այնպէս բառը գոյութիւն չունի աշխարհիս երեսին... Այնպէս միայն կաշաղակներն

են թռչում... Դէ...

ԲԵՐԵԺԿՈՎ.— Հ'ըմ... Գիտէք... այնպիսի հարց է այդ, որ դժւարանում եմ պատասխանել:

ՄԻԼ.— Ուրեմն ես կը սկսեմ. Ֆրակով գիւղում վիզիտները չեն անում, այսօր ոչ մի տեղ բալ չը կայ, անւանակոչութիւն, ծնունդ նոյնպէս... Տանը կայ մի երիտասարդ աղջիկ, ուրեմն եկել էք նրան առաջարկելու ձեր սիրտն ու ձեռքը: Տեսնում էք, այդ ինչպէս պարզ է:

ԲԵՐԵԺԿՈՎ.— Այո:

ՄԻԼ.— Դմբադտաբար ես պէտք է ձեզ ասեմ, որ ամենանյարմար ժամանակ դուք չէիք կարող և մտածել... Այս բոպէին մեր տանը այնպիսի մի արըղըմփոց է որ... Բայց դուք մի տըլութք, մենք երեքովս էլ ձեր կողմն ենք, այսինքն ես, քեռակինս և Լեօլիչկան:

ԲԵՐԵԺԿՈՎ.— Ափսոս, ինչ վատ է:

ՄԻԼ.— Շնորհակալութիւն, դուք շատ քաղաքավարի էք: Ձեզ ասում են, որ մենք երեքովս ձեր կողմն ենք, իսկ դուք... երեւի միդ չէիք ուզում ասել:

ԲԵՐԵԺԿՈՎ.— Այո, իսկապէս: Ներեցէք, խընդրեմ... Ես, ընդհանրապէս, քաշուում եմ օրիորդների հետ խօսելուց, իսկ ձեր մասին ինձ այնպիսի բաներ են պատմել, որ իբր թէ դուք ամենքին ձեռք էք առնում, ծիծաղում վրաները:

շատ խելօք էք...

ՄԻԼ.— Դէ, անցնենք գործին, հարկաւոր չէ ոսկի ժամանակը կորցնել: Դուք շատ էք սիրում Լեօլեային, դուք մի քաշուէք, ես բոլորը գիտեմ: Լեօլեան ինքն է խնդրել ինձ խօսել ձեզ հետ, դուք նրան շատ էք սիրում:

ԲԵՐԵԺԿՈՎ.— Շատ:

ՄԻԼ.— Ապա ինչո՞ւ ոչ մի անգամ դուք նրան չէք ասել ձեր սիրոյ մասին: Ես կարծում եմ ասել. «ձեզ սիրում եմ»— այնքան էլ դժւար և երկար մտածելու մի բան չէ:

ԲԵՐԵԺԿՈՎ.— Դժւարը բառերը չեն, այլ նրանց ասելը, այ մայրիկս էլ է ասում «կարող ես վախեցնել նրան, պէտք է ասելու ձևն իմանալ»:

ՄԻԼ.— Դուք երբեիցէ առաջ չէք եղել սիրահարուած:

ԲԵՐԵԺԿՈՎ.— Ո՛չ. չէ որ ես շարունակ տանը հօրս ու մօրս մօտն եմ գտնւել, իսկ մեր տանը ուրիշ կին էլ չը կար, բացի մեր խոհարարուհի Աւգօտեայից, նրա վրայ խօ չէի սիրահարւելու, արդէն 50-ից անց է, չեչոտ է և դեռ մի աչքն էլ չլդիկ:

ՄԻԼ.— Այո, սիրահարւելու համար շատ անպէտք է: Ուրեմն Լեօլեան ձեր առաջինս սէրն է:

ԲԵՐԵԺԿՈՎ.— Իսկապէս առաջինս: Մայրիկը շարունակ այն է ասում. «Նադեա, ըր ի՞նչ սի-

րահարուելու ժամանակն է, դու դեռ անչափահաս մանուկ ես»:

ՄԻԼ.—Այդ շատ լաւ է, որ ձեզ Նազեա են կոչում, ձեզ շատ է սազում այդ անունը... Ուրեմն դուք, դեռ անչափահաս մանուկ, սիրահարուել էք Լեօլեայի վրայ միայն նրա համար, որ ուրիշ ոչ մի կին չէք տեսել բացի ձեր խոհարարուհին:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Պէտք է որ այդպէս լինի, միշտ միայնակ էինք, իսկ յանկարծ գալիս է մի գեղեցիկ, երիտասարդ օրիորդ և յայանի բան է...

ՄԻԼ.—Հասկանում եմ ձեզ: Թէկուզ ամսուսում եմ, բայց և այնպէս պէտք է ձեզ յայտնեմ, որ ձեր դէմ մեքենաներ են լարում:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Ո՞վ:

ՄԻԼ.—Իմ քեռին:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Ի՞նչու, նա միշտ ինձ յարգում էր, գովում էր, որ ես լաւ գիտար եմ նւագում, լաւ լողում եմ...

ՄԻԼ.—Քիչ բան կարող էր պատահել առաջ, այժմ նա ուզում է Լեօլին տալ մի ուրիշին:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Նա խօ չէ, որ ձեզ հետ ճաշում էր:

ՄԻԼ.—Նա ինքը:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Ա՛խ... ի գուր չէ մայրիկս այսօր երագում գայլ տեսել: (Վեր կենալով) Յար-

գանքներս, մնաք բարով:

ՄԻԼ.—Այդ ո՞ւր:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Տուն, այլ ևս ինձ համար այստեղ բան չը կայ շինելու, և ինչո՞ւ Փրակ էլ հագայ:

ՄԻԼ.—Կընշանակի դուք չէի՞ք ուզենալ կորցնել Լեօլին:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Եթէ միայն նրան կորցնէի, դեռ ոչինչ, բայց ցաւն այն է, որ բոլոր յոյսերս և իղձերս օդը ցնդեցին: Վերջ:

ՄԻԼ.—Այ տարօրինակ մարդ: Յոյսերն ու իղձերը կորցնելուն ամսուսում է, իսկ Լեօլին ոչ:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Դուք ինքներդ դատեցէք, ես այնպէս լաւ դասաւորել, կարգաւորել էի մըտքովս... քանի, քանի գիշերներ չեմ քնել, միշտ դրա մասին էի մտածում, մայրիկի հետ էլ խորհրդակցել եմ...

ՄԻԼ.—Լաւ, ի՞նչ էիք դասաւորում և կարգաւորում ձեր մտքում:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Ա՛յ, մտածում էի, կ'ամուսնանամ, տուն կը գանք, գիւղում կամ քաղաքում—այդ միևոյն է, փոքրիկ սիրուն բնակարան, լոյս, մաքուր... ամեն մի առարկայ իրա տեղը, սենեակում գրագարանս է, հիւրասենեակում դաշնամուրը, Պետերբուրգից, Շրէդերից բերել կը տայի, օրովհետև ես թէկուզ նւագել չը գիտեմ, բայց երաժշտութիւն շատ եմ

սիրում, նամանաւանդ երգեցողութիւնը: Գալիս են ձմեռային երկար-ձիգ երեկոները, դուրսը ցուրտ է, սառնամանիք, քամին փչում է, իսկ սեղանատանը վառարանն է վառած, փայտերը չրթչրթում են, ինքնաեռը սեղանի վրայ դրած՝ փշփշում է, և նստած կնոջս հետ միասին, ես խալաթով, իսկ նա կապոտով, թէյ ենք խրմում մուրաբայով, իսկ իմ մայրիկը հրաշալի մուրաբաներ է եփում... Յետոյ անցնում ենք հիւրասենեակ, այնտեղ էլ կիսախաւար է, ես լրագիր եմ սկսում կարդալ, կամ գիրք, կինս նրստում է դաշնամուրի մօտ և սկսում է երգել... հայրիկն ու մայրիկը հիւր կը գան մեզ մօտ, մեզ նայելով կուրախանան: Այնպէս լաւ, այնպէս հանգիստ էր թւում ինձ... հոգիս փառաւորում էր...

ՄԻԼ.—(հրան կորցրած) Այո, այո...

ԲԵՐԵԺԿՈՎ.—Եւ յանկարծ այդ բոլորը շուռ եկաւ, այ ինչն է ցաւալի:

ՄԻԼ.—Որքան դուք լաւն էք և ինչքան լաւ էք պատմում:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Դուք ներեցէք, որ ես այսքան պարզ խօսեցի ձեզ հետ: Պատիւ ունիմ...

ՄԻԼ.—Այնուամենայնիւ ես չեմ հասկանում, ուր էք փախչում:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Ապա ինչ, կը հրամայէք մընամ, որ տանջւեմ և յետոյ միթէ ես կարող եմ մրցել նոր եկածի հետ, նա ինձ իրա լեզուով և

ամեն բանով կը ջախջախի:

ՄԻԼ.—Եւ դուք այդպէս առանց կուր ուզում էք զիջել ձեր սիրած աղջկան:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Ձէ որ ինձնից, միևնոյն է չեն հարցնի, կը վերցնեն և կը տան նրան: Ինչո՞ւ կուել, միևնոյն է, գլխովդ պատը չես ծակի: Է՛հ, գնամ և այնպէս շարտեմ Ֆրակս, որ երբէք ոչ ոք նրան չը կարողանայ գտնել:

ՄԻԼ.—Ֆրակը հանեցէք, միայն հեռու չը շարտէք, դեռ գուցէ պէտք գայ և դուք էլ մի կորչէք, դարձեալ եկէք: Սպասեցէք, գուցէ մեր տանն էլ տօն լինի, ով գիտէ:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Է՛հ, եթէ բերանումս ինքն իրան կարողանար վարունգ բսնել... գնամ մի քիչ անցնեմ, խելքս գլուխս հաւաքեմ: Ա՛խ, դու կեանք, կեանք: (Գնում է):

## ՏԵՍԻԼ 2

ՄԻԼՕԶԿԱ, յետոյ ԶՈՒԳՐԵՆԵՆՈՎ և ՊԱԼԻՑԿԻՅ

ՄԻԼ.—(նայելով Բերեժկովի յետուից) Որքան նա լաւն է, խեղճ, ափսոսում եմ նրան: Ձէ, ինչ ուզում է լինի, ես գլուխ կը բերեմ, յետոյ ինքը—Լեօլեան շնորհակալութիւն կանի:

ԶՈՒԳՐ.—(Դուրս գալով տանից Պալիցկու հետ մ'իասին) Ուրեմն այդպէս, հայրիկիդ հետ չը կարողացմք հաշտել, Վասինկա, նա միշտ կամա-

կոր էր, առաջ էլ...

ՄԻԼ.—(կողմ)—Ես բոլորովին մոռացայ դըրան, յանկարծ մի բան չը թոցնի բերանից: (Սըրանց) Այդ ի՞նչ է, զբօսնելու էք զնում:

ՉՈՒԳՐ.—Այո, Լեօլեային ենք սպասում, զնաց շորը փոխելու: Ուզում եմ թանկագին հիւրին ցոյց տալ մեր ծաղիկները... Տեսէք, տեսէք... դարձեալ հաւերը ազատ ման են դալիս պարտիզում, անխ այդ Շապտօլէնկօն, մինչև նընրան ցոյց չը տաս, ոչ մի բանի չի նայիլ, ք՛շ... ք՛շ... (դուրս է գնում աջ):

ՊԱԼ.—Օգնեցէք, Լիւդմիլա Անդրէնա, թառամում եմ, մեռնում եմ դեռ ծաղիկ հասակում... ներկայ ըոպէին ես պատրաստ եմ ինքնասպանութիւն գործել, հոգիս հանեց, շարունակ հարց ու փորձ է անում ինչ որ Պաւել Միխայլովիչի մասին, ես էլ այնքան ստեր փշեցի, փշեցի, իրար խառնեցի, որ այժմ ինքս ինձանից ամաչում եմ. իսկ նա կպել է, պոկ չէ գալիս, ոյժով դուրս քաշեցի սենեակից: Թոյլ տէք ինձ հեռանալ այստեղից, չէ որ այժմ ամեն բան կարգին է:

ՄԻԼ.—Ընդհակառակը շատ լուրջ դժւարութիւններ են առաջ եկել: Միանգամ որ սկսել էք, խմեցէք մինչև վերջը դառնութեան բաժակը: Եթէ ուզում էք, որ քեռին ձեզ հանգիստ թողնի, ընկէք Լեօլեայի յետևից, խորհուրդ տէք, որ նա

զնայ Բերեժկովին, ասացէք որ դուք սիրահարւած էք մի ուրիշի վրայ...

ՊԱԼ.—Օրինակ ձեզ...

ՄԻԼ.—Միայն ոչ ինձ, ապա թէ ոչ դուք բոլորը կը փշացնէք: Բեռին կը կարծի, որ դուք հաւանում էք Լեօլեային և հանգիստ կը թողնի ձեզ, նա էլ հէնց այդ է միայն ուզում:

ՉՈՒԳՐ.—(մտնելով)—Դէ, այժմ ամեն ինչ արդէն կարգին է: Իսկ, ասացէք խնդրեմ, Պաւել Միխայլովիչը ծաղիկները շատ ունի:

ՊԱԼ.—Դարձեալ:

ՄԻԼ.—Անչափ շատ, զանազան տեսակի: Վասիլի Պաւլովիչը այս ըոպէին պատմում էր, որ նա նրանց հետ այնպէս է վարւում, ինչպէս երեխաների, ինքն է նրանց ջրում, կարտում, ուրիշ ոչ ոքի չէ հաւատում, մինչև այնտեղ է բանը հասցրել, որ այդ ծաղիկները տարեկան երեք անգամ են ծաղկում:

ՉՈՒԳՐ.—Ինչ հրաշք ան... նա միաժամանակ աչքով աչք չունէր ծաղիկ տեսնելու: Ինչ փոփոխութիւն: Իսկ ի՞նչ տեսակ ծաղիկներ ունի նա աւելի:

ՊԱԼ.—(կողմ) Ես այգեպան եմ, ի՞նչ է:

ՄԻԼ.—Ամենից շատ միխակ և վարդ... հա, մոռացայ ձեզ ասելու, քեռի, որ Բերեժկովին էր եկել:

ՉՈՒԳՐ.—Այդ ինչո՞ւ, ի՞նչ է կորցրել այս-

տեղ: Վասինկա, թոյլ տւէք ձեզ ասել, մի մարդ, խօսալ չը գիտէ, շարունակ լուռ է, կարծես ախոռում կապած լինի, թէկուզ տար-մորթի, այդ պիսի գազաններ Պետերբուրգում դժւար թէ լինեն:

ՄԻԼ.—Դուք արդէն չափազանց շատ էք նըրան վիրաւորում, ես նրա հետ այստեղ կէս ժամ խօսեցի:

ՉՈՒԳՐ.—Ժամանակ գտա՛ր:

ՄԻԼ.—Եւ շատ խելօք խօսում էր:

ՉՈՒԳՐ.—Նա էլ յիմար է, ով նրան խելօք կանւանի: Բայց աւելի լաւ կանի, որ ոտքը կտրի մեր տանից, նա մեր ընկերը չէ:

ՄԻԼ.—Վասիլիյ Պաւլովիչ, դուք գիտէ՞ք ինչու է քեռին նրա դէմ...

ՉՈՒԳՐ.—Նայեցէք, կարծեմ, Վասինկա, ուզում է անձրև գալ:

ՄԻԼ.—Ամբողջ ամառը ընդունում էին, հիւրասիրում և խեղճի մեղքն այն է, որ մտածել է սիրահարւել Լեօլիչկի վրայ:

ՉՈՒԳՐ.—Ը... Ը... Գիտէ՞ք Վասինկա...

ՄԻԼ.—Ինչքան քաղաքավարի է ընդհատել...

Նայեցէք, չը լինի թէ դուք էլ սիրահարւէք Լեօլի վրայ, քեռին կը սպանի ձեզ:

ՉՈՒԳՐ.—Ա՛խ անա և մերոնք վերջապէս...

Ես կարծում էի մինչև վաղը պիտի սպասենք ձեզ: (Միլօչկին) Ես քեզ կը յիշեցնեմ այդ ամենը:

### ՏԵՍԻԼ 3.

Նրանք, ՄԱՐԻԱ ԴՄԻՏՐԻԵՒՆԱ և ԼԵՕԼԵԱ

ՄԱՐ.—ԴՄ.—Եթէ ցանկանում էք զբօսնելու գնալ, գնացէ՞ք հիմայ, որովհետև պատուիրել եմ ինքնաեռը գցել:

ՊԱԼ.—Շատ անխիղճ էք դուք ճշմարիտ, կարծես ինձ մորթելու համար էք ուտեցնում, որ գերանամ, սեղանից վեր ենք կենում թէ չէ, ուրիշ սեղան էք բացում:

ՉՈՒԳՐ.—Մուրաբա էլ հանիր: Վասինկա, ի՞նչ տեսակի մուրաբա ես աւելի սիրում, մենք ամեն տեսակի ունենք:

ՊԱԼ.—Ճշմարիտ ինձ համար միևնոյն է:

ՉՈՒԳՐ.—Դէ, եթէ միևնոյն է, ա կնիկ, դու էլ հանիր մի քանի տեսակի, ինչ որ աչքիդ ընկաւ, յետոյ դու այ ինչ. (կամ՛աց) հեռացրու նրանից Միլօչկին, չի թողնում խեղճին մի խօսք ասել, նա քաղաքավարութիւնից ստիպւած լըռում է, իսկ ես շատ լաւ նկատում եմ, որ նա Վասինկի գահլան տարել է: Իսկ դու, (Լեօլին) նստիր նրա հետ և խօսիր, կը տեսնես թէ որքան նա խելօք և հետաքրքիր է քո այդ ապուշ Բերեժկովից: Ես իսկոյն կը վերադառնամ, միայն գնամ, հայհոյեմ Շապտոլենկոյին, հաւերին բաց է թողել ազատ ման են գալիս այգում, ք՛չ,

ք՛շ... (գնում է):

ՄԻԼ.—Այս սուր փախաւ քեռին, զբօսնելու էիք գնում ապա:

ԼՆ.—Հայրիկը միշտը այդպէս է, կը շշկլեցնի ամենքին և ինքը կը փախչի:

ՄԱՐ. ԴՄ.—Նա իսկոյն կը գայ: Իսկ ինչպէս, Վասիլիյ Պաւլովիչ, ձեր հայրիկը մտադրութիւն չունի մեզ հիւր գալու:

ՊԱԼ.—(Միջոցին) Դէ, այժմ էլ սա:

ՄԻԼ.—(նրան) Ոչինչ, սրան կարող էք ասել ամեն ինչ, ինչ որ խելքներիդ փչի, մի քաշուէք և քէֆներիդ աւածի չափ դուրս աւէք:

ՊԱԼ.—(Միջոցին) Երանի այս շարձարանքներին երբ պէտք է վերջ լինի: Ես չեմ համբերի և կը փախչեմ:

ՄԻԼ.—(նրան) Միայն համարձակեցէք:

ՊԱԼ.—(Մարիա Դմիտ.)—Ներողութիւն, ձեր խոնարհ ծառան եմ: (Այս տեսարանի ժամանակ Պալիցկին տաք տաք ինչ որ պատմում է Մարիա Դմիտ.):

ՄԻԼ.—(Լեօլին) Իսկ դու գեղեցկուհիս, արի այստեղ, դու երեխայ ես և քեզ չի կարելի լրսել մեծերի խօսակցութիւնը. նստիր, ես քեզ ուզում եմ մի քիչ կշտամբել:

ԼՆ.—Մեղքս ինչու՞ն է:

ՄԻԼ.—Վերջապէս ժպտացիր, թէ չէ արտասուքներիցդ ձանձրացայ և ո՞վ է նրան հնա-

րել, նախ որ տգեղ բան է և երկրորդ-առողջապահական կանոններից դուրս է: Հա, Բերեժկովդ այստեղ է:

ԼՆ.—Ո՞ւր է:

ՄԻԼ.—Գնաց անցնելու, ես նրան տխրեցրի: Եկել էր քեզ առաջարկութիւն անելու:

ԼՆ.—Յետո՞յ:

ՄԻԼ.—Ես նրան ասացի, որ ժամանակը չէ:

ԼՆ.—Ես այդպէս էլ գիտէի, խոստացար ինձ օգնելու, իսկ անում ես հակառակը:

ՄԻԼ.—Ե՞ս, գժւել ես ինչ է:

ԼՆ.—Ի հարկէ... բացի դուրս անելուց մի խելօք բան չէլ՛ր կարող հնարել... Նա, ի՞նչ է, խանգարում էր քեզ, թողէիր առաջարկութիւն անէր:

ՄԻԼ.—Բայց քեռին նրան կը մերժէր:

ԼՆ.—Այդ դարձեալ քո գործը չէ:

ՄԻԼ.—Այդ շնորհակալութեան փոխարէն է: Հօրդ իսկական պատճէն ես:

ԼՆ.—Չէ, շատ խելօք բան ես մտածել... աւելի լաւ է մի խառնելի: Դուք ամենքդ էլ կարծես խօսք էք կապել ինձ փաստել: Հանգիստ թողէք ինձ, խնդրում եմ: Վասիլիյ Պաւլովիչ, Վասիլիյ Պաւլովիչ:

ՄԱՐ. ԴՄ.—Լեօլիչկան, կարծեմ, ձեզ է կանչում:

ՊԱԼ. Ներողութիւն, ի՞նչ կը հրամայէք:

ԼԵ.—Ես ցանկանում եմ մի քիչ անցնել, գնանք միասին լճի մօտ:

ՊԱԼ.—Մեծ ուրախութեամբ: (Առաջարկում է թնւը եւ գնում են):

ՄԻԼ.—(պառուզայից յետոյ) Քեռակին:

ՄԱՐ. ԴՄ.—Միլօշկա:

ՄԻԼ.—Տես՞ք:

ՄԱՐ. ԴՄ.—Տեսայ:

ՄԻԼ.—Այդ ի՞նչ կը նշանակի:

ՄԱՐ. ԴՄ.—Խելքս ջուր չէ խմում, այդ ի՞նչից յանկարծ...

ՄԻԼ.—Ոչնչից, ասացի որ Բերեժկովին այստեղ չէ, բղաւեց, կամակորուժիւն արաւ, ճղաւեց, բռնեց Ռաստովցիին և...

ՄԱՐ. ԴՄ.—Եւ ի՞նչ է գտել նրանում Լեօլեան, ոչ մի լաւ բան: Ճաշին այնպիսի բաներ էր պատմում, որ սկսել էի ապուրը պատառաքողով խաղտել, այժմ էլ ինչ որ հանքերի մասին էր պատմում, կարծես շատ բան եմ հասկանում այդ հանքերից: Էհ, գնամ, տեսնեմ ինչ եղաւ ինքնաեռը, թէ չէ պարոն չինացիս կը գայ, կը սկսի պատերազմել: (Գնում է):

#### ՏԵՍԻԼ 4

ՄԻԼՉՁԿԱ, ԲԵՐԵԺԿՈՎ, յետոյ ԼԵՕԼԵԱ

ՄԻԼ.—Խօսք չունիմ, մարդիկ են հա՛ այս-

տեղ, ամեն ինչ դրանց մօտ թարս է... (մտնում է Բերեժկովը պիղժակով): Հը, զբօսնեցի՞ք:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Այո:

ՄԻԼ.—Հողը ես պատրաստել եմ: Նախ և առաջ դուք պիտի բացադրէք Լեօլիչկի հետ:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Լաւ, ի՞նչ բացադրեմ:

ՄԻԼ.—Որ ինչպէս տանջւում էք:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Ես այժմ չեմ տանջւում այլ ևս, ամեն ինչ բթացել է իմ մէջ: Եկայ տուն, տեսնեմ մայրիկս մուրաբա է եփում, այնպիսի փրփուր է կանգնել երեսին, մի մատ հաստութեամբ, մայրիկը գիտէ որ ես սիրում եմ, քսեց սև հացի վրայ և ասաց. «Կեր, Նադինկա, դու սիրում ես, գիտեմ»: Իսկ ես, ի՞նչ փրփուր ուտելու տրամադրութիւն ունիմ, մի միտք է գլխումս միայն նստած. յիմար եմ, յիմար, որ ոչինչ կարգին բան բռնել չեմ կարողանում:

ՄԻԼ.—Բաւական է, ի՞նչ հարկաւորութիւն կայ ինքն իրան այդքան տանջելու: Երբ Լեօլեան գայ, ընկէք ծնկաչոք նրա առաջ և ասացէք ամենը, ինչ ծանրացած է ձեր սրտին, կրկնեցէք այն ամենը, ինչ որ փոքր առաջ ինձ ասացիք:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Չի դուրս գալ:

ՄԻԼ.—Ի՞նչը չի դուրս գալ: Այնժամանակ այնպէս լաւ պատմում էիք:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Այն քաջութիւնը չը կայ, անցաւ գնաց արդէն:

ՄԻԼ.—Ինձ հետ հօ խօսու՞մ էի՞ք:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Այ ձեզ հետ ինձ սարսափելի  
չէ բոլորովին:

ՄԻԼ.—Լաւ, Լեօլեան գայլ հօ չէ: (Մտնում  
է Լեօլեան) Ահա և նա. ո՞ւր մնաց Վասիլիյ Պաւ-  
լովիչը:

ԼԵ.—Հայրիկը բռնեց նրան:

ՄԻԼ.—Գեհնադիյ կարպովիչի հետ մենք այս-  
տեղ խօսում էինք. (կամաց Լեօլին) նա ուզում  
է քեզ հետ մի քիչ խօսել: Գոնէ խղճա նրան,  
ճշմարիտ նա այնպէս պարզ սիրտ ունի, այն  
աստիճան ընկճւել է խեղճը, որ իրա սիրած մու-  
րաբայի փրփուրը չէ կարողացել մինչև անգամ  
ուտել:

ԼԵ.—(կամաց) Թող սկսի:

ՄԻԼ.—(կամաց) Այստեղ էլ ես կոտրուում  
և ինչպէս չես ամաչում: (Բերեժկովին) Սկսեցէք:

ԲԵՐԵԺԿՈՎ.—(կամաց) Օլգա Իվանովնան  
կարծեմ տրամադրւած չէ և գուցէ բարկանայ:

ՄԻԼ.—(կամաց) Չի համարձակւի: (Լեօլին  
կամաց) Դէ, մի նստիր այդպէս, կարծես արշին ես  
կուլ տւել, ես ձեզ կը թողնեմ: (Բերեժկովին կա-  
մաց) Համարձակ: (Երգելով զնում է):

(Մեծ պառլաւ. Բերեժկովը հագում է, նստում է  
նստարանի ծայրին, խնչում է, ուղղում է, ուզում  
է մի քան ասել: Լեօլեան նստած է նստարանի  
միւս ծայրին եւ նայում է իրա շորերին, երբեմն

հայեացք ձգելով Բերեժկովի վրայ: Տեսնելով որ  
նա լուռ է, կամաց կամաց վրդովում է, ճրմ-  
լում է թաշկինակը, խփում է ոտով գետնին, թռթ-  
ում է ուսերը, վերջապէս վեր է թռչում եւ արագ  
զնում տուն):

ԲԵՐԵԺԿՈՎ.—(ապշած)—Բացադուեցի՞նք:

ՄԻԼ.—(մտնելով) Հ՛ը, ի՞նչ:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Ոչինչ:

ՄԻԼ.—Ի՞նչ ասացիք նրան:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Ոչինչ:

ՄԻԼ.—Նա ձեզ:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Դարձեալ ոչինչ:

ՄԻԼ.—Իսկապէս որ ոչինչ,

ԲԵՐԵԺԿՈՎ.—Բայց չէ որ Օլգա Իվանով-  
նայի հետ չի կարելի այնպէս խօսել, ինչպէս ձեզ  
հետ... պէտք է մտածել, խօսքեր փնտրել, իսկ  
ես միանգամից չեմ կարող:

ՄԻԼ.—Երևի երկար ժամանակ էիք փնտ-  
րում և մտածում:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Լսեցէք, Լիւզմիլա Անդրէ-  
ննա, թքեցէք ինձ վրայ և թողէք, ճշմարիտ, ին-  
ձանից լաւ բան չի դուրս գալ:

ՄԻԼ.—Չէ, այժմ ես ինքս էլ եմ զգում որ  
դէպքը բաց թողի, բայց ոչինչ, ես կարգի կը  
գցեմ: Գնանք:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Ո՛ւր:

**ՄԻԼ.**—Ձեր գործը չէ: Գնանք: (վերցնում է նրա թերը եւ գնում են պարտէզ):

### ՏԵՍԻԼ 5

**ՄԱՐԻԱ ԴՄԻՏ., ԼԵՕԼԵԱ տնից և ԴԱՇԱ, որ սեղանը պատրաստում է թէյի համար, յետոյ ՄԻԼՕՉԿԱ.**

**ՄԱՐ. ԴՄ.**—Ո՛չ, ինչ ուզում ես ասա, սակայն այդ լաւ չէ, տգեղ է, և չը գիտեմ, նրա մէջ ինչ ես գտել, աչքդ չես հեռացնում նրանից:

**ԼԵ.**—Դու, մայրիկ, նրան ամենևին չես ճանաչում, բայց խօսում ես ի դուր:

**ՄԱՐ. ԴՄ.**—Դէ, տեսէք, տեսէք ինչեր է խօսում, խելագար ես դու, ուրիշ ոչինչ:

**ԼԵ.**—Ես գիտեմ, դու ինչ ես մտածում, բայց հաւատա, մայրիկ, որ չարաչար սխալում ես, նրան ես երբէք չեմ գնալ, երբէք:

**ՄԻԼ.**—(մտնելով)—Դէ, տղամարդկանց բաժնում ամեն ինչ կարգին է:

**ՄԱՐ. ԴՄ.**—Թիւ, թիւ... աչքով չը տանք:

**ՄԻԼ.**—Ծանօթացրի Բերեժկովին Ռաստովցիների հետ և մինչև անգամ քեռին, այնքան քաղաքավարի գտնւեց, որ հարցրեց նրա առողջութիւնը: Ահա ինչ. իմ սարքածները քանդոււմ են, գործը միայն այնժամանակ գլուխ կը գայ, երբ նա գնայ:

**ԼԵ.**—Ո՞վ:

**ՄԻԼ.**—Պալիցկին:

**ԼԵ.**—Ի՞նչ Պալիցկի:

**ՄԻԼ.**—Ուրախացիր, բերանիցս դուրս թռուաւ:

**ԼԵ.**—Այդ անց Պալիցկին է, որ քեզ հետ գնացքում գալիս է եղել հա:

**ՄԻԼ.**—Այո, այո, միայն քեռու մօտ չասէք, թէ չէ կը սպանի, առանց այն էլ պատրաստ է ինձ մի գտալ ջրում խեղդել:

**ՄԱՐ. ԴՄ.**—Սպասիր, սպասիր, ես ինչ որ բան չեմ հասկանում, մի՞թէ նա Ռաստովցի է, Պալեւ Միխայլովիչի որդին:

**ՄԻԼ.**—Բանն էլ նրանուհին է, որ ոչ: Ասենք այդ ամենը այնքան պարզ է որ...

**ՄԱՐ. ԴՄ.**—Քեզ համար գուցէ, բայց ինձ համար ամենևին:

**ՄԻԼ.**—Այն պարոնը, որին ամենքը Ռաստովցի տեղ են դնում, ամենևին Ռաստովցի է:

**ՄԱՐ. ԴՄ.**—Սպասիր, սպասիր, սխալած հօ չեմ, չէ որ մարդս ինքն էլ նրան ճանաչեց:

**ՄԻԼ.**—Թէ ինչպէս քեռին ճանաչեց նրան, իրանից էլ հարցրէք: Նա փաստաբան է, Պալիցկիյ, եկել է Սուխադօլսկու մօտ, չիմանալով որ նա արտասահման է գնացել, ես նրա հետ ծանօթ եմ վաղուց և միայն Լեօլիչկի երջանկու-

թեան համար պահեցի նրան և անւանեցի Ռաստովցն:

ՄԱՐ. ԴՄ.—Ահա այժմ մի բան հասկանում եմ:

ՄԻԼ.—Ես ենթադրում էի, որ նա մի քանի օր կը մնայ, կասի քեռուն, որ Լեօլեան նըրան դուր չէ գալիս և քեռին նրա ջգրուկը վերցնի ու Լեօլիչկին կը տայ Բերեժկովին, բայց այժմ բանն այնպէս դառաւ, որ պէտք է շուտով նըրան հեռացնել:

ՄԱՐ. ԴՄ.—Ուրիշ ճար էլ չը կայ:

ԼԵ.—Հարկաւոր էր դրա մասին առաջ ասել և աւելորդ չէր լինի, նախ բան մի բան հնարելը մի լաւ մտածել:

ՄԻԼ.—Ամենքի գլուխն էլ քո և քո հօր գլխների նման չէ շինւած:

ԼԵ.—Եւ շատ ափսոս, այնժամանակ դու այդպիսի յիմարութիւն չէիր էլ անի:

ՄԻԼ.—Իմ արած յիմարութիւնը յամենայն դէպս քոնից փոքր է, չեմ կախել նրա վրից, նրա հետ աչքերով չեմ խաղացել և օրական քսան անգամ շորերս փոխել, ինչպէս դու:

ԼԵ.—Ճարս ինչ, քեզ նման չեմ կարող մարդու միանգամից գժլացնել, սիրահարցնել վրաս, վերցրնւ, քեզ լինի:

ՄԻԼ.—Շնորհակալ եմ, ես նրանով այնպէս չեմ գրաււած, ինչպէս դու կարծում ես: Ես

գիտեմ ինչու վրայ ես չարանում, չարութիւնդ գալիս է, որ ոստայնդ դեռ չես վերջացրել, բայց ճանճը արդէն փախչում է:

ՄԱՐ. ԴՄ.—Ինչ յիմար էք երկուսդ էլ, այդպիսի բանի մասին պէտք է սառնարիւն դատել:

ԼԵ.—Արէք, ինչ ուզում էք:

ՄԻԼ.—Ասացէք, քեռակին, արժէր որ ես սրա համար կուէի քեռու հետ:

ԼԵ.—Քեզ ոչ ոք չէր խնդրում:

ՄԱՐ.—ԴՄ. Սպասիր: Լաւ, ասենք որ սըրան հեռացրինք, յետոյ, չէ որ եթէ ոչ այսօր, վաղը անպատճառ իսկականը կը գայ:

ՄԻԼ.—Առայժմ նա չէ եկել, իսկ եթէ գայ, այնժամանակ մի բան կը հնարեմ: Գնանք քեռակին: (Գնում են պարտեզ)

## ՏԵՄԻԼ 6

ԼԵՕԼԵԱ միայնակ, յետոյ ԶՈՒԳՐԵՆԵՌՎ

ԼԵ.—Ուրեմն նա Բաստովցեր չէ, շատ լաւ որ ասացին: Եթէ չասէին՝ գուցէ նրա գնալու դէմ ոչինչ չունենայի, բայց խոստովանք լինի, նա ինձ դուր է գալիս և Միլօչկի ջգրու նրա հետ ես երկու, երեք անգամ աւելի սիրալիր կը լինիմ, թող տրաքւի, չը կարծի որ ես Բերեժկովի նման յիմար եմ և կարող է վարւել

ինձ հետ իր ուղածի նման, ոչ:

**ՉՈՒԳՐ.**—(մտնելով)—Հէնց այդպէս էլ կարծում էր, որ դու այստեղ միայնակ կը լինես: Չարմանալի ուրախ է:

**ԼԵ.**—Ի՞նչ կը հրամայէք ինձ անել:

**ՉՈՒԳՐ.**—Թողնել կամակորուժիւնը և խելքի գալ: Հիւր է եկել, իսկ դու նրանից փախչում ես այնպէս, ինչպէս ժանդարտից: Ինչքան սիրալիր վարմունք է, իսկ նա շարունակ քո մասին է հարցնում:

**ԼԵ.**—Այդ նրա գործն է:

**ՉՈՒԳՐ.**—Գիտար նւագողդ էլ է այստեղ:

**ԼԵ.**—Ո՞վ:

**ՉՈՒԳՐ.**—Այդ քո Բերեժկովը և մի հարցնող լինի, ի՞նչ կայ, ո՞ւր է եկել: Ուրախութեամբ ես նրան սատանային կը նւիրէի, միայն անծանօթ սատանայի, որ նրան երբէք յետ չը բերէր: Այդ անպիտանը, Միլօչկան, այն տեղը հասցրեց, որ ստիպւած էի նրանից նրա առողջութեան մասին էլ հարցնել: Վասինկան այնտեղ այնպիսի բաներ է պատմում, և սրտեղ չէ եղել նա, ի՞նչեր չէ տեսել նա:

**ԼԵ.**—Երանի նրան:

**ՉՈՒԳՐ.**—Այդ ուղղակի էջի կամակորուժիւն է... Այդ երևի դարձեալ քո Միլօչկան է բեզ դասախօսութիւն կարդացել:

**ԼԵ.**—Դուք շատ էք նշանակութիւն տալիս

նրան:

**ՉՈՒԳՐ.**—Սուտ ես ասում, սուտ: Գլուխս կը կտրեմ, եթէ դու և նա միասին չը լինէք խաղեր սարքում: Ո՞ր սատանան բերաւ նրան այստեղ մեր շար բողբոխ: Ի՞նչ է, քո Բերեժկովը նրանից լաւ է հա:

**ԼԵ.**—Ամեն մարդ իր ճաշակն ունի:

**ՉՈՒԳՐ.**—Լռում է, փսսացնում դարբնոցի փուլքսի նման, երբ Վասեան խօսում էր, նա այնպէս էր լսում բերանը բաց, որ ահա, ահա, մտածում էի, կաշաղակները ներս կը թափւին:

**ԼԵ.**—Երկամր կը մնայ ձեր Վասինկան:

**ՉՈՒԳՐ.**—Այդ մասին ես գիտեմ:

**ԼԵ.**—Ես լսել եմ, որ ուզում է գնալ:

**ՉՈՒԳՐ.**—Եւ դու ի հարկէ ուրախ ես:

**ԼԵ.**—Ի հարկէ, և շատ լաւ կանի, ոչ ոքի նա այստեղ հարկաւոր չէ:

**ՉՈՒԳՐ.**—Ի՞նձ է նա հարկաւոր, ես նրան բաց չեմ թողնի: Մի շաբաթ, երկու շաբաթ, երեք... մի տարի, երկու, երեք տարի չեմ թողնի և իմ ասածը կանեմ: (զնում է տուն):

**ԼԵ.**—Այժմ տեսնենք Միլօչկայ: (զնում է տուն)

## ՏԵՍԻՒԼ 7

ՄԻՂՕՁԿԱ և ՊԱԼԻՑԿԻՅ (այգուց)

ՄԻՂ.—Ուրեմն քաղեցէք զլիսարկդ զլուսիդ  
և հեռացէք:

ՊԱԼ.—Ես, Լիւդմիլա Անդրէկնա, բոլորովին  
համաձայն եմ ձեզ հետ, իմ դրութիւնն այստեղ  
բաւականին երկդիմի է:

ՄԻՂ.—Ահա ձեզ իմ վերջին խօսքը. գնա-  
ցէք, ամեն ինչ կարգադրեցէք աւելի խելօք:

## ՏԵՍԻՒԼ 8

Նրանք, ՉՈՒԳՐԵՆԵՆՈՎ և ԼԵՕԼԵԱ (տնից) ԲԵՐԵԺԿՈՎ  
և ՄԱՐԻԱ ԴՄԻՏ. պարտեղից: Վերջը ԴԱՇԱ ինքնատեղ:

ՉՈՒԳՐ.—Դարձեալ նրա հետ (Միլօզկին)  
Ո՞ւր է քեռակինդ:

ՄԻՂ.—Ահա նա, Բերեժկովի հետ գալիս է:

ՉՈՒԳՐ.—Նա էլ նրա հետ և ինչպէս են  
դրանք այդպէս յարմարեցնում: Ոչինչ, ըս-  
պասեցէք, ես շուտով ձեզ ամենքիդ ցոյց կը տամ:  
Չէ, խօսք չունիմ, լաւ տանտիկին է, թէյ չէ  
խմացրել մինչև այժմ: Մարիա Դմիտրիկնա,  
ժամը վեցը լրացաւ, բայց դեռ ինքնատեղ չե-  
կաւ... տեսէք ինչ էք սպրօմտ ա՛...:

ՄԱՐԻԱ ԴՄ. Իսկոյն, իսկոյն... Վաղուց

եմ պատւիրել... Դաշա, բեր ինքնատեղ...

ՉՈՒԳՐ.—(Միլօզկին) Մի ասա խնդրեմ,  
ի՞նչ ես կպել Վասինկին, չես թոյլ տալիս նրան  
մեզ հետ խօսելու, ի՞նչ գաղտնիքներ ունէք  
դուք:

ՄԻՂ.—Ոչ մի:

ՉՈՒԳՐ.—(Պալիցկուն) Ափսոս, զբօսնել չը  
կարողացանք, ոչինչ, թողնենք վաղաւն, բոլորը  
միասին չի կարելի:

ՊԱԼ.—Բայց ես Իվան Սերգէևիչ, ցանկա-  
նում եմ ձեզանից բաժանուել:

ՉՈՒԳՐ.—Ես հէնց այդպէս էլ գիտէի, թէ  
ուր պիտի տանեն ձեր այդ փսփոսոցները, ես  
հաւատացած էի, որ դու և Լեօլեան ինձ մի  
սիւրպրիդ էք պատրաստում:

ՄԻՂ.—Դարձեալ ե՞ս եմ մեղաւորը:

ՉՈՒԳՐ.—Եւ ի՞նչու համար այդպէս յան-  
կարծ վճռեցիք գնալ, ընդունեցինք մենք ձեզ  
կարծեմ լաւ, այս ցանցառների վրայ դուք ու-  
շագրութիւն մի դարձնէք, դուք ինձ մօտ էք ե-  
կել: Չեզ թողնե՛լ, ոչ մի կերպ, յետոյ ի՞նչ կա-  
սի իմ մասին Պաւել Միխայլովիչը, ո՛չ, ո՛չ, մեր  
տանը մի բան ձեզ չէ՞ դուր գալիս:

ՊԱԼ.—Օ, ի՞նչ էք ասում:

ՉՈՒԳՐ.—Ուրեմն խօսելու էլ հարկ չը կայ,  
իսկոյն ինքնատեղ կը բերեն, կը նստենք հրա-  
շալի թէյ խմելու և քաղցր մուրաբա ուտելու:

լինչ է այս, այսօր ես շարունակ ոտանաւորով եմ խօսում:

**ՊԱԼ.**—Ճիշտ ինձ անկարելի է մնալ:

**ՉՈՒԳՐ.**—Մարիա Դմիտրիենա, խնդրիր թանկագին հիւրին մնալ, գլուխ տուր, աղաչիր:

**ՄԱՐ.**—**ԴՄ.**—Իսկ եթէ անհրաժեշտ պիտի գնայ նա:

**ՉՈՒԳՐ.**—Դճւ էլ իմ դէմ, այդ ինչ է, կանացի ապստամբութիւն է, ինչ է, իսկ զիտես արդեօք որ... (Դաշան ընրում է ինքնատեղ) Ահա և ինքնատեղ: Նստիր Վասինկա, ահա այստեղ, իսկ դու, Լեօլեա, այդտեղ: Դէ, ածիր, Մարիա Դմիտրիենա, ածիր, ժամանակ մի կորցնիր:

**ՄԱՐ.** **ԴՄ.**—Առանց քո ասելու էլ ես շտապում եմ: (Թէյ է ածում եւ ըստանում):

**ՄԻԼ.**—(Բերեժկովին) Իսկ մեզ, Նադինկա, մոռացել են:

**ԲԵՐԵՃԿՈՎ.**—Այո:

**ՄԻԼ.**—Է՛հ, եկ, մենք էլ, խեղճերս, նստենք այստեղ հանդարտ, խելօք, գուցէ լաւ վարքիսմար մեզ էլ թէյ տան: (Նստում են նստարանի վրայ):

**ՄԱՐ.** **ԴՄ.**—Միօջկա, իսկ դճւք մօտեցէք սեղանին:

**ՄԻԼ.**—Ո՛չ, քեռակին, մենք վիրաւորւած ենք, մեզ մոռացաք: Մեզ համար այստեղ էլ լաւ է:

**ՄԻԼ.**—Նադինկա, գոնէ այսօր դուք եղէք

իմ կաւալերը, բերէք թէյը:

**ԲԵՐԵՃԿՈՎ.**—Ուրախութեամբ: (Վերցնում է թէյը եւ տանում, Չուգրենովը նրան ծուռ ծուռ նայում է):

**ՄԱՐ.** **ԴՄ.**—Իսկ ինչի մուրաբա կուզես, ահա կեռասի, ես այդ պատրաստել եմ Գեննադիյ կարպովիչի մօր սովորացրած ձևով:

**ՄԻԼ.**—Լաւ, տէք դրանից, շատ եմ նրա մասին լսել: (Բերեժկովը ընրում է) Փորձենք ձեր մուրաբան: (Կամաց Բերեժկովին) Սօսեցէք ինձ հետ, Լեօլեան նայում է այս կողմ:

**ԲԵՐԵՃԿՈՎ.**—Մեզ ինչ:

**ՄԻԼ.**—Ես ուզում եմ նրա նախանձը գոգրուել:

**ԲԵՐԵՃԿՈՎ.**—Ո՛չ, չարժէ, մենք աւելի լաւ է կը խօսենք ձեզ հետ պարզ, առանց կեղծիքների, թէ չէ առանց այդ էլ զգուշի է:

**ՉՈՒԳՐ.**—(Պալիցկուն) Բոլորովին ճիշտ է Վասինկա, աշխարհը գոյութիւն ունի միմիայն ընտանիքների շնորհիւ, ընտանիքը շատ մեծ բան է: Ես միայն այն ժամանակ տեսայ լոյս աշխարհը, երբ ամուսնացայ. ազնիւ խօսք:

**ՄԻԼ.**—Առաջ այդ շատ հեշտ էր, այժմ նախ քան ամուսնանալը պէտք է լաւ մտածել:

**ՉՈՒԳՐ.**—Միթէ, ասացէք խնդրեմ, ա՛յ, ինչ փիլիսոփայութիւն:

**ՄԻԼ.**—Առաջ մեզ ծնողներն էին պսակում,

այժմ այդ հարցում մենք էլ ենք ուզում մասնակցել:

**ՉՈՒԳՐ.**—Շատ ձեր կամքի էք դառել:

**ՄԻԼ.**—Ոչ, միայն շատ դատել ենք սկզբել, օրինակ այժմ չի կարելի հրամայել աղջկան ամուսնանալ:

**ՉՈՒԳՐ.**—Ոչ, կարելի է:

**ՄԻԼ.**—Հրամայել ի հարկէ կարելի է, բայց արդեօք կը կատարեն թէ ոչ՝ հարց է. նախ աղջիկը մի լաւ կը մտածի:

**ՉՈՒԳՐ.**—Ծնողները որ խորհուրդ են տալիս, աղջիկը մտածելու իրաւունք չունի:

**ՄԻԼ.**—Այդ ինչպէս կը հրամայէք նրան չը մտածել:

**ՉՈՒԳՐ.**—Ահա, ներկայացնում եմ ձեզ, օրիորդ նոր տեսակի, փառաբանւած դարիս վերջին պտուղներից, և ո՞ր յիմարը կը համաձայնւի սրա վրայ պսակել:

**ՄԻԼ.**—Ես, ասենք, յիմարին չեմ էլ գնալ:

**ՉՈՒԳՐ.**—Շատ իրաւունք են տւել ձեզ, մենք երիտասարդ ժամանակներս նրա կէսը չէինք իմանում, ինչ որ սրանց օրօրօցից է յայտնի:

**ՄԻԼ.**—Մի մոռանաք, քեռի, որ ես և Լեօլեան միասին ենք մեծացել և ուսում ստացել:

**ԼԵ.**—Ոչ շատ երկար:

**ՄԻԼ.**—Ա՛, գառնուկս, դ՞ու էլ խօսեցիր:

**ՉՈՒԳՐ.**—Է՛հ, սատանան նրա հետ, շարու-

նակենք, վասինկա:

**ՊԱԼ.**—Լսում եմ ուրախութեամբ:

**ՉՈՒԳՐ.**—Օրինակ, դուք հանդիպեցիք մի օրիորդի...

**ՄԻԼ.**—Քեռի, ոչ այդքան պարզ, այդ նկատելի է:

**ՉՈՒԳՐ.**—Հանդիպեցիք մի օրիորդի, սիրեցիք նրան...

**ՄԻԼ.**—Նայած թէ ով ինչպէս է հասկանում սէրը: Մեզ մի ծեր պարտիզպան ունինք, հարցնում եմ նրան մի անգամ, ինչ է, Սաւելիյ, սիրում ես դու ինձ: Իսկ նա պատասխանեց, ինչ սէր է մեր սէրը, օրիորդ, այ եթէ մի բաժակ զղի տաս, գուցէ...

**ՉՈՒԳՐ.**—Այ բո բանը հէնց այդ է որ կայ, նստել Սաւելիի հետ խելք-խելքի տալ. Եւ ինչ ես խօսակցութեան մէջ խառնւում, կարծեմ քեզ հետ չեն խօսում:

**ՄԻԼ.**—Ի՞նչ կը հրամայէք, գուցէ բերանս ջուր առնեմ, փակեմ-լռեմ:

**ՉՈՒԳՐ.**—Շատ լաւ կը լինէր: (Պալիցկուն) Ես այնուամենայնիւ իմն եմ պնդում... սիրեցիք դուք մի օրիորդի, պսակեցիք հետը...

**ՄԻԼ.**—Իսկ միւս օրը նա ձեր երեսը կը չանկուտի:

**ՉՈՒԳՐ.**—Տէր Աստուած, ինչ պատիժ է այս, մի բառ չի թողնում արտասանելու:

ՄԻԼ.—Թոյլ տւէք մի փոքրիկ օրինակ բերեմ, յետոյ անպատճառ կը լռեմ:

ՉՈՒԳՐ.—Աստ, աստ...

ՄԻԼ.—Դուք, Վասիլիյ Պաւլովիչ, երբ և իցէ գնե՛լ էք ժամացոյց:

ՊԱՎ.—Ի հարկէ

ՉՈՒԳՐ.—Եւ ի՞նչ կապ ունի ժամացոյցը մեր խօսակցութեան հետ:

ՄԱՐ. ԴՄ.—Դու, Իվան Սերգէեևիչ, սպասիր, թոյլ տուր նրան ասել:

ՄԻԼ.—Մի լաւ ժամացոյց ձեռք բերելու համար դուք մտնում էք խանութը և այնտեղ հարիւրից ընտրում էք մի հատ, այնպիսինը, որ ձեզ գրաւում է իւր արտաքին տեսքով, յետոյ դուք բացում էք միւս խուփը, նայում էք, շուռ ու մուռ էք տալիս և նայում էք նրա ներքը, այսպէս ասած հոգին, նրա ներքին բովանդակութիւնը...

ՉՈՒԳՐ.—Փիլիսոփայ է, փիլիսոփայ...

ՄԻԼ.—Գործարանի կնիքը և քարերի քանակութիւնը ձեզ համոզում են որ լաւն է, բացի այդ խանութպանը ձեզ տալիս է ժամացոյցը երկու տարւայ ապահովութեամբ...

ՉՈՒԳՐ.—Կարծեմ դու էլ մտադիր ես երկու տարի գլուխներս ցաւացնել:

ՄԻԼ.—Եթէ ուզում էք ժամացոյցը բանի, նրան, լարում էք, չէք ուզում, նրան միշտ կա-

րող էք կանգնացնել: Բայց տալով ձեր աղջկան մի մարդու, քեռի, միթէ դուք կարող էք նրան ապահովել, որ նա էլ կը հպատակւի մարդուն այնպէս, ինչպէս ժամացոյցը:

ՄԱՐ. ԴՄ.—Կեցցէս, Միլօչկա:

ՄԻԼ.—Կնիք չունի նա վրան, լարել չի կարելի, ուղղելու չես կարող տալ, սեմ պիտի գանգատւիս:

ՉՈՒԳՐ.—Հօրը և մօրը:

ՄԻԼ.—Դէ, ես այնպիսի հայրեր եմ ճանաչում, որոնք քնում են և մտածում, թէ ինչպէս անեն որ իրանց աղջկան տան մի հարուստ մարդու: Իսկ եթէ պատահի, որ ամուսինը գանգատւի կնոջ վրայ, ծնողները իսկոյն կը պատասխանեն. «նա մեզ մօտ այդպէս չէր, մեղաւորը դուք էք:»—Ես վերջացրի:

ՉՈՒԳՐ.—Եւ շատ լաւ արիր: Դու... դու յիմար ես. կարելի է սրա հետ սառնասիրտ խօսել:

ԼՆ.—Բան չունես, հայրիկ, ուշադրութիւն ես դարձնում:

ՉՈՒԳՐ.—Այդ էլ ճիշտ է: Մարիա Դմիտրիւնա, մի բաժակ էլ ածիր:

ՄԻԼ.—(Բերեժկովին) Ինչո՞ւ թէյը չէք խմում, կը սառչի:

ԲԵՐԵՅԻՈՎ.—Ոչինչ, ուշքս ձեզ վրայ էր, ես կորցրի ինձ բոլորովին: Ինչպէս դուք կար-

մրել էք: Ահա տեսէք ինչպէս դուք լաւ էք խօսում, այնպէս լաւ դասաւորում էք բառերը, իսկական գերմանական գործ լինի կարծես, առաջին տեսակի, մաքուր շինած:

**ՉՈՒԳՐ.**—(Պալիցկուն) Բայց միայն անպատճառ Մօսկւայում, ոչ այնքան մեծ մի տուն, երկու յարկանի, յետոյ իբրև օժիտ կը տամ Լեօլիչկին:

**ՄԻԼ.**—Միթէ նա ամուսնանում է:

**ԼԵ.**—Մի անհանգստանալ, քեզանից չեմ օրինակ վերցնիլ:

**ՉՈՒԳՐ.**—(Պալիցկուն) Այս օրերս մենք նրա հետ միասին մտածում էինք այդ բանի մասին. Լեօլեա, աւելի լաւ է դու ինքդ պատմիր: Եւ ինչեք ասես, որ նա չասեց, կարծես մի ապարանք էր նկարագրում:

**ՊԱԼ.**—Այդ շատ հետաքրքիր է:

(Միաժամանակ)

**ԼԵ.**—Ես շատ սովորական բան եմ ուզում, մարմարեայ սանդուխտներ:

**ՄԱՐ. ԴՄ.**—Կը սայթաքւենք, ոտներս կը կոտրւի:

**ՉՈՒԳՐ.**—Գորգ կը փռուենք, յիմարութիւններ մի ասիր:

**ԼԵ.**—Դահլիճը ի հարկէ երկու լուսով...

**ՄԱՐ. ԴՄ.** Չէ, չէ... մի...

**ՄԻԼ.**—Եւ ձանձրացրեց ինձ այս բոլոր աղմուկը, ես այս ըոպէին յիշեցի, ինչպէս դուք մի քիչ առաջ պատմում էիք. փոքրիկ բռնակարան, լոյս, մաքուր...

կիսախաւար սենեակ, դաշնամուրի տխուր մեղեդին... Վառարանում փայտը ճրթճրթում է, կրակը կամ բոցավառում է, կամ մա-

երեք լուսով:

**ԼԵ.**—Ամեն կողմ արձաններ... կահ կարասիքը թանկանոց և փափուկ, ես տեսայ արտասահմանի յայտարարութիւնների մէջ: Սեղաններ, աթոռներ ոսկեզոծ...

րում, իսկ դաշնամուրի ձայնը լսում է հանդարտ, մերթուժեղ և արձագանք է տալիս հեռու, հեռու...

**Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր**

... (Faint bleed-through text from the reverse side of the page)

## ՏԵՍԻԼ 2

Նրանք և ՄԻԼՕԶԿԱ

ՄԻԼ.—(անից) Այդ սև համար է այդ սիրուն փունջը:

ԴԱՇԱ.—Ձեզանից զատ սև համար կը լինի:

ՇԱՊ.—Պարոն Բերեժկովը պատւիրեց բերել ձեզ, բարևում են և շնորհակալութիւն յայտնում:

ՄԻԼ.—Ա՛, Շապտուկենկօ, բարեաւ...

ՇԱՊ.—Բարի առողջութիւն, ձերդ գերագանցութիւն:

ՄԻԼ.—Դու ի՞նքդ տեսար նրան:

ՇԱՊ.—Ոչ, նրանց այգեպանը բերեց:

ՄԻԼ.—Լաւ, ապա սիլ է բարևում և շնորհակալութիւն յայտնում:

ՇԱՊ.—Այդպէս միշտ ընդունւած է:

ՄԻԼ.—Դէ շնորհակալ եմ: (Հանում է փունջից մի ծաղիկ): Դաշա, տա՛ր այս իմ սենեակը: (Փունջը տալիս է):

ԴԱՇԱ.—Աչքիս վրայ: (Գնում է):

ՄԻԼ.—Մերոնք վերադարձան:

ՇԱՊ.—Ո՛չ, դեռ զբօսում են: Ով որ գալիս է, բարեաւ ֆաք, ձերդ գերագանցութիւն: (Գրնում է):

Ք. Ա. Ր. Ա. Ր. Ի. Ա. Ս

Երկու շաբաթ յետոյ

## ՏԵՍԻԼ 1

ՇԱՊՏՕԼԵՆԿՕ և ԴԱՇԱ

ՇԱՊ.—(աջից՝ ծաղիկ փունջ ձեռքին) Այստեղ էլ ոչ ոք չը կայ, սէր են մտել ամենքն էլ... (մտնում է Դաշան)—Դարեա Ֆեօդորովային խոնարհագոյնս... նեղութիւն քաշեցէք ստանալ հոտաւէտ աւել:

ԴԱՇԱ.—(վերցնելով փունջը) Թոյլ տւիք շատ ճիշտ նկատելու. իսկական աւել... և չեն էլ ափսոսում, փչացնում են ծաղիկները: Ի՞նչ լաւ բան կայ սրա մէջ. մէկ, երկու, երեք օր՝ ոչինչ, լաւ հոտ ունին, բայց հէնց որ շորացան՝ դէն ձգիր:

ՇԱՊ.—Մի խօսքով աղբ:

ԴԱՇԱ.—Ուրիշ բան են կօնֆետները, գոնէ քաղցր են և կարելի է թէյ խմել նրանցով, իսկ սա ի՞նչ է:

ՇԱՊ.—Ընծայ... Այսինքն տալիս եմ նրան, ով ինձ սիրելի է... դրա համար էլ աղաներ են,

## ՏԵՍԻՆ 3.

ՄԻՆՈՉԿԱՍ, յետոյ ԲԵՐԵԺԿՈՎ.

ՄԻՆ.— Բայց նա ճշմարիտ է ասում, մարդիկ նոյն ծաղիկներն են, պէտք է նրանց լաւ պահպանել. իմ Նադեան իսկոյն բարձրացաւ, տակի հողը պարարտացրին... կտրեցին վատ խոտերը, թէ չէ նա բոլորովին թառամել էր... ոսկու գինը ոսկերիչը գիտէ:

ԲԵՐԵԺԿՈՎ.— (ընտրի յետևից) Դու լսիր, ջուր չը լսմացնես նրան:

ՇԱՊ.— Հանգիստ եղէք, ձերդ գերազանցութիւն: Տարու... ԲԱՍ

ՄԻՆ.— Ահա գալիս է աշակերտս:

ԲԵՐԵԺԿՈՎ.— (երկար կօշիկներով, կարմիր շապիկով եւ անթել վենգերկայով, կառապանի հագուստով)— Բարի երեկոյ, Լիւդմիլա Անդրէենա:

ՄԻՆ.— Բարեաւ: (Բերեժկովը համարում է նրա ձեռքը) Օհօ, ինչ սիրուն զգեստով էք այսօր, թոյլ տէք հրճել:

ԲԵՐԵԺԿՈՎ.— Միայն չը ծիծաղէք վրաս:

ՄԻՆ.— Ո՞րտեղից էք գալիս:

ԲԵՐԵԺԿՈՎ.— Կայարան էի գնացել հօրս ճանապարհելու, Մօսկա գնաց, գործով... Մտածեցի, մի գուցէ ցանկանաք կառքով զբօսնել, հըրաշալի երեկոյ է:

ՄԻՆ.— Ո՛չ, այսօր տրամադրուած չեմ:

ԲԵՐԵԺԿՈՎ.— Ինչպէս կամենաք, հայրիկա ու մայրիկա բարևում են ձեզ, մեր տանը այժմ միայն ձեր մասին են խօսում, ամենքին գրաւել էք:

ՄԻՆ.— Իբր թէ:

ԲԵՐԵԺԿՈՎ.— Հաւատացնում եմ ձեզ, մայրիկա ինչ ասի— չասի, շարունակ ձեր անունն է տալիս.

ՄԻՆ.— Բոլորովին չէի կարող երևակայել, որ այդպիսի տպաւորութիւն կը գործեմ: Ապա ի՞նչ էք մտածում Լեօլիչիկի մասին:

ԲԵՐԵԺԿՈՎ.— Ոչինչ, վերջ ամենին: Ի հարկէ մայրիկը տխրեց, որ այդպէս եղաւ, բայց հայրիկն ասում է. «Եւ լաւ եղաւ, որ ոչինչ դուրս չեկաւ, որովհետեւ այդպիսի կին չէ հարկաւոր Նադինկին»,— այսինքն ինձ... ասում է «Օլգա Իվանովնան շատ քնքոյշ է, պաքսիմաթի նըման, մատով կպչես՝ կը փշրել», ասում է...

ՄԻՆ.— Ուրեմն ի՞նչ տեսակ կին է ուզում ձեզ համար:

ԲԵՐԵԺԿՈՎ.— Նրա ուղածը շատ լաւն է, բայց ես վախենում եմ, որ նա ինձ չի գայ, որովհետեւ ես ի՞նչ եմ որ...

ՄԻՆ.— Լաւ մարդ, որի նմանը այժմ քիչ կը գտնուի: Եթէ գաղտնիք չէ, ո՞վ է այդ օրիորդը, ԲԵՐԵԺԿՈՎ.— Մի օրիորդ, որին չի կարե-

լի նկարագրել ոչ գրչով, և ոչ լեզուով:

ՄԻԼ.—Այստեղացի է:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Ո՛հ, եկուր է... Մի խօսքով գեղեցկուհի: Կարելի է խելագարուել:

ՄԻԼ.—Միայն դուք մի խելագարուէք, ես վախենում եմ նրանցից:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Ինչպէս ասեմ ձեզ, այ եթէ նա համաձայլի, ես եթէ ոչ մշտապէս, գոնէ ժամանակով կը խելագարուեմ:

ՄԻԼ.—Իսկ դուք նրա հետ խօսել էք:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Ցաւն էլ այդ է, որ ոչ ընդամենը երկու շաբաթ է ճանաչում եմ նրան և մայրիկն էլ է ասում,—«նայիր, դրան էլ չը կորցնես», իսկ հայրիկն ասում է.—«ժառանգութիւնից կը զրկեմ, եթէ նա էլ մերժի քեզ»:

ՄԻԼ.—Ձեր գրութիւնը իսկապէս նախանձելի չէ: Իսկ օրիորդ՞ը...:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Շարունակ կատակներ է ասում և ծիծաղում:

ՄԻԼ.—Այդ լաւ չէ նրա կողմից: Եթէ ես նրան ճանաչէի, կասէի նրան:

ԲԵՐԵԺԿՈՎ.—(Փրթկացնելով) Դուք նրան ճանաչում էք:

ՄԻԼ.—Աւելի լաւ, երևակայեցէք, որ նրա հետ էք խօսում:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Թո՛ղ էք տալիս:

ՄԻԼ.—Երկու ձեռքով:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Լիւդմիլա Անդրէենա, այժմ դուք ինձ այնպէս թեւաորեցիք, որ սատանան էլ ինձ մօտ ոչինչ:

ՄԻԼ.—Դէ, ես սպասում եմ ձեզ: (Բերեժկովը փրթկացնում է) չ՛ը, ի՞նչ պատահեց:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Ո՛չինչ, շատ հետաքրքիր է:

ՄԻԼ.—Բայց և ուրախալի:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Այդ էլ ձիշտ է:

ՄԻԼ.—Դէ, հաստատեցէք, որ ես ի դուր չեմ չարչարել այս երկու շաբաթը, չէ՞ որ ես ձեր ուսուցիչն եմ:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Այսինքն այս մի քննութիւն է, հմ:

ՄԻԼ.—Ասացէք, դէ ասացէք, ի՞նչ յայտնեմ նրան:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Միանգամից շատ բան եմ ուզում ասել:

ՄԻԼ.—Դուք էլ սկսեցէք կարգով, զգացմունքով և շեշտով:

ԲԵՐԵԺԿՈՎ.—(Հազելով) Ապրում էի ես, Լիւդմիլա Անդրէենա, այստեղ, ինչպէս անպատում և ամենքն էլ ինձ վրայ նայում էին, ինչպէս մի երեխայի. Նադեա և Նադեա, ուրիշ ոչինչ: Տարի ու կէս սրանից առաջ Չուգրենեովները տեղափոխեցին այստեղ, ծանօթացանք. ապրելով հայրիկիս ու մայրիկիս հետ շարունակ, ի հարկէ, ես ազատ ձեռքից զուրկ

Տնացի, որովհետև ոչ մենք էինք հիւր գնում և ոչ էլ մեզ մօտ էին գալիս, իսկ սրանք սկսեցին գալ: Դէ, ես երիտասարդ անձայ, զգացել գիտեմ, սիրտ ունիմ, սկսեցի գալ սրանց մօտ, սկզբից ինքս էլ չը գիտէի ինչու, իսկ յետոյ զգացի որ սիրտս ինչ որ մի բան է ուզում, ընկեր է փնտրում, այստեղ էլ համարեա թէ ձեռքերի վրայ էին ման ածում, ինչ կասեմ, ինչ չեմ անիլ՝ հիանում են... Այ, երբ դուք լսեցիք, իմ գիտար նւագելը, ասացիք, որ շատ վատ է, իսկ նրանք հիանում էին և վերջի վերջոյ ես գլխի ընկայ, որ սրանց իմ փողերն են հարկաւոր և ոչ ես, մտածում էին բոլորը իրանց ձեռքը ձգել, բայց չը տրաքեց:

ՄԻԼ.—Ահա թէ ինչ, և դուք միայնակ եկաք այդ եզրակացութեան:

ԲԵՐԵԹԿՈՎ.—Մենակ ինքս: Երբ սրանց մօտ հիւր եկաւ, իմացան, որ ինձանից շատ ունի, իսկոյն ինձ մի կողմ թողին: (Փոքրիկ պառուզա):

ՄԻԼ.—Ինչո՞ւ լռեցիք:

ԲԵՐԵԹԿՈՎ.—Յետոյ դուք եկաք, կարծես արեգակ փայլեց ինձ համար, երբ տեսայ ձեզ, խօսեցի ձեզ հետ... Օլգայ Իվանովնայի հետ ստիպւած էի լինում խօսելիս խօսքեր փնտռել, որ լաւ դուրս գայ, որովհետև նա շարունակ վրաս ծիծաղում էր, թէ ես խօսել չը գիտեմ,

շարունակ լուռ եմ... իսկ ձեզ հետ անպէս լաւ է դուրս գալիս, պարզ... առաջ ձեզանից էլ էի վախենում, բայց երբ լաւ նայեցի, հասկացայ, թէ ինչ է փնտրում իմ սիրտը:

ՄԻԼ.—Ձէ, դուք ուղղակի Դոնժուան էք:

ԲԵՐԵԹԿՈՎ.—Ոչ, Դոնժուան չէ, ես յիմար եմ, իսկական յիմար, առաջին տեսակի, բառի բուն նշանակութեամբ յիմար:

ՄԻԼ.—Այդ ինչո՞ւ:

ԲԵՐԵԹԿՈՎ.—Այո, այո, առաջին օրը, հէնց որ ձեզ տեսայ, եկայ տուն, ուշքս ու միտքս այստեղ էր, տեղ չէի գտնում հանգստանալու:

ՄԻԼ.—Եւ ի հարկէ մուրաբայի փրփուրը չը կերաք:

ԲԵՐԵԹԿՈՎ.—Ի՞նչ փրփուր, ի՞նչ բան...

Մայրիկս ասում է. «գոնէ վերցրու գիտարդ, մի բան նւագիր», ի՞նչ նւագեմ, երբ մասներս դողում էին. ուշքս ու միտքս այստեղ էր, գոնէ մէկ էլ տեսնէի, աչքիս թէկուզ մի կողքով... ինքս էլ եմ իմանում, որ շատ գալով զահլա կը տանեմ և ահա սկսեցի փնջեր ուղարկել, ծաղիկները կտրում էի և նրանց ասում, որ ձեզ հասկացնեն իմ վիշտը, իմ թախիծը...

ՄԻԼ.—Կը նշանակի նրանց լաւ չէք խընդրել: Երևակայեցէք ինչ վասն են նրանք, ինձ ոչինչ չեն ասել: Ահա մէկը նրանցից:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Գուցէ դուք վատ էք հարց-  
րել:

ՄԻԼ.—(Ժաղիկը ականջին դնելով) Իսկապէս,  
ահա ինչ որ փսփսուում է:

ԲԵՐԵԺԿՈՎ.—(Ուրախ) Ահա տեսնում էք:

ՄԻԼ.—(խորամանկ) Այո, այո, միայն շատ  
կամաց:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Իսկ ես լսում եմ:

ՄԻԼ.—Ի՞նչ:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Ես ձեզ սիրում եմ (ընկնե-  
լով ծնկան վրայ եւ արագ) իսկ այժմ թէկուզ  
գլուխս կտրեցէք:

ՄԻԼ.—Վեր կացէք, վեր կացէք...

ԲԵՐԵԺԿՈՎ.—Իսկ ձեր պատասխանը:

ՄԻԼ.—Հարցրեք սրան (համըռուրում է ծա-  
ղիկը եւ զգելով զետնին, փախչում տուն):

#### ՏԵՍԻԼ 4.

ԲԵՐԵԺԿՈՎ, յետոյ ԶՈՒԳՐԵՆԵՈՎՆԵՐԸ

ԲԵՐԵԺԿՈՎ.—(վերցնելով ծաղիկը) Լիւրճի-  
լա Անդրէէնա, ի՞նչ է այս, երանգ... ոչ, ահա և  
ծաղիկը, ահա նա... (համըռուրում է) Սպիտակ  
մախմուրի վրայ կը դնեմ այժմ ես սրան, ա-  
պակիի տակ կը պահեմ, ոչ ոքի վրան նայել չեմ  
թողի... ոչ թէ ձեռքով դիպչել... ինքս ինձ չեմ  
հաւատում, գլխիս կարծես մուրճով խփելիս լի-

նեն, աչքերիս շորս կողմը կարծես կարմիր օ-  
ղակներ են պտտում... կեցցես, Նաղիա, ո՛չ, յի-  
մար չես դու, խելօք... խելօք... Իսկոյն հեռա-  
գիր կը տամ հայրիկին Մօսկւա, «շնորհաւորում  
եմ ձեզ, շամպայն ուղարկեցէք, միայն շատ»,  
ամբողջ գաւառը պիտի հարբեցնեմ... իսկ ինչ  
կը դառնայ մայրիկս, եթէ դամ և ասեմ. «օրն-  
նեցէք ինձ յաւիտեանս յաւիտենից, ամեն»:  
Ա՛յ թէ աչքերը կը չոփ, կը կարծի, որ իսկապէս  
ես խելագարուել եմ, ինչեր ասես, որ այժմ ես  
չանեմ... (երզում է եւ պարում):

ՄԱՐ. ԴՄ.—(մտնելով ամուսնու հետ միա-  
սին) Տէր Աստուած, այս ի՞նչ է, այժի՛նման թոչ-  
կոտում է, տաք ջուր խօ չեն ածել վրան, չէ՞  
խելագարուել հօ... Գեհնաղիյ Կարպովիչ...

ԲԵՐԵԺԿՈՎ.—Ներեցէք, որովհետև ինձ հետ  
այնպիսի մի բան է պատահել, որ անկարելի է  
չը թոչկոտալ այժի նման: Թոյլ տւէք համբու-  
րել ձեր ձեռքը, մի վախենաք, չեմ կծի: (Համ-  
ըռուրում է):

ԶՈՒԳՐ.—Ի՞նչ է, գժւէլ էք:

ԲԵՐԵԺԿՈՎ.—Այդ է որ կա... առաջ էլ շատ  
խելք չունէի, իսկ այժմ դաժս էլ բոլորովին  
կորցրի, որովհետև այժմ ես այնպէս բարձր եմ  
թուել, որ ինձ ձեռքով չէք դիպչի, չէք հասնի,  
բարձր քան լուռ անտառը, բարձր քան ամպը...  
Թոյլ տւէք ձեզ էլ համբուրել: (Համըռուրում է եւ

պատեցնում նրան) Եթէ դուք չը լինէիք, այսպէս չէր լինի... Ահա նա, բոլորը սրա պատճառաւ, իսկ ինչ պիտի լինի մի ժամից յետոյ, այն ոչ դուք, ոչ ես չէինք կարող երեակայել, երազում չէինք տեսնիլ... յարգանքներս... (պարելով եւ երգելով գնում է):

ՄԱՐ. ԴՄ.—(պառուզայից յետոյ) Ի վան Սերգէիչ, դու բան հասկանում ես:

ՉՈՒԳՐ.—Ոչ մի: Հասկանում եմ միայն սա, որ նրա կարկաժին կամ դրմփացրել են մի ծանրը բանով կամ չեղած խելքն է կորցրել, թէ չէ այդ թրջած հաւը այդպիսի թոնջքներ չէր անի:

ՄԱՐ. ԴՄ.—Եւ ինչ հրաշքներ են կատարւում այս քանի օրը:

ՉՈՒԳՐ.—Չը գիտեմ քեզ ինչ հրաշք է թրւում, բայց ես շատ բնական եմ գտնում այդ ամենը: Եւ ինչ էր նա դուրս տալիս, ես հաւատացած եմ, որ այդ ամենի մէջ խառն է Միլօշկի մատը: Ինչ չէի տալ, միայն իմանայի թէ նա ինչեր է սարքում իմ ջգրու:

ՄԱՐ. ԴՄ.—Դու էլ շատ ես յարձակում նրա վրայ, հանգիստ թող նրան, նրա գլուխը ցաւում է:

ՉՈՒԳՐ.—Չարմանալի չէ այդ, որովհետեւ յիմարութիւններով է լցրել: Ես դարձեալ Բերեժկովի մասին եմ մտածում, ծաղիկը քիթս խոթեց, հաւատացրեց, որ եթէ մենք չը լինէինք,

այդպէս չէր լինի, չէ մտածում արդեօք Միլօշկի օգնութեամբ Լեօլիչկի վրայ ամուսնանալու:

ՄԱՐ. ԴՄ.—Նա վաղուց է մոռացել քո Լեօլին, կոյր չէ, տեսնում է կարծեմ, որ Լեօլեան մէջքով է նայում նրան, բայց ինչ լաւ էր հագնւած, կառասպանի նման:

ՉՈՒԳՐ.—Հէնց ախոռում էլ պիտի մնայ ձիւաների մօտ: Կարգին տուն նրան անկարելի է թողնել:

ՄԱՐ. ԴՄ.—Իսկ քո գոված Վասինկան լաւ է, ձկան աչքերով, երբ եկաւ՝ գոնէ մարդու նրման էր, այժմ կարծես թէ պատրաստում է մէկին սպանելու:

ՉՈՒԳՐ.—Շատ բան ես հասկանում դու: Չինացիները շատ ճիշտ են ասում, որ կանանց սուրը նրանց լեզուն է, որ երբէք չէ ժանգոտւում:

ՄԱՐ. ԴՄ.—Ահա հէնց այդ սրով էլ պէտք է քեզ մի լաւ հասցնել, որ յիմարութիւններ դուս չը տաս:

ՉՈՒԳՐ.—Վիճիր, վիճիր, քեզ հաց չը տան, թողնեն միայն որ վիճես:

## ՏԵՍԻՒԼ 5

Նրանք, ՄԻԼՕՉԿԱ, յետոյ ՇԱՊՏՕԼԵՆԿՕ

ՄԻԼ.—(տանկից) Դուք արդէն վերադարձել էք, իսկ սուր են երիտասարդները:

ՄԱՐ. ԴՄ.—Լճի մօտ նստած են, ի՞նչ կայ այդպէս կարմրել ես:

ՄԻԼ.—Չը գիտեմ, երևի շոգիցն է:

ՄԱՐ. ԴՄ.—Դու խո ի՞նչ պէս է:

ՄԻԼ.—Ոչինչ, առայժմս տեղն է:

ՉՈՒԳՐ.—Իսկ քո աշակերտը, Բերեժկովը, խելագարւել է... Գալիս ենք, իսկ նա այստեղ մեն-մենակ այնպիսի թռիչքներ էր անում, որ սարսափեցիներք:

ՄԱՐ. ԴՄ.—Քեզ որ լսեն:

ՄԻԼ.—Այդ ի՞նչից կլինի, քեռի, ա՛:

ՉՈՒԳՐ.—Քեզ պէտք է հարցնել, այդ դու ես շարունակ նրա հետ քչփչում: Քիթս խոթեց մի ծաղիկ, — «բոլորը սա արաւ», — ասում է, համբուրեց...

ՄԻԼ.—Այ ծիծաղելի մարդ, երևակայեցէք, իսկ ես պառկած եմ սենեակումս և ոչինչ չիմացայ:

ՉՈՒԳՐ.—Պատմիր, պատմիր, ոչինչ չը գիտես, արա ինչո՞ւ ես ծիծաղում:

ՄԻԼ.—Լալու պատճառ չունիմ:

ՉՈՒԳՐ.—Դու վաղը գնում ես:

ՄԻԼ.—Պատրաստում եմ, շատ մնացի: Մայրիկը ախրում է, ուզում է որ գնամ:

ՉՈՒԳՐ.—Ուզում եմ նրան նամակ գրել, դու կը տանես: Գնամ մինչև թէյը մի քիչ պարապւեմ: (զնում է)

ՄԻԼ.—Երևակայում եմ քեռին ինչ կը գրի իմ մտոին: Լաւ է որ մայրիկին այնպէս եմ կըթել, որ ինձ հաւատում է: Իսկ դուք, քեռակինս, ինձ վրայ չէք բարկանում:

ՄԱՐ. ԴՄ.—Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում, հոգեակս, ինչո՞ւ համար, ափսոս միայն որ մեր գործը գլուխ չեկաւ: Մի բանից եմ միայն վախենում, որ յանկարծ եթէ գայ իսկական Ռաստովցերը, ի՞նչ անեմ ես, դու գնում ես, իսկ ես միայնակ կը կորչեմ բոլորովին:

ՄԻԼ.—Մի վախենաք, քեռակին, այսօր ամեն ինչ կը վճուի:

ՇԱՊ.—(մտնում է նամակ ձեռքին) Նամակ, ձերդ գերազանցութիւն, կայարանից բերին, ասում են մերն է, հասցէն էլ ճիշտ է, բայց այսպիսի մարդ չը կայ մեզ մօտ:

ՄԻԼ.—Տոյց տուր: Այո՛, մերն է. գնա՛:

ՇԱՊ.—Շատ տարօրինակ է (զնում է):

ՄԱՐ. ԴՄ.—Ո՞ւմն է:

ՄԻԼ.—Պալիցկովնը, միայն թէ ի՞նչ պէս տամ նրան, լաւ է որ քեռին չիմացաւ, բայց ահա և

նա Լեօլիչկի հետ:

ՄԱՐ. ԴՄ.—Գնանք, թէ չէ կը կարծեն,  
իբանց ենք ականջ դնում:

ՄԻԼ.—Ոչինչ, քեռակին, շուտով վերջ կը  
լինի և վերջաբանն էլ շատ փայլուն և անսպա-  
սելի: (զնում են)

## ՏԵՍԻԼ 6

ԼԵՕԼԵՍ. և ՊԱԼԻՅԿԻՅ

ԼԵ.—(Թեւանցուկ Պալիցկու հետ՝ այգուց)  
Այստեղ գետինը դեռ թաց է, ես ոտերս թըջե-  
ցի, աւելի լաւ է նստենք այստեղ, մինչև թէյը  
դեռ ժամանակ շատ կայ:

ՊԱԼ.—Ինչպէս կը հրամայէք:

ԼԵ.—Այնուամենայնիւ այս սարի լաւ ե-  
ղանակները երկար են տևում:

ՊԱԼ.—Իսկ մեզ մօտ՝ Պետերբուրգում, ես  
կարծում եմ, աշունը արդէն սկսած կը լինի  
ցոյց տալ իւր շնորքը... երկարատև անձրևներ,  
ցեխ, թխպած երկինք...

ԼԵ.—Ձը գիտեմ ձեզ վրայ ինչպէս, բայց  
ինձ վրայ տաղտկալի է ազդում աշունը... չես  
իմանում ինչ անես, ուր գնաս... աշունքից տը-  
լուր բան չը կայ... ամենքն էլ ընկճում են,  
ամենքը թուլանում:

ՊԱԼ.—Ինչպէս ամեն բան աշխարհում:

ԼԵ.—(Պաուլայից յետոյ) Ինչո՞ւ մտածմանց  
մէջ ընկաք, ինչի՞ մասին էք մտածում:

ՊԱԼ.—Նրա մասին, թէ որքան մեծ դեր է  
խաղում մեր կեանքում պատահմունքը, նա  
բարձրացնում է մարդուն, կամ ցած գլորում,  
հարստացնում է, կամ աղքատացնում, ստիպում  
է մտածել և ինքն էլ անհետացնում է այդ մը-  
տածմունքը:

ԼԵ.—Այդ որեղից որտեղ թռաք:

ՊԱԼ.—Եթէ չը հանդիպէի ես այստեղ Լիւդ-  
միլա Անդրէկնային, ամեն ինչ ուրիշ տեսակ կը  
լինէր:

ԼԵ.—Դուք բաւակամն չէք:

ՊԱԼ.—Օ, ոչ, ամենևին, թէպետև այդ  
հանդիպումը միևնոյն ժամանակ ինձ թէ ուրա-  
խացնում է և թէ տխրեցնում:

ԼԵ.—Ի դէպ, դուք այս վերջին օրերը շատ  
փոխւել էք, ի՞նչ է պատահել ձեզ:

ՊԱԼ.—Որքան որ մօտենում է իմ գնալու  
ժամանակը, ես այնքան աւելի և աւելի եմ տըխ-  
րում... շատ ափսոսում եմ, որ ես այստեղ մի  
չարածձի աշակերտի նման եմ ինձ պահել:

ԼԵ.—Ես գոնէ այդ չեմ նկատել:

ՊԱԼ.—Դուք շատ սիրալիւր էք, բայց եթէ  
իմանայիք բոլորը...

ԼԵ.—Ուրեմն ասացէք:

ՊԱԼ.—Իսկապէս այդ աւելի լաւ է, ես ին-

բըս էլ եմ ուզում բաժանելուց առաջ ձեզ ճշմարիտն ասել և ներում ինդրել:

ԼՆ.—Ես ձեզ վրայ բարկացած չեմ:

ՊԱԼ.—Ես բոլորովին հակառակ իմ կամքին, ձեր զգացմունքն արթնացրի, թէկուզ այդ ամեններն չի էլ թուլացնում իմ յանցանքը: Դուք ինձ այնպէս էիք հաւատով վերաբերում, բոլորովին չը նկատելով իմ վարմունքի բոլոր կեդատաութիւնը, բայց ես չեմ ուզում օգուել նրանից, որ ուրիշի համար է նշանակւած:

ԼՆ.—Ես ձեզ չեմ հասկանում:

ՊԱԼ.—Ես այն չեմ, որի տեղ ինձ ընդունում էք:

ԼՆ.—Ես դեռ առաջին օրից գիտէի թէ դուք ով էք: Միլօշկան բերանից դուրս թողեց:

ՊԱԼ.—Գիտէի՞ք, ուրեմն դուք նկատում էի՞ք, որ ես հիացած եմ ձեզնով:

ԼՆ.—Ես բոլորը նկատում էի, լաւ տեսնում էի... կանայք ընդհանրապէս շատ շուտ են ըզգում և եթէ մի փոքր էլ դուք լուռ մնայիք...

ՊԱԼ.—Ուրեմն այն ամենը, ինչ որ ինձ ասացիք լճի մօտ՝ ինձ էին վերաբերում և ոչ ուրիշի:

ԼՆ.—Ի հարկէ ձեզ:

ՊԱԼ.—(համբուրելով նրա ձեռքը) Օլգա Իվանովնա, ես այնքան բաղաւոր եմ... Ճիշտն ասացէք, կը գտնեմ ինձ:

ԼՆ.—Դիմեցէք հայրիկին, բայց կեղծիքը չը յայտնէք նրան:

ՊԱԼ.—Ինչո՞ւ:

ԼՆ.—Դեռ վաղ է:

ՊԱԼ.—Ուրեմն դուք կը ցանկանայիք դառնալ աւելի շուտ Ռաստովցևի, քան Պալիցկուկինը:

ԼՆ.—Այդ կը տեսնենք:

## ՏԵՍԻԼ 7

Նրանք, ՉՈՒԳՐԵՆԵՆՈՎ, յետոյ ՄԱՐԻԱ, ԴՄԻՏ. և ՄԻԼՈՉԿԱ, վերջը ՇԱՊՏՕԼԵՆԿՕ

ՉՈՒԳՐ.—Ա՛, ահա թէ դուք ուր էք, իսկ ես այնտեղ նամակ էի գրում: Միլօշկան վաղը գնում է, վերջապէս մի ազատ շուռնչ կը քաշենք, թէ չէ հոգիներս հանեց:

ՊԱԼ.—Ես էլ, Իվան Սերգէևիչ, մտադիր եմ գնալ, շատ նստեցի ձեզ մօտ:

ՉՈՒԳՐ.—Դուք ինչո՞ւ, կարծեմ ձեր վրան կոթին ոչ ոք չէ տալիս:

ՊԱԼ.—Ժամանակ է, բայց գնալուց առաջ կը ցանկանայի ձեզ հետ մի բանի մասին խօսել, յոյս ունիմ չէք բարկանալ վրաս:

ՉՈՒԳՐ.—Բանն ինչու՞մն է հոգիս, ամբողջովին լսողութիւն եմ:

ՊԱԼ.—Մնացի ձեզ մօտ ոչ այնքան շատ,

բայց և այս կարճ ժամանակամիջոցում ինձ հետ պատահեց այն, որը ես երբէք երևակայել չէի կարող:

ՉՈՒԳՐ.— Բանն ի՞նչու՞ն է:

ՊԱԼ.— Ընդունեցիք դուք ինձ ինչպէս ձեր ընտանիքի անդամ, ամենքն էլ այնքան սիրալիբ էին դէպի ինձ...

ՉՈՒԳՐ.— Ասենք ոչ ամենքը, ինչո՞ւ ճիշտը չասել:

ՊԱԼ.— Դուք ինքներդ նկատած կը լինէք, թէ որքան Օլգա Իվանովնան ինձ դուր է գալիս:

ՉՈՒԳՐ.— Նկատել եմ... եթէ բանն այդպէս հասաւ, այո, նկատել եմ:

ՊԱԼ.— Տէք նրան ինձ,

ՉՈՒԳՐ.— Այսինքն դուք խնդրում էք նրա ձեռքը:

ԼՆ.— Ի հարկէ, իբր չես հասկանում:

ՉՈՒԳՐ.— Վասինկա, հոգեակա... ի՞նչ խօսակցութիւններ են կարող լինել... վաղուց էի երազում... 25 տարի է սպասում եմ այս բոլորին... Թանկագին... գրկեցէք ինձ... (լայիս է) Վասինկա, գաւակներս, բաղաւոր եղէք, շարութեամբ չը յիշէք... Իսկ դու, դու, համաձայն ես արդեօք...

ԼՆ.— Հայրիկ...

ՉՈՒԳՐ.— Աչքերին, աչքերին նայիր... Դէ վերցրէք, հօ չեմ հակառակելու և այդ իմ բը-

նաւորութեան մէջ չը կայ էլ: Ա՛յ, դու չէիր ուզում նրան գնալ, հայրիկին շարացնում էիր, հակառակում էիր, իսկ այժմ աես որքան ուրախ ես: Բայց այս ո՞ւր է Մարիա Դմիտրիևնան, այսպիսի վե՛հ բոլորէ է, աղջկայ բաղդն է վճուում, իսկ նա չը կայ... Մարիա Դմիտրիևնա, մայր, շուտ արի այստեղ:

ՄԱՐ. ԴՄ.— (մ'անելով) չը, ի՞նչ է պատահել:

ՄԻԼ.— (մ'անելով նրա հետ) Ի՞նչ կայ, բանն ինչո՞ւն է:

ՉՈՒԳՐ.— Շնորհաւորիր հարս ու փեսային, չը, չէիր սպասում հա՛... ինչպէս ասում էի, այնպէս էլ եղաւ, իմ ուղածի նման... Իսկ դու կարծում էիր քոնը կը լինի: (Միջոզվեն) Արի, սատանայ, արի այստեղ, վիճում էիր քեռու հետ, մեքենաներ էիր լարում, սիւրպրիզ էիր պատրաստում ինձ համար, տեսա՞ր, ինքդ էլ կերար:

ՄԻԼ.— Կը նշանակի այդ լուրջ է, նա իսկուպէս առաջարկութիւն արաւ և դուք էլ ընդունեցիք:

ՉՈՒԳՐ.— Իսկ դու կարծում ես մենք այստեղ կատակներ ենք անում: Շնորհաւորիր:

ՄԻԼ.— Շնորհաւորում եմ, ի բոլոր սրտէ չը նորհաւորում եմ:

ՄԻԼ.— Ա՛յ, այդպէս լաւ է:

ՄԻԼ.— (նամակը տալով) Իսկ այժմ, Իպպո-

լիտ Վիտալիևիչ, թոյլ տուէք ձեզ տալ այս նամակը, նոր բերին:

ՉՍՊ.— Ի՞նչպիսիք Վիտալիևիչ:

ՄԻԼ.— Պալիցկիյ. ի՞նչ էք աչքներդ չոտել վերաս, սա փաստաբան Իպպոլիտ Վիտալիևիչ Պալիցկին է:

ՉՍՊ.— Ձի կարող լինել:

ՄԻԼ.— Իրանից հարցրէք:

ՊԱԼ.— Մի չարանաք, որ այսպէս պատահեց, բանն նրանումն է որ...

ՉՍՊ.— Խաբեցին, խելքից տարան, ծաղրածու շինեցին, շուտ գիւղապետին կանչեցէք:

ՄԱՐ. ԴՄ.— Ի՞նչ ես անում, ի՞նչ, խելքի եկ:

ՉՍՊ.— Ի՞նչ ես լուր, հ՛ր... հօրդ էլիբ ուզում խաբել, հա՛...

ԼԵ.— Այ տեսնում ես, ինչպիսին ես, հայրիկ:

ՉՍՊ.— Լուեցէք, մենք դեռ կը տեսնենք թէ որքան հեշտ է ինձ հետ այդպիսի խաղ խաղալը:

ԼԵ.— Բայց, հայրիկ, դու արդէն խօսք ես տուել:

ՉՍՊ.— Իմ խօսքն է, կուզեմ՝ կը տամ, կուզեմ՝ յետ կ'անեմ... Խաբել ուզեցիք, հարուստ աղջիկ ցանկացաք, հա՛, հիանալի է... Շապտուկենկօ:

ՄԱՐԻԱ. ԴՄ.— Ի՞վան Սերգէևիչ, խայտառա-

կուծիւն մի սարքիլ:

ՉՍՊ.— Իսկ ինձ կարող են խայտառակել հա՛, չէ, ներողութիւն... Շապտուկենկօ:

ՇԱՊ.— (մտնելով) Այստեղ եմ, ձերդ գերագանցութիւն:

ՉՍՊ.— Լծել այս բոպէին կառքը և հասցնել պարոն Պալիցկուին կենդանի կամ մեռած կայարան:

ՇԱՊ.— Մինչև առաւօտ այլ ևս գնացք չի գնում:

ՉՍՊ.— Քո գործը չէ, պիտի գնայ, կատարիր, ինչ որ քեզ հրամայում են:

ՇԱՊ.— Լսում եմ, ձերդ գերագանցութիւն: (Գնում է):

ՉՍՊ.— Յարգելի պարոն, նեղութիւն բաշեցէք այս բոպէին հաւաքել ձեր եղած շեղածը:

ՊԱԼ.— Բայց թոյլ տուէք...

ՉՍՊ.— Առանց խօսելու, բաւական է:

ՊԱԼ.— Ինչպէս կամենաք: (գնում է):

ԼԵ.— Մայրիկ: (լալիս է)

ՄԱՐ. ԴՄ.— Գնա՛, գնա՛ հօրդ մօտ, երկուսըդ էլ շատ խելօքներն էք:

ԼԵ.— Հայրիկ:

ՉՍՊ.— Ձեմ ուզում լսել ոչինչ:

ԼԵ.— (լալով) Ի՞նչով պիտի վերջանայ այս ամենը: (գնում է)

ՉՍՊ.— Ձէ, լաւ էք մտածել: Եւ մեղա-

ւորը դու ես, դու:

ՄԱՐ. ԴՄ.—Պէտք չը կայ ուրիշնե-  
րի վրայ ձգելու, երբ ամեն բանում մեղաւո-  
րը դու ես, մենք վաղուց գիտէինք նրա ով լի-  
նելը:

ԶՈՒԳՐ.—Գիտէիք, բայց ինձ յիմարացնում  
էիք:

ՄԱՐ. ԴՄ.—Ձէ որ դու հաւատացնում էիր,  
թէ նրան ճանաչեցիր, և քիթը, և աչքերը հօրն  
են:

ԶՈՒԳՐ.—Ի՞նչ ես յիմար, յիմար դուրս տա-  
լիս, մարդուն կարելի է 25 տարուց յետոյ ճա-  
նաչել, և ինչո՞ւ ինձ ուղղակի շասացիք:

ՄԱՐ. ԴՄ.—Ուզում էինք քեզ մի դաս  
տալ, քեզ մարդավարի ասում էի, որ նա լեօլի  
ընկերը չէ, իսկ դու քո չինական ձևովն էիր  
պնդում... այժմ տրաքւիր:

ԶՈՒԳՐ.—Ձէ, այդ ինձ դուր է գալիս... ես  
միշտ ասում էի, որ Բերեթկովից լաւ ոչ ոք չը  
կայ, իսկ դու շարունակ սրան էիր աչքս խո-  
թում, ես իսկոյն նկատեցի, որ սա մեր ընկերը  
չէ... յայտնի չէ թէ որտեղից եկաւ, անկոչ, ա-  
ռանց հրաւերի, չը կար, չը կար և յանկարծ  
սունգի նման դուրս պրծաւ, փաստաբան է,  
պայուսակը ձեռքին... իրան նայեցէք, փեսա-  
ցու է, թիւ...

ՄԱՐ. ԴՄ.—Դէ լաւ, մի բղաւիր:

ԶՈՒԳՐ.—Մի բղաւիր... ո՞վ է բղաւում, ես  
եմ բղաւում, ինքն է բղաւում, բայց բղաւում  
է, որ ես եմ բղաւում:

ՄԱՐ. ԴՄ. Գոնէ ծառերից ամաչիր սուտ  
խօսալուդ համար:

ԶՈՒԳՐ.—Ափսոս Բերեթկովին չը պահեցի,  
իսկոյն դուրս կը բերէի... ինքդ սկսեցիր բղա-  
ւել թէ խելագարուել է, իսկ խեղճը միայն ու-  
րախ տրամադրեալ էր և ուրիշ ոչինչ, երգում էր,  
պարում... Այ, նա իսկապէս որ լաւ փեսացու  
է... կարմիր շապիկ, բարձր կօշիկներ, քո թո-  
կից փախածի հատը չէ, եւ ես էլ յիմարս լսե-  
ցի քեզ, միանգամից պիտի տայի Բերեթկովին:

ՄԱՐ. ԴՄ.—Քեզ մօտ միշտ ուրիշներն են  
մեղաւոր,

ԶՈՒԳՐ.—Իսկ դուք, ի հարկէ, ուրախացաք,  
որ ինձ յիմարացրիք, ես էլ ահա ձեր ջգրու իմ  
ուզածը կանեմ, կը վերցնեմ և լեօլին կը տամ  
Բերեթկովին:

ՄԱՐ. ԴՄ.—Իսկ եթէ յանկարծ Ռաստով-  
ցիը գայ:

ԶՈՒԳՐ.—Դու սպասիր նրան... չէ, կնիկ,  
այժմ էլ չես խաբի... իսկոյն կը հագնուեմ և կը  
գնամ Բերեթկովի մօտ ինքս առաջարկելու:

ՄԻԼ.—Ահա նա ինքն էլ գալիս է և այն  
էլ Ֆրակով:

ԶՈՒԳՐ.—Ֆրակով:

ՄԻԼ.—Յայտնի բան է, մի դուցէ առաջարկուեցին անելու:

ՉՈՒԳՐ.—Ապա ի՞նչ ես կարծում:

ՄԻԼ.—Ո՞ւմ, տեսնես:

ՉՈՒԳՐ.—Ի հարկէ ոչ քեզ:

ՄԱՐ. ԴՄ.—Բայց Լեօլեան չի գնալ նրան այժմ, ես կարծում եմ որ նա Պալիցկու վրայ է սիրահարւած:

ՉՈՒԳՐ.—Սիրահարւած, ես ցոյց կը տամ նրան, թէ ինչ է նշանակում իմ կամքի հակառակ սիրահարւել:

ՄԻԼ.—Այո, քեռի, խօսեցէք Բերեթկովի հետ, չէ՞ որ նա երկար ժամանակ հետամուտ էր լինում Լեօլիչկին: Իսկ ես գնամ, չը խանգարեմ ձեզ: (Գնում է):

ՄԱՐ. ԴՄ.—Վերջապէս կը հանգստանաս:

ՉՈՒԳՐ.—Իսկ դու չես կարող իմ այգին քար չը ձգել:

## ՏԵՍԻԼ 8

Նրանք և Բերեթկով, քիչ յետոյ ՄԻԼՕՉԿԱ, Վերջը ՇԱՊՏՕԼԵՆԿՕ

ԲԵՐԵԹԿՈՎ.—(Ֆրակով եւ կրծքին վարդ) Կրկին անգամ, բարեաւ ձեզ:

ՉՈՒԳՐ.—Հոգեակս, Գեհնադիյ կարպովիչ, (համարտելով) այս ի՞նչ է, մեզ բոլորովին մո-

ռացել էք, այսօր ամբողջ օրը ձեզ չենք տեսել, ա՛յ, ա՛յ, ի՞նչպէս չէք ամաչում այդքան երկար ժամանակ մեզ մօտ չերևալ:

ԲԵՐԵԹԿՈՎ.—Ի՞նչ էք ասում, մի ժամ չէ անցել, որ ես այստեղ էի:

ՉՈՒԳՐ.—Եւ ինչպէս գուգւած էք. ֆրակով, ձիշտ, ես չը գիտեմ, թէ որն է ձեզ աւելի սագում. կառապանի շորը թէ ֆրակը:

ՄԱՐ. ԴՄ.—Ի՞նչ էք կանգնել, նստեցէք, խնդրեմ:

ԲԵՐԵԹԿՈՎ.—Սոնարհաբար շնորհակալ եմ, ես միևնոյն է մի տեղ հանգիստ նստել չեմ կարող:

ՉՈՒԳՐ.—Իսկապէս դուք այնպիսի հանդիսաւոր տեսք ունէք:

ԲԵՐԵԹԿՈՎ.—Ուրիշ տեսակ չի էլ կարելի, այդ ես եմ դեռ այդպէս, եթէ դուք տեսնէիք թէ ի՞նչ է կատարւում մեր տանը, կը զարմանայիք. կառքը դուրս են բերել, մայրիկս նաան դոյն շորն է հանել սնդուկից, պարսկական մեծ շալը...

ՄԱՐ. ԴՄ.—Ի՞նչ է, հիւր էք գնում:

ԲԵՐԵԹԿՈՎ.—Իմ յետևից նա էլ է գալիս ձեզ մօտ. «չի կարելի, ասում է, պէտք է ամեն ինչ պատշաճ կարգով լինի»:

ՉՈՒԳՐ.—Ի՞նչու համար է այդ ամենը:

ԲԵՐԵԹԿՈՎ.—Մտածեցի ես, Իվան Սերգէե-

ւիչ, մտածեցի և վերջ ի վերջոյ վճռեցի պը-  
սակել:

**ՉՈՒԳՐ.**—Եւ լաւ արիք: (Կնոջը) Գնահ, կան-  
չիր Լեօլին, ասա թանկագին հիւր է եկել:

**ԲԵՐԵԺԿՈՎ.**—Ոչինչ, հարկաւոր չէ, առայժմ  
առանց նրան էլ եօլա կը տանենք:

**ՉՈՒԳՐ.**—Ինչպէս կամենաք: Այդպէս ու-  
րեմն, դուք վճռել էք ամուսնանալ:

**ԲԵՐԵԺԿՈՎ.**—Ձանձրացայ մենակ թափա-  
ռելուց, յետոյ հայրիկս ու մայրիկս էլ խորհուրդ  
են տալիս, որովհետև դէ նրանք միայնակ են,  
վաղուց եմ ես այդ մասին մտածել, բայց վըճ-  
ռեցի միայն այսօր... Հէնց որ մայրիկին ասա-  
ցի, թէ ամուսնանում եմ, ինչ պատահեց նրան՝  
չեմ կարող ասել, ձեռները չուեց և բազմոցի  
վրայ փուռեց, հազիւ հազ ջրով ուշքի բերինք:  
Այնքան համբուրեց, այնքան համբուրեց ինձ...  
լաց եղաւ... Ես ի հարկէ իսկոյն հագուստս դէն  
շպրտեցի, հագայ Փրակս և ձեզ մօտ վագեցի,  
որովհետև առանց ձեզ ի հարկէ ոչինչ գլուխ չի  
գայ, դուք նրան մօտ անձնաւորութիւն էք, ե-  
րևի կուրախանաք:

**ՉՈՒԳՐ.**—Ի հարկէ, ես ձեր փոխարէն այն-  
քան ուրախ եմ, այնքան ուրախ եմ, բացի այդ  
նա և լաւ աղջիկ է:

**ԲԵՐԵԺԿՈՎ.**—Մի գովէք, մենք ինքներս էլ  
կոյր չենք, ուստի խնդրում եմ...

**ՄԻԼ.**—(ընտրի յետեւից երգում է):

**ՉՈՒԳՐ.**—Դէ, ի՞նչ էք գուք խնդրում:

**ԲԵՐԵԺԿՈՎ.**—Մ... (ընթում է նրան) Այ  
Աստուածային ձայն...

**ՄԻԼ.**—(շարունակելով երգը):

**ԲԵՐԵԺԿՈՎ.**—Կորայ, բոլորովին կորայ, (Մի-  
լօշկան երեսում է դնելը) նրա մօտ է վագում  
եւ ընում ձեռքը) Ձեմ կարող, չեմ կարող ար-  
տայայտել, թէ որքան եմ ձեզ սիրում: (համբու-  
րում է ձեռքը):

**ՉՈՒԳՐ.**—Ի՞նչ է, գժւել է, բայց դա Լեօ-  
լեան չէ:

**ԲԵՐԵԺԿՈՎ.**—Լիւրմիլա Անդրէկնայի մա-  
սին էլ ասում էի ձեզ... Սրա համար եմ տանջ-  
ւում, նրան եմ գժւած ես ուզում:

**ՄԻԼ.**—Իսկ դուք, քեռի, ի՞նչ կարծեցիք:

**ՄԱՐ. ԴՄ.**—Կեցցէք, Գեհնագիյ կարպովիչ,  
կեցցէք:

**ԲԵՐԵԺԿՈՎ.**—Ուսուցչուհիս լաւն էր շատ:

**ՉՈՒԳՐ.**—Այս ի՞նչ է, դարձեալ յիմար դրու-  
թեան մէջ... Այ ընկայ, այնպէս ընկայ, որ դուրս  
գալու հնար չը գայ... Դու կարծում ես այդ  
քեզ աժան կը նստի, սպասիր, ես կը գրեմ քո  
մօրը և կը տեսնես:

**ՄԻԼ.**—Ձեմ վախենում, որովհետև մայրս  
ինձ հետ միշտ համաձայն է:

**ՉՈՒԳՐ.**—(ըաշելով Բերեժկովին մի կողմ)

Եւ ի՞նչ լաւ բան գտաք դրա մէջ:

ԲԵՐԵԾԿՆՈՎ.—Ամենը գտայ, ինչ որ փընտառում էի: Իսկ երգում էք դուք, ինչպէս սոխակ, յաւիտեան կը լսէի:

ՄԱՐ. ԴՄ.—Կերար:

ՉՈՒԳՐ.—Ո՛չ, կատակը մի կողմ, ես այնուամենայնիւ իմ ուզածը կանեմ, մի անգամ չը յաջողեց, երկու անգամ չը յաջողեց...

ՄԻՆ.—Եւ երեք անգամ էլ չի յաջողի:

ՉՈՒԳՐ.—Թի՛ւ... կապրենք կը տեսնենք: Ոչ այսօր, վաղը կը գայ իմ Վասինկան, երբ և իցէ հօ պիտի՞ գայ նա թէ չէ: Այ, այնժամանակ պար կածեմ ես ձեզ:

ՇԱՊ.—(մանկը) Հեռագիր, ձերդ գերազանցութիւն:

ՉՈՒԳՐ.—Ահա, այ այժմ ես ձեզ ցոյց կը տամ: Այս երեի Պաւել Միխայլովիչն է յայտնում, որ Վասինկան ճանապարհուել է:

ՇԱՊ.—Շնորհեցէք, ձերդ գերազանցութիւն, 70 կողմէկ հեռագիր բերելու համար:

ՉՈՒԳՐ.—Առ, տուր նրան մի ուրբի, այսպիսի ուրախ լուրի համար ափսոս չէ մի ուրբի տալ:

ՇԱՊ.—Ճիշտ է, ձերդ գերազանցութիւն: (Գնում է):

ՉՈՒԳՐ.—Դէ, այժմ տեսնենք ով կը յաղթի: (կարդում է) «Մի սպասիր որդուս, Վասեան

երեկ ամուսնացաւ, ոչինչ չը գիտէի, Ռաստովցեւ»: Մորթեցին:

ՄԻՆ.—Ես ասացի որ երրորդ անգամ էլ չի յաջողի:

ՄԱՐ. ԴՄ.—Տեսար ուր հասցրեց քեզ քո կամակորութիւնը:

ՉՈՒԳՐ.—Գոնէ դու մի գրգռիլ ինձ: Եւ մի ուրբի տւի այս հեռագրի համար:

ՄԱՐ. ԴՄ.—Աւելի լաւ է հաշուիր Պաւլիցկու հետ, թէ չէ ուրիշ ելք չը կայ:

ՉՈՒԳՐ.—Չէ, ինչպիսին է այդ Պաւլիցկին ան... անբաղաքավարի, նրան դուրս են անում և նա հանգիստ կերպով գնում է, կարծես արդարացի լինի. մինչև անգամ չը բացատրեց թէ ինչ իրաւունքով էր երկու շաբաթ հացս ուտում, ջուրս խմում: Չէ որ այդ օր-ցերեկան գողութիւն է, ո՛չ, ես այդպէս չեմ թողնիլ:

ՄԱՐ. ԴՄ.—Դու էլ կատարիր Լեօլի ուզածը:

ՄԻՆ.—Եւ դրանով էլ դուք նրանից վրէժ կառնէք. Լեօլի բնաւորութիւնը մի բան չէ, բայց Պաւլիցկին կարգին կարողութեան տէր մարդ է, ես նրան վաղուց եմ ճանաչում:

ՉՈՒԳՐ.—Կարգի՞ն, ասում ես: Եւ իսկպէս ուրիշ ելք էլ չը կայ: Չէ, կը յիշեմ ես այս օրը, մինչև մահ չեմ մոռանայ:

## ՏԵՍԻՒԼ 9.

Նրանք, ՊԱԼԻՑԿԻՅ, բիչ յետոյ ԼԵՕԼԵԱ, վերջը ՇԱՊՏՕ-ԼԵՆԿՕ

ՊԱԼ.—(վերարկուով եւ պայուսակով) Ներեցէք պատճառածս անբաւականութեան համար, թէպէտեւ այս բոլորի մէջ ես աւելի քիչ եմ մեղաւոր քան մի ուրիշը. թոյլ տւէք շնորհակալութիւն յայտնել ձեր աղ ու հացի համար: Կառքը երեւի արդէն պատրաստ է:

ՉՈՒԳՐ.—Ո՛չ, դեռ պատրաստ չէ: Համեցէք այստեղ... ձեր կարծիքով անդպէս է ընդունւած հա՛... դուք այդ ի՞նչ էք անում. անւանարկեցիք աղջկան, բաւական էք, բաղդաւոր եւ հեռանում էք:

ՊԱԼ. Ե՛ս:

ՉՈՒԳՐ.—Ի հարկէ դուք:

ՊԱԼ.—Բայց չէ՞ որ ես խնդրեցի Օլգա Իվանովնայի ձեռքը, իսկ դուք մերժեցիք եւ հրաժարեցիք գնալ:

ՉՈՒԳՐ.—Շատ էլ հրամայեցի, հօ ամեն բան չի կարելի դրի առնել:

ՊԱԼ.—Ես կարծում եմ, իրաւունք ունիմ վիրաւորւած զգալու ինձ:

ՉՈՒԳՐ.—Ինքներդ էք մեղաւոր. ո՞ր սատանան խորհուրդ տւեց ձեզ կոչել Ռասսովցի:

Երևակայեցէք, այդ ապուշը ամուսնացել է մի ինչ որ անյայտ աղջկայ հետ, ես ասենք նրան առաջ էլ ատում էի, իսկ ինձ վրայ գանգատուելու իրաւունք չունիք, ի՞նչ մեծ բան որ դուք Ռասսովցի չէք, Պալիցկիները ամենևին էլ նրանցից պակաս չեն: Բայց այս ո՞ր է Լեօլեան, լաւ հարսնացու է, խօսք չունեմ: Լեօլա՛:

ԼԵ.—(քեմի յետուից) Ի՞նչ է:

ՉՈՒԳՐ.—Ի՞նչ է, կարծեմ ինքդ էլ լսեցիր, թէ բանն ինչու՞ն է: (Լեօլեան զայլիս է) Դէ, ահա նա, վերցրէք:

ՊԱԼ.—Փառք Աստծոյ:

ՉՈՒԳՐ.—Միայն դուք ինձ բացատրեցէք, այդ ի՞նչպէս ընկաք դուք այստեղ, մի խօսքով ամենը, ամենը...

ՊԱԼ.—Ուրախութեամբ:

ՄԱՐ. ԴՄ.—Ահա կը նստենք թէյի, այնժամանակ:

ՄԻԼ.—Եւ մեզանից ո՞ր մէկը կը մտածէր, Իպպոլիտ վիտալիևիչ, երբ մենք գալիս էինք, որ այսպէս կը դառնայ:

ՉՈՒԳՐ.—Ուրեմն այդ բոլորը դարձեա՛լ քո բաներն են: (մտնում է Շապտոլենկով)

ՇԱՊ.—Ձին պատրաստ է:

ՉՈՒԳՐ.—Յետ լծել. ոչ որ չէ գնում, ամենքն էլ մտում են:

ՇԱՊ.—Բայց ասացիք...

**ՉՈՒԳՐ.**—Քո բանը չէ, շնորհաւորեր երիտասարդներին:

**ՇԱՊ.**—Պատիւ ունիմ շնորհաւորելու ձերդ գերազանցութեան օրինաւոր ամուսնութիւնը, սէր և միութիւն ձեզ երկար տարիներ, ուռն... իսկ թէյի փող կը հասնի ինձ թէ չէ, ձերդ գերազանցութիւն:

**ԱՄԵՆՔԸ.**—Կը հասնի, կը հասնի:

**ՇԱՊ.**—Ա՛յ և շնորհակալ եմ, ձերդ գերազանցութիւն:

**Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր**

## ՎԵՐՕՉԿԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Վողրվիլ 1 աւար. հեղ. Լիսեճկօ-Կօճիչի

Թարգ. Գ Ր Ա Ի Ե Տ Ե Ա Ն

Настоящая пьеса, подъ названіемъ „Вѣрочкинъ секретъ“ разрѣшена И. О. Главноначальствующаго для представленія на сценахъ края“.

20 Декабря, 1903 г. г. Тифлисъ

Предсѣдатель Комитета Гакель

Секретарь Н. Меликъ Нубаровъ

Ա Ն Ձ Ի Ն Ք

ՎԱՐՎԱՐԱՍ ՍԵՄԵՈՆՈՎՆԱ ՈՒՏՈՉԿԻՆԱ

ՎԷՐԱ, նրա դուստրը


ՊԵՏՏՐ ԻՎԱՆՈՎԻՉ ՈՒՏՈՉԿԻՆ, պաշտօնաթող  
գնդապետ, Վերայի քեռին

ԵԻԳԵՆԻՅ ՊԱԻՆՈՎԻՉ ՍՈՒՄԲԱՏՈՎ, երիտասարդ  
պարոն, 22 տար.


ԴԱՇԱ, աղախին

ԳՐԻԳՈՐԻՅ, դռնապան, երիտասարդ տղայ

Գործողութիւնը կատարուած է ամարանոցում:



1-Ցանկապատ, 2-նստարաններ, 3 տուն պատըշ-  
գամբով և սանդուխքներով, 4-սեղան: Ընդհա-  
նուրը պարտէզ է:



1-Ստորագրում է զանազան շինարարական աշխատանքները և նրանց համար հարկադրված է լինում:

Պարտեզ: Աջ տունն պատշգամբով, աջ եւ ծախ նստարան: Յանկապատ, մէջտեղը դարձաս:

**ՏԵՍԻԼ 1**

**ՎԷՐԱ.**—(խաղում է վանդակի հետ) Տէր Աստուած, ինչպէս տխուր է ամարանոցում: Որքան լաւ է քաղաքում. բալեր, երեկոյթներ, թատրոններ... իսկ սահարանը: Ա՛խ, որքան ուրախ է այնտեղ: Միթէ ես ամբողջ ամառը չեմ տեսնի Եւգենիյ Պաւլովիչին, ինչպէս նա տըրտում էր, երբ չէի ցանկանում սահել նրա հետ սառոյցի վրայով: Շատ ափսոս, որ մօրս հետ չը ծանօթացրի նրան, շուտ-շուտ կը գար մեր ամարանոցը, զբօսնելու կը գնայինք, նաւակ կը նստէինք, թռչուններ կորսայինք:

**ՎԱՐ. Ս.**—(մտնում է) Դու էլի՞ շարունակ այդ վանդակի հետ ես խաղում, ի՞նչպէս չես ամաչում, զիմազիան աւարտած օրիորդ ես և այդպիսի ցանցառ բաներով ես զբաղում:

**ՎԷՐԱ.**—Հապա ի՞նչով զբաղեմ, բոլոր ընկերուհիներս քաղաքում մնացին, իսկ դուք ցանկացաք անպատճառ ամառը գիւղում անցկացնել:

**ՎԱՐ. Ս.**—Նրա համար մնացին, որ գնալու տեղ չունէին: Դու պէտք է ուրախանաս, որ բո

հանգուցեալ հայրը սև օրւայ համար մի քիչ փող է յետ ձգել և գնել այս ամարանոցը, որ այժմ քո միակ օժիտն է:

ՎԷՐԱ.— Դեռ կարելի է ես մարդու էլ չեմ գնալու:

ՎԱՐ. Ս.— Այդ ի՞նչու չես գնալու:

ՎԷՐԱ.— Առաջին՝ փեսացուներ չը կան, իսկ երկրորդ՝ չեմ ուզում:

ՎԱՐ. Ս.— Ի հարկէ, եթէ դու փեսացուներ չես եղել և սկսես խօսել թռչունների և շների մասին, բոլորին էլ կը փախցնես: Դու գիւղական երեխայից էլ վատ ես:

ՎԷՐԱ.— Մայրիկ, եթէ Շուրօզկան գար...

ՎԱՐ. Ս.— Նա էլ, երևի, քեզ նման թոկից փախածի մէկն է:

ՎԷՐԱ.— Ձեր ասելով, այդ էս եմ թոկից փախածը: Այ և ճիշտ չէ. ես դեռ գիմնագիտյունն էլ ամենահամեստն էի, ամենահամեստը...

ՎԱՐ. Ս.— Երևում է որ համեստն ես եղել, ասա խնդրեմ, այն ո՞վ էր սօսինձ քսել թըւաբանութեան ուսուցչի աթոռին, ո՞վ:

ՎԷՐԱ.— Հէնց տեղն էր, ի՞նչու էր ամեն օր ինձնից դաս հարցնում, և հէնց այն, ինչ որ ես չը գիտէի: Իմաստուն հօ չեմ ես, որ ամեն բան իմանամ: Տէր Աստուած, որքան զգւելի էր. ալիսնոցներով, կարմիր քթով, մի-վերստ հեռաւորութեան վրայ զգալի էր նրանից թամբա-

քուի հոտը: (Յանկարծ) Գիտես, մայրիկ, ի՞նչ միտքս եկաւ, ես կայարան կը գնամ:

ՎԱՐ. Ս.— Դու աւելի լաւ կանէիր, մի որևէ բանով զբաղւէիր, կամ մի գիրք կարդայիր:

ՎԷՐԱ.— Գիրք. խոնարհաբար շնորհակալ եմ, զահլաս է գնացել: Ամբողջ ամառը ձեռքս չեմ վերցնիլ, ո՞չ մի պայմանով:

## ՏԵՍԻՒ 2

Նրանք և ԴԱՇԱ. (անից)

ԴԱՇԱ.— Օրիորդ, ձեզ նամակ:

ՎԷՐԱ.— Ի՞նչ տուր տեսնեմ: Մայրիկ Շուրօզկայիցն է: (կարդում է) Կեցցէ, հիանալի է, ա՛յ այս հետաքրքիր է: Լսեցէք, մայրիկ, ինչ է գրում Շուրօզկան. «Սիրելի և թանկագին Վէրօզկա, նախ և առաջ համբուրում եմ քեզ և յայտնում եմ շնորհակալութիւններս հրաւիրելուդ համար: Մայրիկս ուրախութեամբ թոյլ է տալիս ինձ գալ քեզ մօտ, բայց դու, քաջ գիտեսալով իմ բնաւորութիւնը, այսինքն որ առանց չարութիւնների մի քայլ անգամ չեմ կարող անել, չը զարմանաս իմ հնարածի վրայ. ես քեզ մօտ կը գամ տղամարդու հագուստով և ո՞չ ուրիշ կերպ: Այդ շատ հետաքրքիր կը լինի, նայիր, ո՞չ ոքի և ո՞չ մի խօսք: Այդ մեր գաղտ-

նիքն է, կը լինեմ այսօր, կամ վաղը: Յարգանք-  
ներս և շնորհակալութիւններս քո բարի մօրը:  
Ի՞նչպէս են քո գործերը, գնալուցդ առաջ տե-  
սա՞ր X. ին... (Սկսում է կարդալ ցած)

ՎԱՐ. Ս.—Հ՛ը, ի՞նչ ես ծամծամում:

ՎԷՐԱ.—Այս կտորը ինչ որ պարզ չէ:

ՎԱՐ. Ս.—Տո՛ւր, ես կը ջոկեմ:

ՎԷՐԱ.—Ոչինչ, երկու տողից յետոյ ար-  
դէն պարզ է:

ՎԱՐ. Ս.—Տո՛ւր, տո՛ւր, (մ'օտենում է նրան)  
ես ձեռագիրները լաւ եմ ջոկում: (Կարդում է)  
«Գնալուցդ առաջ տեսա՞ր X. ին, ես նրան տե-  
սայ, նոյնն է, ինչ որ առաջ, տանջւում է քեզ  
համար: Դէպի նա դու շատ խիստ ես և անար-  
դար: Ամուր համբուրում եմ: Քո Շուրա:»  
Յ. Գ. Քո փոխարէն ես X. ին խօսք եմ տւել,  
որ դու անպատճառ նրա կիներ կը դառնաս: Նե-  
րիբ:» (Նրան) Այդ ո՞վ է այդ X. ը, ես նրա մա-  
սին չեմ լսել:

ՎԷՐԱ.—Այդպէս են կոչում նրան:

ՎԱՐ. Ս.—Բայց ո՞վ է նա:

ՎԷՐԱ.—Այնպէս, նա ազգական է:

ՎԱՐ. Ս.—Ո՞ւմ:

ՎԷՐԱ.—Նա... այսպէս ասած, ոչ ոքի...  
Բայց նա միշտ գնում-գալիս է Շուրաենց տուն...  
նա Շուրայի հօրեղբայրն է, կամ հօրեղբօրոր-  
դին... ես նրան մայրիկ, ընդամենը մի անգամ

եմ տեսել, ազնիւ խօսք:

ՎԱՐ. Ս.—Ա՞յդ է որ համարեա ամեն օր  
նրանց տուն էիր գնում:

ՎԷՐԱ.—Այդ ես Շուրօշկի հետ սահարան  
էի գնում:

ՎԱՐ. Ս.—Հասկանում եմ, հասկանում եմ...  
Զգում եմ ես, որ դու և քո Շուրան մի դժբաղ-  
դութիւն պիտի բերէք գլխիս:

ՎԷՐԱ.—Օ՛, ոչ մայրիկ... Այդ Շուրան  
անբան գեղեցիկ է, այնքան գեղեցիկ...

ՎԱՐ. Ս.—Ի՞նչ մի հետաքրքիր բան է, չեմ  
հասկանում, աղջիկ-տղամարդու հագուստով:

ՎԷՐԱ.—Նա այնքան ուրախ, ծիծաղկոտ  
աղջիկ է:

ԴԱՇԱ.—Ի՞նչ կայ ծիծաղելի, օրիորդ է  
տղամարդու վարդիկով:

ՎԷՐԱ.—Դու, Դաշա, չես հասկանում: Այդ  
բոլորը միմիայն կատակի համար է:

ՎԱՐ. Ս.—Մեծ բան, մի խելօք բան չը  
կար հնարելու:

ԴԱՇԱ.—Տիրուհի, ինչ նորութիւն իմացայ:

ՎԱՐ. Ս.—Ի՞նչ նորութիւն:

ԴԱՇԱ.—Մի խելագար է լոյս ընկել մեզ  
մօտ, ինչ որ մի տարիքով պարոն: Ասում են,  
բոլոր ամառանոցներն է մտնում և առաջարկու-  
թիւն անում. հէնց որ մէկը նրան մերժում է,  
խսկոյն նրա վրայ է ընկնում և շան նման հա-

ջուժ: Մտել է մի խանութ և այնպէս է սկսել շահն նման հաջել և ոռնալ, իսկական սատանայ: Խանութպանի տղան վախից ալիւրի քսակն է մտել, խեղճը քիչ է մնացել շնչասպառ լինի: Սկսել են նրան քսակից դուրս բաշել, իսկ նա բղաւոց է սկսել, կարծել է խելագարն է ձգում: Այս ըոպէին ոստիկանը և ահազին ամբօրս անցան մեր մօտից, նրան են ուզում բռնել:

ՎԱՐ. Ս.—Տէր Աստուած, յանկարծ որ մեզ մօտ մտնի... Պէտք է բոլոր դռները և դարբասները լաւ փակել: Դու Գրիգորիին ասա, որ նա տանից դուրս չը գնայ:

ԴԱՇԱ.—Նա, տիրուհի, շարունակ վրաս ծրծաղում է: Հէնց որ խելագարին տեսնեմ, ասում է, քեզ վրայ կը թողնեմ: Դու, ասում է, չես ուզում ինձ հետ ամուսնանալ, ուրեմն ես էլ քեզ խելագարի հետ կամուսնացնեմ, նրանից չես ազատելի: Տիրուհի, ես կը գնամ, կուղարկեմ, դուք էլ հրամայեցէք նրան, որ պահպանի մեզ խելագար պարօնից: (գնում է տան յետել):

### ՏԵՍԻԼ 3.

Նրանք և ՊԵՕՏՐ ԻՎԱՆՈՎԻԶ (տնից)

ՊԵ. ԻՎ. (դուրս գալով տանից) Ա՛յ, քնեցի այսօր:

ՎԱՐ. Ս.—Ֆո՛ւ, ինչպէս ինձ վախեցրիր, կարծեցի թէ խելագարն է:

ՊԵ. ԻՎ.—Այդ ի՞նչ է, հարազատ եղբօրդ խելագարի տեղ ես դնում:

ՎԱՐ. Ս.—Վախից ինչեր չես երևակայիլ:

ՊԵ. ԻՎ.—Իսկ դու մի վախենալ և ոչինչ էլ չես երևակայիլ:

ՎԷՐԱ.—Բարի լոյս, քեռի:

ՊԵ. ԻՎ.—Բարի լոյս, բարի լոյս, գեղեցկուհիս, քէֆդ ի՞նչպէս է, այծեամիկ, շարունակ թռչկոտում ես:

ՎԷՐԱ.—Շարունակ թռչկոտում եմ:

ՊԵ. ԻՎ.—Եւ լաւ ես անում: Ա՛յ, ես էլ եմ ցանկանում թռչկոտալ, բայց չէ դառնում:

ՎԷՐԱ.—Դուք էլ փորձեցէք:

ՊԵ. ԻՎ.—Ծիծաղիր: (Նստում է քրոջ մօտ) Իէ բոյրիկս, չեմ կարող ասել, որ ուրախ ենք անցկացնում մեր ժամանակը:

ՎԱՐ. Ս.—Ո՞վ է քեզ խանգարում: Դու էլ մի սիրահարական արկած փնտրիր և չես էլ ախրիլ, քո բոլոր ախրութիւնն էլ դրանից է:

ՊԵ. ԻՎ.—Կարծես թէ ես ամբողջ կեանքս արկածներով եմ անցրել:

ՎԷՐԱ.—Ա՛խ քեռի, ի՞նչ նորութիւն ունիմ:

ՊԵ. ԻՎ.—Պատմիր:

ՎԷՐԱ.—Միայն թէ այդ ոչոքի չի կարելի պատմել, գաղտնիք է:

ՊԵ. ԻՎ.—Ես գերեզման եմ:

ՎԷՐԱ.—Թող այդպէս լինի, միայն թէ ոչ

ոքի և ոչ մի խօսք:

ՊԵ. ԻՎ.—Ասացի, ոչ ոքի:

ՎԷՐԱ.—Այսօր կամ վաղը ինձ մօտ կը գայ իմ ընկերուհին՝ Շուրօշկան, գեղեցկուհի, գեղեցկուհի... Նա կը գայ տղամարդու հագուստով:

ՊԵ. ԻՎ.—Որ նա գեղեցիկ է, այդ հետաքրքիր է, բայց...

ՎԱՐ. Ս.—Քեզ էլ ի՞նչ է հարկաւոր, միայն թէ իւրեքա լինի:

ՊԵ. ԻՎ.—Անկարելի է, որ իմ այգին քար չը ձգես: Բայց որ քո Շուրօշկան տղամարդու շորով պիտի լինի, այդ շատ յիմար է: Դու մի չարանալ, ես սիրում եմ խօսել զինուորականի լեզուով՝ պարզ և անկեղծ:

ՎԷՐԱ.—Այստեղ ոչ մի յիմար բան չը կայ, շատ էլ սրամիտ է:

ԴԱՇԱ.—(զալով տնից) Տիրուհի, կը հրամայէք նախաճաշիկը պատրաստել:

ՎԱՐ. Ս.—Այո, ժամանակն է, գնանք: (Գնում է ղէպի տուն)

ՊԵ. ԻՎ.—Դէ այծեամիկ, գնանք, օղի խումենք:

ՎԷՐԱ.—Առաջին՝ ես այծեամիկ չեմ, երկրորդ՝ օղի չեմ խմում. իսկ երրորդ՝ արդէն նախաճաշել եմ:

ՊԵ. ԻՎ.—Ի գուր: Այնուամենայնիւ քո

ընկերուհին պէտք է որ մի բիշ խելքից պակաս լինի: (զնում է տուն)

## ՏԵՍԻՂ 4

ՎԷՐԱ, յետոյ ՍՈՒՄԲԱՏՈՎ

ՎԷՐԱ.—(մըայնակ) Քեռիս ոչինչ չի հասկանում: Իմ կարծիքով այդ շատ հետաքրքիր է—տղամարդու հագուստ հագնելը: Ափսոս որ մենք չունենք, թէ չէ ես էլ կը հագնէի:

ԵԻԳ. Պ.—(Դարբասից մտնելով) Ներողութիւն, ասացէք խնդրեմ, Ուտօշկինների ամառանոցը սո՞ւ է:

ՎԷՐԱ.—Այս է: Ա՛խ, Եւգենիյ Պաւլովիչ: Դո՞ւք: Այստեղ: Ինչո՞ւ համար:

ԵԻԳ. Պ.—Վէրօշկա, այդ դո՞ւք էք... Որքան բաղդաւոր եմ: (Ուզում է գրկել նրան):

ՎԷՐԱ.—Ի՞նչ էք անում, ի՞նչ էք անում, ձեռքներդ բաշեցէք: Ի՞նչու էք եկել այստեղ, ո՞վ թոյլ տւեց, ո՞վ հրաւիրեց ձեզ:

ԵԻԳ. Պ.—Միմիայն իմ սէրը. ես այնքան եմ ձեզ սիրում, որ վճռեցի ամեն բանի դէմ ելնել և խնդրել ձեր ձեռքը:

ՎԷՐԱ.—Դուք խելագարուել էք: Ոչ ոք հասկացողութիւն, տեղեկութիւն չունի ձեր և ձեր գոյութեան մասին և յանկարծ... և չը մտածէք էլ, խնդրեմ... առաջին՝ ես չեմ ցանկանում ա-

մուսնանալ, իսկ երկրորդ... ի սէրն Աստծոյ հեռացէք շուտ, ապա թէ ոչ ինձ էլ կը հասնի, ձեզ էլ:

ԵԻԳ. Պ.—Ոչ մի տեղ չեմ գնալ և թող ինձ հետ անեն, ինչ որ ցանկանում են: Այստեղից ես կը գնամ միմիայն իբրև ձեզ փեսայ:

ՎԷՐԱ.—Այդ չի կարող լինել և վերջապէս այդ սահարանումն էր, իսկ այժմ մենք ամառանոցումն ենք:

ԵԻԳ. Պ.—Վէրօչկա, բայց չէ որ ես ձեզ սիրում եմ:

ՎԷՐԱ.—Ես ձեզ ասում եմ գնացէք: Դորա մասին մենք ձմեռը կը խօսենք, քաղաքում, երբ դուք խելքի կը գաք:

ԵԻԳ. Պ.—Բայց իմ մեղը ինչո՞ւն է:

ՎԷՐԱ.—Ամեն բանում էլ մեղաւորը դուք էք, ամեն բանում. չը համարձակէք վիճել: Դուք վատ էք, զգուցի... Դուք միշտ վիճում էք, միշտ, միշտ...

ԵԻԳ. Պ.—Ես պատրաստ եմ երբէք ձեզ չը հակաճառել, միայն սիրեցէք ինձ այնպէս, ինչպէս ես ձեզ:

ՎԷՐԱ.—Ես պէտք չունիմ ձեր զիջումներին և յետոյ... յետոյ իմ մայրը չը գիտէ, որ ես սիրահարւած եմ ձեզ վրայ:

ԵԻԳ. Պ.—Դուք ինձ վրայ սիրահարւած էք... ճիշտ, վերջապէս լսեցի ձեզնից այդ ուրախալի նո-

րութիւնը:

ՎԷՐԱ.—Տէր Աստուած, բռնւեցի... (անցնում է ծախ) Ո՛չ, ո՛չ, ձեզ վրայ չէ, ուրիշի, այ նրա... (խորամանկ ծիծաղ)

ԵԻԳ. Պ.—(Անցնում է նրա մօտ) Դուք ծիծաղում էք. Վէրօչկա, թանկագինս... Տարէք ինձ ձեր մօր մօտ, ծանօթացրէք և ես կը խնդրեմ ձեր ձեռքը, սիրար... (համբուրում է) հրաշալիս, ոսկեաս...

## ՏԵՍԻԼ 5

Նրանք, ՊԵՕՏՐ ԻՎԱՆՎԻՉ, յետոյ ՎԱՐՎԱՐԱ ՍԵՒԵՆՈՎՆԱ

ՊԵ. ԻՎ.—(ընդունալով զալիս տնից եւ ապշած կանգնում) Ա՛յ, շատ ճարպիկ է...

ՎԷՐԱ.—Ա՛խ, դուք, ես... այսինքն քեռի...

ՊԵ. ԻՎ.—Ոչինչ, ոչինչ, մի յուզւէք... աշխարքի բան է, համբուրւեցէք, իսկ ես կը նայեմ:

ՎԷՐԱ.—Ա՛յ, բռնւեցի:

ՊԵ. ԻՎ.—Ղօչաղ աղջիկ: Լաւ է... իմ ճաշակի է:

ՎԷՐԱ.—Քեռի, ահա, ախ դուք ծանօթ չէք: Յիշում էք, ես ասում էի... (Նուրիսին) Ի՛նչ արիք. դուք: (Պետր Իվանիչին) հա, ահա քեռի, դուք յիշում էք, քեռի...

ՊԵ. ԻՎ.—Քիչ ցանցառու թիւններ ես պատմեի, բոլորը հօ չի կարելի յիշել:

ՎԷՐԱ.—Այո, այո, ի հարկէ, դուք մոռացել էք:

ՊԵ. ԻՎ.—Այդ մի փոքր առաջ ասածդ գաղտնիքն է:

ՎԷՐԱ.—Ի՞նչ գաղտնիք:

ՊԵ. ԻՎ.—Այ, որ խնդրում էիր ոչոքի ոչինչ չասել և նամակ էլ էիր ստացել:

ՎԷՐԱ.—Նամակ... (յիշելով) Ա՛խ, այդ, այդ, այդ է, որ կայ: Այ տեսնա՞ք, ես ասում էի: (Ելաւ ինն) Ձը զարմանաք, ապա թէ ոչ կորած եմ:

ՊԵ. ԻՎ.—Շատ ուրախ եմ: (Ծիծաղում է)

ՎԷՐԱ.—Իէ, դուք այստեղ խօսեցէք, իսկ ես շուտով կը գամ. (զնալով) կարծեմ դուրս պրծայ: (զնում է տուն)

ՊԵ. ԻՎ.—Դուք ինձ ներեցէք, այդ թէպէտև շատ օրիգինալ բան է, բայց շատ էլ ծիծաղելի է:

ԵԻԳ. Պ.—Ես ինքս էլ խոստովանում եմ, որ այս ամենը շատ տարօրինակ է, անյարմար է և շատ էլ տպեղ:

ՊԵ. ԻՎ.—Նամանաւանդ որ անսովոր էք: Բայց ձեզ շատ է սազում, անկեղծ, սազում է:

ԵԻԳ. Պ.—Ասացէք խնդրեմ, ո՞ւմ հետ պատիւ ունիմ խօսելու:

ՊԵ. ԻՎ.—Ես վերօչկի քեռին եմ, այն վերօչկի, որի հետ քիչ առաջ այնպէս ախորժակով համբուրում էիք, որ ես մինչև անգամ նախանձեցի:

ԵԻԳ. Պ.—Քեռին:

ՊԵ. ԻՎ.—Ի՞նչու այդպէս վախեցաք: Ընդհակառակը, ես նրա կատակների և շարութիւնների առաջին օգնականն եմ:

ԵԻԳ. Պ.—Քեռի:

ՊԵ. ԻՎ.—Ի՞նչու այդպէս վախեցաք:

ԵԻԳ. Պ.—Բայց ես կատակ չեմ անում, ես նրան անկեղծ սիրում եմ:

ՊԵ. ԻՎ.—Ես բոլորը գիտեմ, դուք ինձնից մի քաշէք. նա պատմում է իր բոլոր գաղտնիքները: Ծիշտն ասած՝ ես սկզբից չը հաւանեցի, բայց այժմ այդ ամենը ինձ դուր էլ է գալիս:

ԵԻԳ. Պ.—Ուրեմն ես կարո՞ղ եմ յոյս ունենայ:

ՊԵ. ԻՎ.—Հանդիսա եղէք, միայն երկար չէք կարող համբերել:

ԵԻԳ. Պ.—Երդուում եմ, ամբողջ կեանքս:

ՊԵ. ԻՎ.—Ի՞նչ տարօրինակ ֆանտազի է: Լնւ, մի օր, երկու օր, ես դեռ հասկանում եմ, բայց յետոյ... Այդ արդէն, թոյլ տէք, մեծ յիմարութիւն է:

ԵԻԳ. Պ.—Ես ձեզ չեմ հասկանում:

ՊԵ. ԻՎ.—Ձէք մնալու հօ բոլոր ժամանակ  
այդ վարտիքով:

ԵԻԳ. Պ.—Ի հարկէ, ես ուրիշներն էլ ու-  
նիմ:

ՊԵ. ԻՎ.—Ինչներիդ է պէտք ուրիշները:

ԵԻԳ. Պ.—Հապա ի՞նչպէս ման գամ:

ՊԵ. ԻՎ.—Բոլորովին առանց վարտիքի, այն-  
պէս, ինչպէս որ ուրիշներն են ման գալիս:

ԵԻԳ. Պ.—Բայց այդ անքաղաքավարու-  
թիւն է:

ՊԵ. ԻՎ.—Աւելի քաղաքավարի է, քան այդ  
յիմար վարտիքով: Լաւ, ի՞նչ մի լաւ բան կայ  
դրա մէջ՝ չեմ հասկանում:

ԵԻԳ. Պ.—(կողմ) Ի՞նչ տարօրինակ պարոն է:

ՊԵ. ԻՎ.—(կողմ) Ի՞նչ լաւ է խաղում իրա  
դերը: Հետաքրքիր անձնաւորութիւն է: (Նրան)  
Ձեր մասին Վէրան ինձ շատ է պատմել: Ես ձեզ  
նմաններին սիրում եմ, իմ ճաշակին էք: Ձեր ձեռ-  
քը... (համըռուում է) Ես ձեր բարեկամն եմ:

ԵԻԳ. Պ.—(զարմացած) Ի՞նչ էք անում, ի՞նչ  
էք անում. թոյլ տւէք ուրեմն ես էլ ձեր ձեռք-  
քը համբուրեմ:

ՊԵ. ԻՎ.—Ո՛չ, ներեցէք: Եթէ այդպէս է,  
ուրեմն համբուրեցէք ուղղակի շրթունքներիցս:

ԵԻԳ. Պ.—Ուրախութեամբ (համըռուում է):

ՊԵ. ԻՎ.—(անցնելով աջ) Օ՛խ, սատանան  
տանի, ինչպէս է համբուրում: Ծեր եմ մի քիչ:

Թէ չէ, անպատճառ յետևիցը կընկնէի: Դուրե-  
կան կտոր է: (Նրան) Եւ այդպէս, մենք բարե-  
կամներ ենք:

ԵԻԳ. Պ.—Աւելի քան:

ՎԱՐ. Ս.—(մտնում է տանից եւ անցնում  
նրանց մէջ տեղը) Ահա թէ դուք ուր էք, իսկ ես  
ձեզ փնտրում եմ սենեակներում: Վէրօչկան էլ  
շատ լաւն է, ինքը գնացել է, իսկ ձեզ թողել  
այստեղ: Ճանապարհից էք եկած, աւելորդ չի  
լինի, կարծում եմ, եթէ նախաճաշէք: Դու եղ-  
բայր, կարգադրի, մինչև որ ես էլ ծանօթա-  
նամ մեր հիւրի հետ:

ՊԵ. ԻՎ.—Ամենայն ուրախութեամբ: (Գնա-  
լով) Ա՛յ, հասկանում եմ, սա կին է:

ՎԱՐ. Ս.—Իէ, բարև ձեզ: (համըռուում է  
նրան) Շատ ուրախ եմ ձեզ հետ ծանօթանա-  
լով: Շատ եմ լսել ձեր մասին, Վէրօչկան ձեզ  
շատ է սիրում:

ԵԻԳ. Պ.—Իսկ ինչպէս եմ ես նրան սիրում:

ՎԱՐ. Ս.—Բայց ասացէք խնդրեմ, այդ ի՞նչ  
քամի է փչել ձեր գլխին, հագնել այդ հագուս-  
տը: Ես կարծում եմ, բաւականին նեղացնում  
է ձեզ:

ԵԻԳ. Պ.—Ամենևին:

ՎԱՐ. Ս.—Դուք լաւ կանէիք հանէիք:

ԵԻԳ. Պ.—Ես ինքս էլ ցանկանում եմ, բայց  
ցաւն այն է, որ ուրիշը չունիմ, ես միայն մի

քանի օրով եմ եկել ձեզ մօտ, որ ձեր դատեր հետ մի լուրջ բանի մասին խօսեմ, իսկ յետոյ... յետոյ գուցէ մենք երբէք չը բաժանուենք:

ՎԱՐ. Ս.—Սյդքան շուտ մենք ձեզ միևնոյն է, բաց չենք թողիլ, իսկ ձեր իրերի յետևից Գրիգորիին կուղարկենք:

ՊԵ. ԻՎ.—(մտնելով) Բոլորը պատրաստ է: (Թեւը տալով Եղեմիին) Այսօր, ամբողջ ժամանակ, ես ձեր կաւարներն եմ:

ՎԱՐ. Ս.—Աւելին չը պահանջէք, ինչ որ Աստուած տւել է, նրանով էլ բաւականացէք, ձեզ այսօր չէինք սպասում: (Բողոքն էլ զնում են):

## ՏԵՍԻՒԼ 6

ԳՐԻԳՈՐԻ, ԴԱՇԱ, յետոյ ԵԻԳԵՆԻՅ ՊԱԻՆՈՎԻՉ

ԳՐ.—(մտնելով տան յետևից)—Այո՞ ձեր եմ խցկել գլխարկս, անպատճառ սենեակուսմն է մընացել երբ իրերը ներս տարայ: Դաշայից պիտի հարցնել. ձեր է նա. (նայում է դռնից ներս) կարծես այնտեղ է... ս'ս... էյ... լսեց, այստեղ է գալիս... (մի կողմ է քաշում):

ԴԱՇԱ.—(տանից)—Դնւ ի՞նչ ես այստեղ թրև գալիս, եկուր օրիորդի վրայ չես չուել է՞՞ աչքերդ: Քո ուսի կտորը չէ, մեծ պարօնն է աչք դրել նրա վրայ:

ԳՐ.—Ի՞նչ օրիորդ, չեմ էլ լսել: Ես գլխարկս եմ վնտրում, չը գիտեմ ուր է կորել:

ԴԱՇԱ.—Լաւ, կը վնտրեմ: Լսիր. մեր օրիորդի ընկերուհին է եկել և, հասկանում ես, մեզ նման չէ հագնուում, այլ տղամարդու:

ԳՐ.—Ի՞նչպէս, վարտիքով է:

ԴԱՇԱ.—Իսկական վարտիքով:

ԳՐ.—Լաւ է, բայց ի՞նչու համար:

ԴԱՇԱ.—Ձը գիտեմ: Ասելն էլ արդելած է, որ նա իգական սեռիցն է:

ՎԱՐ. Ս.—(ներսից) Դաշա, Դաշա:

ԴԱՇԱ.—Ինձ են կանչում, գնամ:

ԳՐ.—Լսիր, Դաշուտկա, ասա, երբ է մեր հարսանիքը գլուխ գալու:

ԴԱՇԱ.—Կը համբերես, սիրտդ չի ճաքի:

ԳՐ.—Ի՞նչու համբերեմ՝ չեմ հասկանում: Հալեցիր ինձ բոլորովին, ես կարծես ես չեմ, բայց մի ուրիշն էլ չեմ: Ահա քեզ ինչ կասեմ. եթէ դու գիտամբ ես այդ անում, ուրեմն լսիր. իմ բնաւորութիւնը աղայական է, ես երկար չեմ համբերիլ, վեր կառնեմ, և այնպէս կը հասցնեմ, որ հօրդ հարսանիքը միտդ կընկնի:

ԴԱՇԱ.—Հէնց այդ է որ կայ, իսկոյն և եթ բարկացար:

ԳՐ.—Բայց ի՞նչպէս չը բարկանամ, չէ՞ որ ես քեզ սիրում եմ, աղաւնեակս: (Գնում է եւ համբուրում):

ԴԱՇԱ.—Բաց թող, սատանա, մէկ էլ տեսար պարոնները նկատեցին:

ԳՐ.—Տես, գլխարկս գտիր:

ԴԱՇԱ.—Իսկ դու նոր օրիորդի մասին ոչ ոքի չասես: (Դէպի տունն է գնում)

ԳՐ.—Եւ ինչեր ասես, որ այդ աղաները չեն հնարում: Տես, իրանց շորերը կարծես քիչ է, մերն են սկսել հագնել: Այդ բոլորը նրա համար, որ աւելի հեշտ լինի սիւրբիւրի անել: Ով որ գալիս է: (Բաշտում է դէպի ցանկապատը) Հէնց ինք է որ գալիս է: Զի էլ երևում որ կին է, իսկական տղամարդ:

ԵԻԳ. Պ.—(դուրս է եկել եւ շտապ շտապ ման է գալիս) Ոչինչ չեմ հասկանում, ի՞նչ տարօրինակ ընտանիք է: Ամենքն էլ ցանկանում են, որ ես մերկ մանգամ. հէնց սկսում եմ խօսել մի որևէ բանի մասին, իսկոյն նրանք փոխում են խօսակցութեան նիւթը և վերջացնում իմ հագուստով:

ԳՐ.—(Փրթկացնում է)

ԵԻԳ. Պ.—Դու սիլ ես, դու ի՞նչ ես ծիծաղում:

ԳՐ.—Ներեցէք, այդ այնպէս, շատ հետաքրքիր է:

ԵԻԳ. Պ.—Ի՞նչն է հետաքրքիր:

ԳՐ.—Այնպէս, ընդհանրապէս, ես կարծում եմ անյարմար է:

ԵԻԳ. Պ.—Ի՞նչն է անյարմար:

ԳՐ.—Վարտիքը:

ԵԻԳ. Պ.—Ի՞նչ, սատանան տանի, դ՞ու էլ վարտիքի մասին ես խօսում, ոչինչ չեմ հասկանում: Այստեղ մի ինչ որ թիւրիմացութիւն կայ: Դէ, ի՞նչ ես քրքրում, ի՞նչ կայ ծիծաղելու: Դու որ վարտիքով ես, կարծեմ քեզ վրայ ոչ ոք չէ ծիծաղում:

ԳՐ.—Այն մենք ենք: (Ծիծաղում է)

ԵԻԳ. Պ.—Իսկ ինձ ի՞նչպէս կը հրամայես առանց վարտիքի մանգալ: Զարմանալի մարդիկ են այս տանը: (Նստում է)

ԳՐ.—(Մօտենում է որ մի քանի ասի, քայց փրթկացնում է եւ հեռանում):

ԵԻԳ. Պ.—Թիւ, աւանակ: Ես բոլորովին կը խելագարւեմ: Գեռին կարծես սիրահարւել է ինձ վրայ, շարունակ ձեռքերս է սեղմում և կողքիս կպչում մինչև այն աստիճան, որ դահլաս գնաց: Մի դուցէ այս կատակ է, որ վէրօչկան է հնարել, կամ թէ սատանան գիտէ, ինչ է: (Աջ է անցնում)

## ՏԵՍԻԼ 7

ԵԻԳԵՆԻ ՊԱԻԼՈՎԻՉ, ՎԱՐՎԱՐԱ ՍԵՄԵՕՆՈՎՆԱ, յետոյ  
ԴԱՇԱ և ԳՐԻԳՈՐԻՅ

ՎԱՐ. Ս.—(մտնում է) Այդ ի՞նչու սուրճ չը

խմեցիք:

ԵԻԳ. Պ.—Շնորհակալ եմ, ես չեմ սիրում:

ՎԱՐ. Ս.—Ի՞նչպէս էք հաւանում մեր ամառանոցը:

ԵԻԳ. Պ.—Ես ամեն ինչ հաւանում եմ, Վարվարա Սեմեօնովնա, բայց մտադիր եմ այսօր գնալ:

ԴԱՇԱ.—(ընդհատ զայնով) Տիրուհի, Գրիգորին այստեղ է, կը հրամայէք կանչել:

ՎԱՐ. Ս.—Այո, այո, կանչիր (Դաշան զընում է) Դուք երևակայել չէք կարող, թէ ինչպէս եմ վախենում ես խելագարներից:

ԵԻԳ. Պ.—Ինչո՞ւ յանկարծ խելագարներին յիշեցիք:

ՎԱՐ. Ս.—Երևակայեցէք, գիւղում մի խելագար է լոյս ընկել, որ մտնում է բոլոր ամառանոցները, ում որ տեսնում է՝ իսկոյն առաջարկութիւն է անում և ով որ չէ համաձայնուում, իսկոյն վրան է ընկնում և խեղդում: Դիմացը բնակողների դայեակին քիչ է մնացել որ սպանի, հազիւ են կարողացել ձեռքիցը խլել:

ԵԻԳ. Պ.—Նա ի՞նչ է, երիտասարդ է:

ՎԱՐ. Ս.—Ո՛չ, պառաւ է, ասում են շատ խմում էր:

ԳՐ.—(մտնում է Դաշայի հետ տան յետեւից) Ի՞նչ էք հրամայում, տիրուհի:

ՎԱՐ. Ս.—Դու լսե՛լ ես խելագարի մասին:

ԳՐ.—Լսել եմ:

ՎԱՐ. Ս.—Խնդրեմ, ոչ մի տեղ չը գնաս: Աստուած մի արասցէ, մեզ մօտ էլ մտնի:

ԳՐ.—Հանգիստ եղէք, չեմ գնալ:

ՎԱՐ. Ս.—Դարբասն էլ ամուր կողպիր:

ԳՐ.—Լսում եմ: Սառցարանի կողքով էլ չի կարող անցնել:

ՎԱՐ. Ս.—Շտկեցի՞ն:

ԳՐ.—Շտկեցին: Գնայիք-տեսնէիք՝ լաւ կը լինէր, բանուրներին էլ կ'արձակէիք:

ՎԱՐ. Ս.—Գնանք: Մի րոպէ ես ձեզ կը թողնեմ: Դաշա, Վէրօչկին փնտրէիր: (Գնում է Գրիգորիի հետ միասին տան յետեւ):

ԴԱՇԱ.—Իսկոյն կը փնտրեմ: (Ուզում է զընալ):

ԵԻԳ. Պ.—Դաշա, լսեցէք, դուք վաղո՞ւց էք ծառայում Ուտոչկիններին մօտ:

ԴԱՇԱ.—Վաղուց: (Ժպտում է):

ԵԻԳ. Պ.—Ինչո՞ւ էք շարունակ ծիծաղում:

ԴԱՇԱ.—Այնպէս, շատ ծիծաղելի է, ես գոնէ չէի հագնիլ...

ԵԻԳ. Պ.—Ի՞նչը չէիք հագնիլ:

ԴԱՇԱ.—Վարտիքը: (Փրթկացնելով, տուն է փախչում):

## ՏԵՍԻԼ 8

ԵՒԳԵՆԻՅ ՊԱԻԼՈՎԻՉ և ՊԵՕՏՐ ԻՎԱՆԻՉ

ԵՒԳ. Պ.—Կարելի է մտածել, որ ես ապուշների շրջան եմ ընկել։ Մի ելք կայ միայն. փախչել որքան կարելի է շուտ, ապա թէ ոչ դրանք ինձ իսկապէս մերկանալ կը ստիպեն։ (Անցում է աջ։ Մտնում է Պետրը Իվանիչը) Գեռի, ի սէր Աստծոյ, ասացէք, ի՞նչ է նշանակում այս ամենը, ես ոչինչ չեմ հասկանում. ամենքն էլ ծիծաղում են վրաս և պահանջում են որ ես Ադամի հագուստով ման գամ։

ՊԵ. ԻՎ.—Ա՞րժէ անհանգստանալ։ Ի հարկէ այդ ամենը մի քիչ տարօրինակ է, բայց յետոյ ամենքն էլ կը հաշուեն դրա հետ։

ԵՒԳ. Պ.—Ի՞նչի հետ կը հաշուեն։

ՊԵ. ԻՎ.—Ձեր և ձեր հագուստի հետ։

ԵՒԳ. Պ.—Ոչինչ չեմ հասկանում։

ՊԵ. ԻՎ.—Իւր ժամանակին կը հասկանաք։ Իսկ ես շատ էի ուզում խօսել ձեզ հետ և այն էլ մի շատ լուրջ բանի մասին։

ԵՒԳ. Պ.—Ես պատրաստ եմ։

ՊԵ. ԻՎ.—Քը՛խ... (կողմ) վախենում եմ խօսել... քը՛խ... սիրտս ճաքում է... (Նրան) Ձեզ ի հարկէ տարօրինակ կը թւայ այն, ինչի մասին որ ես ուզում եմ խօսել, բայց ես զինուոր

եմ, սովոր եմ ամեն ինչ անել յանկարծ, առանց երկար ու բարակ մտածելու։ Երեսուն տարեկան հասակումս ես սիրեցի մի աղքատ աղջկայ և այն է՝ մտածում էի նրա հետ միանալ Հիմէնէի կապերով, երբ յանկարծ, նրա մահւամբ, իմ բոլոր իղձերը օդը ցնդեցին։ Ես զրկւեցի իմ բաղդից և ահա քսան տարի է չը կարողացայ գտնել մի անձն, որին կարողանայի սիրել անկեղծ, կըքով, այնպէս, ինչպէս այն ժամանակ։ Բայց այժմ, այժմ ես սիրում եմ նորից, սիրում եմ աւելի քան երբևիցէ։ Այդ կնոջը ես սիրեցի առաջին հայեացքից, առաջին անգամ հանդիպելուց։ Նրա մերժումը մահ կը լինի ինձ համար, ես չեմ կարող տանել այդ հարւածը. ո՛չ, այդ կինը սիրոյ սաստիկ կրակ վառեց սրտիս մէջ։

ԵՒԳ. Պ.—Եթէ միայն գաղտնիք չէ, ո՞վ է նա։

ՊԵ. ԻՎ.—Դուք, միմիայն դուք։

ԵՒԳ. Պ.—(չհասկանալով) Ե՞ս։

ՊԵ. ԻՎ.—Այո՛, դուք։ Դուք իմ աստուածուհին էք, իմ կեանքը, իմ երջանկութիւնը...

ԵՒԳ. Պ.—Դուք ի՞նչ է, կատակ էք անում, թէ...

ՊԵ. ԻՎ.—Ո՛չ, կատակ չեմ անում։ Ես առաջարկում եմ ձեզ իմ սիրտը և ձեռքը։ Մի դժբաղդացնէք ինձ, եղէք իմ կինը։

Եհֆ. Պ.—Տէր Աստուած, հէնց սա է որ կայ այն խելագարը: (Արագ անցնում է ձախ):

ՊԵ. ԻՎ.—Դուք զարմանում էք, և զարմանալու էլ է, մենք ընդամենը երկու ժամ է, ինչ ծանօթ ենք և արդէն ես առաջարկութիւն եմ անում: Ի՞նչ արած, ես չեմ կարող թագցնել զգացմունքներս:

Եհֆ. Պ.—(կողմ) Եթէ յանկարծ ինձ կծոտել սկսի:

ՊԵ. ԻՎ.—Դուք լռում էք:

Ե. Գ. Պ.—(կողմ) Բղաւեմ, դուցէ աւելի վատ լինի:

ՊԵ. ԻՎ.—Միթէ չէք տեսնում, ինչպէս եմ տանջւում:

Եհֆ. Պ.—(կողմ) Գոնէ փախչել կարելի լինէր: Ձէ, խելագարից փախչելը շատ դժւար է, նրանք շատ արագ են վազում:

ՊԵ. ԻՎ.—Կարո՞ղ եմ յոյս ունենալ:

Եհֆ. Պ.—(կողմ) Աւելի լաւ է համաձայնել, թէ չէ կը սկսի կծոտել... (նրան) Այո, այո, դուք կարող էք, միայն թէ չէ՞ կարելի դրա մասին յետոյ խօսել:

ՊԵ. ԻՎ.—Ձեր ցանկութիւնը և կամքը օրէնք է ինձ համար: Միայն ասացէք, երբ կը լսեմ ձեր վերջին պատասխանը:

Եհֆ. Պ.—Մի ժամից:

ՊԵ. ԻՎ.—Այդպէս շնորհ, թէ, ինչ երջան-

կութիւն. աւէք ինձ ձեր ձեռքը կրծքիս սեղմեմ: (Մօտենում է):

Եհֆ. Պ.—Այս բոլոր վրաս կընկնի (քաշում է):

ՊԵ. ԻՎ.—(զնում է նրա ետեւից եւ թոնում նրա ձեռքը որը ելզնին մի քանի անգամ մեկնելով յետ է վազում):—Տէք, աւէք ինձ ձեր ձեռքը, կեանքս, ուրախութիւնս... (համարում է)

Մի ժամից ես նորից կը ներկայանամ խելու դատավճիռս: (զնում է ձախ, մի քանի անգամ օղային համարյուներ ուղարկելով):

### ՏԵՄԻՂ 9

ԵԻԳԵՆԻՅ ՊԱԻԼՈՎԻՉ, յետոյ ՎԱՐՎԱՐԱ ՍԵՄԵՕՆՈՎՆԱ, ԴԱՇԱ, ԳՐԻԳՈՐԻՅ Ե ՎԷՐԱ:

Եհֆ. Պ.—Ձգում եմ, որ վախից շուտով ես ինքս էլ կը խելագարւեմ: Լաւ է, որ առայժմ միայն այդքանով պրծայ: Ձեմ հասկանում, ինչպէս կարելի է այդպիսիներին ազատ թողնել:

(մնում է ձախում)

ՎԱՐ. Ս.—(մանելով տան յետեւից) Դուք դարձեալ մենակ էք: Ո՞ւր է Վէրօչկան:

Եհֆ. Պ.—Ձը գիտեմ: Դուք ինձ ներեցէք, բայց ես անկարող եմ երկար մնալ ձեր տանը: Բարեկեցէք, խնդրեմ, Վէրօչկին. ես գնում եմ:

ՎԱՐ. Ս.—Ինչո՞ւ այդպէս շուտ:

ԵԻԳ. Պ.—Հապա ի՞նչ, դուք ցանկանում էք, որ ես այստեղից առանց թի գնամ կամ ով գիտէ և առանց գլխի: Ես խելագարի հետ նորից հանդիպելու ցանկութիւն չունիմ, զարմանում եմ, թէ ի՞նչպէս է որ դուք չէք վախենում:

ՎԱՐ. Ս.—Մեզ մօտ չի կարող նա ներս գալ, չորս կողմը փակ է:

ԵԻԳ. Պ.—Յամենայն դէպս ներս է եկել:

ՎԱՐ. Ս.—Ի՞նչպէս:

ԵԻԳ. Պ.—Շատ պարզ. ես հազիւ ազատեցի նրա ձեռքից, նա ինձ առաջարկութիւն արաւ, համբուրեց ձեռներս և մի ժամից էլ պատասխանի է գալու:

ՎԱՐ. Ս.— Այստեղ:

ԵԻԳ. Պ.— Այո, այստեղ: Ես կը փախչեմ, վախենում եմ:

ՎԱՐ. Ս.— (նստելով աջ նստարանի վրայ) Օ՛խ, Աստուած իմ, յանկարծ ինձ էլ առաջարկութիւն չանի: Օ՛խ... Դաշա, Գրիգորի, հասէք, օգնեցէք...

ԴԱՇԱ.— (մտնելով) Ի՞նչ է պատահել:

ՎԱՐ. Ս.— Խելագարը այստեղ է, շուտով կանչիր Գրիգորիին, այ, մեռնում եմ:

ԴԱՇԱ.— (նստելով նրա կողքին գետնի վրայ) Խելագարը, յո, մահս մօտ է:

ՎԷՐԱ.— (ներս վազելով) Մայրիկ, ի՞նչ է պատահել:

ՎԱՐ. Ս.— Աղջիկս, չը գնաս, խելագարը մեր տուն է մտել:

ՎԷՐԱ.— Խելագարը... (նստում է ձախ)

ԵԻԳ. Ս.— Իսկական խելագարը: (նստում է նրա կողքին):

ՎԱՐ. Ս.— Ձը ցրէք, պարոններ, բոլորին միասին չի ուտիլ: Բայց ուր է կորել Գրիգորին:

ԲՈՂՈՐԸ.— Գրիգորի, Գրիգորի...

ԳՐ.— (ներս վազելով) Ի՞նչ էք հրամայում:

ՎԱՐ. Ս.— Գրիգորի, չը գնաք, խելագարն այստեղ է:

ԳՐ.— Ինչպէս թէ այստեղ է, նրան այս բուպէիս բռնեցին, տարան ոստիկանատուն. բազմութիւն էր հաւաքել, ահագին բազմութիւն:

ՎԱՐ. Ս.— Ձես խաբում:

ԳՐ.— Ինքս տեսայ, Աստուած վկայ, փախայ անկիւնում թագնեցի: (ըղորն էլ վեր են կենում):

ՎԱՐ. Ս.— Դէ, փառք Աստուծոյ, ես կարծում էի վախից կը մեռնեմ: (անցնում է աջ, Ելզենի Պապովիչը եւ Վէրան ձախ):

ԵԻԳ. Պ.— Դուք կը գնաք ոստիկանատուն:

ՎԱՐ. Ս.— Ի՞նչ էք ասում, ես վախենում եմ, և ի՞նչու համար:

ԵԻԳ. Պ.— Յամենայն դէպս, ես կարծում եմ, նրան խղճում էք:

ՎԱՐ. Ս.—Շատ էլ խղճում եմ: Դէ այժմ  
ձեզ հարկաւոր չէ շտապել, այնտեղից նա այլ  
ևս չի փախչիլ:

ԵԻԳ. Պ.—Այո, ես էլ հանգստացայ մի քիչ:  
ՎԷՐԱ.—Լաւ, ձեզ քննչ:

ԵԻԳ. Պ.—Ի՞նչպէս թէ մի քիչ առաջ նա  
ինձ առաջարկու թիւն արու:

ՎԷՐԱ.—Ձեզ:  
ԳՐ.—Ճարպիկ է, ես չը տեսայ ինչպէս է  
մտել այստեղ, ինչպէս երևում է ցանկապատի  
վրայով է անցել:

ՎԱՐ. Ս.—Գրիգորի, գնա բեր մտանից  
մահճակալը:

ԳՐ.—Իսկոյն (զնում է):

ՎԱՐ. Ս.—Ես ձեզ Վէրօզկի հետ մի սենեա-  
կում կը տեղաւորեմ:

ՎԷՐԱ.—Ի՞նչպէս, ինձ հետ:

ՎԱՐ. Ս.—Ուրախ կանցնի ձեզ համար միա-  
սին:

ՎԷՐԱ.—Ո՛չ, մայրիկ, չեմ ուզում, ոչ մի  
պայմանով:

ՎԱՐ. Ս.—Ինչ յիմարութիւններ են: Այդ  
ի՞նչու չես ուզում: (Նւզենիին) Դուք ոչինչ դէմ  
չունիք:

ԵԻԳ. Պ.—Ե՛ս... Է՛ս. ի հարկէ առանձին  
լաւ կը լինէր, բայց ես, դեռ ժամանակ կայ,  
կարող կը լինեմ գուցէ սենեակ վարձել այս-

տեղ—մօտիկ:  
ՎԱՐ. Ս.—Ի՞նչու, դուք մեզ վերաւորում  
էք: Մի երկու օր կապրէք միասին, իսկ յետոյ  
ես ձեզ համար անկիւնի սենեակը, Վէրօզկից  
մօտիկ, կարգի կը բերեմ:

ՎԷՐԱ.—Մայրիկ, ես ոչ մի պայմանով չեմ  
համաձայնիլ:

ԵԻԳ. Պ.—(լողմ) Ձէ, մի իմ դրութեանս  
նայեցէք:

ՎԷՐԱ.—Մայրիկ, աւելի լաւ է, թող նա քե-  
ռու հետ միասին մի սենեակում քնի, նրանց հա-  
մար ուրախ կանցնի:

ՄԱՐ. Ս.—Խեղազարւեցի՛ր ինչ է, այնպիսի  
յիմարութիւններ ես դուրս տալիս. խելքիդ զօռ  
մի տալ, մի երկու օր կարող էք միասին լինել,  
ոչինչ:

ՎԷՐԱ.—(համարեա լացով) Ո՛չ, ո՛չ, ոչ մի  
պայմանով:

ՎԱՐ. Ս.—Ձեռք քաշիր ի սէր Աստծոյ, զահ-  
լաս տարար քօ կամակորութիւններով: Գնանք,  
Դաշա, կարգադրենք: (Գնում է տուն):

ՎԱՐ. Ս.—(համարեա լացով) Ո՛չ, ո՛չ, ոչ մի  
պայմանով:

ՎԱՐ. Ս.—Ձեռք քաշիր ի սէր Աստծոյ, զահ-  
լաս տարար քօ կամակորութիւններով: Գնանք,  
Դաշա, կարգադրենք: (Գնում է տուն):

ՎԱՐ. Ս.—(համարեա լացով) Ո՛չ, ո՛չ, ոչ մի  
պայմանով:

ՎԱՐ. Ս.—Ձեռք քաշիր ի սէր Աստծոյ, զահ-  
լաս տարար քօ կամակորութիւններով: Գնանք,  
Դաշա, կարգադրենք: (Գնում է տուն):

ՎԱՐ. Ս.—(համարեա լացով) Ո՛չ, ո՛չ, ոչ մի  
պայմանով:

## ՏԵՍԻԼ 10

ԵՒԳԵՆԻՅ ՊԱԻԼՈՎԻՉ և ՎԷՐԱ

ԵՒԳ. Պ. — Վէրօջկա, վերջապէս դու մօտս ես:  
ՎԷՐԱ. — (համարեա լացով) Թո՛ղ ինձ. (անց-  
նում է աջ եւ նստում) գնացէ՛ք, ի սէր Աստծոյ,  
գնացէ՛ք այստեղից, հեռո՛ւ, որպէս զի ես ձեզ  
այլ ևս չը տեսնեմ:

ԵՒԳ. Պ. — (նստելով) Ես ձեզ չեմ հասկա-  
նում, ի՞նչպէս էք դուք կարողանում ձեր քեռու  
հետ միասին մի տան մէջ ապրել:

ՎԷՐԱ. — Հետաքրքիր է, ձեր ի՞նչ գործն է:

ԵՒԳ. Պ. — Ահաւոր է, քի՛չ բան է կարող խե-  
լագար մարդու խելքին փչել:

ՎԷՐԱ. — Խելագար:

ԵՒԳ. Պ. — Այո՛, ձեր քեռու:

ՎԷՐԱ. — Ի՞նչպէս երևում է դուք ինքներդ  
էք խելագար:

ԵՒԳ. Պ. — Ներեցէք խնդրեմ, խելքը գլխին  
մարդը ինձ առաջարկութիւն չէր անի:

ՎԷՐԱ. — Մի քիչ առաջ ասում էիք որ խե-  
լագարն էր ձեզ առաջարկութիւն անում, որին  
հիւանդանոց տարան, այժմս էլ թէ քեռիս. ինչ-  
պէս երևում է ձեզ էլ է հարկաւոր հիւանդանոց  
ուղարկել:

ԵՒԳ. Պ. — Հաւատացնում եմ ձեզ, որ մի  
ժամ առաջ, հէնց նոյն իսկ այստեղ, ձեր քեռին  
խնդրեց իմ ձեռքը:

ՎԷՐԱ. — Քեռիս:

ԵՒԳ. Պ. — Քեռիդ:

ՎԷՐԱ. — (վեր կենալով) Գիտէ՞ք ինչ. դուք  
խելագար էք:

ԵՒԳ. Պ. — Ազնիւ խօսք եմ տալիս ձեզ, որ  
քեռիդ ինձ առաջարկութիւն արեց:

ՎԷՐԱ. — Քեռիս կատակող է, այդ ճիշտ է:

ԵՒԳ. Պ. — Ասում եմ, որ լուրջ էր, չեմ հնա-  
րում հօ այդ ամենը:

## ՏԵՍԻԼ 11

ՆՐԱՆՔ, ՎԱՐՎԱՐԱ ՍԵՄԵՕՆՈՎՆԱ, ՊԵՕՏՐ ԻՎԱՆԻՉ

ՎԱՐ. Ս. — (մտնելով) Դէ, ես բոլորը պատ-  
րաստեցի Վէրօջկի սենեակում, իսկ ձեր իրերի  
յետևից ճաշից յետոյ կուղարկեմ:

ՊԵ. ԻՎ. — (մտնելով) Ահա և ես:

ԵՒԳ. Պ. — (վազելով ձախ) Ա՛հ, փախել է  
հիւանդանոցից:

ԲՈՂՈՐԸ. — Ի՞նչ պատահեց ձեզ. (Վէրօջկան  
մօտենալով):

ԵՒԳ. Պ. — Ի՞նձ, ոչինչ... (շփելով ծնկները)  
ատամներս են ցաւում:

ՎԷՐԱ.— Լաւ, ապա ինչո՞ւ էք ծնկներդ շը-  
փում: զձ. բնապա յոյ մում բժշ. ջատա նախ  
ԵԻԳ. Պ.— Ի՞նչ... հա, այդ ցաւը անցաւ  
ծնկներիս, այժմ ոչինչ, մի քիչ լաւ է:

ՊԵ. ԻՎ.— Իսկ ես, գիտէք, գնացել էի խե-  
լագարին նայելու, բոլորովին ջարդել են, ոչ ո-  
քի չի ճանաչում. զարմանալի է, ինչպէս է որ  
նրանց տնացիքը չեն նկատել առաջ:

ԵԻԳ. Պ.— (լամւոց) Վէրօչկա, այդ ձեր քե-  
ռին է:

ՎԷՐԱ.— Այո, այդ ձեզ զարմացնում է:

ՎԱՐ. Ս.— Եղբայր, ես քո սենեակից մի  
բարձ վերցրի մեր ընդհանուր հիւրի համար:

ՊԵ. ԻՎ.— Թէկու՞ր ամբողջ անկողինս:

ՎԱՐ. Ս.— Վէրօչկի հետ միասին մի սե-  
նեակում կը պառկեն, այնպէս որ դու շատ էլ  
չը թրխկթրխկացնես:

ՎԷՐԱ.— Ես խոհանոցում կը քնեմ Գաշայի  
հետ:

ՎԱՐ. Ս.— Լաւ, ապա սրտեղ տեղաւորէի:

ՎԷՐԱ.— Բեռու մօտ:

ԵԻԳ. Պ.— Բեռու, ոչ մի պայմանով, ես ա-  
ւելի լաւ է կը գնամ: (Կողմ) Գիշերը յանկարծ  
կը խեղդի:

ՎԱՐ. Ս.— Այդ ի՞նչ կամակորու թիւններ են,  
այնպէս չեմ ուզում, այնպէս չեմ ուզում: Էհ,  
այն ժամանակ իմ սենեակում կը պառկէք, եթէ

անբաւական մտք, չը նեղանաք:

ՎԷՐԱ.— Ո՛չ, ոչ մայրիկ, այդ էլ անկարե-  
լի է, ես թոյլ չեմ տալ:

ՎԱՐ. Ս.— Այն ժամանակ ինքներդ վճռեցէք,  
ու՞մ հետ էք ուզում մնալ ինձ, թէ Վերօչկի հետ:

ԵԻԳ. Պ.— (մտածելով) Աւելի լաւ է ես կը  
գնամ:

ՊԵ. ԻՎ.— Այդ զարմանալի է: Գիշերելու  
համար այնքան էք վիճում-դատում, որ կարծէք  
մի պատմական անցք լինի:

ԴԱՇԱ.— (մտնելով) Օրիորդ, կայարանից մը-  
շակը ձեզ նամակ է բերել:

ՎԷՐԱ.— Ի՞նչ: (Վերցնում է սեւ կարդում).  
«Վէրօչկա, ես կայարանում սպասում եմ, եկ և  
միասին թե-թևի տւած կը վերադառնանք տուն.  
Ես տղամարդու հագուստով եմ. համբուրում եմ,  
քո Շուրա»: Այժմ ես ի՞նչ անեմ, (Ես կորայ:  
(Եստով է):

ՎԱՐ. Ս.— Այդ հիմից է նամակը:

ՎԷՐԱ.— Այդ... այդ Շուրօչկիցն է:

ՎԱՐ. Ս.— Ինչպէս թէ Շուրօչկից, սուր  
տեսնեմ:

ՎԷՐԱ.— Ո՛չ, մայրիկ, յետոյ... (լացով) Մայ-  
րիկ, ես այս բանում մեղաւոր չեմ. ներե-  
ցէք ինձ:

ՎԱՐ. Ս.— Չէ, այստեղ մի ինչ որ բան կայ,  
տուր նամակը. — (կարդում է) «Վէրօչկա, ես կա-

յարանում սպասում եմ, եկ և միասին թեթևի տւած կը վերադառնանք տուն. ես տղամարդու հագուստով եմ. համբուրում եմ. քո Շուրա: Այս ինչ ֆանտազի է, մի ուրիշ ընկերուհի էլ տղամարդու հագուստով:

ՊԵ. ԻՎ.—Բայց քո ընկերներդ օրիժինալներ են:

ՎԷՐԱ.—Մայրիկ, ես պէտք է ձեզ ասեմ, որ այս իմ ընկերուհին... ահա սա, որ սա ընկերուհի չէ, բայց ինչպէս ձեզ ասեմ, սա... սա... ամենևին էլ կին չէ:

ԲՈՂՈՐԸ.—Ի՞նչպէս թէ կին չէ:

ՎԷՐԱ.—Սա, սա Եւգենիյ Պաւլովիչն է. ես բոլորովին մեղաւոր չեմ, նա ինքն է եկել:

ՊԵ. ԻՎ.—Դուք կի՞ն չէք:

ԵԻԳ. Պ.—Ի հարկէ ո՛չ:

ՎԱՐ. Ս.—Նապա ի՞նչու էիր ասում, որ սա քո ընկերուհին է:

ՎԷՐԱ.—Ես չեմ ասել:

ԵԻԳ. Պ.—Տէր Աստուած, այստեղ ինձ կնոջ տեղ են ընդունել:

ՎԷՐԱ.—Այդ բոլորը շատ պարզ է. Եւգենիյ Պաւլովիչը եկել է այստեղ, որ առաջարկութիւն անի ինձ. ամառանոցում հանդիպել նրան ես չէի սպասում և վախենում էի խոստովանել. ասացի որ այդ իմ գաղտնիքն է, այսինքն շորերը փոխած ընկերուհիս է, որին ես սպասում էի

վաղը և ոչ այսօր:

ԵԻԳ. Պ.—Վարվարա Սեմեօնովա, ներեցէք իմ համարձակութիւնը, մենք վաղուց սիրում ենք միմեանց և ես ձեզանից խնդրում եմ նրա ձեռքը:

ՎԱՐ. Ս.—Այս բոպէիս ես ոչինչ չեմ կարող ասել: Իսկ դու Վէրա համաձայնես:

ՎԷՐԱ.—Ե՛ս, դէ Տէրը նրա հետ, թող այդպէս լինի, ես նրան ներում եմ:

ԵԻԳ. Պ.—(համարելով նրան) Վէրօչկա, թանկագինս:

ՊԵ. ԻՎ.—(Վէրօչկին հեռացնելով եւ ժողովուրդը Եւգենիին) Ո՛չ, թոյլ տւէք, ես բացատրութիւն եմ պահանջում. դուք ինձ, պաշտօնաթող գնդապետիս, ստիպեցիք համբուրել ձեր ձեռքերը: Այդ յանդգնութիւն է:

ԵԻԳ. Պ.—Ես կարծում էի այդ ձեզ դուր է գալիս:

ՊԵ. ԻՎ.—Եւ ձեր մէջ ի՞նչ լաւ բան գտայ. սատանան գիտէ, թէ ինչ է: (Բաշտելով մի կողմ եւ ոտից գլուխ նայելով) Դուք իսկապէս տղամարդ էք:

ԵԻԳ. Պ.—Ի հարկէ տղամարդ եմ:

ՊԵ. ԻՎ.—Ազնիւ խօսք:

ԵԻԳ. Պ.—Ազնիւ:

ՊԵ. ԻՎ.—Ես համաձայն եմ Վէրօչկին ձեզ տալու, բայց եթէ դուրս եկաւ, որ դուք կին էք...

ԵՒԳ. Պ.— Այն ժամանակ ես կլինեմ ձեր ամուսինը:

ՊԵ. ԻՎ.— Գալիս է: (Ձեռք ձեռքի են կտրում):

... ցգոճճ ազմ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

**Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր**

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

**ԻՆՉՊԷՍ ՆՐԱՆՔ**

**ԹՈՂԻՆ ԾԽԵԼԸ**

Կասակ 2 արար. Վ. Տրախենբերգի

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

**Թարգ. Գ Ր. Ա Ի Ե Տ Ե Ա Ն**

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

... ամ ևճ չմիջո սմ սվիթաոց անՍ— Ս. ՂԱԲ

Настоящая пьеса, подъ названіемъ „Какъ они бросили курить“, пер. Гр. Аветяна разрѣшена Намѣстникомъ ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА на Кавказѣ, для представленія на сценахъ края (Отзывъ Канцеляріи за № 23372.

17 Ноября, 1908 г. г. Тифлисъ

И. Д. Предсѣдателя Комитета (подпись)

Секретарь Н. Меликъ Нубаровъ

Ա Ն Չ Ի Ն Ք

ԱՐՄԵՆԻՅ ՎԻԿՏՐՈՎԻԶ ԼՕԺԲԻՆՈՎ, փաստա-  
բան

ՄԱՐԻԱ ԱԼԵՔՍԵՅԵՆԱ, նա կինը

ԱԼԵՔՍԵՅ ՊԵՏՐՈՎԻԶ ՊՕՄԵՐԱՆՍԿԻՅ, Մարիա

Ալեքսեյնայի հայրը


ԳԵՈՐԳԻՅ ՍԵՐԳԵՅԵՎԻԶ ԿՕՐԻՆԿԻՆ, ԼՕԺԲԻՆՈՎԻ

օգնականը


Մի տիկին

ՕԼԳԱ ՎԱՍԻԼԵՆԱ, տնտեսուհի

ԿԱՏԵԱ, աղախին



1 թախտ, 2 սեղանիկ ծխելու պարզանե-  
րով, 3 գրասեղաններ, 4 բազաթոններ, 5 գը-  
քերի պահարան, 6 պատուհաններ, 7 հեռախ-  
օսի մեքենայ, 8 մուտքի դուռ, 9 դուռ սրբի  
սենեակները:



- Գործարարը պետք է լինի 1  
 - Գործարարը պետք է լինի 2  
 - Գործարարը պետք է լինի 3  
 - Գործարարը պետք է լինի 4  
 - Գործարարը պետք է լինի 5  
 - Գործարարը պետք է լինի 6  
 - Գործարարը պետք է լինի 7  
 - Գործարարը պետք է լինի 8  
 - Գործարարը պետք է լինի 9  
 - Գործարարը պետք է լինի 10  
 - Գործարարը պետք է լինի 11  
 - Գործարարը պետք է լինի 12  
 - Գործարարը պետք է լինի 13  
 - Գործարարը պետք է լինի 14  
 - Գործարարը պետք է լինի 15  
 - Գործարարը պետք է լինի 16  
 - Գործարարը պետք է լինի 17  
 - Գործարարը պետք է լինի 18  
 - Գործարարը պետք է լինի 19  
 - Գործարարը պետք է լինի 20  
 - Գործարարը պետք է լինի 21  
 - Գործարարը պետք է լինի 22  
 - Գործարարը պետք է լինի 23  
 - Գործարարը պետք է լինի 24  
 - Գործարարը պետք է լինի 25  
 - Գործարարը պետք է լինի 26  
 - Գործարարը պետք է լինի 27  
 - Գործարարը պետք է լինի 28  
 - Գործարարը պետք է լինի 29  
 - Գործարարը պետք է լինի 30  
 - Գործարարը պետք է լինի 31  
 - Գործարարը պետք է լինի 32  
 - Գործարարը պետք է լինի 33  
 - Գործարարը պետք է լինի 34  
 - Գործարարը պետք է լինի 35  
 - Գործարարը պետք է լինի 36  
 - Գործարարը պետք է լինի 37  
 - Գործարարը պետք է լինի 38  
 - Գործարարը պետք է լինի 39  
 - Գործարարը պետք է լինի 40  
 - Գործարարը պետք է լինի 41  
 - Գործարարը պետք է լինի 42  
 - Գործարարը պետք է լինի 43  
 - Գործարարը պետք է լինի 44  
 - Գործարարը պետք է լինի 45  
 - Գործարարը պետք է լինի 46  
 - Գործարարը պետք է լինի 47  
 - Գործարարը պետք է լինի 48  
 - Գործարարը պետք է լինի 49  
 - Գործարարը պետք է լինի 50

Ա. Ա. Ր. Ա. Ր. Ի. Ա. Ծ

Փաստաբանի շքեղ ընդունարան

Չմեռային առաւօտ

ՏԵՍԻՒԼ 1

ԼՕԲԺԻՆՈՎ և ԿՈՐԻՆԿԻՆ

(Մի գրասեղանի ժող նստած, պարսպապատ է  
 Լօժքինովը (շարունակ ծխում է), մ'իսի մ'օտ Կորին-  
 կինը (շարունակ քթի տակ երգ է մոմոում). միջոց:

ԿՕՐ.— (յանկարծ ըարձր ձայնով երգելով)  
 «Մենք բոլորս կը գնանք, կը գանք»...

ԼՕԺ.— Ի՞նչ, ո՞ր կը գնանք:

ԿՕՐ.— Ներեցէք, երէկ երեկոյեանից ի վեր  
 այս ցանցառ երգը գլխիցս չի դուրս գալիս:

ԼՕԺ.— Պատահում է: Պսկովում իմ ներ-  
 կայութեամբ գատական պրիստաւը փոխանակ  
 ասելու «գատաւորները գալիս են», բարձր ձայ-  
 նով բղաւեց. «Տօրէադօր, համարձակ դուրս եկ».  
 ճիշտ եմ ասում... (միջոց) Ուրեմն դուք «Օր-  
 ֆէյն»-էիք նայում: Այսօր էլ կի՛նս է պատրաստ-  
 ւում հօր հետ օպերէտ գնալու, նա ձեզ էլ աչ-  
 քի առաջ ունի:

ԿՕՐ.—Իսկ դուք չէիք գնալ:

ԼՕԺ.—Հազիւ թէ կարողանամ: Ինչո՞ւ էք հարցնում:

ԿՕՐ.—Հէնց այնպէս... լաւ կը լինէր, որ Արսենի վիկտորովիչ, դուք էլ գայիք, միասին լինէիք:

ԼՕԺ.—Այդ ի՞նչ է, հոգեակս, քանի ժամանակ է ես նկատում եմ, որ դուք, կարծես, վախենում էք կնոջս հետ միասին երևալ:

ԿՕՐ.—Ես չեմ վախենում, միայն թէ... գիտէք, որ բամբասանքները անվերջ են:

ԼՕԺ.—Իսկ դուք թքեցէք այդ բամբասանքներին վրայ: Ձեզ ես ճանաչում եմ, իսկ կնոջս աւելի բան. Օթելլօի հետ ազգակցական կապեր չունիմ, ուրեմն... Տւէք, խնդրեմ ձեր լուցկին:

ԿՕՐ.—(տալով) Ի՞նչ շատ էք ծխում, Արսենի վիկտորովիչ:

ԼՕԺ.—Ա՛յո, բաւականին... նամանաւանդ երբ գրում եմ, կամ թուղթ խաղում:

ԿՕՐ.—Չէ՞ որ ծխախոտը փաստակար է:

ԼՕԺ.—Այո, օգտաւէտ բան չէ:

ԿՕՐ.—Անկասկած, ազդում է ուղեղի և սրբտի վրայ:

ԼՕԺ.—Շատ հաւանական է:

ԿՕՐ.—Տօլստոյը ասում էր, որ նա թմրեցնում է:

ԼՕԺ.—Թող ասի:

ԿՕՐ.—Այժմ շատերն են ծխելը թողնում:

ԼՕԺ.—Ամեն մէկը իր կամքի տէրն է: Կարելի է ես էլ թողնէի, եթէ միայն...

ԿՕՐ.—Եթէ միայն ի՞նչ...

ԼՕԺ.—Եթէ միայն շատ չը ձանձրացնէին խրատներով:

ԿՕՐ.—Ներեցէք, բայց ես... ես միայն նրա համար թոյլ աւելի ինձ, որովհետեւ...

ԼՕԺ.—Որովհետեւ կինս է խնդրել ձեզ, չէ՞...

ԿՕՐ.—Ճիշտն ասած Մարիա Ալէքսէենան հաւատացած է, որ եթէ դուք ծխելը թողնէք, ձեզ շատ լաւ կը զգաք:

ԼՕԺ.—Ես առանց դրան էլ ինձ շատ լաւ եմ զգում: Իսկ դուք երբէք չէք ծխել:

ԿՕՐ.—Գիմնազիայում ծխում էի 10 տարի շարունակ, յետոյ վճռեցի և թողի:

ԼՕԺ.—Իսկ ինչո՞ւ թողիք:

ԿՕՐ.—Հէնց այնպէս, զրազ բռնեցի:

ԼՕԺ.—Գժւար էր:

ԿՕՐ.—Առաջին շաբաթը, յիշում եմ, դժուար էր, իսկ յետոյ ամենևին նրա մասին չէի էլ մտածում: (միջոց):

ԼՕԺ.—Ես էլ մի անգամ փորձեցի քշացնել թիւը և իջայ օրական 40 գլանակի:

ԿՕՐ.—Ո՛չ, այդպէս չի կարելի, պէտք է միանգամից:

ԼՕԺ.—Ի հարկէ, եթէ թողնել է, պէտք է

միանգամից, միայն թէ... Դուք ահա 10 տարի ծխում էիք, իսկ ես չեմ յիշում, թէ երբ չեմ ծխել: Ես ընտելացել եմ նրան այնքան, որ չեմ կարող երեակայել ինձ առանց ծխախոտի: Առանց ծխախոտի ես նման կը լինեմ... Ինչպէս ասեմ ձեզ, օրինակ... անվարտիք մարդու:

ԿՕԲ.— Բայց չէ՞ որ առանց ծխախոտի էք ծնւել:

ԼՕԺ.— Չեմ յիշում, սիրելիս, մանկաբարձուհուս պէտք է հարցնել: (Ժիծաղում են. միջոց):

ԿՕԲ.— Պատրաստ է: (Տալիս է նրան):

ԼՕԺ.— Շնորհակալութիւն: (Նայում է թղթին) Այդպէս, այդպէս... Սենատում մենք նրանց ցոյց կը տանք...

ԿՕԲ.— Այնուամենայնիւ ափսոս որ նահանգական դատարանում մեր գործը չանցաւ, այդ անաջողութիւնը ինձ վրայ շատ վատ ազդեց:

ԼՕԺ.— Թթւածին էք դուք, դրա համար էլ ազդել է ձեզ վրայ. մարդ պէտք է ապրի, ոչ թէ թթի: Կեանքը, հոգիս, շատ լաւ, ուրախ բան է: Կեանքումս ես երեք բան չեմ սիրում. ծովային հիւանդութիւն, օպօպօնաքս օժանելիքը և տրամադրութիւն ունեցող պիեսները:

ԿՕԲ.— Ամեն բան կեանքում ձեզ յաջողւում էր, դրա համար էլ դուք...

ԼՕԺ.— Այդ դեռ հարց է. դրա համար եմ ես այսպէս, որ ինձ յաջողւում էր, թէ նրահամար էր ինձ յաջողւում, որ ես այսպէս եմ:

## ՏԵՍԻԼ 2

Նոյնք, ՄԱՐԻԱ ԱԼԷՔՍԷԵԻՆԱ և ՊՕՄԵՐՍԷՆՍԿԻ

ՄԱՐ. ԱԼ.— Կարելի է: (Դռնորդի մէջ):

ԼՕԺ.— Աւելի քան կարելի է: (Մտնում են Մարիա Ալեքսէնիս և Պօմերանսկի):

ՄԱՐ. ԱԼ.— Դու լսել ես, հայրիկը պատրաստում է ուրբաթ օրը գնալու:

ԼՕԺ.— Ռուսաստանում ամեն մի կարգին քաղաքացի շաբաթւայ մէջ մի քանի ուրբաթ ունի, այդ պատճառով էլ յոյս ունիմ... (Մըտնում է Կատեսն):

## ՏԵՍԻԼ 3

Նոյնք և ԿԱՏԵՍ

ԿԱՏԵՍ.— (Այգետոմս տալով Լօժքինուլին) Քնդրում են շտապ գործի համար ընդունել:

ԼՕԺ.— Հրաւիրեցէք միւս ընդունարանը: (Կատեսն գնում է) Բարի եղէք, Գէորգիյ Սերգէևիչ, ընդունեցէք նրան և եթէ կարելի է, առանց ինձ վերջացրէք:

ԿՕԲ.— Այցետոմսը սև շրջանակ ունի, երևի էլի որևէ ողբերգական գործ է:

ԼՕԺ.— Նա ձեզ ողբերգութիւն, իսկ դուք նրան «մենք բոլորս կը գնանք, կը գնանք» երգեցէք: (Կօրինակինը գնում է):

ՄԱՐ. ԱԼ.—(հորը) Ի՞նչ պէտք է շինէք տանը:

ՊՕՄ.—Ո՛չ, աւելի լու է դու ինձ ասա, ի՞նչ պիտի շինեմ այստեղ: Ես կեսարի նման— եկայ, տեսայ և... գնացի: Զը սիրեցի ես ձեր Պետերբուրգը:

ԼՕԺ.—Այդ նրանից է, որ դուք դեռ համը չէք տեսել: Սպասեցէք, մի երկու-երեք օրից մի մեծ գործ ունեմ, կը վերջացնեմ և միասին երիտասարդութիւններս կը յիշենք:

ՊՕՄ.—Առանց գործի շատ ախուր է:

ԼՕԺ.—Դուք էլ մի որևէ գործով գրադեցէք, մի որևէ լուրջ գործով, որ յարմար է ձեր աստիճանին, տարիքին և զիրքին:

ՊՕՄ.—Օրինակ:

ԼՕԺ.—Օրինակ Ֆլիրտով:

ՊՕՄ.—Ո՛ւմ հետ կը հրամայէք:

ԼՕԺ.—Այդ ապրանքից շատ կայ:

ՄԱՐ. ԱԼ.—Նախ և առաջ նրա յաճախորդ տիկիներին հետ:

ԼՕԺ.—Զէ, հոգեակս, նրանք ուրիշ պտուղներ են:

ՊՕՄ.—Երևի առաւելութիւն են տալիս շիկահերներին:

ԼՕԺ.—Որպէսզի հաստատեմ իմ հիւրասիրութեան ամբողջ լայնութիւնը, գնանք իսկոյն մի մասնագէտի մօտ և թող նա օրուրլիով ձեզ դարձնի իսկական շիկահեր:

ՊՕՄ.—Ո՛չ, եղբայր, այդ չի անցնի: Ես մի ծանօթ ունիմ, որ նոյնպէս ցանկութիւն ունեցաւ շիկահեր դառնալու և դրա փոխարէն...

ԼՕԺ.—Աչքը՞ կուրացաւ:

ՊՕՄ.—Աւելի վատ. շարժական ջերմաչափ դարձաւ:

ՄԱՐ. ԱԼ.—Այդ ի՞նչպէս:

ՊՕՄ.—Այնպէս, որ փոխանակ շիկահերի, նրան մոխրագոյն դարձրին: Մի շաբաթ նա մոխրագոյն էր, իսկ յետոյ եղանակին նայելով սկսեց գոյնը փոփոխել. հէնց որ անձրև էր գալիս, նրա միրուքը կապտագոյն էր դառնում, չոր եղանակին վարդագոյն, իսկ կայծակի ժամանակ՝ կարմրագոյն: (հեռախօսի զանգակ):

ՄԱՐ. ԱԼ.—(Մօտենալով հեռախօսին) Այո, Լօժբինովի բնակարանն է, ի՞նչ, երկու հազար, կարելի՞ է ուղարկել, բայց նա դիտէ, ի՞նչ... (Ամուսնուն) Մօտեցիր ինքդ, ես բան չեմ հասկանում:

ԼՕԺ.—(հեռախօսին մօտենալով): Լսում եմ: Այո, ի հարկէ, թող մնայ ձեզ մօտ, իսկ երկու հազարը ուղարկեցէք, միայն շուտ, մի բանի հատ է մնացել: (Կնոջը) Այդ գործարանիցն են հարցնում ծխախոտի մասին:

ՄԱՐ. ԱԼ.—Դարձե՞ալ 2000. 6000 էլ պահեստում... Լսիր, Արսենիյ, ես ցանկանում եմ քեզ հետ լուրջ խօսել:

ՀՕԺ.—Արդէն գիտեմ ինչի մասին:

ՄԱՐ. ԱԼ.—Առաջ դու ծխում էիր ամիսը 1000 հատ, այժմ 2000: Այդպիսով սուր կը հասնի: Ամբողջ բնակարանում մի առարկայ չը կայ, որից ծխախոտի հոտ չը գայ, ամեն մի աթոռ...

ՀՕԺ.—Իսկ դու աթոռներից հոտ մի քաշիր, նրանք դրա համար չեն շինւած:

ՄԱՐ. ԱԼ.—Դու ինքդ էլ ծխուել ես:

ՊՕՄ.—Ինչ որ ճիշտ է, ճիշտ է:

ՀՕԺ.—Դուք ինքներդ չէք ծխում, ինչ է:

ՊՕՄ.—է՛հ, ես ինչ եմ ծխում, որ... ես այնպէս, կատակ եմ անում:

ՀՕԺ.—Ես էլ նոյնպէս կատակի համար:

ՊՕՄ.—Դու չէս ընդունում, որ այդ վաստակար է:

ՀՕԺ.—Իսկ դո՞ւք:

ՄԱՐ. ԱԼ.—Չէ՛ որ նիկոտինը թոյն է:

ՀՕԺ.—Իսկ այն ամենը, ինչ որ մենք ուտում-խմում ենք... թոյն չէ: Իսկ օդը— թոյն չէ:

ՊՕՄ.—Առանց դրանց ապրել չի կարելի, իսկ ծխախոտը— աւելորդաբանութիւն է, իսկ ամեն մի քաղաքակրթւած մարդ աւելորդաբանութիւններից ոչ թէ կարող է, այլ և պարտաւոր է ձեռք քաշել: Սպասիր, լուցկին մի հանգցնիր: (ծխախոտ է վառում):

ՄԱՐ. ԱԼ.—Հայրիկ, գիտե՞ս ինչ եմ մտածում, արի դո՛ւ էլ թող ծխելը: Յոյց ա՞նը նրան,

և հաստատիր, թէ որքան այդ հեշտ է:

ՀՕԺ.—Դէ, ցոյց տւէք:

ՊՕՄ.—Ուրախութեամբ, թէպէտեւ քեզ համոզելը շատ դժւար է: Իմ ծխատուփում ընդամենը 10 ծխախոտ կայ, բայց...

ՀՕԺ.—Եւ նրանցից էլ չէք կարող ի հարկէ հրաժարւել:

ՊՕՄ.—Ի՞նչպէս թէ չեմ կարող, եթէ ցանկանամ...

ՄԱՐ. ԱԼ.—Դէ, հայրիկ ջան, ցանկացիր...

ՊՕՄ.—Ես մինչև անգամ հաւատացած եմ, որ իմ ախորժակն էլ կը բացւի...

ՀՕԺ.—Եւ հետքդ էլ կը թեթևանայ. այո՛, Ալէքսէյ Պետրովիչ, դուք անպատճառ պիտի թողնէք ծխելը:

ՊՕՄ.—Եւ կը թողնեմ, այ, կը գնամ գիւղ և իսկոյն կը թողնեմ:

ՄԱՐ. ԱԼ.—Իսկ չի՞ կարելի, հայրիկ, թողնել այստեղ և ոչ գիւղում:

ՀՕԺ.—Այո՛, այդ աւելի համոզեցուցիչ կը լինէր:

ՊՕՄ.—Այդ ի՞նչ է, ինձ չէս հաւատում: Ես, եղբայր, երկու անգամ ազնւականների ներկայացուցչութիւնից հրաժարւել եմ, իսկ ծխախոտից հրաժարւելը դժւար բան չէ:

ՀՕԺ.—Դժւար է թէ հեշտ, յամենայն դէ-

պրս, դուք չէք թողնի:

ՊՕՄ.—Ձեմ թողնի, չեմ թողնի՞, ասում ես: Դէ ստացիր, ահա, տես... (հանում է արծաթէ ծխատուփը, միջից հանում ծխախոտները եւ ճրմլում, գետին թափում), Տեսա՞ր...

ՄԱՐ. ԱԼ.—Կեցցեա, հայրիկ: (Ամուսնուն) Տեսա՞ր: Իսկ դու թոյլ բնաւորութեան տէր, կամակոր մարդ ես: Եթէ ես իմանայի, որ դու այդ պիտին ես, ես չէի...

ԼՕԺ.—Ձէիր ամուսնանայ, հմ... Դէ, դրա ուղղելը հեշտ է, արի՛ բաժանւենք:

ՄԱՐ. ԱԼ.—Ձը համարձակեա ինձ բարկացնել, ապա թէ ոչ, ես...

ԼՕԺ.—Օհօ, մինչև անգամ սպառնալիք: Շատ հետաքրքիր է թէ այդ սպառնալիքը ինչպէս կը գործադրէիր:

ՄԱՐ. ԱԼ.—Հետաքրքիր է: Շատ հետաքրքիր է... Դէ լաւ, ես, ես... Տուր ինձ ծխատուփը, տուր լուցկին, ահա... (ծխախոտ է վառում) ես էլ կը ծխեմ: (հազում է)

ԼՕԺ.—Դէ դէն ձգիր, Մարուսեա, յիմարութիւն մի անիլ: (Ուզում է խել ծխախոտը):

ՄԱՐ. ԱԼ.—Ձը համարձակեա, չեմ տայ: Դու ծխում ես 2000 հատ, ես էլ կը ծխեմ 5000, 10,000 հատ: Ես թոքախտ կստանամ և կը մեռնեմ: Դու այդ էիր ուզում, շատ չես սպասիլ, ես արդէն զգում եմ... (լալիս է եւ գնալով, տա-

նում է իւր հետ ամուսնու ծխատուփը):

ԼՕԺ.—Ինչ ցանցառութիւն է: Երբէք նա այդպիսի բան չէ արել, ես նրա լացը չեմ տեսել, իսկ այժմ ահա, մի քանի օր է, որ ամեն մի ցանցառ բանի համար լալիս է:

ՊՕՄ.—Իսկ եթէ ցանցառութիւն է, դու էլ յարգիր նրա խնդիրը. տեսա՞ր, ես համաձայնւեցի:

ԼՕԺ.—Թողէք գոնէ մտածեմ, կարելի է ես էլ... Անպատճառ իսկոյն և եթ խօ չենք կոտորտելու բոլոր ծխախոտները: Ո՞ւր տարաւ նա ծխատուփը:

ՊՕՄ.—Կարծեմ նա իւր հետ տարաւ: (հանում է զրպանից կաշուէ ծխատուփը եւ նրան ծխախոտ առաջարկում) Ահա, վերցրու նոյն տեսակի ծխախոտներից է: (Երկուսն էլ ծխում են)

ԼՕԺ.—Թոյլ տւէք հարցնել, սրտեղից են այդ ծխախոտները, չէ՞ որ դուք կոտորտեցիք և դէն ածեցիք:

ՊՕՄ.—Այն արծաթէ տուփիցն էր, իսկ սա կաշուէ տուփ է, պահեստի համար: Բայց սա ինձ համար աւելի թանկագին է, քան արծաթինը, որովհետև մի մեռած ընկերոջս ընծան է:

ԼՕԺ.—Այո, այդպիսի յիշատակը լաւ պէտք է պահել, տւէք: (Փակելով սեղանի արկղում) Այստեղ աւելի ապահով կը մնայ:

ՊՕՄ.—Այդ ի՞նչ էք անում:

ԼՕԺ.—Իմ կողմից տգեղ կը լինէր այն ժամանակ այդ վարմունքը, եթէ դուք իմ ներկայութեամբ հանդիսաւոր երգում չը լինէիք տըւած ձեր աղջկան:

ՊՕՄ.—Ես չը երդեցի, այլ ասացի, եթէ ցանկանամ թողնել՝ կը թողնեմ: Եւ այդ ճիշտ է: Եւ չեմ անում միմիայն քո պատճառով:

ԼՕԺ.—Շատ շնորհակալ եմ:

ՊՕՄ.—Այո, որովհետեւ այդ խայտառակութիւն է, որ քեզ, ինչպէս մի փոքրիկ երեխայի, պիտի ասել. «Վանիչկա, սրբիչով քիթդ մի սըրբիլ, որովհետեւ Պէտինկան էլ չի սրբում»:

ԼՕԺ.—Այդ դուք ասացէք Վանիչկային և Պէտինկային, իսկ ծխատուփը յամենայն դէպս, ես ձեզ չեմ տայ:

#### ՏԵՍԻԼ 4

Նրանք և ՕԼԳԱ ՎԱՍԻԼԵՒՆԱ

ՕԼ. Վ.—(մտնելով) Մարիա Ալեքսէևնան ծխախոտ է խնդրում:

ԼՕԺ.—Ի՞նչ ծխախոտ, ի՞նչու համար:

ՕԼ. Վ.—Ձեր տուփի մէջ եղածները նա արդէն ծխել վերջացրել է, մէկը միւսի յետեւից... Տիրուհին դեռ երկու անգամ վատ էլ ըզգաց իրան:

ՊՕՄ.—Տեսնում ես, թէ ուր հասցրիր կընող:

ԼՕԺ.—Ասացէք Մարիա Ալեքսէևնային, որ ինքներս էլ ծխախոտ չունինք:

ՊՕՄ.—Այն տուփի մէջ 4 հատ կայ դեռ:

ԼՕԺ. Այն տուփի գոյութեան մասին դուք մոռացէք:

ՕԼ. Վ.—Ես ուզում էի իմ ծխախոտներից առաջարկել, բայց թամբաքուն շատ վատ տեսակիցն է և այն էլ 2 հատ է մնացել միայն:

ՊՕՄ.—Իսկ դուք ո՞ր տեսակիցն էք ծխում:

ՕԼ. Վ.—Միջակ տեսակի, մի ըուբլի 30 կուպէկանոց:

ՊՕՄ.—Երևակայում եմ: Երբէք կեանքիս մէջ չեմ ծխել այդ տեսակի: Տւէք, փորձեմ: (Նա եւ ԼՕԺինովը վերցնում են մի մի հատ եւ ծխում)

ԼՕԺ.—Այո... իսկապէս որ «թամբաքուն»

ՊՕՄ.—Գերմանացիները դրան «երեք տղամարդու ծխախոտ» են ասում:

ԼՕԺ.—Ի՞նչու երեք տղամարդու:

ՊՕՄ.—Որովհետեւնա միաժամանակ երեք հոգու վրայ է ազդում. մինչև մէկը ծխում է, միւս երկուսի սիրտն է խառնում:

ՕԼ. Վ.—Ամենեին էլ չէ, ընդհակառակը, բժիշկները ասում են, որ էժանանոց թամբաքուն աւելի քիչ է վնասում: Իհարկէ, ամեն

մէկը ինքը պէտք է զգայ, որքան ծխելը վընաս է: Այ, օրինակի համար, ես. առաջ անկողնումս էլ էի ծխում, բայց երբ իմացայ, որ դա շատ վնաս է, թողի:

ԼՕԺ.— Ի՞նչից հասկացաք:

ՕԼ. Վ.— Ծխախոտը ձեռքիս քունս տարաւ և ես քնեցի, իսկ վերմակս կրակ էր ընկել և քիչ մնաց հրդեհ պատահէր: (Լօժքինովը եւ Պօմերանսկին ծիծաղում են) Այ, ծխելու ժամանակ ծիծաղելն էլ վնաս է:

ՊՕՄ.— Իբր թէ:

ՕԼ. Վ.— Մի գնդապետի մօտ էի ծառայում, նա սիգար էր ծխում և շատ էլ ազահ մարդ էր, երբէք դէն չէր ձգում սիգարը, մինչև որ շրթունքները չէր այրում: Մի անգամ ծիծաղից այնպէս եղաւ, որ քիչ մնաց մեռնի:

ԼՕԺ.— Այդ. ինչպէս:

ՕԼ. Վ.— Սիգարը կոկորդն ընկաւ. Աստուած վըկայ... նրա ազգականները, որ նրա ժառանգներն էին, ուզում էին իսկոյն իմաց տալ ոստիկանութեան, բայց պատահեց այդ բոլորին մի պարոն, որ նրա վզակովին բռունցքով այնքան խփեց, որ սիգարի կտորը յետ եկաւ: Իսկ նա ինչ արաւ, ինչ էք կարծում. կարծում էք, դէն ձգեց այդ կրտորը, — ոչ, սրբեց թեքով, դրեց նորից բերանը և ծխեց: Ահա թէ ինչպիսի ազահ մարդ էր:

## ՏԵՍԻԼ 5

Նրանք և ՄԱՐԻԱ ԱԼԷԿՍԷԿԻՆԱ

ՄԱՐ. ԱԼ.— Այդ սուր կորաք, Օլգա Վասիլենա:

ՕԼ. Վ.— Ներեցէք, խօսքի բռնեցի այստեղ: Մրանք էլ ծխախոտ չունին:

ԼՕԺ.— Դու օպերետի տոմսակ վերցրել ես արդէն: Ուղիւմ ես, իսկոյն գնամ-վերցնեմ: Իսկ աւելի լաւ է, միասին գնանք և գնենք: Դէ թող յիմարու թիւններդ, ինչ ես քիթդ կախել:

ՄԱՐ. ԱԼ.— Թող ես յիմար լինեմ, թող վերցրու ուրիշին, մի խելօքին:

ԼՕԺ.— Մի մտածիր, թէ ինչ ես խօսում, Մարուսեա:

ՄԱՐ. ԱԼ.— Կարգադրեցէք, Օլգա Վասիլենա, որ պարոնի անկողինը այստեղ բերեն երեկոյեան, կամ միւս ընդունարանը, կամ թէ ուր ինքը ցանկանայ, միայն ոչ իմ ննջարանում:

ԼՕԺ.— Հա, հա, հա... մինչև անգամ անա թէ ինչ, իսկ եթէ...

ՄԱՐ. ԱԼ.— Մի մօտենաք, ես ատում եմ ձեզ, ես ատում եմ ամեն ինչ, բոլորը, ինչ որ ձեզ շրջապատում է, բոլոր աշխարհը, և այս սենեակը, և ձեր յիմար թղթերը, բոլորը, բոլորը... (սեղանի վրայից դէն է ձգում քուրը):

ԼՕԺ. — Մարուսեա, խելքի եկ, յիմարութիւնս արիր, է բաւական է:

ՊՕՄ. — Այո, բաւական է: Այդ ասում եմ ես. ես հայր եմ և թոյլ չեմ տալ ձեզ տանջել իմ աղջկան: Բաւական է: (Բռունցքով խփում է սեղանին, ոտերը գետնին զարկում),

ՕԼ. Վ. — (Մարիա Ալէքսէեւնայի մօտ է) — Եւ ձջմարիտ, պարոն, ինչո՞ւ էք դուք նրան տանջում: (Հայիս է),

ԼՕԺ. — Ե՞ս եմ տանջում, Ե՞ս եմ չարչարում: (Կնոջը) Դէ հանգստացիր գոնէ մի րոպէ: Կարճ և պարզ բացատրիր թէ ինչ ես դու ցանկանում:

ՄԱՐ. ԱԼ. — Թո՛ղ ծխելը:

ԼՕԺ. — (Պօլերանսկուն) Իսկ դո՞ւք:

ՊՕՄ. — Թո՛ղ ծխելը:

ԼՕԺ. — (Օլգա Վասիլեւնային) Իսկ դո՞ւք:

ՕԼ. Վ. — Երբ խնդրում են, թողէք էլի:

ԼՕԺ. — Ուրեմն միաձայն: Իսկ դուք ինքնեք չէք ծխելու:

ՊՕՄ. — Իմ խօսքը — խօսք է:

ԼՕԺ. — (Օլգա Վասիլեւնային) Հապա դո՞ւք:

ՄԱՐ. ԱԼ. — Նա ինձ սիրում է, իմ սիրոյ համար նա կը թողնի: Օլգա Վասիլեւնա, ես ձեզ խնդրում եմ:

ՕԼ. Վ. — Ձեր սիրոյ համար — համեցէք, օրը հինգ ծխախոտից աւել չեմ ծխիլ:

ՄԱՐ. — ԱԼ. — Ո՛չ, ո՛չ, բոլորովին թողէք:

ՕԼ. Վ. — Բոլորովին կը թողնեմ:

ԼՕԺ. — Եւ խօսք էք տալիս:

ՊՕՄ. } Տալիս ենք:

ՕԼ. Վ. }

ԼՕԺ. — Գեղեցիկ. (հանում է սեղանից կաշւէ տուփը) ես էլ ազնիւ խօսք եմ տալիս, որ եթէ մի ամբողջ շաբաթ չը ծխէք, բոլորովին կը թողնեմ, իսկ առայժմ... (հանում է մի ծխախոտ եւ սկսում է ծխել: Աղմուկը սկսում է, մտնում է Կօրինկինը):

### ՏԵՍԻԼ 9

Նրանք և ԿՕՐԻՆԿԻՆ

ԿՕՐ. — Ի՞նչ է պատահել:

ԼՕԺ. — (նրան ցած) Ուշադրութիւն մի դարձնէք, — աւելի շուտ կը հանգստանան: (ըարձր) Ո՞վ էր այն տիկինը և ի՞նչ էր ուզում:

ԿՕՐ. — Մի ինչ որ պարոնի այրի, որ կարծեմ շատ էլ խելօքներից չէ. նա երեւի սպիրիտիզմով է պարապում և մօրֆի գործածում:

ԼՕԺ. — Բանն ի՞նչու՞ն է:

ԿՕՐ. — Նրա ամուսինը իւր կեանքը ապահովագրել է և մեռել է լեզւի վրայի բակից, իսկ ապահովագրական ընկերութիւնը չի վճարում նրան փողը, գտնելով որ ինքնասպանութիւն է եղել և ոչ բնական մահ:

մէկը ինքը պէտք է զգայ, որքան ծխելը վրնաս է: Այ, օրինակի համար, ես. առաջ անկողնուս էլ էի ծխում, բայց երբ իմացայ, որ դա շատ վնաս է, թողի:

ԼՕԺ.—Ի՞նչից հասկացաք:

ՕԼ. Վ.—Ծխախոտը ձեռքիս քունս տարաւ և ես քնեցի, իսկ վերմակս կրակ էր ընկել և քիչ մնաց հրդեհ պատահէր: (Լօժրինովը եւ Պօմերանսկին ծիծաղում են) Այ, ծխելու ժամանակ ծիծաղելն էլ վնաս է:

ՊՕՄ.—Իբր թէ:

ՕԼ. Վ.—Մի գնդապետի մօտ էի ծառայում, նա սիգար էր ծխում և շատ էլ ազան մարդ էր, երբէք դէն չէր ձգում սիգարը, մինչև որ շրթունքները չէր այրում: Մի անգամ ծիծաղից այնպէս եղաւ, որ քիչ մնաց մեռնի:

ԼՕԺ.—Այդ. ի՞նչպէս:

ՕԼ. Վ.—Միգարը կոկորդն ընկաւ. Աստուած վրկայ... նրա ազգականները, որ նրա ժառանգներն էին, ուզում էին իսկոյն իմաց տալ ոստիկանութեան, բայց պատահեց այդ րոպէին մի պարոն, որ նրա վզակով թին բռունցքով այնքան խփեց, որ սիգարի կտորը յետ եկաւ: Իսկ նա ի՞նչ արաւ, ի՞նչ էք կարծում. կարծում էք, դէն ձգեց այդ կրտորը, — ո՛չ, սրբեց թևքով, դրեց նորից բերանը և ծխեց: Ահա թէ ինչպիսի ազան մարդ էր:

## ՏԵՍԻԼ 5

Նրանք և ՄԱՐԻԱ ԱԼԷՔՍԷԵՆԱ

ՄԱՐ. ԱԼ.—Այդ սուր կորաք, Օլգա Վասիլենա:

ՕԼ. Վ.—Ներեցէք, խօսքի բռնեցի այստեղ: Սրանք էլ ծխախոտ չունին:

ԼՕԺ.—Դու օպերետի տոմսակ վերցրել ես արդէն: Ուզում ես, իսկոյն գնամ-վերցնեմ: Իսկ աւելի լաւ է, միասին գնանք և գնենք: Իէ թող յիմարու թիւններդ, ի՞նչ ես քիթդ կախել:

ՄԱՐ. ԱԼ.—Թող ես յիմար լինեմ, թող վերցրու ուրիշին, մի խելօքին:

ԼՕԺ.—Մի մտածիր, թէ ի՞նչ ես խօսում, Մարուսեա:

ՄԱՐ. ԱԼ.—Կարգադրեցէք, Օլգա Վասիլենա, որ պարոնի անկողինը այստեղ բերեն երեկոյեան, կամ միւս ընդունարանը, կամ թէ ուր ինքը ցանկանայ, միայն ոչ իմ ննջարանում:

ԼՕԺ.—Հա՛, հա՛, հա՛... մինչև անգամ ահա թէ ինչ, իսկ եթէ...

ՄԱՐ. ԱԼ.—Մի մտենաք, ես ատում եմ ձեզ, ես ատում եմ ամեն ինչ, բոլորը, ինչ որ ձեզ շրջապատում է, բոլոր աշխարհը, և այս սենեակը, և ձեր յիմար թղթերը, բոլորը, բոլորը... (սեղանի վրայից դէն է ձգում շոյորը):

ԼՕԺ.—Մարուսեա, խելքի եկ, յիմարութիւն արիւր, է բաւական է:

ՊՕՄ.—Այո, բաւական է: Այդ ասում եմ ես. ես հայր եմ և թոյլ չեմ տալ ձեզ տանջել իմ աղջկան: Բաւական է: (Քոռննցքով խփում է սեղանին, ոտերը գետնին զարկում),

ՕԼ. Վ.—(Մարիա Ալէքսէնայի մօտ է)—Եւ ճշմարիտ, պարոն, ինչո՞ւ էք դուք նրան տանջում: (Հայիս է),

ԼՕԺ.—Ե՞ս եմ տանջում, ես եմ չարչարում: (Կնոջը) Իէ հանգստացիր գոնէ մի րոպէ: Կարճ և պարզ բացատրիր թէ ինչ ես դու ցանկանում:

ՄԱՐ. ԱԼ.—Թո՞ղ ծխելը:

ԼՕԺ.—(Պօլերանսկունն) Իսկ դո՞ւք:

ՊՕՄ.—Թո՞ղ ծխելը:

ԼՕԺ.—(Օլգա Վասիլենային) Իսկ դո՞ւք:

ՕԼ. Վ.—Երբ խնդրում են, թողէք էլի:

ԼՕԺ.—Ուրեմն միաձայն: Իսկ դուք ինքնեք չէք ծխելու:

ՊՕՄ.—Իմ խօսքը—խօսք է:

ԼՕԺ.—(Օլգա Վասիլենային) Հապա դո՞ւք:

ՄԱՐ. ԱԼ.—Նա ինձ սիրում է, իմ սիրոյ համար նա կը թողնի: Օլգա Վասիլենա, ես ձեզ խնդրում եմ:

ՕԼ. Վ.—Ձեր սիրոյ համար—համեցէք, օրը հինգ ծխախոտից աւել չեմ ծխիլ:

ՄԱՐ.—ԱԼ.—Ո՛չ, ո՛չ, բոլորովին թողէք:

ՕԼ. Վ.—Բոլորովին կը թողնեմ:

ԼՕԺ.—Եւ խօսք էք տալիս:

ՊՕՄ. } Տալիս ենք:  
ՕԼ. Վ. }

ԼՕԺ.—Գեղեցիկ. (հանում է սեղանից կաշւէ տուփը) ես էլ ազնիւ խօսք եմ տալիս, որ եթէ մի ամբողջ շաբաթ չը ծխէք, բոլորովին կը թողնեմ, իսկ առայժմ... (հանում է մի ծխախոտ եւ սկսում է ծխել: Աղմուկը սկսում է, մտնում է Կօրինկինը):

### ՏԵՍԻԼ 9

Նրանք և ԿՕՐԻՆԿԻՆ

ԿՕՐ.—Ի՞նչ է պատահել:

ԼՕԺ.—(նրան ցած) Ուշադրութիւն մի դարձնէք,—աւելի շուտ կը հանգստանան: (ըարձր) Ո՞վ էր այն տիկինը և ի՞նչ էր ուզում:

ԿՕՐ.—Մի ինչ որ պարօնի այրի, որ կարծեմ շատ էլ խելօքներից չէ. նա երևի սպիրիտիզմով է պարապում և մօրֆի գործածում:

ԼՕԺ.—Բանն ի՞նչու՞ն է:

ԿՕՐ.—Նրա ամուսինը իւր կեանքը ապահովագրել է և մեռել է լեզուի վրայի բակից, իսկ ապահովագրական ընկերութիւնը չի վճարում նրան փողը, գտնելով որ ինքնասպանութիւն է եղել և ոչ բնական մահ:

10Ժ.— Բայց չէ՞ որ դուք ասում էք, որ բա-  
կից է մեռել:

ԿՕՐ.— Այո, բայց բժշկի ասելով բակը գո-  
յացել է չափազանց շատ ծխելուց: (Բոլորն էլ  
միանգամից լուռ են):

10Ժ.— Միթէ՞ ծխելուց: Բակ լեզուի վրայ:

ԿՕՐ.— Ամբողջ մի տարի չարչարւել է և  
մեռել է քաղցից:

10Ժ.— Քաղցից:

ՄՍՐ. ԱԼ.— Արսենիյ, միթէ այդ նախա-  
խնամութեան նախազգուշացումն չէ, նախախնա-  
մութեան...

10Ժ.— Քաղցից... Բռռ... Բայց այնուամե-  
նայնիւ սրտեղ է այստեղ ինքնասպանութիւնը:

ԿՕՐ.— Տիկնոջը դժւար է հասկանալ, բայց  
որքան ես կարողացայ գուշակել նրա խօսքերից,  
ընկերութիւնը այն է ասում, թէ մի մարդ, որ  
գլխէր թէ շատ ծխելուց բակ պէտք է գոյանայ  
լեզուի վրայ և այնուամենայնիւ շարունակում  
էր ծխել...

ՊՕՄ.— Ի՞նչ տեսակի ծխախոտ էր նա գործ  
ածում:

ԿՕՐ.— Կինը ասում էր, ինչ որ 8 ընկալիա-  
նոց:

ՊՕՄ. }  
10Ժ. } Նոյն գնանոցից:

ԿՕՐ.— Երկու անգամ անդամահատել են նը-

բա լեզուն, փորձել են կտրել վէրքը, այնպէս  
որ խեղճը մեռել է համարեա թէ առանց լեզուի:  
ՄՍՐ. ԱԼ.— Արսենիյ, Արսենիյ...

(Պատուա)

10Ժ.— Ահա ինչ, պարոնայք, այս ծխատու-  
փում կայ դեռ էլի 3 ծխախոտ. բացի դրանից ամ-  
բողջ բնակարանում ոչ մի հատ չը կայ, եթէ ի  
հարկէ... (Պոմերանս(ուն) դուք մի 20 մեռած  
ընկերներ էլ չունիք... Մէկ ծխախոտը ձեզ, միւ-  
սը (Օլգա Վասիլենային) ձեզ և երրորդը ինձ:  
Ծխենք նրանց և թող այդ վերջինը լինի: (Բո-  
լորն էլ ծխում են):

ՄՍՐ. ԱԼ.— Դու ինձ վրայ մի բարկանալ,  
ես քո մասին եմ հոգ տանում: Եւ ջղերս էլ ինչ  
որ լարած են: Դեռ երկուշաբթի օրւանից է,  
ինչ որ ինձ լաւ չեմ զգում: Ես չէի ուզում քեզ  
ասել, շատ անյարմար էի զգում:

10Ժ.— Ի՞նչու անյարմար:

ՄՍՐ. ԱԼ.— Ես կարծում էի, թէ կարելի  
է այդ հէնց այնպէս... ինձ թւում է միայն...  
բայց բժիշկը այսօր ասաց որ... (փսփսում է ա-  
մուսնու սկանջին):

10Ժ.— «Մենք ամենքս կգնանք, կգնանք»...  
Կեցցես... թանկագինս, հա՛, հա՛, հա՛... (Նը-  
րան գրկում է) Ալէքսէյ Պետրովիչ, եկէք գիր-  
կըս, զգում էք, զգում էք հա՛... պապիկ, պա-  
պիկ...

ՊՕՄ.—(զրկելով փեսային)—Ահա տեսար, եղբայր, որքան դու անշնորհակալ կենդանի ես։ նա քո սիրոյ համար ամեն բան անում է, իսկ դու չես կարողանում...

ԼՕԺ.—Ի՞նչպէս թէ չեմ կարողանում, այժմ ամեն ինչ կարող եմ։ Վերջ, հանգցրի և թողի ծխելը։ Ձգեցէք և դուք։

ՊՕՄ.—Այս ըոպէիս։ Միայն թող մի անգամ էլ ծխեմ։

ԼՕԺ.—Օլգա Վասիլենա, այդ ի՞նչ էք թագ-ցնում ձեր գրպանում։

ՕԼ. Վ.—Ձը կարողացայ վերջացնել, մնացորդն է, յետոյ կը ծխեմ։

ԼՕԺ.—Ո՛չ, ո՛չ, դէն ձգեցէք։ Այս տանը ծը-խախտաներին վերջ է դրւած։

### ՏԵՍԻԼ 7

Նրանք և ԿԱՏԵԱ

ԿԱՏ.—(մտնելով)—Գործարանից գործակա-տարը 2000 հատ ծխախոտ է բերել։

ՄԱՐ. ԱԼ.—Հարկաւոր չէ, հարկաւոր չէ։ Թող յետ տանի։

ՊՕՄ.—Անյարմար է այդպիսի վարմունքը, ծխախոտները նախ առանձին պատւէրով են շի-նւած և թանկագիններին են։ Ես կը վճարեմ

փողը և յետս կը տանեմ գիւղը ընծայ։ Կը տա-նէք նրանց, Կատեա, իմ սենեակը։

ԼՕԺ.—Սպասեցէք, գիւղ գնալիս դուք կա-րող էք վերցնել մնացած 6000 հատը, իսկ դը-րանք թող մնան այստեղ, հիւրերի և յաճախորդ-ների համար։ Այդ մինչև անգամ անհրաժեշտ է։

ՕԼ. Վ.—Այստեղ շատ չոր է, թամբաքուն կը չորանայ և կը փշրւի, աւելի լաւ է, թոյլ տւէք ես տանեմ իմ սենեակը։

ՄԱՐ. ԱԼ.—Ո՛չ, ո՛չ, աւելի լաւ է, Կատեա, դուք նրանց թագցրէք ձեր սենեակում և ոչ ո-քի չը տաք առանց իմ հրամանի։ Ձէ՞ որ դուք ինքներդ չէք ծխում։

ԿԱՏ.—Ի՞նչ էք ասում, տիրուհի։

ՄԱՐ. ԱԼ.—Այդպէս աւելի ապահով է։ Դէ այժմ փառք Աստծոյ, ես այնպէս ուրախ եմ, այնպէս ուրախ։ Իսկ դուք ուրախ չէք, հն՛, ու-րախ չէք։

ՕԼ. Վ. }  
ՊՕՄ. } Ուրախ ենք, շատ ուրախ։  
ԼՕԺ. }

## Բ. Ա. Ր. Ա. Ր. Ի. Ա. Ծ.

Նոյն սենեակը: Ճաշից յետոյ

## ՏԵՍԻԼ 1

ՄԱՐԻԱ ԱԼԷՔՍԷԵԻՆԱ և ԿՕՐԻՆԿԻՆ

ՄԱՐ. ԱԼ.—Նրա վրայ այդ շատ վատ կազդէր. ահա չորս տարի է, մենք ամուսնացած ենք և նա դրանով երկրորդ գործն է, որ տանուլ է տալիս:

ԿՕՐ.—Բայց և պաշտպանելու գործն էլ չընչին բան էր. այդպիսի գործեր է նա պաշտպանել:

ՄԱՐ. ԱԼ.—Զարմանալի է, նա շատ է փոխւել այս քանի օրը և այդ բանը ինձ շատ է մրտածելու առիթ տալիս, նամանաւանդ որ ես չը գիտեմ պատճառը, կարծես նրա սրտի վրայ մի բան է ծանրացած և նա կուոււմ է ինքն իրա հետ:

ԿՕՐ.—Բաւական է, Մարիա Ալէքսէեւնա, այդ արդէն, թոյլ տէք, ձեր ֆանտազիան է:

ՄԱՐ. ԱԼ. Այն յաջողութիւնը, որ նա ունի կանանց մօտ... Մինչև այժմ մի այդպիսի բան դեռ չեմ նկատել, բայց չէ՞ որ...

ԿՕՐ.—Արսենիյ վիկտօրովիչը այնպիսի մի օրինակելի ամուսին է և այնպէս լուրջ է նա-յոււմ այդպիսի բաներին, որ հազիւ թէ...

ՄԱՐ. ԱԼ.—Է՛հ, քիչ բան է պատահում աշխարհում:

ԿՕՐ.—Միայն ոչ նրա հետ և ոչ էլ այդ: (Մարիա Ալէքսէեւնան մտածմունքի մէջ է ընկնում եւ հանելուկ զրպանից մի ծխախոտ, սկսում է ծխել) Այդ ի՞նչ է, դուք ծխում էք:

ՄԱՐ. ԱԼ.—Ա՛խ, ես բոլորովին մոռացայ, որ միայնակ չեմ: Ես այնպէս յուզւած եմ: Միայն դուք ոչ ոքի չասէք: Չէ՞ք ասիլ: Ես ահա հինգ օր է, ինչ ծխում եմ, այն օրից, երբ նրա ջգրու սկսեցի ծխել: Չը գիտեմ ինչու, բայց ծխախոտ ծխելով, ես ինձ զգում եմ մի տեսակ առոյգ և ոչ այնպէս միայնակ: Ես օրական միայն 3—4 հատ եմ ծխում:

ԿՕՐ.—Եթէ յանկարծ սովորէք, յետոյ...

ՄԱՐ. ԱԼ.—Օ՛, ո՛չ, ես չէ՞ որ այդ միայն այժմ, քանի... այսպէս ջղերս քայքայւած են. յետոյ կը թողնեմ: Արսենին ոչինչ չի իմանայ: Միայն թէ դուք ինձ չը մատնէք, ապա թէ ոչ նրանք կը սկսեն ծիծաղել և ով գիտէ նա նորից էլի սկսի ծխել: Ես այնպէս ուրախ եմ, որ նա ծխելը թողել է: Այդ ի՞նչու էք շարունակ ձեր թուշը շփում:

ԿՕՐ.—Երեք օր է ինչ ատամս ցաւում է:

ՄԱՐ. ԱԼ.—Եօդ քսեցէք:

ԿՕՐ.—Քսել եմ, բայց այժմ էլ չնգերքս է  
ցաւում և աւելի վատ, քան ատամս:

ՄԱՐ. ԱԼ.—Գիտէք ինչ, փորձեցէք ծուխը  
ատամի վրայ պահել, ասում են հանգստացնում  
է: Փորձեցէք: (Տալիս է նրան մի ծխախոտ)  
Ծուխը տաք է, իսկ նիկոտինը...

ԿՕՐ.—Այո, նիկոտինը պէտք է նարկոսաց-  
նել: (Ծխում է: Պառլզա):

ՄԱՐ. ԱԼ.—Է՛, ինչպէս է:

ԿՕՐ.—Իսկապէս, կարծէք, մի քիչ անցաւ:

ՄԱՐ. ԱԼ.—Ահա, տեսնում էք: Վերցրէք  
էլի մի քանի հատ, չէ՞ որ դուք չունիք: (Կօրին-  
կինը վերցնում է): Եւ այդպէս, Գէորգի Սեր-  
գէկիչ, ես ձեզ խնդրում եմ, հէնց որ դուք մի  
բան իմացաք, թէ ինչու է Արսենին այդպէս  
փոխւել՝ եկէք և իսկոյն ինձ ասացէք, միևնոյն  
է որքան էլ դա սարսափելի բան լինի: Գա-  
լիս են... (Շտապով հանգնում են ծխախոտները  
եւ ձեռքերով ծուխը ցրում) Տեսէք, չը մատնէք  
ինձ: Այդ մեր գաղտնիքն է:

## ՏԵՍԻԼ 2

Նրանք և ՊՕՄԵՐԱՆՍԿԻ

(Մտնում է Պոմերանսկին)

ՄԱՐ. ԱԼ.—Դու, հայրիկ, դատարանից ես  
գալիս. հապա ռըր է Արսենին:

ՊՕՄ.—Կառապանին հայհոյեց թէ ինչու է  
նա այսօր հարբել, այն ինչ խեղճը ամենևին էլ  
հարբած չէ:

ԿՕՐ.—Արսենիյ Վիկտորովիչը մի գուցէ  
չատ տխրել է գործը տանուլ տալուց:

ՊՕՄ.—Սատանան զիտէ, ինչու է նա այդ-  
պէս:

ԿՕՐ.—Այդ գործի համար նա մինչև անգամ  
ծրագիր էլ չէր կազմել:

ՊՕՄ.—Կարող է կազմել, երբ ինձ հետա-  
մուտ լինելուց և հոտոտելուց ուրիշ բանի հա-  
մար ժամանակ չէ գտնում: Դու կարծում ես  
ինչու համար է նա իմ ննջարանը տեղափոխ-  
ւել. նրա համար, որ զիջերներն էլ հետամուտ  
լինի ինձ:

ՄԱՐ. ԱԼ.—Իսկ ինչու է նա այդ անում:

ՊՕՄ.—Որ ես չը ծխեմ: Այդպէս չը հաւա-  
տալն էլ խոզութիւն է, կարծես եթէ ես ուզե-  
նամ՝ տեղ և ժամանակ չեմ կարող գտնել:

ԿՕՐ. Իսկ միթէ՞ դուք երբէք ծխել չէք  
ուզում:

ՊՕՄ.—Ամենևին: Այդ բանում ես ինձ շատ  
լաւ եմ ձանաչում: Ա՛յ, դատարանում, ծխելու  
սենեակում ամենքն էլ ծխում էին, իսկ ինձ  
համար միևնոյն էր: Մինչև անգամ զգւանքս էր  
գալիս: (Մտնում է Լօժքինովը, նրա յետեւից էլ  
Կատեան):

## ՏԵՍԻՒԼ 3

Նրանք, ԼՕԺԲԻՆՈՎ և ԿԱՏԵԱ.

ԼՕԺ.—(Կատեային) Քսան անգամ ես ձեզ ասել եմ, որ հագուստը պէտք է սրբել խողանակով և ոչ թէ աւելով:

ԿԱՏԵԱ.—Ձեր ֆրակը հէնց այսօր բերեց դերձակը, նա է արդուկել:

ԼՕԺ.—Խնդրեմ առանց հակաճառումների, կանչեցէք այստեղ Օլգա Վասիլենային: (Կատեան զնում է):

ՄԱՐ. ԱԼ.—Դու մինչև անգամ չես ուզում ինձ բարևել:

ԼՕԺ.—Ընդհակառակը... ես... (համբուրում է կնոջը) նրանք բոլորն էլ ինձ չարացնում են և կարծես դիտմամբ: Սուրճը առաւօտեան սառած բերին, սերից նաւթի հոտ էր գալիս:

ՄԱՐ. ԱԼ.—Ձի կարող լինել:

ԼՕԺ.—Կը նշանակի ես սո՛ւտ եմ ասում:

ՄԱՐ. ԱԼ.—Ո՛չ, դու ինչ որ բանից անբաւական ես և քեզ բոլորը թւում է:

ԼՕԺ.—Բոլորը թւում է: Ուրեմն ես խելագար եմ:

ՄԱՐ. ԱԼ.—Արսենիյ, արդէն ծանր է այդ ամենը տանել:

ԼՕԺ.—Իսկ ինձ համար թեթև՞ է: (Ժիծաղ): (Պովերանկուն) Ի՞նչու էք ծիծաղում:

ՊՕՄ.—Ի՞նչ, դու ինձ ծիծաղել էլ ես արգելում:

ԼՕԺ.—Խնդրեմ, ծիծաղեցէք, խնդացէք, բառանչեցէք, ինձ համար միևնոյն է: Ձէ որ ես գիտեմ ինչն է ձեզ ծիծաղ պատճառում: Տարօրինակ է, ի հարկէ, որ այդպէս է պահում իրեն մեզ մօտ մարդը, կնոջս հայրը:

ՄԱՐ. ԱԼ.—Ի՞նչ է որ:

ԼՕԺ.—Որ այսօրւան իմ խորտակումը Պէ-որգիյ Սերգէևիչի սրտովն է, այդ շատ բնական է. ինչպէս չուրախանայ օգնականը, երբ նրա պատրոնը ցելսի մէջ է ընկնում:

ԿՕՐ.—Ես, Արսենիյ Վիկտորովիչ, այդ ձեր կողմից կատակ եմ հաշուում և միևնոյն ժամանակ շատ վիրաւորական ինձ համար:

ՊՕՄ.—Եթէ դու պարապէիր այդ գործով, ինչպէս հարկն է, վաղօրօք ծրագիր կազմէիր... ԼՕԺ.—Տասն ծրագիր կազմեցի և բոլորն էլ պատուեցի:

ՄԱՐ. ԱԼ.—Ինչո՞ւ:

ԼՕԺ.—Որովհետեւ ես չեմ կարողանում երկու նախադասութիւն կապել մէկ մէկու հետ, որովհետեւ իմ գլխում միայն մի միտք է նստած...

ՄԱՐ. ԱԼ.—Ինչո՞ւ ես թագցնում մեզանից, ասա միանգամից և դու էլ թեթևութիւն կը գգաս:

ԼՕԺ.—Ի՞նչ ասեմ:

ՄԱՐ. ԱԼ.—Եթէ դու իմանայիր, թէ որքան եմ ես տանջուում:

ԼՕԺ.—Իսկ եթէ իմանայիր դու... Այս ի՞նչ է, ո՞վ է այստեղ ծխել, ի՞նչ էք լռել... (Պօմբերանսկունն)—Ի՞նչպէս են ընկել այստեղ այս 2 ծխախոտների մնացորդները:

ՊՕՄ.—Ես ի՞նչ իմանամ: Ես ինքս էլ հէնց քս գալուց առաջ մտայ սենեակ:

ԿՕՐ.—Այդ ես... ես եմ ծխել:

ԼՕԺ.—Դձևք, հա, հա, հա...

ԿՕՐ.—Իմ լնդերքն են ցաւում, իսկ ծուխը թէ տաքացնում և թէ նարկոսացնում: Դուք իզուր էք ծիծաղում, Արսենիյ Վիկտորովիչ: Ես ստելու պատճառ չունեմ և դրանով էլ չեմ պարապում:

ԼՕԺ.—Այո, ես այդ տեսնում եմ: Այս ըոպէին էլ դուք անթել հեռագրի փորձեր էիք անում:

ԿՕՐ.—Ի՞նչ հեռագրի բան կայ այստեղ:

ԼՕԺ.—Այդ մասին հարցրէք Մարիա Ալէքսէնային, չէ որ դուք նրան էիք հեռագրներ տալիս-ստանում:

ՄԱՐ. ԱԼ.—Ինչեր ասես, որ չը հնարես դու, և ինչպէս էլ չես ամաչում: Ես մինչև անգամ չեմ կարող թոյլ տալ, որ...

ԼՕԺ.—Թոյլ տւէք առայժմ սեփական աչքերիս հաւատալ: (Մտնում է Կատեան):

## ՏԵՍԻԼ 4

Նրանք և ԿԱՏԵԱ

ԿԱՏ.—Օլգա Վասիլևնան այս ըոպէ կը գայ, իսկ այնտեղ եկել և սպասում է դարձեալ նոյն տիկինը, որ սևերով է. խնդրում է իրեն գոնէ 5 ըոպէով ընդունել:

ԼՕԺ.—Խնդրեցէք: (Կատեան գնում է):

ՄԱՐ. ԱԼ.—(ցած ամուսնուն) Դու Գէորգիյ Սերգէևիչի հետ այնպիսի տօնով էիր խօսում, որ ես...

ԼՕԺ.—Ի՞նչ է, դու նրա փոխարէն վիրաւորել ես, հա՛, հա՛, հա՛...

ՄԱՐ. ԱԼ.—Ո՛չ, իմ փոխարէն: Դու իբր թէ...

ԼՕԺ.—(Պօմբերանսկունն) Դուք այդ ձևը:

ՊՕՄ.—Այս ի՞նչ է. ես սենեակից էլ չեմ կարող դուրս գալ: Դէ... ինձ հարկաւոր է... թէ կը հրամայես աշակերտի նման մատս բարձրացնեմ և հարցնեմ. «Արսենիյ Վիկտորովիչ, կարելի՞ է դուրս գալ»:

ՄԱՐ. ԱԼ.—(Ամուսնուն) Ո՛չ, դու արդէն աննորմալ ես դառնում, ես կուղարկեմ բժշկի յետևից. գնանք, հայրիկ:

ՊՕՄ.—Սպասիր: Միանգամ ընդ միշտ խնդրում եմ ձեզ, Արսենիյ Վիկտորովիչ, չը հետա-

մտել ինձ նապաստակի նման:

ԼՕԺ.—Ես, Ալէքսէյ Պետրովիչ, որսկան շուռն  
չեմ, իսկ դուք աւելի նման էք արջի, բաննա-  
պաստակի:

ՊՕՄ.—Ի՞նչպէս էք համարձակուում:

ԼՕԺ.—Մի բղաւէք, դուք ախոռում չէք:

ՊՕՄ.—Ես... դուք... դուք... Ես ձեզ:

ՄԱՐ. ԱԼ.—(ընկերով հօրը) Հայրիկ... Տէր  
Աստուած, այդ ուր կը հասնի: Ես էլ չեմ կա-  
րող, գնանք, ուղեկցի՛ր ինձ: (Գնում է հօր հետ  
լալով):

ԼՕԺ.—(դէպի դուռը) Խնդրեցէք այստեղ այդ  
տիկնոջը: (Կօրինկին) Ձեզ հետ, իմ սիրելիս,  
ես դեռ կը խօսեմ ձեր փորձերի վերաբերմամբ:

ԿՕՐ.—Եւ շատ ուրախ կը լինեմ, եթէ դուք...

ԼՕԺ.—Այսինքն շատ էլ ուրախ չէք լինի.  
Ես սիրելիս նրանցից չեմ, որ մենամարտում են,  
այլ նրանցից, որոնք սանդուխներէրից ցած են  
գլորում. (մտնում է մի տիկին)

## ՏԵՍԻԼ 5

ԼՕԺԲԻՆՈՎ, ԿՕՐԻՆԿԻՆ և մի տիկին

ՄԻ ՏԻԿԻՆ.—Այժմ ընդունելութեան ժամը  
չէ, ես այդ գիտեմ, բայց ինձ անհրաժեշտ էր,  
և ես այստեղ եմ: Դրանով ամեն ինչ ասուած է:

ԼՕԺ.—Խնդրեմ նստեցէք:

ՄԻ ՏԻԿԻՆ.—Մի՞թէ դուք կարծում էք, որ  
առանց ձեր խնդրելուն ես այդ չէի անի:

ԼՕԺ.—(Կօրինկին) Ինչո՞ւ էք հեռանում:

ԿՕՐ.—Ձեր ասածներից յետոյ... ես գըտ-  
նում եմ... անկարելի...

ԼՕԺ.—Իսկ ես գտնում եմ անհրաժեշտ ձեր  
ներկայութիւնը այստեղ:

ԿՕՐ.—Այդ վայրենի վարմունք է, բայց...  
համեցէք... ես մնում եմ և... և... ես այնպէս  
յուզուած եմ... և ընդհանրապէս... (ծխում է):

ԼՕԺ.—Ձէք կարող չը ծխել:

ԿՕՐ.—Ո՛չ չեմ կարող: Իմ ատամը ցաւում  
է և ես... յուզուած եմ:

ԼՕԺ.—Իմանալով ձեր յուզման պատճա-  
ռը... ես իմ հերթին...

ՄԻ ՏԻԿԻՆ.—Իսկ երբ հերթը ինձ կը հաս-  
նի:

ԼՕԺ.—Ի՞նչով եմ կարող օգտակար լինել:

ՄԻ ՏԻԿԻՆ.— Ամուսնուս կենդանութեան  
ժամանակ՝ ես նրան յարգում էի: Ես չեմ ա-  
սում սիրում էի: Ի՞նչ բան է սէրը, յիմարու-  
թիւն կամ հիւանդութիւն:

ԼՕԺ.—Ձի՛ կարելի առանց փրկսփայական  
դատողութիւնների:

ՄԻ ՏԻԿԻՆ.—Ձի կարելի: Բայց նրա մահից  
յետոյ ես համոզեցի, որ նա այն չէր, ինչ

ներկայացնում էր:

ԼՕԺ.—Այդ ի՞նչպէս, նա կեղծ անցաթղթով էր ապրում:

ՄԻ ՏԻԿԻՆ.—Համարեա թէ այդպէս. նրա անցաթղթում գրւած էր, որ նա ստատուկի սովետնիկ է, այն ինչ գուրս եկաւ, որ նա մի սրիկայ է:

ԼՕԺ.—Այո, հակասող աստիճաններ են:

ՄԻ ՏԻԿԻՆ.—Անցեալ անգամ ես մանրամասն պատմել եմ ձեր օգնականին: Իմ ամուսինը մեռել է լեզւի բակից:

ԼՕԺ.—Ուրեմն այդ նա էր:

ՄԻ ՏԻԿԻՆ.—Դուք նրան ճանաչում էիք:

ԼՕԺ.—Կենդանութեան ժամանակ ոչ: Բայց գլխաւորապէս նրա շնորհիւ է, որ ես մի շաբաթ է տանջւում եմ:

ՄԻ ՏԻԿԻՆ.—Նա ձեզ մօտ էլ է եկել:

ԼՕԺ.—Ի՞նչպէս թէ եկել է, չէ՞ որ ասում էք, նա մեռել է:

ՄԻ ՏԻԿԻՆ.—Ի հարկէ մեռել է: Բայց ի՞նչ բան է կեանքը. լրբութիւն կամ խաբէութիւն: Ո՛ւր են մահաւանասիմանները: Թաղումից յետոյ ամեն գիշեր նա, կամ, ճիշտն ասած, նրա մարմնացած հոգին...

ԼՕԺ.—Ներողութիւն: Ես կը բացեմ պատուհանը, իմ գլուխը ինչ որ կարգին չէ: Երևի

ծխիցն է...

ՄԻ ՏԻԿԻՆ.—Երէկ նա մինչև անգամ ներկայացաւ սպիրիտիզմի փորձի ժամանակ և տաքանում էր, հաստատում էր իւր իրաւունքները և շտապողական պահանջներ դնում:

ԼՕԺ.—Ներեցէք անհամեստ հարցիս համար. ձեր առողջութիւնն ի՞նչպէս է:

ՄԻ ՏԻԿԻՆ.—Այո, այո, բոլորովին քայքայւած է: Կեանքը ինձ չը խնայեց: Բժշկները հաստատում են, որ դա մօրֆիցն է, բայց դա սոււա է: Ահա ճիշտ երկու տարի է, որ ես թողել եմ մօրֆին և այժմ միմիայն էֆիր եմ սրսկում: Այդ հրաշալի միջոց է, նա ուղղակի հրաշքներ է գործում: Ես մինչև անգամ ծխախոտն էլ եմ թրջում էֆիրով: (ծխում է) Դուք զգում էք, մինչև անգամ ծխի մէջ մի ինչ որ բան կայ, որ միաժամանակ թէ զրգուում է և թէ ինքնամուռացութեան մէջ զցում մարդու: Դուք զգում էք:

ԼՕԺ.—Ես ոչինչ չեմ զգում: Իմ գլխում ամեն ինչ մէկմէկու է խառնել. ստատուկի սովետնիկը և մարմնացած սրիկան, թէ մօրֆին և էֆիրը, թէ ըակը և թէ ինչ որ պահանջներ... Ես ոչինչ չեմ հասկանում: Դէ մի ծխէք դուք էլ է... Միթէ՞ ձեզ համար ձեր ամուսնու մահաւան օրինակը քիչ է:

ՄԻ ՏԻԿԻՆ.—Բայց չէ որ ես ծխում եմ

ծխախոտաներ, սր...

ԼՕԺ.—Իսկ նա:

Մի ՏԻԿԻՆ.—Միմիայն չիբուխ և այն էլ աշխարհիս ամենավատ թամբաքուրից:

ԼՕԺ.—Ց ըուբլիանոց:

Մի ՏԻԿԻՆ.—Այո, նա բերել էր տալիս Բեսարաբիայից առանց բանդերոլի և դրա համար էլ նրան շատ էժան էր նստում, փութը Ց ըուբլի:

ԼՕԺ.—(Կօրինկինին) Փութը... հապա ի՞նչ պէս էիք դուք ասում թէ...

ԿՕՐ.—Երևի ես սխալ եմ հասկացել:

ԼՕԺ.—Տիրուհի, և դուք լիւ յիշում էք, որ նա այդ թամբաքուրից էր լցնում իւր չիբուխը:

Մի ՏԻԿԻՆ.—Հապա ի՞նչպէս:

ԼՕԺ.—Կարելի է նա ծախում էր թամբաքուն, կարելի է դա իսկի թամբաքու էլ չէր:

Մի ՏԻԿԻՆ.—Հապա ի՞նչ:

ԼՕԺ.—Ես ինչ իմանամ, գուցէ քարածուխ, կիր, կամ մի ուրիշ բան: Օ, սրիկայ...

Մի ՏԻԿԻՆ.—Տէք ինձ ձեր ձեռքը: Ես ուրախ եմ, որ դուք էլ համամիտ էք ինձ հետ: Դուք այժմ կը հասկանաք թէ ինչու ես չեմ ուզում նրա պատճառով դատուել: Ես արդէն ապահովադրական ընկերութեան հետ գումարի կէսի վրայ համաձայնեցի և վաղը ստանում եմ փողերը: Դուք հաւանութիւն տալիս էք: Ո՛ւր են իմ փաստաթղթերը:

ԿՕՐ.—Ես կը վերադարձնեմ իսկոյն:

Մի ՏԻԿԻՆ.—(Կօրինկինին) Այդ ի՞նչ պատահեց նրան: Կաթւած է, ի՞նչ է: Եւ յաճախ է պատահում այդ ձեզ հետ: Ծխախոտ վերցրէք, դէլիւ, վերցրէք:

ԼՕԺ.—Գնացէք, գնացէք:

Մի ՏԻԿԻՆ.—Ի՞նչ տարօրինակ մարդ է: Ես սիրում եմ տարօրինակ մարդկանց: Ասում են որ ես էլ տարօրինակ եմ, աւելի լաւ: Իմ հասցէն այցետոմսիս վրայ գրած է, կը գամք: (Լօժքինովը դուրս արձնելով նրանից՝ փախում է) Հա, հա, հա... կը գայ: Իսկ դ՞ուք... Դուք էլ եկէք: (Գնում է, նրա յետեւից Կօրինկինը)

## ՏԵՍԻԼ 6

### Լուս տեսարան

(Պատուգայից յետոյ դուրս է գալիս Պոմերանսկին: Մանրազնին նա յելով դռների յետեւը, մինչեւ անգամ քազմոցի տակը, նստում է քազկաթոռի վրայ, հանում է ծխախոտի տուփը եւ ծրխում: Կամաց, կամաց նրա կերպարանքը տխուրից փոխում է ուրախի: Խորամանկ ծելով աչքով անելով դէպի Լօժքինովի գնացած կողմը, սկսում է քթի տակ մի նրզ մոմնալ. քեմը սկսում է մթնել):

## ՏԵՍԻԼ 7

ՊՕՄԵՐԱՆՍԿԻ և ՕԼԳԱ ՎԱՍԻԼԵՒՆԱ

(Մտնում է Օլգա Վասիլևնան, առանց Պոմերանսկուց նկատելու մտնելու է էլեքտրական լուսատուրութեան կոճակին եւ միանգամից լուսատուրում սենեակը):

ՊՕՄ.—Ա՛, ինչո՞ւ... ի՞նչ պատճառով:

ՕԼ. Վ.—Բարի ախորժակ, Ալեքսեյ Պետրովիչ:

ՊՕՄ.—Ա՛, այդ դո՞ւք էք, այնուամենայնիւ հետամուտ եղաք: Նրա խնդիրքով, հա՛, խոստովանեցէք:

ՕԼ. Վ.—Արսենիյ Պետրովիչը խնդրեց լուսատուրել սենեակը:

ՊՕՄ.—Իսկ և իսկ: Նա հրամայեց, իսկ դուք... Եւ չէք էլ ամաչում. պառաւ—պառաւ այդպիսի ստոր բաներով էք զբաղւում: Ես ամեն բան կը ներեմ, միայն ոչ այդ: Ստեցէք, կեղծաւորութիւն, անառակութիւն արէք, միայն...

ՕԼ. Վ.—Ա՛խ, Տէր Աստուած, այդ ի՞նչպէս դուք ինձ վիրաւորում էք, չէ որ ես դեռ, այսպէս ասած, օրիորդ եմ:

ՊՕՄ.—Ձեմ հաւատում. օրիորդի քնքոյշ սիրտը այդպիսի ստորութեան չի ձգտի և չի էլ թոյլ տայ իրան գայթակղեցնել:

ՕԼ. Վ.—Աւելի լաւ է ես գնամ:

ՊՕՄ.—Գնացէք, գնացէք և մատնեցէք ինձ, միայն իմացած եղէք, ես չեմ վախենում ձեզանից: Ես ծխել չէի ուզում, ես այդ դիտմամբ արի, որ փեսայիս բռնեմ... Եւ բռնեցի էլ... Իսկ այժմ, բոլոր լրտեսներիդ ջգրու, ես պէտք է ծխեմ, այո, և թքել եմ ձեզ-ամենքիդ վրայ: Առէք, դուք էլ ծխեցէք... ծխեցէք: Կարող էք հանգիստ լինել, ես ձեզ չեմ մատնի: Ծխեցէք: (Բղաւելլով) Ծխեցէք, ասում եմ ձեզ:

ՕԼ. Վ.—Ի՞նչ էք ուժով ստիպում, միթէ այդպէս կարելի է: Եթէ ես թուլութիւն ունենայի դէպի ծխախոտները... Ես ուզում եմ ամուր կանգնել խօսքիս վրայ: (Հալիս է, ձգում է թաշկինակը գրպանից, որի ժամանակ թափում են ծխախոտներ)

ՊՕՄ.—Հա՛, հա՛... ամբուժիւնդ փշրեց... հա՛, հա՛... Հաւաքեցէք, հաւաքեցէք նրանց, շուտ...

ՕԼ. Վ.—(հաւաքելով) Մնացած թամբաքուից մի քանի հատ շինեցի եղբորորդուս համար, ճըշմարիտ:

ՊՕՄ.—Եղբորորդուս համար... մնացած թամբաքուից, ապա շունչ քաշիր. (ընում է նրա ուսից եւ մտնելով իրան):

ՕԼ. Վ.—Տէր Աստուած, այս ի՞նչ բան է:

ՊՕՄ.—Շունչ քաշեցէք: (Հօժքինովը երևում է դռներում) Դէ, մէկ էլ, մէկ էլ...

## ՏԵՍԻԼ 8

Նրանք և ԼՕԺԲԻՆՈՎ

ԼՕԺ.—Այդ էր պակաս:

ՊՕՄ.—Այդ դու ի՞նչի մասին ես ասում:

ԼՕԺ.—Ձէ որ ես սեփական աչքերովս տեսայ այս տեսարանի ամբողջ գարշութիւնը և սեփական ազանջներով լսեցի, թէ ինչպէս էիք դուք խնդրում՝ մէկ էլ, մէկ էլ...

ՕԼ. Վ.—Այ, տեսնում էք, Ալէքսէյ Պետրովիչ, ես ձեզ նախազգուշացնում էի, իսկ դուք ուժով ցանկացաք:

ԼՕԺ.—Ուժով... օրէնքի 2781 յօդուածի հիման վրայ...

ՕԼ. Վ.—Ես ասում եմ, իսկ Ալէքսէյ Պետրովիչը թէ՛ անառակութիւն արա, իսկ յետոյ թէ՛ շունչ քաշիր, առանց այդ էլ շունչս կտրուել է:

ԼՕԺ.—Մի ժամ յետոյ որ ձեր շունչը կտրուած լինի այստեղից: (Պովերանսկուն) Իսկ ձեզ խորհուրդ եմ տալիս սրանով լրացնել ձեր գիւղական հարեմի պակասը, ուր, երևի, ձեզ շատ անհամբերութեամբ սպասում են:

ՊՕՄ.—Ախ դու կենդանի: Ես քեզ... դու... դու... (Համարեա շունչը կտրուած, զանազան հրնչիւններ է արձակում: Օլգա Վասիլենան լալիս է, Լօժքինովը գլուխը ընած վազվզում է. սրտնում են Մարիա Ալէքսէեւնան եւ Կօրինկինը):

## ՏԵՍԻԼ 9

Նրանք, ՄԱՐԻԱ ԱԼԷՔՍԷԵՒՆԱ և ԿՕՐԻՆԿԻՆ

ԼՕԺ.—(գաժ կնոջը) Դարձեալ միասին: Դուք էլ առանց մէկ մէկու շնչել չէք կարող:

ՄԱՐ. ԱԼ.—Արտենիյ, դու խելագարուել ես:

ԼՕԺ.—Չարմանայու ոչինչ չը կայ:

ՄԱՐ. ԱԼ.—Հայրիկ, քեզ ի՞նչ է պատահել:

ՊՕՄ.—Նա... նա... նա... օօ...

ՄԱՐ. ԱԼ.—Դէ գաղարեցէք. դուք, Օլգա Վասիլենայ, դուք ի՞նչու էք ոռնում:

ՕԼ. Վ.—Նա... նա... օօ...

ԼՕԺ.—Այդպէս ապրել չի կարելի:

ՄԱՐ. ԱԼ.—Այո, այդպէս ապրել չի կարելի: Ասա ամենը, ինչ որ քո սրտին ծանրացած է: Խոստովանիր, դու սիրուհի ունիս: Այդ երեւի վաղուցւայ կապ է, դու ունիս նրանից դաւակներ—հմ: Մէկը, երկուսը, քանիսը...

ԼՕԺ.—12-ը:

ՄԱՐ. ԱԼ.—Դու նրան սիրում ես, իսկ ամուսնացար ինձ հետ միայն նրա համար, որ... բայց ո՞վ է նա, ո՞վ... մի ծածկէք ինձանից, հայրիկ, Օլգա Վասիլենա...

ՕԼ. Վ.—Ո՛չ, ո՛չ, ո՛չ ես... և ոչ էլ նա... Ալէքսէյ Պետրովիչը, նա էր, որ ինձ դայթակղեցրեց:

ՄԱՐ. ԱԼ.—Հայրիկը... նա... դու...

ՊՕՄ.—(Օլգա Վասիլենային) Սատանայ, յիմար, կը խեղդեմ: (Ընդհանուր աղմուկ ժխոր):

ԼՕԺ.—(Բոլորի ծայնը խլացնելով) Կանգնիր, բաւական է... Ոչ մի խօսք այլ ևս... (հեռախօսով) Միացրէք Միքայէլեան հիւանդանոցի գժատան հետ... Լսում էք, խնդրում եմ այս ընկերները ուղարկել 5 կառք և նոյնքան էլ ծառայողներ խելագարներին հանգստացնող շապիկներով այս հասցէով... Բնէ, բնչպէս... տախտակներ... Գրտեղից էք խօսում... տախտակի պահեստից, թիւ... (Ուժասպառ ընկնելով քաղկաթոնի վրայ. պատուա):

ՄԱՐ. ԱԼ.—Արսենի, թանկագինս... երեսիդ գոյն չը կայ բոլորովին... Չէ որ ես քեզ սիրում եմ... Ինչո՞ւ ես դու այդպէս փոխել, Բնչն է քեզ տանջում... Բնչ ես ուզում դու:

ԼՕԺ.—Ես ուզում եմ... ես...

ՄԱՐ. ԱԼ.—Այո, այո... ասա... Եւ որքան էլ դա դժւար լինի, այնուամենայնիւ ասա:

ԼՕԺ.—Ես ուզում եմ, ուզում եմ ծխել:

ԲՈԼՈՐԸ.—Նա ծխել է ուզում:

ԼՕԺ.—Այո, այո, ծխել: Խոստովանում եմ, ես այդքան կամքի տէր չեմ, ես թոյլ եմ, ես ուժեղ բնաւորութիւն չունեմ, թող այդպէս լինի, միայն թէ ես ծխել եմ ուզում: Ես ինքս ինձ չեմ ճանաչում, ձեզ էլ չեմ ճանաչում: Այդ

այնպիսի մի տանջանք է, որ ես երկար տանել չեմ կարող, ոյժ չունիմ, ես ծխել եմ ուզում: Դուք ուժեղ էք, դուք կարողանում էք յաղթել ձեզ, փառք ու պարծանք ձեզ, իսկ ես... ես ծխել եմ ուզում:

ՄԱՐ. ԱԼ.—Դէ ծխիր: Ծխիր, թանկագինս: Եւ Բնչու ես այն ժամանակ ստիպեցի թողնել: Եթէ միայն ես իմանայի, որ դա այդպէս դժւար է. և այս բոլորի պատճառը, հայրիկ, դու ես, դու:

ՊՕՄ.—Բայց չէ որ ես էլ չէի կարծում, որ նրա համար այդ մի մեծ քաջութիւն է. ես ինձանով էի դատում:

ԼՕԺ.—Ես ձեզ կը հաստատեմ, որ ծխախոտը այնքան էլ վնասակար չէ...

ՄԱՐ. ԱԼ.—Հարկաւոր չէ, հարկաւոր չէ: Մենք խնդրում ենք քեզ:

ԲՈԼՈՐԸ.—Այո, այո, ծխեցէք, ծխեցէք:

ԼՕԺ.—Դէ թող ձեր ասածը լինի: Ոչ ոք ծխախոտ չունի: Չի մնացել արդեօք մէկի մօտ թէկուզ մի ծխախոտ: Ես մինչև անգամ մի լուցկի էլ չունիմ: (Բոլորն էլ միաժամանակ մեկնում են նրան իրանց ծխախոտները եւ լուցկի վառելով դէմ անում նրան) Այս Բնչ է, նշանակում է դուք... (ծխում է. պատուա) ՕՓ, այժմ եմ սկսում հասկանալ, թէ ո՞ւր եմ ես և Բնչ խելագար էի ներկայացնում ինձանից: Մարուսինկա,

Թանկագինս, ներիր դու ինձ խելագարիս: Ի՞նչ պէս, դու էլ ես ծխում: Եւ ամէնքդ էլ... հա՛, հա՛... (սեղմելով Պոսերանսկու եւ Կորինկինի ձեռքերը) և իրաւ հազիւ չը խելագարւեցի: Դէ, ի հարկէ, դուք չէք յիշում-դուք ամենքդ էլ բարի էք: Իմ թանկագիններս. կատեա, կատեա... (կատեան մ'տնում է):

### ՏԵՍԻԼ 10

Նրանք և ԿԱՏԵԱ

ԼՕԺ.— Իսկոյն բերէք այն ծխախոտների կապերը:

ԿԱՏ.— Ա՛խ, պարոն, եթէ իմանաք ինչ դժբաղդու թիւն է պատահել. չեմ էլ իմանում, թէ ինչպէս յայտնեմ. այն ծխախոտները կորել են:

ՊՕՄ.— Ի՞նչպէս, արդէն ծխել-վերջացրել էք:

ԿԱՏ.— Ո՛չ, ես միայն երկու հատ փորձեցի և յետոյ էլի մի քանի հատ... Բայց այդ երևի կառապան Գերասիմն է գողացել:

ԼՕԺ.— Բայց չէ որ նա չի ծխում:

ԿԱՏ.— Այո, 10 տարի չէր ծխում, իսկ այժմ շարունակ ուխին ծխախոտ եմ տեսնում: Պարոն, ճշմարիտ, ես մեղաւոր չեմ, ես նրան կանչեմ, դուք ինքներդ հարց ու փորձ արէք:

ԼՕԺ.— Հարկաւոր չէ, Աստուծո՛ւ նրա հետ, ծխել է— ծխել: (Հեռախօսով) Ուղարկեցէք իսկոյն իմ ծխախոտները. որքան, առայժմ 1000 հատ, միայն շտապեցրէք գործակատարին:

ՄԱՐ. ԱԼ.— Ինչու խեղճին չարչարել: (Հեռախօսով) 1000 չէ, 2000 հատ:

ՊՕՄ.— Բաւական է. որքան գնովի անպէտք ծխախոտներ ծխեցի: (Հեռախօսով) 2000 չէ, այլ 4000:

ԼՕԺ.— Պարոնայք, էգօխտ չը լինենք, չէ որ պէտք է մտածել և Գէորգի Սերգէևիչի ատամների և Օլգա Վասիլենայի եղբորորդու մասին: (Հեռախօսով) Թող գործակատարը կառք վերցնի, բերի միանգամից բոլոր 6000 հատը:

ՊՕՄ.— Իրաւ է, եթէ քէֆ է-քէֆ անենք:

ԼՕԺ.— Իսկ եթէ ծխել է-ծխենք:

Պ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

... 1000 ... 2000 ... 3000 ... 4000 ... 5000 ... 6000 ... 7000 ... 8000 ... 9000 ... 10000 ...

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ

Կասակ 1 արար. Չեխովի


Թարգ. Գ Ր. Ա Ի Ե Տ Ե Ա Ն

Настоящая пьеса, подъ названіемъ „Пред-  
ложеніе“ разрѣшена для представленія на сце-  
нахъ края. Тифлисъ, 1900 г.

Ա Ն Չ Ի Ն Ք

ՍՏԵՊԱՆ ՍՏԵՊԱՆՈՎԻԶ ԶՈՒԲՈՒԿՈՎ, կալւածատէր  
ՆԱՏԱԼԻԱ ՍՏԵՊԱՆՈՎՆԱ, նրա աղջիկը, 25 տարեկան  
ԻՎԱՆ ՎԱՍԻԼԵԻԻԶ ԼՕՄՕՎ, նրանց հարեւանը, առողջ, գեր, բայց շատ կասկածոտ կալւածատէր:

Գործողութիւնը կատարուում է Չուբուկովի ամառանոցում:



1 դուռ զէպի սենեակները, 2 մուտքի դուռը, 3 պատուհան, 4 բազմոց 5 կլոր սեղան, 6 բազկաթոռներ, 7 սեղան:

Չուղուկովի տանը մի հիւրասենեակ:

## ՏԵՍԻԼ 1

ՉՈՒԲՈՒԿՈՎ և ԼՕՄՈՎ (մ'անում է Փրակով և սպիտակ ձեռնոցներով):

**ՉՈՒԲ.**—(նրան ընդատաջ գնալով): Թանկագինս, ղեմ եմ տեսնում, Իվան Վասիլիևիչ, շատ ուրախ եմ: (Սեղմում է նրա ձեռքը) Այ իսկական սիւրբաբիլ, սիրելիս... Ի՞նչպէս է ձեր առողջութիւնը:

**ԼՕՄ.**—Շատ շնորհակալ եմ: Իսկ ի՞նչպէս է ձեր առողջութիւնը:

**ՉՈՒԲ.**—Ապրում եմք էլի, փոքր առ փոքր, հրեշտակս, ձեր աղօթքներով և մասամբ նորին... նստեցէք, խնդրում եմ... Այ, այդ լաւ բան չէ, հարեաններին այդպէս մոռանալը, սիրելիս: Բայց այս ի՞նչ է, թանկագինս, այսպիսի պաշտօնական կերպարանքը, Փրակով, ձեռնոցներով և մասամբ նորին: Մի որևէ տեղ էք պատրաստում գնալու, թանկագինս:

**ԼՕՄ.**—Ո՛չ, միայն ձեզ մօտ, յարգելի Ստեպան Ստեպանիչ:

**ՉՈՒԲ.**—Բայց ի՞նչու Փրակով: Հիանալի է, կարծես նոր տարի շնորհաւորելու համար լինի:

ԼՕՄ.—Գիտէք բանն ինչու՞ն է. ես եկել եմ ձեզ մօտ, յարգելի Ստեպան Ստեպանիչ, որ անհանգստացնեմ ձեզ իմ մի խնդիրքով: Քիչ անգամ չեմ ես պատիւ ունեցել զիմելու ձեր օգնութեանը և միշտ դուք, այսպէս ասած... Բայց ես յուզուում եմ, ներեցէք: Ես մի քիչ ջուր կը խմեմ, յարգելի Ստեպան Ստեպանիչ: (խմում է):

ՉՈՒԲ.—(կողմ) Եկել է փող խնդրելու, չեմ տալ: (Նրան) Դէ, բանն ինչու՞ն է, գեղեցիկս:

ԼՕՄ.—Գիտէք ինչ, Յարգելի Ստեպանիչ... ներողութիւն, Ստեպան Յարգելիչ... այսինքն, ես սաստիկ յուզուում եմ, ինչպէս տեսնում էք: Մի խօսքով, միայն դուք կարող էք օգնել ինձ, թէկուզ, ի հարկէ, ես ոչինչով չեմ արժանացել և... և իրաւունք չունիմ ձեր օգնութեանը սպասելու...

ՉՈՒՄ.—Դէ, մի ծամծամէք, սիրելիս, միանգամից ասացէք, դէ...

ԼՕՄ.—Իսկոյն, այս ըոպէին: Բանը նրանու՞ն է, որ ես եկել եմ խնդրելու ձեր դատեր, Նատալիա Ստեպանովնայի, ձեռքը:

ՉՈՒԲ.—(ուրախ) Թանկագինս, Իվան Վասիլիչ, մէկ էլ կրկնեցէք,— ես չը լսեցի:

ԼՕՄ.—Պատիւ ունիմ խնդրելու...

ՉՈՒԲ.—(ընդհատելով) Թանկագինս, սիրելիս... Ես այնքան ուրախ եմ և այլն... Ահա իս-

կապէս և մասամբ նորին... (զրկում է եւ համարորում) Վաղուց ցանկանում էի... Այդ իմ մըշտական ցանկութիւնն էր... (արցունքները աչքերին): Եւ միշտ սիրում էի ձեզ, հրեշտակս, սեփական որդու նման: Երկուսիդ էլ Աստուած բաղդաւորութիւն և սէր տայ, իսկ ես շատ էի ցանկանում: Ի՞նչ եմ կանգնել յիմարի նման, ուրախութիւնից բոլորովին ապշեցի, բոլորովին ապշեցի, գնամ կանչեմ Նատալիային և մասամբ նորին:

ԼՕՄ.—(յուզւած) Յարգելի Ստեպան Ստեպանիչ, ի՞նչ էք կարծում, կարող եմ յոյս ունենալ, որ նա կը համաձայնի:

ՉՈՒԲ.—Այդպիսի գեղեցիկին նա չը հաւանի: Սև կատուի նման է սիրահարւած և այլն... Ես իսկոյն: (Գնում է):

## ՏԵՍԻԼ 2

ԼՕՄՈՎ (միայնակ)

ԼՕՄ.—Յուրա է: Ամբողջովին դողում եմ, կարծես քննութիւն լինեմ տալիս... Գլխաւորը նա է, որ պէտք է վճռես. եթէ երկար մտածես, տատանես, շատ խօսես, սպասես իդէալիդ կամ իսկական սիրոյ, այդպէս երբէք չես ամուսնանալ: Բ՜՛՛՛՛՛՛... ցուրտ է: Նատալիա Ստեպանովնան լաւ տանտիկին է, տգեղ չէ, կըթւած

է... Էլ ի՞նչ է հարկաւոր ինձ: Այնուամենայնիւ յուզմունքից ականջներս ձայն են տալիս: (Ջուր է խմում) Իսկ չը պսակւել՝ ես չեմ կարող և անկարելի է, նախ՝ ես 35 տարեկան եմ, տարիքս, այսպէս ասած, կրիտիքական է: Երկրորդ՝ ինձ հարկաւոր է կանոնաւոր կեանք վարել. ես մշտական սրտի թրթռոց ունիմ, դիւրագրգիռ եմ և միշտ յուզւող: Հէնց այժմ ահա, շրթունքներս դողում են և աջ կողմս էլ խաղում է: Բայց ամենասարսափելին՝ այդ իմ անքնութիւնն է. պառկում եմ թէ չէ, հէնց այն է սկսում եմ ննջել, մէկ էլ անսնես ձախ կողքումս մի ինչ որ բան ձգում է և խփում ուղիղ ուսիս և գլխիս: Վեր եմ թռչում խելագարի նման, քայլում եմ մի փոքր և նորից պառկում. բայց էլի հէնց որ ուզում եմ ննջել, նորից է ձգում և այդ կրկընւում է մի քանի անգամ:

### ՏԵՍԻԼ 3

ՆԱՏԱԼԻՍ. ՍՏԵՊԱՆՈՎՆԱ և ԼՕՄՈՎ

ՆԱՏ. Ս.—(մտնում է)—Դէ տես. այդ դուք էք, իսկ հայրիկը եկել—ասում է. գնա՛, վաճառական է եկել ապրանք առնելու: Բարև, Ի վան Վասիլիկիչ:

ԼՕՄ.—Բարև ձեզ, յարգելի Նատալիա Ստե-

պանովնա:

ՆԱՏ. Ս.—Ներեցէք, որ գոգնոցով եմ և տանու զգեստով. մենք սիսեռ էինք մաքրում չորացնելու համար: Ի՞նչու այսքան երկար ժամանակ չէիք գալիս մեզ մօտ: Նստեցէք: (Նըստում են) Նախաձաշ չէի՞ք ցանկանալ:

ԼՕՄ.—Շնորհակալ եմ, ես արդէն նախաձաշել եմ:

ՆԱՏ. Ս.—Դէ ծխեցէք... ահա լուցկի: Այսօր հիանալի եղանակ է, իսկ երէկ սարսափելի անձրև էր, այնպէս որ բանուորները ամբողջ օրը դործ չեն շինել: Դուք քանի խուրձ էք հրնձել: Ես, երևակայեցէք, ազահութիւն արի և ամբողջ մարգագետինը հնձեցի, իսկ այժմ ինքս էլ ուրախ չեմ, վախում եմ, մի գուցէ խտր փախ: Լաւ կը լինէր մի քիչ սպասէի: Բայց այս ի՞նչ է, կարծես Քրակով լինէք, այ քեզ նորութիւն, ի՞նչ է, բալ էք գնում: Ի միջի այլոց, բաւականին գեղեցկացել էք: Իսկապէս ի՞նչու էք այդպէս զուգւել:

ԼՕՄ.—(յուզւելով) Գիտէք ինչ, Նատալիա Ստեպանովնա, բանը նրանումն է, որ ես վճռել եմ խնդրել ձեզ... լսել ինձ: Ի հարկէ, դուք կը զարմանաք և կը բարկանաք, բայց ես... (կողմ) Սարսափելի ցուրտ է:

ՆԱՏ. Ս.—Դէ, ինչո՞ւ լուցկիք:

ԼՕՄ.—Ես կաշխատեմ կարճաժամ լինել:

Ձեզ, յարգելի Նատալիա Ստեպանովնա, յայտնի է, որ ես վաղուց, մանկութիւնից, պատիւ ունիմ ճանաչելու ձեր ընտանիքը: Իմ հանգուցեալ տատը և նրա ամուսինը, որոնցից ես, ինչպէս արդէն գիտէք, ժառանգել եմ մի գետին, միշտ խորին յարգանքով եմ վերաբերուել դէպի ձեր հայրը և ձեր հանգուցեալ մայրը: Լօւմովների և Չուբուկովների տոհմերը միշտ գտնուել են ընկերական, և մինչև անգամ կարելի է ասել՝ բարեկամական յարաբերութիւնների մէջ: Բացի այդ, ինչպէս դուք գիտէք, իմ գետինն էլ ձեր գետնին է կպած. եթէ դուք պատիւ կանէք յիշելու՝ իմ Եզնամարգագետինը սահմանակից է ձեր Կաղնոտին:

ՆԱՏ. Ս.—Ներողութիւն, ես ձեզ կընդհատեմ. դուք ասում էք «իմ Եզնամարգագետինը», բայց մի՞թէ նա ձերն է:

ԼՕՄ.—Ի՞նչ է:

ՆԱՏ. Ս.—Այ քեզ բան, Եզնամարգագետինը մերն է և ոչ ձերը:

ԼՕՄ.—Ո՛չ ի՞նչ է, յարգելի Նատալիա Ստեպանովնա:

ՆԱՏ. Ս.—Այդ ինձ համար նորութիւն է: Ո՞րտեղից նա ձերը դառաւ:

ԼՕՄ.—Ի՞նչպէս թէ որտեղից: Ես խօսում եմ այն Եզնամարգագետնի մասին, որ սեպածեմ մտնում է ձեր Կաղնոտի և Այրլաժ լճի մէջ:

ՆԱՏ. Ս.—Այո, այո... նա մերն է:

ԼՕՄ.—Ո՛չ, դուք սխալուում էք, յարգելի Նատալիա Ստեպանովնա, նա մերն է:

ՆԱՏ. Ս.—Ուշքի եկէք, Իվան Վասիլևիչ: Վաղճուց է, ինչ նա ձերն է դառել:

ԼՕՄ.—Ի՞նչպէս թէ վաղուց. որքան ես ինձ յիշում եմ, նա միշտ մերն է եղել:

ՆԱՏ. Ս.—Այդ, ասենք, ներեցէք:

ԼՕՄ.—Այդ թղթերից էլ է երևում, յարգելի Նատալիա Ստեպանովնա: Եզնամարգագետինը, ճիշտ է, մի ժամանակ վիճելի է եղել: Բայց այժմ ամենքին յայտնի է, որ նա իմն է: Եւ վիճելու էլ կարիք չը կայ: Ուշագրութիւն դարձրէք, խնդրեմ. իմ տատի տատը տուել էր ձեր հօր պապի գիւղացիներին այդ մարգագետինը ձրիապէս և անորոշ ժամանակով օգտուելու, որովհետև նրանք նրա համար աղիւս էին այրում: Ձեր հօր պապի գիւղացիները օգտուելով այդ գետնից 40 տարի, սովորել էին հաշուել իբրև իրենց գետին, բայց երբ որ դուրս եկաւ օրէնքը...

ՆԱՏ. Ս.—Ամեննին էլ այդպէս չէ, ինչպէս դուք էք ասում, և իմ պապը ու նրա պապը հաշուում էին, որ իրենց գետինը հասնում է մինչև Այրլաժ լիճը, ուրեմն և Եզնամարգագետինն էլ մերն էլ եղել էլ ինչ՞ու վիճել՝ չեմ հասկանում, մինչև անգամ կարելի է վերաւորուել:

ԼՕՄ.—Ես ձեզ ցոյց կը տամ թղթերը, Նա-

տալիա Ստեպանովնա...

ՆԱՏ. Ս.—Ո՛հ, դուք կամ կատակ էք անում, կամ դիտմամբ չարացնում էք ինձ: Ասացէք խնդրեմ. գետնին տէրութիւն ենք անում համարեա թէ 300 տարի և յանկարծ մեզ յայտնում են, որ նա մերը չէ: Ի վան Վասիլիիչ, ներեցէք, բայց ես ականջներիս չեմ հաւատում: Այդ դետինը ինձ համար մեծ բան չարժէ, այնտեղ ընդամենը 5 դեսեսատին չնչին տեղ է և արժէ մի 300 ըուբլի, բայց ինձ վըրդովեցնում է անարդարութիւնը: Ասացէք, ինչ ուզում էք, բայց ես անարդարութիւն տանել չեմ կարող:

ԼՕՄ.—Լսեցէք ինձ, աղաչում եմ: Ձեր հօր պապի գիւղացիները, ինչպէս ես արդէն պատիւ ունեցայ ասելու, աղիւս էին այրում ձեր տատի տատի համար: Ձեր տատի տատը կամենալով նրանց համար մի բարիք գործած լինել...

ՆԱՏ. Ս.—Տատ, պապ, տատ, պապ... ոչինչ չեմ հասկանում: Մարգագետինը մերն է, ահա բոլորը:

ԼՕՄ.—Իմս է:

ՆԱՏ. Ս.—Մերն է: Թէկուղ երկու օր հաստացէք, թէկուղ 15 ֆրակ հագէք, բայց նա մերն է, մերն է, մերն է... Ձերը չեմ ցանկանում և իմն էլ կորցնել չեմ ուզում: Ինչպէս կամենաք:

ԼՕՄ.—Ինձ, Նատալիա Ստեպանովնա, դետինը հարկաւոր չէ, բայց ես պրինցիպի համար միայն: Եթէ հարկաւոր է, համեցէք, կնւիրեմ ձեզ:

ՆԱՏ. Ս.—Ես ինքս կարող եմ նւիրել ձեզ, որովհետև նա իմն է: Այս ամենը աւելի քան տարօրինակ է, Ի վան Վասիլիիչ: Մինչև օրս մենք ձեզ լաւ հարևան էինք հաշուում, անցեալ տարի տւինք ձեզ մեր ծածելու մեքենան և այդ պատճառով հազիւ կարողացանք մեր հացը նոյեմբերին ծածել, իսկ դուք մեզ հետ վարւում էք, ինչպէս բոշաների հետ: Նւիրում էք ինձ իմ սեփական գետինը. ներեցէք ինձ, այդ հարևանաբար չէ, այդ, իմ կարծիքով, յանդգնութիւն է, եթէ թոյլ կը տաք:

ԼՕՄ.—Ձեր կարծիքով ուրեմն ես յափշտակիչ եմ: Տիրուհի, երբէք ես ուրիշի գետին չեմ սեփականացրել, և մեղադրել ինձ այդ բանում՝ թոյլ չեմ տալ ոչոքի: (Արագ գնում է շիշի մօտ եւ ջուր խմում): Եզնամարգագետինը իմն է:

ՆԱՏ. Ս.—Սուտ է, մերն է:

ԼՕՄ.—Ի՞նչ է:

ՆԱՏ. Ս.—Սուտ է: Ես կը հաստատեմ, այսօր և եթ կողարկեմ այնտեղ իմ հնձուորներին:

ԼՕՄ.—Ի՞նչ:

ՆԱՏ. Ս.—Այսօր և եթ այնտեղ կը լինեն իմ հնձուորները:

ԼՕՄ.— Իսկ ես նրանց վզակոթներին տալով, կը վննդեմ այնտեղից:

ՆԱՏ. Ս.— Չէք համարձակելի:

ԼՕՄ.— (սիրտը ըննելով): Եզնամարգագետինը իմն է. հասկանճում էք, իմն է:

ՆԱՏ. Ս.— Մի գոռաք, խնդրեմ: Կարող էք հախանձից գոռալ և ճշալ ձեր սեփական տանը, իսկ այստեղ խնդրում եմ պահել ձեզ քաղաքավարութեան սահմաններում:

ԼՕՄ.— Եթէ, տիրուհի, այս անտանելի և սարսափելի սրտի թրթոցը չը լինէր, ես ձեզ հետ ուրիշ կերպ կը խօսէի: (Գոռալով) Եզնամարգագետինը իմն է:

ՆԱՏ. Ս.— Մերն է:

ԼՕՄ.— Իմն է:

ՆԱՏ. Ս.— Մերն է:

ԼՕՄ.— Իմն է:

#### ՏԵՍԻԼ 4

Նոյնք և ՉՈՒԲՈՒԿՈՎ

ՉՈՒԲ.— (մտնելով) Ի՞նչ է, ի՞նչ է պատահել, ինչճեւ էք գոռում:

ՆԱՏ. Ս.— Հայրիկ, բացատրիր, խնդրում եմ, այս պարոնին, թէ ում է պատկանում Եզնամարգագետինը՝ մեզ թէ իրան:

ՉՈՒԲ.— (Լուռովին) Սիրելիս, մարգագետինը մերն է:

ԼՕՄ.— Թոյլ տւէք, Ստեպան Ստեպանիչ, նա ճրտեղից ձերը դառաւ: Գոնէ դուք ողջամիտ եղէք. տատիս տատը տւել էր այդ գետինը անորոշ ժամանակով և ձրի ձեր հօր պապի գիւղացիներին, նրանք էլ օգտւելով 40 տարի, սովորել էին հաշւել իբրև իրենց սեփականութիւն, բայց երբ որ օրէնքը...

ՉՈՒԲ.— Թոյլ տւէք սիրելիս, դուք մոռանում էք, որ գիւղացիները չէին վճարում ձեր տատին և մասամբ նորին, որովհետև մարգագետինը այն ժամանակ վիճելի էր և այլն... Այժմ ամեն մի շուն գիտէ, որ նա մերն է: Դուք, երևի, յատակագիծը չէք տեսել:

ԼՕՄ.— Իսկ ես ձեզ կը հաստատեմ, որ նա իմն է:

ՉՈՒԲ.— Չէք հաստատիլ, սիրելիս:

ԼՕՄ.— Ո՛չ, կը հաստատեմ:

ՉՈՒԲ.— Թանկագինս, ինչճեւ այդպէս գոռալ. անա հէնց գոռալով էլ ոչինչ չէք հաստատիլ: Ես ձերը չեմ ցանկանում և իմն էլ զիջել չեմ ցանկանում: Ի՞նչ պատճառով: Բայց երբ բանը այդտեղ հասաւ, այն ժամանակ ես ուրախութեամբ այդ գետինը կը նւիրեմ գիւղացիներին, քան թէ ձեզ: Ահա այսպէս:

ԼՕՄ.— Չեմ հասկանում, ի՞նչ իրաւունքով

մէկի սեփականութիւնը նւիրում էք մի ուրիշին:

**ՉՈՒԲ.**—Այդ արդէն ես գիտեմ, իրաւունք ունեմ թէ չէ: Իսկ այդ բանին, երիտասարդ պարոն, ես սովոր չեմ, որ ինձ հետ խօսեն այդպիսի ձայնով և մասամբ նորին: Ես, երիտասարդ պարոն, երկու անգամ մեծ եմ ձեզանից և խնդրում եմ խօսել ինձ հետ առանց ամիտացիայի և մասամբ նորին:

**ԼՕՄ.**—Ո՛չ, դուք ինձ յիմարի տեղ էք դընսում, կամ ծիծաղում վրաս: Իմ գետինը ձերն էք համարում և դեռ պահանջում էք, որ ես սառնասիրտ մնամ և ձեզ հետ մարդավարի խօսեմ: Լաւ հարևանները այդպէս չեն վարւում, Ստեպան Ստեպանիչ. դուք ոչ թէ հարևան, այլ յափշտակիչ էք:

**ՉՈՒԲ.**—Ի՞նչ... Ի՞նչ ասացիք:

**ՆԱՏ. Ս.**—Հայրիկ, իսկոյն հնձուրներին այնտեղ ուղարկիր:

**ՉՈՒԲ.**—Ի՞նչ ասացիք, յարգելի պարոն:

**ՆԱՏ. Ս.**—Եզնամարդագետինը մերն է և ես նրան ոչ ոքի չեմ զիջի, չեմ զիջի, չեմ զիջի...

**ԼՕՄ.**—Այդ մենք կը տեսնենք. ես ձեզ դատարանով կը հաստատեմ, որ նա իմն է:

**ՉՈՒԲ.**—Դատարանով. կարող էք դատարան դիմել, երիտասարդ պարոն, և մասամբ նորին... կարող էք: Ես ձեզ ձանաչում եմ, դուք

հէնց այն է, մի պատճառ էք փնտրում, որ դատէք և այլն... Ձեր ամբողջ տոհմը այդպէս էր:

**ԼՕՄ.**—Խնդրում եմ չը վիրաւորել իմ տոհմը: Լօմոֆների տոհմը ազնիւ մարդկանցից է եղել բաղկացած և ոչ ոք նրանցից դատաստանի տակ չէ ընկել փող վատնելու համար, ինչպէս ձեր հանդուցեալ քեռին:

**ՉՈՒԲ.**—Իսկ ձեր Լօմոֆների տոհմում բոլորն էլ խելագարներ են եղել:

**ՆԱՏ. Ս.**—Ս,մենքը, ամենքը, ամենքը:

**ՉՈՒԲ.**—Ձեր պապը արբեցող էր, իսկ փոքրիկ քեռակինը ճարտարապետի հետ փախաւ մասամբ նորին:

**ԼՕՄ.**—Իսկ ձեր մօր կողքը ծուռ էր... (սիրտը ընկնելով) Ա՛յ, ինչ որ ձգեց... գլխիս խփեց... ջճը...

**ՉՈՒԲ.**—Իսկ ձեր հայրը թղթամոլ էր և շատակեր:

**ՆԱՏ. Ս.**—Իսկ քեռակինը բամբասասէր, որի հատը չը կար:

**ԼՕՄ.**—Ձախ ոտս ընկաւ... Իսկ դուք ինտրիգան էք: Ա՛յ, սիրտս... Եւ ոչ ոքի համար դադանիք չէ, որ դուք ընտրութիւնների ժամանակ... Աչքերս շեշտակի են տալիս... գլխարկս սըր է:

**ՆԱՏ. Ս.**—Ստորութիւն է, ստորութիւն է, վատ է:

**ՉՈՒԲ.**—Իսկ դուք երկերեսանի և փասակար մարդ էք, այո:

**ԼՕՄ.**—Ահա, ահա գլխարկու... Սիրտս... Ո՞ւր գնամ: Ո՞ւր է դուռը... Ա՛խ, մեռնում եմ, կարծես: Ոտս ցաւում է... (զնում է ղէպի դուռը):

**ՉՈՒԲ.**—(նրա յետեւից) Որ ձեր ոտը այլևս իմ տանը չը լինի:

**ՆԱՏ. Ս.**—Դիմեցէք, դատարան դիմեցէք, մենք կը տեսնենք: (Լումովը զնում է):

## ՏԵՍԻԼ 5

**ՉՈՒԲՈՒԿՈՎ և ՆԱՏԱԼԻՍ ՍՏԵՊԱՆՈՎՆԱ**

**ՉՈՒԲ.**—Ստանան տանի քեզ:

**ՆԱՏ. Ս.**—Սրիկայ: Արի և սրանից յետոյ հաւատ ընծայիր հարեաններին:

**ՉՈՒԲ.**—Զգւելի, ոչխարի գլուխ:

**ՆԱՏ. Ս.**—Վայրենի, սեփականացրել է ուրիշի գետինը և դեռ համարձակուում է հայհոյել:

**ՉՈՒԲ.**—Լակոտ, դեռ յանդգնում է առաջարկութիւն անել և մասամբ նորին: Առաջարկութիւն:

**ՆԱՏ. Ս.**—Ի՞նչ առաջարկութիւն:

**ՉՈՒԲ.**—Ապա ի՞նչ: Եկել էր, որ քեզ առաջարկութիւն անի:

**ՆԱՏ. Ս.**—Առաջարկութիւն. ի՞նչ... ինչո՞ւ

այդ առաջ չասացիր:

**ՉՈՒԲ.**—Եւ ֆրակ էլ էր հագել: Ճիճո՛ւ:

**ՆԱՏ. Ս.**—Ի՞նչ, առաջարկութիւն: Ա՛խ... (Ընկնում է ըագկաթոռի վրայ) Դարձնել նրան... դարձնել... Ա՛խ...

**ՉՈՒԲ.**—Ո՞ւմ դարձնել:

**ՆԱՏ. Ս.**—Շուտ, շուտ, ուշքս գնում է, դարձնել... (Դստերիկա):

**ՉՈՒԲ.**—Ի՞նչ է պատահել, ի՞նչ ես ուզում... (Գլուխը ընկնելով) Անբաղդ մարդ եմ, ես կը սպանեմ ինձ, կը կախւեմ, տանջեցին...

**ՆԱՏ. Ս.**—Մեռնում եմ... Դարձնել...

**ՉՈՒԲ.**—Թի՛ւ... իսկոյն... մի բղաւիր: (Դուրս է վազում):

**ՆԱՏ. Ս.**—(միայնակ տնքում է) Ի՞նչ արինք մենք: Դարձնել, դարձնել...

**ՉՈՒԲ.**—(ներս վազելով) Իսկոյն կը գայ և մասամբ նորին, սատանան նրան տանի: Ո՛ւֆ... ինքդ խօսիր նրա հետ, իսկ ես այդ չեմ ուզում և այլն...

**ՆԱՏ. Ս.**—(տնքալով) Դարձնել...

**ՉՈՒԲ.**—(գոռալով) Գալիս է, ասում են քեզ: Տէր Աստուած, ինչ տանջանք է չափահաս աղջկայ հայր լինելը: Կը մորթեմ ինձ, անպատճառ կը մորթեմ... հայհոյեցին մարդուն, վի-

բաւորեցին, անպատեցին և այդ բոլորը դնւ, դնւ...

ՆԱՏ. Ս.—Ո՛հ, դնւ...

ԶՈՒԲ.—Տեսէք, այժմ ես եմ մեղաւորը: (Դռնեքում երեսու և Լօժովը) Ինքդ խօսիր... (գնում է):

## ՏԵՍԻԼ 6

ՆԱՏԱԼԻԱ ՍՏԵՊԱՆՈՎՆԱ և ԼՕՄՈՎ

ԼՕՄ.—(մտնում է ուժասպառ եղած) Սիրտըս փայտացել է... կողքումս ինչ որ ձգում է:

ՆԱՏ. Ս.—Ներեցէք, մենք տաքացանք, Իվան Վասիլևիչ... Ես այժմ իսկապէս որ մտաբերում եմ, Եզնամարգագետինը ձերն է:

ԼՕՄ.—Սիրտս շատ վատ թրթռում է... Այո, Եզնամարգագետինը իմն է:

ՆԱՏ. Ս.—Ձերն է, ձերն է... Նստեցէք... (նստում են) Մենք ճիշտ չէինք...

ԼՕՄ.—Ես պրինցիպի համար միայն, գետինը թանկագին չէ, բայց պրինցիպը շատ թանկ արժէ:

ՆԱՏ. Ս.—Իսկապէս պրինցիպը... Եկէք, խօսենք մի ուրիշ բանի մասին:

ԼՕՄ.—Նամանաւանդ որ ես փաստեր ունիմ. տատիս տատը այդ գետինը ձեր հօր պապի գիւղացիներին էր տւել...

ՆԱՏ. Ս.—Բաւական է այդ մասին, բաւական է: (Կողմ) Ձեմ իմանում, ինչից սկսեմ: (Նըրան) Շնորհով էք մտադիր որսի գնալու:

ԼՕՄ.—Տատրակների որսի մտադիր եմ հընձից յետոյ գնալու, յարգելի Նատալիա Ստեպանովնա: Բայց դուք լսե՛լ էք: Երևակայեցէք, ինչ դժբաղդութիւն է պատահել ինձ. իմ Ձիգիկը, որին դուք ճանաչում էք, սկսել է կաղալ:

ՆԱՏ. Ս. Ափսոս, ինչո՞ւ:

ԼՕՄ.—Ձը գիտեմ... Երևի ոտքն է դուրսընկել, կամ ուրիշ շներն են կծել: (Հոգեց քաշելով) Ամենալաւ շունն էր. ես նրան գնելիս, Միրօնովին 125 ռուբլի վճարեցի:

ՆԱՏ. Ս.—Շատ էք վճարել, իվան Վասիլևիչ:

ԼՕՄ.—Իսկ իմ կարծիքով արժան է, հրաշալի շուն է:

ՆԱՏ. Ս.—Հայրիկս իրա Միգիկի համար 85 ռուբլի է վճարել, իսկ չէ՞ որ Միգիկը ձեր Ձիգիկից լաւ է:

ԼՕՄ.—Միգիկը լաւ է Ձիգիկից: Ի՞նչ էք տուում... (ծիծաղելով) Միգիկը լաւ է Ձիգիկից:

ՆԱՏ. Ս.—Ի հարկէ լաւ է: Միգիկը, ճիշտ է, երիտասարդ է, բայց նրա նման լաւ յատկութիւններ ունեցող շուն մինչև անգամ Վօլօնեցիին չունի:

ԼՕՄ.—Թոյլ տւէք, Նատալիա Ստեպանովնա,

դուք մոռանում էք, որ նա կարճ-ծնօտ է, իսկ կարճ-ծնօտ շունը երբէք լաւ որսկան չի լինում:

ՆԱՏ Ս.—Կարճ-ծնօտ է: Առաջին անգամն եմ լսում:

ԼՕՄ.—Հաւատացնում եմ ձեզ, ներքևի ծնօտը կարճ է վերևիսից:

ՆԱՏ Ս.—Իսկ դուք չափե՞լ էք:

ԼՕՄ.—Փախցնելու համարնա պէտքական է, բայց եթէ բանը խլելուն ընկնի, հազիւ թէ:

ՆԱՏ Ս.—Նախ և առաջ մեր Միգրիկը լաւ ցեղից է, նա Լծկանի և Մծկանի որդին է, իսկ ձեր քոսոտ շան ցեղը ճանաչել էլ չի կարելի. յետոյ պառաւ է և տգեղ, սատկած ձիւլ նման:

ԼՕՄ.—Պառաւ է. իմ Զիգրիկին ձեր Միգրիկի նման հինգ շան հետ չեմ փոխիլ: Ի՞նչպէս կարելի է: Զիգրիկը—շուն է, իսկ Միգրիկը—ամօթ է նրա մասին մինչև անգամ վիճելը: Ձեր Միգրիկի նման շներ ամեն մի հովիւ հարիւրնեւրով ունի: Նրա գինը մի քսանուհինգնոց է:

ՆԱՏ Ս.—Ձեր մէջ, Իվան Վասիլևիչ, կարճես այսօր հակառակութեան սատանայ է նրատած: Մէկ հնարեցիք թէ Եզնամարգագետինը ձերն է, մէկ թէ Զիգրիկը Միգրիկից լաւ է: Ընդհանրապէս չեմ սիրում, երբ մարդ ասում է այն, ինչ չի մտածում: Ձէ որ դուք ինքներդ էլ շատ լաւ գիտէք, որ Միգրիկը լաւ է Զիգրիկից. էլ ինչո՞ւ հակառակել:

ԼՕՄ.—Ես նկատում եմ, Նատալիա Ստեպանովնա, որ դուք ինձ կոյրի տեղ էք դնում, կամ յիմարի: Վերջապէս հասկացէք, որ ձեր Միգրիկի ծնօտը կարճ է:

ՆԱՏ Ս.—Սուտ է:

ԼՕՄ.—Կարճ է:

ՆԱՏ Ս.—(Գոռալու) Սուտ է:

ԼՕՄ.—Ի՞նչ էք բղաւում, տիրուհի:

ՆԱՏ Ս.—Իսկ դուք ի՞նչ էք ցանցառութիւններ դուրս տալիս: Ուղղակի վրդովեցուցիչ է: Ձեր Զիգրիկի սպանելու ժամանակն է արդէն, իսկ դուք եկել էք և համեմատում նրան մեր Միգրիկի հետ:

ԼՕՄ.—Ներեցէք, ես չեմ կարող այս վէճը շարունակել, իմ սիրտը թրթռում է:

ՆԱՏ Ս.—Ես նկատել եմ, որ այն որսորդներն են բոլորից շատ վիճում, որոնք ամենքից քիչ են հասկանում:

ԼՕՄ.—Տիրուհի, խնդրում եմ ձեզ, լռեցէք, իմ սիրտը տրաքում է: (Գոռալու): Լռեցէք:

ՆԱՏ Ս.—Ձեմ լռիլ, մինչև որ չը խոստովանէք, որ Միգրիկը հարիւր անգամ լաւ է ձեր Զիգրիկից:

ԼՕՄ.—Հարիւր անգամ վատ է, թող սատկի ձեր Միգրիկը... ժխ, աչքերս... ուսս...

ՆԱՏ Ս.—Իսկ ձեր յիմար Զիգրիկին սատկելու էլ պէտք չը կայ, որովհետև առանց այն

էլ նա սատկած է:

ԼՕՄ.—(լալու) Լուեցէք, իմ սիրտը պայ-  
թում է:

ՆԱՏ. Ս.—Չեմ լուի:

ԼՕՄ.—Լուեցէք:

## ՏԵՍԻԼ 2

Սոաջինները և ՉՈՒԲՈՒԿՈՎ

ՉՈՒԲ.—Ի՞նչ է պատահել դարձեալ:

ՆԱՏ. Ս.—Հայրիկ, ասա խղճմտանքով, իմ  
շունն է լաւ, մեր Միզիկը, թէ սրա Ձիզիկը:

ԼՕՄ.—Ստեպան Ստեպանիչ, աղաչում եմ,  
միայն այս ասացէք. ձեր Միզիկի ներքևի ծնո-  
տը կարճ է վերևից թէ չէ:

ՉՈՒԲ.—Թէկուզ հէնց այդպէս լինի, մեծ  
բան... չէ՞ որ ամբողջ նահանգում նրանից լաւ  
շուն չը կայ և այլն...

ԼՕՄ.—Բայց չէ՞ որ իմ Ձիզիկը նրանից  
լաւ է, ազնիւ եղէք, ճիշտն ասէք:

ՉՈՒԲ.—Մի յուզէք, թանկագինս, թոյլ տը-  
ւէք. ձեր Ձիզիկը ունի իր լաւ կողմերը, նա մա-  
քուր ցեղից է, ամուր ոտքեր ունի և մասամբ  
նորին, բայց այդ շունը, եթէ ուզում էք իմա-  
նալ, գեղեցիկս, ունի երկու մեծ պակասութիւն.  
պառաւ է և կարճ դունչ ունի:

ԼՕՄ.—Ներեցէք, իմ սիրտը թրթռում է...

Փաստեր վերցնենք... յիշում էք Մարուսինի ա-  
րօտատեղում իմ Ձիզիկը վազում էր իշխանի  
Լուլուկի հետ հաւասար, իսկ ձեր Միզիկը մի  
ամբողջ մղոն յետ էր մնացել:

ՉՈՒԲ.—Այո, յետ էր մնացել, որովհետև իշ-  
խանի շնապանը նրան մգրախով խփեց:

ԼՕՄ.—Եւ տեղն էր, ուր իշխանը շները աղւէսի  
յետևից են վազում, իսկ ձեր Միզիկը ոչխար-  
ների:

ՉՈՒԲ.—Սուտ է... Ես, հոգիս, տաքացող  
մարդ եմ և ա՛նա այդ պատճառով խնդրում եմ  
վերջացնենք: Խփեց, այո, որովհետև ամենքն էլ  
նախանձում են ուր իշխանը շներին նայելով: Այո,  
նախանձոտ են ամենքը: Դուք էլ, աղաս, ան-  
մեղ չէք, հէնց որ տեսաք մէկի շունը ձերինից  
լաւ է, իսկոյն սկսում էք այս և այն, մասամբ  
նորին: Ես լաւ եմ յիշում:

ԼՕՄ.—Ես էլ եմ յիշում:

ՉՈՒԲ.—(Տնազելու) Ես էլ եմ յիշում... Ի՞նչ  
էք յիշում:

ԼՕՄ.—Միրտս... Ոտքս... էլ չեմ կարող:

ՆԱՏ. Ս.—(Տնազելու) Միրտս... Ի՞նչ որսորդ  
էք դուք. դուք տանը պիտի նստէք և ոչ թէ աղ-  
ւէսների որսի դուրս գաք. սիրտս...

ՉՈՒԲ.—Եւ իսկապէս, ի՞նչ որսորդ էք դուք:  
Չեր այդ սրտի թրթռոցներով տանը պիտի նըս-  
տէք և ոչ թէ ձիու վրայ ձոճէք: Դեռ լաւ է եթէ

որս անէիք, ապա թէ ոչ դուք նրա համար էք միայն որսի գնում, որ վիճէք և ուրիշները շր- ներին խանգարէք, մասամբ նորին: Ես զրգուող եմ, աւելի լաւ է թողնենք այս խօսակցութիւ- նը: Դուք իսկապէս որ որսորդ չէք:

ԼՕՄ.— Իսկ դուք որսորդ էք: Դուք էլ նրա համար էք գնում, որ քամուէք իշխանին և ինտ- րիգներ սարքէք: Սիրտս... Դուք ինտրիգան էք...

ՁՈՒԲ.— Ի՞նչ: Ես ինտրիգան եմ: (Գողա- լով) Լռեցէք:

ԼՕՄ.— Ինտրիգան:

ՁՈՒԲ.— Լակոտ: Քոթնի:

ԼՕՄ.— Պառաւ մուկը: Ճիգլիթ:

ՁՈՒԲ.— Լուիր, ապա թէ ոչ հրացանով կը տամ, կը սատկեցնեմ:

ԼՕՄ.— Բոլորին էլ յայտնի է, որ... ճի, սիր- տըս... որ ձեր հանգուցեալ կինը ծեծում էր ձեզ: Ոտքս... սիրտս... ոտքս... ընկնում եմ, ընկ- նում եմ...

ՁՈՒԲ.— Իսկ դու քո աղախնի փէշերի տա- կըն ես մտնում:

ԼՕՄ.— Ա՛յ, ա՛յ, սիրտս պայթեց... Ուսս ընկաւ... Ո՛ւր է ուսս... մեռնում եմ... (ընկ- նում է քազկաթոռի վրայ) Բժիշկ (Ուշաթափում է):

ՁՈՒԲ.— Երեխայ, լակոտ... Վատ եմ զգում ինձ... ուշքս գնում է... (ընկնում է թիկնաթոռի վրայ):

ՆԱՏ. Ս.— Ի՞նչ որսորդ էք դուք, դուք ձիու

վրայ նստել էլ չէք կարող: Հայրիկ, սրան նա- յիր, նայիր: Իվան Վասիլևիչ. նա մեռաւ...

ՁՈՒԲ.— Վատ եմ, շունչս կտրեց... օդ... օդ...

ՆԱՏ. Ս.— Նա մեռաւ... (Թափահարելով) Ի- վան Վասիլևիչ... Իվան Վասիլևիչ, ի՞նչ արինք մենք, հա՛... Նա մեռաւ... (քազկաթոռի վրայ ըն- կնելով) Բժիշկ, բժիշկ:

ՁՈՒԲ.— Օ՛խ... ի՞նչ է պատահել... ի՞նչ է, հա՛...

ՆԱՏ. Ս.— (տնքալով) նա մեռաւ... մեռաւ...

ՁՈՒԲ.— Ո՞վ մեռաւ: (Նայելով Լօմովին): Եւ իսկապէս, որ մեռաւ: Տէր Աստուծ, Չ՛ւր, բժիշկ... (Մօտեցնում է նրա քերանին քաժակով ջուր) Խմեցէք. չէ, չի խմում... կը նշանակի մե- ռաւ և մասամբ նորին... Անբաղդ մարդ եմ ես, ի՞նչու չեմ ճակատիս ատրճանակ արձակում, ի՞նչու չեմ մինչև այժմ մորթել ինքս ինձ... ի՞ն- չու եմ սպասում... տէք ինձ դանակ, ատրճա- նակ տէք ինձ... (Լօմովը շարժում է) կենդա- նանում է, կարծես... Ձուր խմեցէք... Ահա այդպէս:

ԼՕՄ.— Աչքերս շեշտակի են տալիս. ո՛ւր եմ ես:

ՁՈՒԲ.— Պսակեցէք շուտով և թող սատա- նան տանի ձեզ. նա համաձայն է: (Միացնում է երկուսի ձեռքերը) Նա համաձայն է և մասամբ

նորին: Օրհնում եմ ձեզ և այլն... Միայն թէ հանգիստ թողէք ինձ:

ԼՕՄ.—Ա՛հ, ի՞նչ... Ո՞ւմ:

ԶՈՒԲ.—Նա համաձայն է: Դէ, համբուրեցէք և ստանան ձեզ հետ:

ՆԱՏ. Ս.—Նա կենդանի է... Այո, այո, ես համաձայն եմ:

ԶՈՒԲ.—Համբուրեցէք:

ԼՕՄ.—Ի՞նչ, ս՛ւմ... (համբուրելով Նատալիա Ստեպանովնային) Շատ ուրախ եմ: Թոյլ աւէք, բանն ի՞նչու՞ն է: Ա՛հ, հասկանում եմ... Սիրտս... աչքերս... ես բաղդաւոր եմ, Նատալիա Ստեպանովնա... (Համըռուում է ձեռքը) Ոտքս ընկաւ...

ՆԱՏ. Ս.—Ես էլ բաղդաւոր եմ:

ԶՈՒԲ.—Օ՛ր, կարծես ուսերիցս սար ընկաւ:

ՆԱՏ. Ս.—Գոնէ հիմա լինի, համաձայնեցէք, որ Զիզիկը վատ է Միզիկից:

ԼՕՄ.—Լաւ է:

ՆԱՏ. Ս.—Վատ է:

ԶՈՒԲ.—Ահա սկսում է ընտանեկան բաղդաւորութիւնը:

ԼՕՄ.—Վատ է:

ԶՈՒԲ.—Շամպայն, շամպայն:

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

ԷՍ ԷԼ ՔԵՁ 200,000

Կովեդ. 3 արար. Մեամիցկու

Փոխադր. Գ Ր Ա Ի Ե Տ Ե Ա Ն

Настоящая пьеса, подъ заглавіемъ „Вотъ тебѣ и 200,000“ ком.-фарсъ въ 3 д. Мясническаго пер. Аветяна разрѣшена Намѣстникомъ ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА на Кавказѣ, для представленія на сценахъ края. (Отзывъ Канцеляріи за № 24537).

29 Ноября 1908 г. г. Тифлисъ

И. Д. Предсѣдателя Комитета (подпись)

## Ա Ն Չ Ի Ն Ք

ԱՆՆԱ-ԽԱԹՈՒՆ, այրի կին, 65 տարեկան  
 ՕՎԱՆԷՍ-ԲԷԳ ԿԱՐԱՊԵՏՈՎ, նրա որդին, 40 տա-  
 րեկան

ԿԱՏԻՆԿԱ, սրա քոյրը  
 ՄԻՆԱՅԷԼ-ԲԷԳ ՄԱՄԻԿՈՆՈՎ, Կարապետովի պաշ-  
 տօնակիցը, 45 տարեկան

ՎԱՌԻՆԿԱ-ԲԱՋԻ, նրա կինը  
 ՄԱՆԻՉԿԱ, նրանց աղջիկը, 20 տարեկան

ՍԱՐԳԻՍ-ԲԷԳ } Օվա էս-Բէգի ընկերները, չի-  
 ՄԱԿԱՐ-ԳԷԳ } նոյնիկներ  
 ՈՒՆԱՆ-ԲԷԳ }

ՍԱՌԱ-ԽԱԹՈՒՆ, չինոյնիկի այրի, 40 տարեկան  
 ԼԻՉԱ, նրա աղջիկը, 20 տարեկան

ՄԱՐԻԱՄ-ԲԱՋԻ, չինոյնիկի այրի, 42 տարեկան  
 ՍՕՆԻՉԿԱ, նրա աղջիկը, 21 տարեկան

ԳՐԻԳՈՐ-ԲԷԳ ՆԱՉՐԻԲԷԳՈՎ, գրագիր  
 ԿԱՐԱՊԵՏ-ԲԷԳ ԴԱՆԻԷԼԲԷԳՈՎ, Կարապետի զըլ-  
 խաւորը, ղեներալ

ՏՕՏՈՄԵԱՆ, «Լրագրեր» լրագրի թղթակիցը  
 ԱԻԵՏԻՔԵԱՆ

ԳԱՍՊԱՐ, խոհարար Կարապետոյնի մօտ  
 Սպասաւոր

Երկու պարոն (անխօս)

Ա. արարւածում Աննա-Պաթունը վրացնակ է հագ-  
 նւած, երկրորդից—եւրոպական:

Գործողութիւնը կատարւում է գաւառական մի-  
 յետ ընկած քաղաքում:

Բոլոր չինոյնիկները հագած են վիցմունդիւններ,  
 իսկ բալի ժամանակ պաշտօնական ֆրակներ: Կանայք  
 հայկական կամ վրացնակ շորերով են: Ծառան գիւղա-  
 ցու: Սպասաւորը ֆրակով:

Բէգ բառը գործ է ածւում այն մտքով, ինչմըտ-  
 քով որ հայկական քաղաքներում անւանում են ամեն  
 մի չինոյնիկի կամ հասարակ գրագրի:

... և արտաբերելու համար հարկադրված է լինել  
... արտաբերելու համար հարկադրված է լինել  
... արտաբերելու համար հարկադրված է լինել

... և արտաբերելու համար հարկադրված է լինել  
... արտաբերելու համար հարկադրված է լինել  
... արտաբերելու համար հարկադրված է լինել

... և արտաբերելու համար հարկադրված է լինել  
... արտաբերելու համար հարկադրված է լինել  
... արտաբերելու համար հարկադրված է լինել

... և արտաբերելու համար հարկադրված է լինել  
... արտաբերելու համար հարկադրված է լինել  
... արտաբերելու համար հարկադրված է լինել

... և արտաբերելու համար հարկադրված է լինել  
... արտաբերելու համար հարկադրված է լինել  
... արտաբերելու համար հարկադրված է լինել

... և արտաբերելու համար հարկադրված է լինել  
... արտաբերելու համար հարկադրված է լինել  
... արտաբերելու համար հարկադրված է լինել

Ա. Ա Ր Ա Ր Ի Ա Ծ

Համեստ կահատրուած սենեակ: Դռներ, պատուհաններ, առաջին սլանի պատուհանի վրայ ծաղիկներ:

ՏԵՍԻԼ 1

ԱՆՆԱ-ԽԱԹՈՒՆ և ԿԱՏԻՆԿԱ

ԱՆ.-Խ.—(Նստած, զուլպա է գործում)—Կատինկա, Կատինկա... Աղջի Կատինկա...

ԿԱՏ.—(նրսից)—Ի՞նչ ա, մայրիկ:

ԱՆ.-Խ.—Մի սհաթին մտիկ արա, քանիսն օ:

ԿԱՏ.—(նրսից) Չորսը:

ԱՆ.-Խ.—Ի՞նչ ես ասում, աղջի, չորսը... Բա էս ի՞նչի Օվանէսը չեկաւ ինչրի էս վախտ, մի բան չըլնի պատահած:

ԿԱՏ.—(նուրս գալով)—Ի՞նչ պիտի պատահի, երևի դէս ու դէն մտիկ անելով, դալիս ա իրա համար էլի:

ԱՆ.-Խ.—Չէ, մի բան ա պատահել, թէ չէ ամեն օր սհաթի իրեքին ա գալի:

ԿԱՏ.—(պատուհանին ժտենալով) Ա՛յ, Իվան Պետրովիչն ա գալի. բարով Իվան Պետրովիչ: Ի՞նչ: Մերսի: Ի՞նչպէս ա ձեր առողջութիւնը: Լաւ օ:

Շատ լաւ: Սօնիչկան սնց ա, հը, նոր շլեապա ա ստացել Թիֆլիսից, լաւն ա... անպատճառ, անպատճառ էս երկու օրը կը գամ-տեսնեմ: Ի՞նչ ա, ծաղիկներով:

Ան.-Խ.—Աղջի, կատինկա, մի հարցրու, սըր ա ախպէրդ է:

ԿԱՏ.—Իվան Պետրովիչ, Իվան Պետրովիչ... (պատուհանից դուրս հանելով գլուխը) ներողութիւն, աղբօրս չէք տեսել: Մերսի: Չի տեսել, մայրիկ: Չէ, մի տես մեր Սօնիչկան սնցն ա է, մարդը հարիւր մանէթ ա ստանում, ամա նա տարեկան չորս շլեապա ա առնում, իսկի վէջին չի: Իմ աղբէրս հօ հէնց մի տարի ա՛ կառնեմ հա՛ կառնեմ անելով, ինձ խաբում ա:

Ան.- Խ.—Կառնի էլի...

ԿԱՏ.—Իշտահ պահիր: Հրէս ամառը պրծաւ, ես հլա մինչև օրս էլ հին շլեապով եմ: Դէ, ասա՛, մայրիկ, էլ սր սարսաղը ինձ վրայ ուշադրութիւն կը դարձնի:

Ան.- Խ.—Ասենք, տղամարդիկը մօղից բան չեն հասկանում: —

ԿԱՏ.—Ներեցէք, շատ էլ լաւ են հասկանում: Եթէ հասկանալիս չը լինէին, ես հիմա շատուց կը լինէի մարդու գնացած:

Ան.- Խ.—Մի սպասիր հալա, հէնց որ Օվանէսին դուրսդուրը բարձրացրին թէ չէ, շլեապա էլ կուսենաս, հալա ծածկոց էլ:

ԿԱՏ.—Է՛հ, էտէնց ասելուցդ միշտ էն թուրքի մասալան ա միտս ընկնում: (Նստում է մօր կողքին) Մայրիկ, այսօր ես թուղթ բաց արի, երեք անգամին էլ ինժիններ դուրս եկաւ:

Ան.- Խ.—Ինժիներ. էդ սիվա... մենք ծանօթ ինժիններ չունենք, որ...

ԿԱՏ.—Էդ ոչինչ, որ չունենք: Մէկ էլ տեսար մէկը դուրս պրծաւ ու ինձ ուզեց: (Գրպանից խաղաթղթեր հանելով) Ուզում ես, մէկէլ բացեմ:

Ան.- Խ.—Բաց արա՛, հոգիս, բաց արա, մայրիկը քեզ դուրբան: (Ուզում է բացել, մտնում է Օվանէս-բէգը):

## ՏԵՍԻԼ 2

Առաջիններ և Օվանէս-Բէգ

Օվ. Բ.—(ներս վազելով կանգնում է դռներում) Չեն տեսնում: (Դէն է ձգում պօրտֆէյը, պիսարկը եւ վերարկուն: Մայրիկ, քոյրիկ...

Ան.- Խ. } — Օվանէս ջան:

ԿԱՏ. } — Եղբայր ջան:

Օվ. Բ.—Թողէք, թողէք մի շունչ քաշեմ... վազէ-վազ գլուխ կտարելով, թռչելով եմ եկել... շունչս կտրուում է... (Ընկնում է ըսզկաթոռի վրայ):

ԱՆ.-Խ.—Ախր ի՞նչի էիր վազում որ: Դէ մի աստ:

ՕՎ. Բ.—Ինչո՞ւ... (վեր թռչելով) Մայրիկ ջան, քոյրիկ ջան, ուռում բղաւեցէք, ուռում... հա՛ հա՛, հա՛...:

ԱՆ.-Խ.—Կատինկա ջան, էս տղան գժւել ա, քաջքով ա ընկել:

ԿԱՏ.—Իսկ որ գժւել ա, մայրիկ ջան:

ՕՎ. Բ.—Ե՞ս եմ գժւել, հա՛, հա՛, հա՛... էս տեսել էք: /

(Բացում է ձեռքում ծմլտած մի լոբրթ տպած թուղթ եւ ցոյց տալիս) Տեսել էք... ուռում... եկէք, պաշեմ, պաշպշեմ ձեզ է...

ԱՆ.-Խ.—Դէ մի աստ տեսնենք է, ոտճիկդ են աւելացրել, թէ ի՞նչ ա...

ՕՎ.-Բ.—Ի՞նչ ոտճիկ, ի՞նչ բան... 200,000ը ինձ ա ընկել է, 200,000՝ը...

ԱՆ.-Խ.—200,000...ախ... (Ընկնում են ջազ-ԿԱՏ. } կաթոռների վրայ):

ԱՆ.-Խ.—Վայ, ջաններդ մեռնեմ... մեռայ...

ԿԱՏ.—Ես էլ, մայրիկ ջան, ես էլ եմ մեռնում...

ՕՎ.-Բ.—(ընկնում է ջազմոցի վրայ եւ թռչ-թով իրան հովհարում) Իմ բանն էլ բուրդ ա, սատանան տանի: Ո՛ւՓ... Մայրիկ ջան, կատինկա ջան, միք մեռնիլ, էդ սկի հարկաւոր չի... Աստուած վկայ, սկի հարկաւոր չի:

ԱՆ.-Խ.—Ադա՛, սնց չը մեռնեմ, բա 200,000 ես ասում, ախր սնց չը մեռնեմ, սնց ա կարելի:

ԿԱՏ.—Բա իմ սիրտը, քիչ ա մնում դուրս պրծնի, Աստուած վկայ, այ, դուրս կը պրծնի...

ՕՎ.-Բ.—Էդ ոչինչ, կանցկենայ, ես էլ քիչ մնաց սրտածաք ըլնէի... հէնց որ նոմերս տեսայ տպած հեռագիրների մէջը, էն սհաթին ամեն ինչ աչքերիս սկին տաւ, աչքերս մթնեցին, գլուխս պտուտ եկաւ... (վեր է թռչում եւ սենեակի մէջ թռչկոտալով երգում) 200,000, 200,000, 200,000...

### ՏԵՍԻԼ 3

Առաջիններ և ԳԱՍՊԱՐ

ԳԱՍ.—Ախր բողբաշը խարաբ էլաւ, է, հաց էք ուտելու, թէ չէ:

ՕՎ.-Բ.—Ադա, Գասպար, արի ըստեղ, մին պաշ անեմ քեզ:

ԳԱՍ.—Էդ կարելի ա, խի չի կարելի, ամա թող որ մին պուշներս սրբեմ, չունքի խիար ի ծամում: (Սըրբում է եւ համբուրում) էս որ աղէքը խմում են, խի լաւն են դառնում:

ՕՎ.-Բ.—Էդ էս եմ խմածը, այ սարսաղ, սփաթդ կտրւի, իմ քէֆը քեօք ա, ուրիշ ոչինչ: Իսկի բան հասկանում ես. էս օր 200,000 մանէթ եմ տարել է, 200,000... (Ձեռքը զրպանն

է դնում, մի ոտքը առաջ եւ յաղթական գլուխը  
յետ ձգում):

ԳԱՍ.—(պըպըզելով) 2000... բւ... էդ ի՞նչ  
սարսաղի ես պոկել սր...

ՕՎ.-Բ.—Խելքի տոպրակ, թուղթ չեմ խա-  
ղացել որ, վիզը շնի բիւթով, վիզը շնի...

ԳԱՍ.—Վիզը շնա... բա էդքան փող կըլնի  
սր...

ԱՆ.-Խ.—Ադա Գասպար, ուրիշի չասես հա,  
թէ չէ տուն կը թափւեն:

ԳԱՍ.—Բա գիժ եմ բերանս բաց անեմ, բան  
չունեմ: Դէ շնորհաւոր ըլնի, բարով վայելես:

ՕՎ.-Բ.—Շնորհակալ եմ, շնորհակալ: Մայ-  
րիկ ջան, հիմի Գասպարին մի արբեշումի ար-  
խալուղ կը սագի հա:

ԳԱՍ.—Ձանիդ մեռնեմ, շատ շնորհակալ  
եմ: (Համըռուով է նրա ուտը):

ԿԱՏ.—Բրդի արխալուղը լաւ է, եղբայր  
ջան:

ԳԱՍ.—Սող ըլես, Կատինկա խանում, շատ  
շնորհակալ եմ:

ԱՆ.-Խ.—Բրդինը շուտ խարաբ կանի, չթինը  
լաւ ա, չթինը... համ պինդ կըլնի, համ էլ կա-  
րելի ա լաւալ:

ԳԱՍ.—Ապրած կենաս, Աննա խաթուն, շատ  
եմ շնորհակալ է... բա հըմի ի՞նչ էք ասում,  
սուփրան գցեմ:

ԱՆ.-Խ.—Բա ինչ ա որ, գցիր:

(Գասպարը զնում է):

—

ԱՆ.-Խ.—Մի բան ասեմ, Օվանէս ջան, բալ-  
քա սխալ ես իմացել, հաւատալս ինչ որ չի գա-  
լիս:

ՕՎ.-Բ.—Ես էլ չէի հաւատում, համա էս  
թուղթը հաւատացրեց: Ուպրաւենից գնացի դէմ  
ու դէմ Գոսուղարսովէնի բանկը...

ԿԱՏ.—Ձեռաց ամենքին էլ ասացիր:

ՕՎ.-Բ.—Մենակ կասսիրին, էն էլ շատ թա-  
քուն, խօսք տւաւ որ ոչովի չասի:

ԱՆ.-Խ.—Ես սկի չեմ հաւատում, ով գիտա  
նոմերը սխալ են գրել:

ՕՎ.-Բ.—Է՛հ, դուք էլ է... իմ բիւթի նո-  
մերը սրն ա:

ԱՆ.-Խ.—12.

ԿԱՏ.—Սերիան 23450

ՕՎ.-Բ.—Դէ, տեսէք, դուզ ա թէ չէ: (ցոյց  
է տալիս):

ԿԱՏ.—Հա, հա, Օվանէս ջան:

ՕՎ.-Բ.—Հիմի հաւատում էք:

ԿԱՏ.—Հա, հա, եղբայր ջան, էդ ի՞նչ լաւ  
բան եղաւ: Եղբայր ջան, ես ուզում եմ ինժի-  
ների գնալ:

ՕՎ.-Բ.—Ուզում ես, երեքին միասին գնա:  
Մայրիկ ջան, բա էսէնց օրը ինչով ուրախա-

նանք. զրկիր մին բուժիլ շամպանսկի բերի:

ԱՆ.-Խ.—Մի բուժիլ կարմիր գինի ունենք,  
Օվանէս ջան:

Օվ.-Բ.—Բա էդ սնց ա կարելի հացից յե-  
տոյ կարմիր գինի խմել. հարուստները շամպան-  
սկիյ են խմում:

ԿԱՏ.—Դէ թող անանաս էլ բերի:

Օվ.-Բ.—Դէ, ըստեղ—մեր քաղաքում ա-  
նանաս չի լինի, այ թիֆլիս գնանք ապրելու, ըն-  
տեղ ամեն բան կը գտնենք:

ԿԱՏ.—Բա ինձ թիֆլիս չէս տանի, այնտեղ  
երևի շատ ինժիններն են կան:

Օվ.-Բ.—Բա ի՞նչի չեմ տանի որ... (կան-  
չում է) Գասպար, Գասպար...

#### ՏԵՍԻԼ 4

Առաջիններ և ԳԱՍՊԱՐ

Օվ.-Բ.—Գասպար, առ էս փողը, գնա Մը-  
կրտումովի դուքանը, սաս մի բուժիլ շամպան-  
սկի տան քեզ բեր:

ԳԱՍ.—Էդ ի՞նչ ասիր:

Օվ.-Բ.—Շամպանսկիյ:

ԳԱՍ.—Շալպանսկի՞ն:

Օվ.-Բ.—Շամպանսկիյ, շամ... պան... սկիյ...

գիլի մէկ ա, գլխու կընկնեն: Վազ տո՛ւ:  
(Գասպարը գնում է):

Օվ.-Բ.—Մայրիկ ջան, իսկի կարող էի՞ր մը-  
տածել, որ էս տեսակ բաղդաւորութիւն պիտի  
գայ:

ԱՆ.-Խ.—Մի ասիլ Օվանէս-ջան, սիկ էր մը-  
տածում որ... ընչըի հիմի էլ խելքս գլուխս չի  
գալի:

ԿԱՏ.—Հիմի ինչքան նախանձողներ կըլնեն  
է... մենակ հէնց թորոսողները,—աչքերը դուս  
կը գայ. կը տրաքւեն նախանձից. նրանց Վա-  
րինկան հօ, շատ էր մեծ-մեծ խօսում, թէ 10,000  
պրիզան ունի, դէ գնա հիմի ու ճաքի:

Օվ.-Բ.—Է՛հ, 10,000-ը ինչ պրիզան ա որ,  
աղբատի... Չէ, ամենքից շատ իմ նաչալնիկն  
ա զարմանալու... «Կարապետով, էս դօկլաղբ  
կազմեցէք», «Կարապետով, արտագրեցէք էս  
խնդիրը»... և յանկարծ էդ Կարապետովը 200,000  
ս տանում: Հա՛, հա՛, հա՛... Մայրիկ ջան, չէս  
գտնում, որ մեր տանը շատ նեղածք ա:

ԱՆ.-Խ.—Չէ, ինչ ա որ...

ԿԱՏ.—Ի՞նչպէս թէ չէ: Ես զարմանում եմ  
թէ էս սնց ենք մենք մինչև հիմա կարողացել  
ապրել էստեղ, ցածի յարկում. մուտքի դուռը  
կեղտոտ, հոտած...

Օվ.-Բ.—Էդ զահրումար խոհանոցի հոտն էլ

դիփ սենեակներու մն ան Զէ, պէտք ա տեղափոխուել, էստեղ ապրել չի ըլնի: Ես կարծում եմ, որ Գլօրեանսկի քուչումը բռնենք, լաւ կանենք, լալաբէզովի տունը:

ԿԱՏ.—Շատ էլ լաւ կը լինի: (Պատուհանից նայելով) Այս ի՞նչ ա, էնքան խալիս են հաւաքուել պատուհանի առաջ—քուչումը: Կորէք էստեղից, կորէք: (Ծածկում է):

ԱՆ.-Խ.—էդ երևի էն մեր խելքը պակասն ա գուռնա փշել քուչումը, եկել են թամաշի:

### ՏԵՍԻՒ 5

Առաջիններ և ԳԱՍՊԱՐ

ԳԱՍ.—Հէնց էն ա վազի տալի որ էն զաղը բերեմ, մաքիցս թռաւ, թէ ինչ ասիր, ես էլ մեր Գիւրջանին հարցրի, թէ որ մարդ 2000 ա տանում, ուրախութիւնից ի՞նչա խմում, նա էլ թա ջէջի արաղ:

ԱՆ.-Խ.—Ես հէնց գիտէի, որ պէտք ա խառնես մէկ մէկու. սուփրան գցել ես:

ԳԱՍ.—Է՛հ թողում են որ գցեմ, էնքան խալիս ա հաւաքուել, մինը հարցնում ա, էն մեկէլը հարցնում ա, դիփին էլ պատասխան պէտմա տաս, որ աղէն էսքան ա տարել. չը թողեցին էլ, որ գնամ արաղը բերեմ:

ՕՎ.-Բ.—Շամպանսկիյ ասեցի, արաղ չէ, այ սարսաղ:

ԱՆ.-Խ.—Արի, արի գնանք, գրեմ, դու գնա բեր, սուփրան ես կը գցեմ: (Գնում է Գասպարի հետ):

ՕՎ.-Բ.—Էս վերջինն ըլի թող, էգուց լակէյ ու պովար եմ բռնելու: Էն պասաժի քուչումն էլ լաւ տներ են տալի բրեհով:

ԿԱՏ.—Զէ, Գլօրեանսկի քուչինը լաւ ա, եղբայր, քաղաքի առաջին քուչան ա, մէկ էլ որ դիփ մագազինները առաջիդ են, թատրոնը մօտիկ... Մէկէլ էստեղ որ ապրենք՝ պէտք ա ձիաներ էլ պահես:

ՕՎ.-Բ.—Էն էլ 2 ջուխտ եմ առնելու, մի ջուխտը սև, մէկէլը սպիտակ, այ մեր զալալի ձիանոց նման:

ԿԱՏ.—Զէ, եղբայր ջան, մոխրագոյնը լաւ ա, էնէնց պողպատի ռանգին:

ՕՎ.-Բ.—Ի՞նչ կայ որ, 200,000-ով ոսկու ռանգին էլ ձի կառնուի: Կարեթը Թիֆլիսից եմ բերել տալու, բեզինի շիներով:

ԿԱՏ.—Լանդօն լաւ ա, լանդօն...

ՕՎ.-Բ.—Դէ թող լանդօ ըլնի: Է՛յ, Մակիչ, լանդօն լծիր, մոխրագոյն ձիաները հա... (Ոտքերը աթոռի վրայ դնելով):

ԿԱՏ.—Բա էդ ի՞նչի ես ոտերդ աթոռին դրել:

Օվ.-Բ.—Հանդոյով մանգալն եմ սովորում: Բա մեր գալաւին չէս տեսել ոնց ա ման գալիս. էսէնց ձգուում ա միշտ: Դու մին ֆուրաշկաս ինձ տուր ու կողքիցս մտիկ արա... (զխին է դնում ու ներկայացնում): Հը, ոնց ա... Թաշախուստին ա, չէ:

ԿԱՏ.—Շատ... Միայն մի քիչ զուլիգ է- նէնց ծագորու. / մի քիչ էլ... այ էդէնց: Ջան, ջան... շատ լաւ ա... (ծափ է տալիս) Սպասիր, եղբայր ջան, մի ես էլ նստեմ կողքիդ: (նըստում է) Ի՞նչ ա, նման չէմ արիստոկրատի:

Օվ.-Բ.—Համարեա թէ, բայց իմ թահրը աւելի թաշախուստին ա: Իէ, հիմի հէնց գիտանք, լանդօն ենք նստել ու Դվօրեանսկի քուչովը քըշում ենք:

ԿԱՏ.—Չէ, աւելի լաւ ա, արի Թիֆլիսի Գալաւինսկի քուչովն անց կենանք:

Օվ.-Բ.—Չէ, չէ, էստեղ լաւ ա: Բա չէս իմացել, որ ասում ա, լաւն էն ա գիւղում առաջինն ըլնես, քան քաղաքում վերջինը: Ես էստեղ միշտ խալխի ուշադրութիւնը ինձ վրայ կը դարձնեմ, ամա Թիֆլիս ու էլիս էլ չեն մտիկ տայ: Իէ, քշում ենք Դվօրեանսկի քուչով է- նէնց շուտ, էնէնց շուտ... ոնց որ...

ԿԱՏ.—Ոնց որ քամին... ձիաները վեր վեր են թռչում, կուչերի աչքերը այրւում են, բեղինի շիները տակից ցեխն ա դէս ու դէն շրպը-

տում: Եղբայր ջան, քեզ բարև են տալիս:

Օվ.-Բ.—Ո՞վ:

ԿԱՏ.—Էն քո շինովնիկներից-Մակար բէգը:

Օվ.-Բ.—Մակարը... (անտարբեր զխարկը վերցնելով) բարև ձեզ:

ԿԱՏ.—Չէ, դու, կարծես, հէնց նարուստ ծնւած լինես:

Օվ.-Բ.—Մի կսմթիր ինձ, քոյրիկ, ես հօ երազում չեմ տարել այդ փողը:

ԿԱՏ.—(կսմթելով) Չէ, չէ...

Օվ.-Բ.—Օ՛յ... հերիք ա, հիմի ես էլ եմ հաւատում, որ երազումս չեմ. էս ո՞վ ա որ ինձ բարևում ա:

ԿԱՏ.—Քո նաշալնիկը— գեներալ Կարապետ բէգը:

Օվ.-Բ.—(արագ ոտքերը գետին դնելով) Պատիւ ունիմ, ձերդ գերագանցութիւն: Լաւ ա չէ, ձիանքը քեզ քշում են, դու թռչում ես, ծանօթ-անծանօթ դիփ քու մասին են հարցնում էդ ո՞վ ա, էդ ո՞վ ա... էդ մեր Օվանէս-բէգ Խան— Կարապետովն ա:

ԿԱՏ.— Խան— Կարապետով. բայց դու ոնց Խան կը դառնաս:

Օվ.-Բ.—Ի՞նչ կայոր. կը գնամ Պարսկաստան, էստեղ փողով կարելի ա խանութիւն ձեռք բերել: Մի 500 մանէթ ա էլի, խանութիւնը կառնեմ, պրծաւ գնաց: Էնէնց թղթերի տակ ձեռք

քաշեին էլ լազաթով կըլնի. Его благородіе Օվա-  
նէս-բէդ Խան-Կարապետով:

### ՏԵՍԻԼ 6

Առաջիններ և ԱՆՆԱ ԽԱԹՈՒՆ

ԱՆ.-Խ.—Դէ, սուփրան պատրաստ ա, շու-  
տով հաց կուտենք: Էդ Խնչի էք էդպէս ոտ-  
ներդ աթոռի վրայ դրել:

ԿԱՏ.—Թող արա, մայրիկ, մենք լանդոյով  
ման ենք գալիս:

ԱՆ.-Խ.—Ի՞նչ լանդո, քանի որ դիւանի վը-  
րան էք նստել:

ԿԱՏ.—Էդ մենք փորձ են անում. աթո-  
ռով չը սովորեցի ես պարգալը:

ՕՎ.-Բ.—(վեր կենայրով) Ղորթ որ լաւ բան  
ա հարստութիւնն է... ինչ որ ուզես, դուրու-  
ղումդ հազիր ա: Մայրիկ ջան, Կատինկան ա-  
սում ա լանդո առնենք, Խնչ ես կարծում:

ԱՆ.-Խ.—Ինչո՞ւ չառնես, կը պսակես՝ կառ-  
նես:

ՕՎ.-Բ.—Ի՞նչ է, չը պսակածները լան-  
դոյով ման չէն գալիս:

ԱՆ.-Խ.—Չէ, լանդոն մարդ ու կնգայ հա-  
մար ա:

ՕՎ.-Բ.—Ա՛յ, Կատինկա, տեսնում ես... քիչ  
էր մնացել լանդո առնէինք ու խայտառակէինք:

Չէ, քնաս բարով, լանդո:  
ԱՆ.-Խ.—Ի՞նչի մնաս բարով, կը պսակես՝  
կառնես:

ԿԱՏ.—Ի՞նչ ես ասում, մայրիկ, նա ինչ  
փեսացու ա՞ որ, ամեն ժամանակ մի կըպէս յի-  
մար բան կասես: Մարդը բոլորովին ժանգո-  
տել ա, դու նրան ուղում ես պսակէս:

ԱՆ.-Խ.—Իսկի էլ չի ժանգոտել, ուրիշնե-  
րից Խնչով ա պակաս, համ հարուստ, համ գե-  
ղեցիկ:

ՕՎ.-Բ.—Չէ, ուշացել եմ, մայրիկ ջան:

ԱՆ.-Խ.—Ղորթ ա, մի քիչ չաղացել ես, բայց  
ուրիշ բաներում շատ էլ նախանձելու փեսացու  
ես: Մէկ էլ որ ինչացու ա լղար փեսացուն, մէկ  
էլ տեսար—վեր ընկաւ ու մեռաւ, էն ա որ դու  
ես՝ պինդ ես:

ԿԱՏ.—Մայրիկ, դու մոռանում ես, որ 50-ին  
մտացել ա:

ԱՆ.-Խ.—Սուտ ես ասում, 40 տարեկան ա:

ԿԱՏ.—Բա գլխին մտիկ չէս տալիս, էդ ո՞ր  
աղջիկը կը գնայ էդպէս քաշալին:

ԱՆ.-Խ.—Ոչինչ, փողը ամեն տեսակի քա-  
շալութիւն կը ծածկի: Մի վախիր, ինքն էլ կը  
պսակի, քեզ էլ մարդու կը տայ: Չէ, Օվանէս  
ջան, որդի, անպատճառ պսակիր:

ՕՎ.-Բ.—Ես, ասենք, մայրիկ, էս եմ մտա-  
ծում, որ բան ա գեներալը եկաւ, տանը որ տան-

տիկինն չը կայ, մի տեսակ բանը սաղ չի գայ. հարուստ մարդ, երկու ջուխտ ձի, լաւ տուն, ու տանտիկինն չը կայ: (Մօրը)—Ես կարծում եմ, որ կարող եմ դուր գալ, չէ՞...:

Ան.-Խ.— Էն էլ էնէնց... Ա՛յ, կը տեսնես, քանիսն են մէկ-մէկու ձեռքից քեզ խելու:

Օվ.-Բ.— Դձրթ:

ԿԱՏ.— Որ բան է պսակելու լինես, չը մոռանաս պարիկմախերին ասես, որ քաջալիդ համար մի բան շինի— ծածկես:

Օվ.-Բ.— Է՛հ, դու էլ, ասենք, յիմարութիւններ ես դուրս տալիս, սովա իմանում իմ քաջալութիւնը ինչից ա, բնութիւնից թէ տարիքից: Հիմիկէլայ ջահելները դիփ էլ քաջալ են: Միայն մի բան ա ինձ շատ վախացնում, մայրիկ, ես էդ օրիորդներին հետ սովոր չեմ խօսալ:

Ան.-Խ.— Իրա մասին թող աղքատը մտածի, հարուստը ինչ որ ասի, դիփ խելօք ա դուրս գալի:

Օվ.-Բ.— Ասենք էդ շատ դուզ ա: Էլ հին դերձակի մօտ չեմ շորերս կարել տալու, նա ուշացնում ա, ուրիշի մօտ պէտք ա գնամ սերտուկս կարել տալու:

Ան.-Խ.— Ի՞նչ սերտուկի բանը թող, մի գնան, տես, բիւթիդ չես կորցրել հօ, սնդուկսն ա դեռ թէ չէ:

Օվ.-Բ.— Վա՛յ, մայրիկ, ինչ փիս վախաց-

քիր է: Վայ թէ գողացել են: Գնամ, մի տեսնեմ:

(Վազում է դուրս)

ԿԱՏ.— Ուղղակի հաւատս չի գալի, մայրիկ ջան, որ 200,000-ը մեզ ա ընկել: (Նստելով) Ա՛յ, կը տեսնես, ինչքան որ կաւալերներ ունէի, հիմի դիփ էլ չոքէչոք կանեն առաջիս, դիփ էլ ձեռքս կը խնդրեն: Թորոսեանը, Սամէլովը, Աբրահամեանը... դիփ, դիփ... մեղրի վրայ վազող ճանճերի նման վրայ կը տան: Ինչպէս ուզում ես, մայրիկ ջան, բայց ես նրանց ինձ շանց կը տամ:

Ան.-Խ.— Շանց տուր, քէ մատաղ, շանց տուր: Հարուստ աղջիկը իրաւունք ունի փեսացուներին ատելու, անուշաղիը թողնելու:

ԿԱՏ. Ա՛յ, կասեմ ես նրանց,— դուք յարգելի պարոններ, առաջ էդպէս էիք, հիմա էդպէս: Չէ, ինձ չէք խաբի: Չեզ իմ փողերն ա հարկաւոր, զէ որ էդպէս ա, առէք մարգաղուխ երկու շահի, ֆայտօն նստեցէք ու հայդա:

Ան.-Խ.— Ասենք, էդ չես ասիլ:

ԿԱՏ.— Կասեմ, մայրիկ ջան, Սամէլովին դուզ ա, չեմ ասիլ, որովհետև նա էնքան յիմար ա, որ ով դիտա, շատ մեծ ուրախութեամբ վէր առնի երկու շահիս ու գնայ: Աբրահամեանցին էլ չեմ ասիլ— նրան շատ եմ խղճում և մէկ էլ

նա էնքան սիրուն միրուք ունի, որ մարդու խելքն ա գնում: Իսկ Թորոսովին ի հարկէ կասէի, բայց շատ անյարմար ա, նա էլ էնէնց քէֆով, ուրախ տղայ ա, որ... Անցեալ օրը Միխայիլ Սեմեօնիչէնց տանը մեզ շատ ծիծաղացրեց. վեր կալաւ ճաշի ժամանակ ու ասաց իրան՝ Միխայիլ Սեմեօնիչին. «Կեր Միշէլ, սա է վերմիշէլ»...

Ան.-Խ.—Շատ տափակ տղայ ա:

ԿԱՏ.—Դու մայրիկ, սկի բան չես հասկանում ու խօսում ես:

### ՏԵՍԻԼ 7

Առաջիններ և ՕՎԱՆԷՍ-ԲԷԳ

ՕՎ.-Բ.—Չէ, սաղ-սալամաթ ա, 200,000-ը տեղն ա, մեր գրպանում: Մայրիկ ջան, մի ձեռքըդ դիր գլխիս:

Ան.-Խ. } —(վախեցած) Ի՞նչ ա որ: (Շօ-  
ԿԱՏ. } շափում են ճակատը):

ՕՎ.-Բ.—Գլուխս տա՞ք չի:

Ան.-Խ. } —Չէ:  
ԿԱՏ. }

ՕՎ.-Բ.—Բաս հալա խելքս գլխիս ա, ես հէնց իմացայ, թէ գփել-պրծել եմ: Դժամք բան ա, որ 200,000 տանելուց մարդ գփել:

### ՏԵՍԻԼ 8

Առաջիններ, ՄԻԽԱՅԻԼ-ԲԷԳ և ՍԱՐԳԻՍ-ԲԷԳ

ՄԻԽ.-Բ.—(ըններում)—Լա՛ւ ես:

ՍԱՐ.-Բ.—(ըններում)—Ղօշա՞ղ ես:

ՕՎ.-Բ.—Բա՛, ինչքան ուրախացրիք: Էդ սր խաչիցն ա, տղերք, հ՞ը...

ՄԻԽ.-Բ.—Չէ, մի էս հայւանին մտիկ է, Սարգիս: (Կանանց) Յարգանքներս, Աննա-Խաթուն և օրիորդ Կատինկա:

ՍԱՐ.-Բ.—Խոզ ես, խոզ: (Կանանց) Յարգանքներս տիկիններին:

ՕՎ.-Բ.—Ի՞նչ ա պատահել ախր է, գփել էք:

ՄԻԽ.-Բ.—Էդ դո՛ւ ես գփել, չէ թէ մենք: Սփաթդ կտրւի բու... 200,000ը տարել ես, ըսկի ընկերներիդ մի խօսք ասում ես: Դէ, արի պաչեմ ուէխդ: (Համըռում է):

ՍԱՐ.-Բ.—Էշ զող ես, ամա դէ Տէր ընդ քեզ: (Համըռում է) Սրտանց պաչում եմ էդ անճոռնի սփաթդ: Չէ, ինձ ամենից շատ էն ա կատողեցնում, որ մարդիկ անշնորհակալ են: Աղա, երկուսով, երեքով, հինգով պարտք էիր ուզում՝ տալիս էի, հիմի որ 200,000ը տարար, էլ ուէխիս չէս մտիկ տալիս:

ՄԻԽ.-Բ.—Աղա, Օվանէս, երբ որ ըկվիզորը եկաւ, ո՞ւմ վրիցմունքիւն էիր հագել, հ՞ը...

իմը: Հէնց որ 200,000ը տարար, էլ ոչ մի խօսք  
ինձ, հա: Դեռ լաւ ա որ բանկի կասսիւրն ասեց,  
թէ չէ կուտէիր-կը պրծնէիր, մենք կը մնայինք:  
Խոզ ես, խոզ, Օվանէս, դէ ինչ որ ա, արի մէկ էլ  
պաշեմ:

ՍԱՐ.-Բ.— Իսկական խոզա—իսկական: Դէ,  
արի, գրկիր ինձ... (համըռուում է ու քարշ տա-  
լիս մի կողմ) Ուզո՞ւմ ես մի ընկերական խոր-  
հուրդ լսել, փողերդ բանկ չը դնես, նրանցով  
վիզրիշնի բիլեթներ առ, լաւ լսիր, էլի 200,000  
կը տանես:

ՄԻԽ.-Բ.— (քարշ է տալիս միւս կողմ) Մի  
լսիր այդ յիմարին, նա ինչ է հասկանում որ...  
ուզո՞ւմ ես իմ լաւ խորհուրդը լսել:

ՕՎ.-Բ.— Ես լսում եմ: X

ՄԻԽ.-Բ.— Արի, գնա Պարիժ: Է՛հ, Օվանէս  
եղբայր, ասում են էնտեղ էնպէս Ֆրանցուզի  
աղջկերք կան որ... բերանիդ ջուրը կը գնայ:

ՍԱՐ.-Բ.— Յանցառ ես խօսում. եթէ գնալ ա,  
գնա Վէնա, էնտեղ ասում են էնպէս կանայք  
կան... ուզո՞ւմ ես միասին գնանք: Ուզո՞ւմ ես...

ՄԻԽ.-Բ.— Ես էլ կը գամ, 28 օրով արձա-  
կուրդ կը վերցնեմ և հայդա Վէնա. գնանք ճըշ-  
մարիտ, Օվանէս, հա...

ՕՎ.-Բ.— Մի թողէք որ...

ՄԻԽ.-Բ.— Չես ուզում Վէնա գնալ, գնանք  
Իտալիա: Ինձ համար մէկ է, ընկերոջ խաթրու

թէկուղ աշխարհի էն ծէրը կը գնամ: XXXXX

ՕՎ.-Բ.— Այդ բոլորը լաւ, բայց ես կարծում  
եմ որ սխալ է եղել, երևակայեցէք սխալմունք  
է եղել. մայրիկ, կատինկա, ճիշտ չէ:

ԱՆ.-Խ. } — Ուղիղ ա, սխալմունք ա եղել:  
ԿՍՏ. }

ՄԻԽ.-Բ.— Սխալմունք ա եղել... Չէ, մեզ  
ո՞ւմ տեղ էք դնում որ...

ՍԱՐ.-Բ.— Է՛հ, սարսաղի գլուխ, սխալմունք  
ա եղել. դէ ցոյց տուր բիլեթդ, հ՞ը .. չէս ցոյց  
տալիս հա... ինչ ուզում ես, արա՛, բայց շամ-  
պանակի բերել տուր:

ՕՎ.-Բ.— Ես արդէն ղրկել եմ... այսինքն  
չեմ ղրկել, բայց...

ՄԻԽ.-Բ.— Դէ արի, արի, պաշեմ ուէխդ...

Չէ, բաղդաւոր մարդ ես, եղբայր: (Համըռուում է)

ՍԱՐ.-Բ.— Էստեղ արի, էստեղ՝ կրծքիս վը-  
րայ: (Համըռուելով) Առածը լաւ ա ասում, որ յի-  
մարների բաղդը բերում ա... ինչ ուզում ես ա-  
րա, բայց մի հրաւէրք պիտի սարքես ու կան-  
չես մեզ ամենքիս էլ:

ՄԻԽ.-Բ.— Առաջ-տաջ մեր նաշալնիկին.  
իմանում ես, որ նա քեզ շատ ա սիրում... Երբ  
որ նրան ասացի, թէ դու 200,000 ես տարել...

ՕՎ.-Բ.— Ի՞նչպէս, էդպէս շո՞ւտ:

ՍԱՐ.-Բ.— Դիօրեանսկի փողոցում հասանք  
յետևեց ու գիտես էլի, միշտ դէս ու դէն նա-

յելով ա գնում, ասում ենք. ձերդ գերազանցու-  
թիւն, լսել էք, մեր Օվանէս կարապետովը  
200,000 ա տարել:

ՄԻԽ.-Բ.—Ես էլ աւելացրի. «ճակատագիրը  
շատ արդար ա, ձերդ գերազանցութիւն, ասեցի,  
թէև մեր Օվանէսը յիմար ա, բայց լաւ ընկեր ա»:

ՍԱՐ.-Բ.—Իսկ նաշալնիկը, գիտես, ի՞նչ ա-  
սաց. «նրան ճանաչելով, չէի կարող թոյլ տալ  
այդպիսի բան նրա կողմից»: Զարմանալի բան  
է, թէ որքան ա նա քեզ սիրում:

ՕՎ.-Բ.—Ի հարկէ կը հրաւիրեմ, ես նրա-  
րից շատ բաւական եմ: Այնուամենայնիւ, մայ-  
րիկ, էս մեր Գասպարը շատ ուշ ա բերում շամ-  
պանսկին:

## ՏԵՍԻԼ 9

Առաջիններ և ՄԱԿԱՐ ԲԵԳ

ՄԱԿ.-Բ.—Շամպանսկի՞... ուրեմն ուղիղ ա,  
որ 200,000ը դո՛ւ ես տարել:

ՕՎ.-Բ.—Ճիշտն ասած, չեմ իմանում:

ՄԻԽ.-Բ.—Դէ լաւ, քիչ կոտորաւի: Տարել  
ես, բա ինչ ա, որ չես տարել: Խոզի բաղդը բե-  
րաւ էլի:

ՄԱԿ.-Բ.—(նրա ձեռքը բռնելով, պաֆոսով)  
ՕՎի, թանկագին Օվի եղբայր:

ՄԻԽ.-Բ.—Պաշիր, պաշիր բաղդաւորին:

## ՏԵՍԻԼ 10

Առաջիններ և ԳԱՍՊԱՐ

ԳԱՍ.—(ձեռքին շամպանսկի) Բերի, տես  
էս ա:

ՄԻԽ.-Բ.—Շամպանսկի ա, տուր էստեղ,  
էդ իմ լսելքի բան ա, տուր, որ մի շնորհաւո-  
րենք բաղդաւոր Օվանէսին: Դէ, կատինկա ջան,  
շուտ բաժակները տուր:

ՄԱԿ.-Բ.—Խցահանն էլ տւէք:

ԱՆ.-Խ.—Ա՛յ այդ բանը որ չունինք: Ու-  
նէինք, բայց մեր հարեանները տարան մի ան-  
գամ ու կոտորեցին:

ՄԻԽ.-Բ.—Է՛հ, ձեզ նման հարուստներին  
ինչ ասեմ, խցահան էլ չունէք: Դէ որ էտէնց  
ա, Գասպար, մի մեխ բեր, էդ խօ կա՛յ:

ԳԱՍ.—Ոնց չէ, արաղի բութիլկան բա միշտ  
ի՞նչով ենք բացանում: (Գնում է):

ԱՆ.-Խ.—Կատինկա, դու էլ բաժակները բեր:

ԿԱՍ.-Խ.—Իսկոյն, մայրիկ ջան: (Գնում է):

ՕՎ.-Բ.—Տղերք ջան, խցահանի համար նե-  
րեցէք, շատ շուտով կառնեմ ամեն ինչ:

ՄԱԿ.-Բ.—Արժէ դատարկ բանի համար  
մտածել: Գիտես ի՞նչ, Օվի, խցահանից առաջ ա-  
ւելի լաւ կանես, որ մի տուն առնես, թէ չէ

անյարմար է մի քիչ: Հարուստ մարդ և յան-  
կարծ 40 բուբլիանոց չի նոգնիկի նման քարշ  
գալ դէս ու դէն:

ՄԻԽ.-Բ.—Է՛հ, բան չո՞ւնի, էնքան չարչա-  
բանք ունի տունն էլ որ... Աւելի լաւ ա, արի՛  
միասին Վենետիկ գնանք:

ՄԱԿ.-Բ.—Է՛հ, դուք էլ տեղ գտաք գնալու,  
մի քաղաք, որ ջրի վրայ ա, խարբուխ կը ստա-  
նաք: Մի լսիր նրանց, Օվի, աւելի լաւ ա տուն  
ան. ես էլ քեզ մօտ բնակարան կը վարձեմ:

ՍՍՐ.-Բ.—Եւ տան քրեհն էլ չի վճարի: Ա-  
ւելի լաւն էնա, Վենետիկ գնանք: (կոտոր ըննե-  
լով եւ քաշելով):

ՄԻԽ.-Բ.—(Միա կոտոր ըննելով) Իսկ այն-  
տեղից Պարիժ:

ՕՎ.-Բ.—Առաջ մի թողէք տեսնեմ, տարել  
եմ 200,000ը թէ չէ, յետոյ է:

ՄԻԽ.-Բ.—Դէ լաւ է, Սիօնի աղքատի նը-  
ման լաց մի լինիր, մէկ ա, ոչ ոք չի հաւատալ  
քեզ:

ՏԵՍԻԼ 11

Առաջիններ և ԳԱՍՊԱՐ

ՄԻԽ.-Բ.— Այդ ի՞նչ ա, մէխն ես բերել, տնւր,  
տնւր ինձ, Գասպար: (Գասպարը գնում է):

ՄԱԿ.-Բ.—(վերցնում է Օվանէս քէկի կոտոր  
եւ տանում դէպի աւանսցենա) Տուն առ, Օվա-  
նէս և պսակւիր. լսիր ինձ, յետոյ շնորհակալու-  
թիւն կը յայտնես:

ՄԻԽ.-Բ.—(միւս կողմից նոյնը) Պսակւի...  
նա... արժէ, ես իմ Աստուածը, արժի: Առանց  
կնկայ մի բան չի: Ասենք դու մայր ու քոյր ու-  
նիս, բայց էլի էն չի, կնիկը, եղբայր, տան հիմ-  
քըն ա, հիմքը... Ուղում ես, ես քեզ համար մի  
սիրուն աղջիկ գտնեմ:

ՕՎ.-Բ.—Գիտեմ, գիտեմ, բայց պսակւելու  
միտք չունիմ:

ՄԻԽ.-Բ.— Ոչինչ, դատարկ բան ա, դու ա-  
սա միայն, ձեռաց կը պսակենք:

ՄԱԿ.-Բ.— Ի հարկէ, դու միայն ասա՝ ձե-  
ռաց:

ՕՎ.-Բ.— Ճշմարիտ, ես պսակւելու համար  
սկի չեմ էլ մտածել:

ՍՍՐ.-Բ.— Դու էդ յիմաբներին մի լսիլ,  
ինչ գործ ունես, որ գլուխդ խաթի մէջ գցես:

ՏԵՍԻԼ 12

Առաջիններ և ԿԱՏԻՆԿԱ

ԿԱՏ.—(մատուցարանի վրայ սուրճի բաժակ-  
ներ քերելով) Ներեցէք, խնդրեմ, բոլոր բաժակ-

ները հարեանները կոտորել են:

ՄԻԽ.-Բ.—Ոչինչ, օրիորդ կատինկա, մենք գրանցով էլ եօլա կը տանենք: (Ածելով) Դէ, ընկերներ, խմենք և շնորհաւորենք մեր բաղդաւոր Օվանէսին և նրան յաջողութիւն ցանկանանք:

ՄԱԿ.-Բ.—Եւ մի լաւ էլ կնիկ:

ՍԱՐ.-Բ.—Մի գիւժին էլ ճնկլ-ճտեր:

ՏԵՍԻԼ 13

X XXXX

Առաջիններ, ՄԱՐԻԱՄ-ԲԱԶԻ և ՍԱՌԱ-ԽԱԹՈՒՆ

ՍԱՌ.-Խ.—Հէնց որ լսեցինք, ձեռաց վազեցի որ գամ շնորհաւորեմ: Շնորհաւոր ըլնի, Օվանէս բէգ:

ՄԱՐ.-Բ.—Թանկագին Օվանէս-բէգ, թոյլ տւէք գրկեմ ձեզ բոլոր սրտից:

ՍԱՌ.-Խ.—Թողէք, առաջ ես գրկեմ, ես առաջ մօտեցայ նրան (համըռուում է)

ՄԱԿ.-Բ.—Հողին կը հանեն խեղձի:

ՍԱՌ.-Խ.—Ա՛խ, եթէ իմանաս, ոնց ա իմ կիզան ուրախացել քո տեղ:

ՕՎ.-Բ.—Շնորհակալ եմ:

ՄԱՐ.-Բ.—Իմ Սօնիչկան էլ, նա ուրախութիւնից լաց եղաւ, հէնց որ ասացի նրան:

ՕՎ.-Բ.—Շնորհակալ եմ:

ՄԱԿ.-Բ.—Սպասեցէք, սպասեցէք մի, ես այնքան եմ զգացւած, այնքան զգացւած այս անսովոր զիպւածով մեր շինովնիկական կեանքում, որ...

ՕՎ.-Բ.—Շնորհակալ եմ, շնորհակալ, Մակար... ես էլ շատ եմ զգացւած:

ՍԱՐ.-Բ.—Դէ շուտ արա, պաշիր, պաշիր, թէ չէ մէկ էլ տեսար լաց եղաւ:

ԿԱՏ.—Եղբայր, ճաշելու ժամանակ ա:

ԱՆ.-Խ.—Խնդրում եմ, պարոններ, բաւականացէք Ասածու տւածով և լիացէք:

ՄԱԿ.-Բ.—Ներողութիւն, Աննա-խաթուն և քոյր կատինկա, ճաշը իրա կարգին, իսկ զգացմունքներն իր: Դուք շատ լաւ էք իմանում, թէ ինչպէս եմ սիրում ձեր Օվանէսին:

ՄԻԽ.-Բ.—(Սարգիս Բէզին) Երէկ շան որդի ասաց հէնց է:

ՍԱՐ. Բ.—Ախմախ էլ, ես ինքս լսեցի:

ՄԱՐ.-Բ.—Օվի, սիրելիս, իմ լաւ ընկերս: Մի բան միայն միշտ յիշի՛ր. երբ փոքրիկ և աննշան մարդուն ժպտում է բաղդը, նա պէտք է միշտ շնորհակալ լինի իւր բարեբարից—բաղդից և հրէք չը մոռանայ իւր բարեկամներին, իւր փոքրիկ աննշան ընկերներին, որոնց նման նա ինքն էլ է եղել, ինքը՝ բաղդի փայփայածը և ընտրածը:

ՄԻԽ.-Բ.—Մի քիչ խրթին ա, բայց ուղիղ ա:

ՍԱՐ.-Բ.—Եւ այն էլ ինչպէս ճիշտ, թէ չէ  
ես շատ լաւ եմ ճանաչում այդ դուրս պրծնող-  
ներին, ձեռաց քիթները մինչև երկինք են բարձ-  
րացնում:

ՕՎ.-Բ.—Տղերք ջան, ես չեմ էլ մտածել  
քիթս բարձրացնել:

ՄԻԽ.-Բ.—Կը բարձրացնես, առաջինը չես:

ՄԱԿ.-Բ.—Դէ լաւ ա, հերիք ա: ՕՎի, երբ  
իմ երեխային կնքում էիր, միտդ ա ինչ ասա-  
ցի այն ժամանակ:

ՕՎ.-Բ.—Միաս չի, Տ տարի ա անցկացել,  
ինչ միտքս կը փնար:

ՄԱԿ.-Բ.—Ինչ ա նշանակում փող հա...  
Միանգամից ուղբը-միտքը կորցրել ա: Դէ ինչ  
որ ա, արի մէկ էլ պաշեմ: (Համուրում է) Ինչ  
ուզում ա՝ լինի, մի քէֆ պիտի սարքես, էն էլ  
լաւ քէֆ:

ԿԱՏ.—Ի հարկէ կը սարքենք, ինչ բան է  
որ... թիւ... և ուրիշ ոչինչ: Պիանինո կառնենք  
և ամենալաւ ածողին էլ կը հրաւիրենք:

ՕՎ.-Բ.—Էն էլ երկուսը միանգամից: Բա-  
րեկամներիս համար ոչինչ չեմ խնայիլ, էգուց և  
եթ նոր տուն կը բռնեմ և երեկոյթ կը սար-  
քեմ:

Չէի սպիր

## Բ. Ա. Ր. Ա. Ր. Ի. Ա. Մ

(Հիրասնեակ, շքեղութեան մօտեցրած սարք ու  
կարգով: Անկիւններում տումբաներ ծիւղաւոր աշ-  
տանակներով, վառարան, պիանինո: Մէջ տեղ  
կամար, որի յետեւ սնեակ՝ ճոխ սլատրաստած  
սեղանով—[Թէյի համար]:

### ՏԵՍԻՂ 1

#### ԳԱՍՊԱՐ

ԳԱՍ.—(միւս սնեակի դռնից նայելով): Խա-  
նում, Աննա խաթուն, Կատինկա խանում... էս  
լինչ ա, մա՞րդ չը կայ... (Ներս է մտնում) Մի  
ստեղ մտիկ արա՞ է, փահ, փահ, ինչ սարքել  
ես, հէնց գիտաս երանալի օթախ ըլնի: Մի  
խալուն մտիկ տուր հա. որ ման ես գալիս, հէնց  
գիտաս թէ խմոր ես կոխ տալիս, էնքան փա-  
փուկն ա:

### ՏԵՍԻԼ 2

ԳԱՍՊԱՐ և ՕՎԱՆԵՍ-ԲԵԳ

ՕՎ.-Բ.—(մտնում է, մազերին թղթի հոպոպ- ներ շինած) Դու էստեղ ինչ ես շինում, հ՛ը:

ԳԱՍ.—Ես խանումիս եմ ուզում:

ՕՎ.-Բ.—Քանի հետ ասացի, որ դու քո էդ շան սփաթովդ օթախները չը մտնես:

ԳԱՍ.—Օթախդ չը կերայ հօ:

ՕՎ.-Բ.—Դէ կորի էս սհաթին, գնան, խո- հանոցը կորիր:

ԳԱՍ.—Դէ լաւ, մի բղաւիլ, բան չես իմա- նում իսկի որ... ես խանումին եմ ուզում:

ՕՎ.-Բ.—Ո՞ր խանումին, ջահելի՞ն թէ պա- ռաւին, մօրս թէ քրոջս:

ԳԱՍ.—Պառաւին:

ՕՎ.-Բ.—Ի՞նչիդ ա հարկաւոր:

ԳԱՍ.—Բան կայ որ ուզում եմ, հալբաթ: Էն մարդիկն են եկել:

ՕՎ.-Բ.—Լաւ, գնա կորիր, կասեմ կը գայ: (Գասպարը գնում է):

ՕՎ.-Բ.—(մտննալով դռներին) Մայրիկ, էն լակէյներն են եկել կլուբից: Գնան, ասան, ինչ պիտի շինեն:

ՄԱՐ.-Բ.—Կատինկա, աչքիս լուսը: (Համ- քուրում է):

ՍԱՌ.-Խ.—Կատինկա, սրտիս հատորը (համ- քուրում է) Ուրախ էք, չէ՞:

ԿԱՏ.—Ի՞նչ մի ուրախանալու բան կայ, բի- լեթ ա էլի, առաւ եղբայրս ու տարաւ, շատ հեշտ բան ա:

ՄԱՐ.-Բ.—Էլի, ի՞նչու... յանկարծ էդքան փող, էն էլ աղքատ մարդկանց համար... Ա՛խ, ով գիտա, ես գժւէի, որ միանգամից էդքան փող տանէի:

ՄԻԽ.-Բ.—Նա էլ կը խելագարւի, մի վա- խէք: Ա՛յ, մի լաւ մտիկ արէք նրա ոէխին:

ՕՎ.-Բ.—Ասենք էդ սուտ ես ասում:

ՄԱԿ.-Բ.—Ոչինչ, էս ըսպէին քեզ ուրա- խացնենք, խմենք, տղերք, նրա կենացը: (Տալիս են մի քաժակ եւ Օվանէս ըէզին):

ՄԱՐ.-Բ. } —Շնորհաւոր լինի, բաղդաւոր  
ՍԱՌ.-Խ. } լինիս:

ՍԱՐ.-Բ.—Օվի, կենացդ, բայց պսակելը թող, խորհուրդ չեմ տալիս:

ՄԻԽ.-Բ.—Չէ, չէ, կը պսակենք:

ՄԱՐ.-Բ.—Սկի չենք էլ թողի, որ մտածի, ձեռաց կը պսակենք:

ԿԱՏ.-Բ.—Իմ եղբայրը դեռ չի վճռել վերջ- նական պսակելու հարցը:

ՕՎ.-Բ.—Ի հարկէ ես դեռ կը մտածեմ:

ՄԱԿ.-Բ.—Էհ, մտածելու էլ բան չը կայ, քո տեղ մենք մտածել—պրծել ենք: Դէ, տիկիններ, դուք ասէք, հարուստ մարդուն կը սազի՞, որ առանց պսակելու լինի:

ԱՆ.-Խ.—Ի հարկէ կը պսակուի, միայն թէ էս սհաթին շատ դժուար աս:

ՄԱՐ.-Բ.—Ի հարկէ լաւ աղջիկ ուղելու համար մարդ պէտք աս մի քիչ մտածի:

ՍԱՌ.-Խ.—Իսկ գլխաւորը, պէտք աս շատ երկար ջոկի, որ չը սխալի: Ես փորձած կնիկ եմ, էդ բանում շատ կօգնեմ ձեզ իմ խորհրդներով:

ՄԱՐ.-Բ.—Ես էլ: Ես երեք անգամ եմ մարդու գնացել և ամենայն դէպս վատ աղջիկ չեմ ջոկիլ ձեզ համար:

ՕՎ.-Բ.—Շատ շնորհակալ եմ... Բայց, մայրիկ ջան, մենք Երբ պէտք աս ճաշենք:

ԱՆ.-Խ.—Դէ գնացէք էլի, վաղուց աս սուփրան քցած: Ներողութիւն արէք, խնդրում եմ:

ՄԱԿ.-Բ.—Ոչինչ, մինչև որ շամպանսկին չի պրծել, մենք էստեղ էլ կարանք նստի:

ՍԱՌ.-Խ.—Դէ լաւ, ինչ հարկաւոր են էդ խօսքերը, Աննա Խաթուն, մենք տանու մարդ ենք. ես եկայ, որ մեր սիրելի Օվանէս բէգին հրաւիրեմ էս իրիկուն մեր տուն շայ խմելու:

ՄԱՐ.-Բ.—Ի՞նչպէս թէ... Ես էլ եմ եկել հրաւիրելու Օվանէս-բէգին շայի իր մօր ու կա-

տինի հետ:

ՍԱՍ.-Խ.—Մարիամ բաջի, ես առաջինը խնդրեցի, ուրեմն Օվանէս-բէգը էսօր իրիկուն ինձ մօտ պիտի լինի:

ՄԱՐ.-Բ.—Ինչպէս չէ. մեր տանը երէկ Սօնիչկի հետ խորհուրդ արինք ու վճռեցինք էսօր դոնախուլ սարքել (Օվանէս-բէգի կոնից ըրունելով) և կանչել սիրելի Օվանէս-բէգին:

ՍԱՌ.-Խ.—(նրա միւս կողմը ըրնելով) Ինչպէս որ ուզում էք՝ արէք, բայց Օվանէս-բէգը էսօր իրիկուն մեր տուն պիտի գայ:

ՄԱՐ.-Բ.—Ձեմ կարծում, ես հաւատացած եմ, որ նա մեր տուն կը գայ:

ՕՎ.-Բ.—Ես շատ ուրախ եմ, շատ շնորհակալ եմ, բայց...

ՍԱՌ.-Խ.—Ի հարկէ, էսօր մեր տուն կը գաք: (Ձգում է):

ՕՎ.-Բ.—Սառա Խաթուն:

ՄԱՐ.-Բ.—Ներողութիւն, էսօր նա մերն աս: (Ձգում է):

ՕՎ.-Բ.—Մարիամ բաջի:

ՍԱՌ.-Խ.—Սկի էլ չեմ թողնի, էգուց ձեր տուն, իսկ էսօր մեր տուն կը գայ, էնպէս չի, Օվանէս-բէգ:

ՕՎ.-Բ.—Շատ շնորհակալ եմ, բայց թողէք որ...

ՄԱՐ.-Բ.—Դէ որ էդպէս է, սկի էլ չեմ թող-

հի... (Ձգում է):

ՕՎ.-Բ.—Մարիամ-բաջի:

ՍԱՌ.-Խ.—Հէչ չեմ թողնի: (Ձգում է):

ՕՎ.-Բ.—Սառա խաթուն:

ՄԱՐ.-Բ.—Էդ շատ մեծ անքաղաքավարու-  
թիւն ա, Սառա-խաթուն: (Ձգում է):

ՍԱՌ.-Խ.—Ո՛չ, դուք էք անքաղաքավարին:  
(Ձգում է) Օվանէս-բէգ, մեր տուն կը գաք էս  
օր էրիկուն:

ՄԱՐ.-Բ.—Չէ, մեր տուն: (Ձգում է):

ՍԱՌ.-Խ.—Չէ, մեր տուն: (Ձգում է):

ՄԱՐ.-Բ.—Չէ, մեր տուն: (Ձգում է):

ՍԱՌ.-Խ.—Չէ, մեր տուն: (Ձգում է):

(Նրան ձգձգում են այս ու այն կողմ: Պա-  
տուհանից երեսում են գլուխներ, որոնք թափում  
են ծաղկամանները: Ընդհանուր աղմուկ):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

### ՏԵՍԻԼ 3

ԱՆՆԱ.-ԽԱԹՈՒՆ և ՕՎԱՆԷՍ-ԲԷԳ

ԱՆ.-Խ.—(մանում է կոֆտայով եւ թղթի հո-  
պուկներով) Էդ դճւ ես, Օվանէս:

ՕՎ.-Բ.—Էն լակէյներն են եկել կրուբից,  
ասա ինչ պիտի շինեն: Բա էն կերակուր եփո-  
ղը հալա չի՞ եկել:

ԱՆ.-Խ.—Վաղուց ա եկել, իրա բանին ա:

ՕՎ.-Բ.—Գինին բերի՞ն:

ԱՆ.-Խ.—Բերին, բա:

ՕՎ.-Բ.—Դէ որ էդպէս ա, բաս ամեն ինչ  
կարգին ա: (Ժամացոյցին նայելով) Հիմի օխտի  
կէսն ա, սհաթի ութին ղոնաղները կը հաւաքւեն:

ԱՆ.-Խ.—Գեներալը բա չի՞ գալու, որդի:

ՕՎ.-Բ.—Ո՞նց թէ չէ, խոստացաւ գալու:  
Որ տեսնէիր սնց ընդունեց ինձ, մայրիկ, երե-  
ւակայիր, սաղ ձեռքը մեկնեց, հալա երեք  
անգամ էլ պաչեց երեսիցս:

ԱՆ.-Խ.—Ի՞նչ ես ասում:

ՕՎ.-Բ.—Բա՛. առաջ որ բարե էր տալիս, մե-  
նակ երկու մասն էր դէմ անում, ամա էս ան-  
գամ սաղ ձեռքը մեկնեց:

## ՏԵՍԻԼ 4

Առաջիններ և ԿԱՏԻՆԿԱ

ԿԱՏ.—(Կոֆտայոյ եւ թղթի հոպոպաներոյ)  
Սկի գեներալը պար ա՛ գալիս:

ՕՎ.-Բ.—Ի՞նչ ես ասում, աղջի, նա վաթ-  
սուն տարեկան ա է: Էնէնց լոք լոք ա անում,  
ամա սլար գալը չեմ տեսել:

ԿԱՏ.—Բա էդ ի՞նչ տեսակ գեներալ ա. հի-  
մի չեմ իմանում, թէ ում հետ պիտի պար գամ:

ՕՎ.-Բ.—Բա ընկեր չինոյնիկները քիչ կը  
լինեն:

ԿԱՏ.—Է՛հ, նրանք բութիկաներին են վազ  
տալիս, ի՞նչ պարողներ են որ: Հա՛, դու պիա-  
նինո ածող կանչէ՛լ ես:

ՕՎ.-Բ.—Ինչպէս չէ, սհաթի օխտին պիտի  
գայ:

## ՏԵՍԻԼ 5

Առաջիններ և ՍՊԱՍԱԻՈՐ

ԱՆ.-Խ.—Բարով: Դու կուրբի լակէ՛յ ես:

ՍՊԱՍԱԻՈՐ.—Հա, խանում:

ԱՆ.-Խ.—Բաս դու է՛ն արա... դիփ էստեղ  
ա... էս օր մեզ մօտ դոնադներ կը գան... դու  
էն սրա... որ...

ՍՊԱՍԱԻՈՐ.—Արխային կաց, խանում:

ԿԱՏ.—Միայն չը խմէք հա՛, իմացէք ում  
մօտ էք ծառայում:

ՍՊԱՍԱԻՈՐ.—Արխային կաց, խանում, մեզ  
հետ էդպէս բան չի պատահում:

ԿԱՏ.—Ո՛չ, պատահում ա: Էն օրը Մարտի-  
րոսեանները մօտ դու չը կայէ՛ր:

ՍՊԱՍԱԻՈՐ.—Միտս չի:

ԿԱՏ.—Մէկի ոտը կոխ աւին, միւսի վրայ  
չայ թափեցին:

ԱՆ.-Խ.—Էն ուրիշներն էին, Կատինկա, ես  
նրանց միտս եմ պահել: Դէ, սիրելիս, եկ գը-  
նանք ինձ հետ, ես քեզ տամ գինին, զակուս-  
կան, գեսերտը... դու էլ ոնց որ կարգն ա՛ սարքի:

ՍՊԱՍԱԻՈՐ.—Աչքիս վրայ:

ԱՆ.-Խ.—Իեսերտը շուտ շուտ մօտ կը տա-  
նես, համեցէք կանես, յետոյ կը դնես էս սե-  
ղանի վրայ:

ԿԱՏ.—Մայրիկ, շուտ շուտ համեցէք չեն  
անիլ, այդ ընդունւած չի: Հէնց գիտենաս, մեր  
դոնադները միւր գ չեն տեսել:

ԱՆ.-Խ.—Ես ուզում եմ, որ ասեն, թէ մենք  
դոնադասէր ենք:

ՕՎ.-Բ.—Ղորթ ա, թող իմանան որ մենք  
շատ սրտաբաց ենք: Խաղալու թուղթ մտել էք:

ԱՆ.-Խ.—Առել ենք: Դէ գնանք:

(Գնում է սպասաւորի հետ):

Օվ.-Բ.—Գեներալը խոստացաւ գալու: Նրա համար պէտք ա յարմար պարտնետորներ գտնենք:  
ԿԱՏ.—Էլ դարդ չունես, դու էլ նրա մօտ փոքրիկ չինովիկներէց նստացրու, պրծաւ-զը-նաց:

Օվ.-Բ.—Շատ լաւ ես ասում, գոնեա չեն վիճիլ: Դէ, Կատինկա, ես կարծում եմ հագնւելու ժամանակն ա, մէկ էլ տեսար զոնադները մի բաշ վախտից առաջ հաւաքւեցին:

ԿԱՏ.—Մենք էլ չենք թողնի. ութին ենք կանչել, Տ-ին էլ եկէք:

Օվ.-Բ.—Էդ սնց ա կարելի, ասենք հիմի ամառն ա, անձրև չը կայ, կարող են քուչուով ման գալ, բայց էլի շատ անյարմար ա...

ԿԱՏ.—Ոչինչ անյարմար բան չը կայ: Մի մոռանալ, որ դու հիմի հարուստ մարդ ես. էդ աղքատ մարդու զոնադն ա, որ առաւօտից ա տուն ընկնում, իսկ դու, այսպէս ասած, մեծ մարդ ես հիմա:

Օվ.-Բ.—Ի՞նչ մեծ մարդ, քոյրիկ:

ԿԱՏ.—Ի հարկէ մեծ մարդ ես: Մեծ մարդ որ չը լինէիր, գեներալը հինգ մատով չէր քեզ բարևիլ: Չէ, եղբայր, դու ինձանից օրինակ վեր կալ, տես ես սնց եմ կաւալերների հետ վարւում... երէկ ինձ մօտեցաւ էն սարսաղը-Ջալալովը...

## ՏԵՍԻԼ 6

Առաջիններ և ԱՆՆԱ ԽԱԹՈՒՆ

ԱՆ.-Խ.—(Դռներից) Կատինկա, գնա շորերդ փոխիր:

ԿԱՏ.—Իսկոյն, մայրիկ:

ԱՆ.-Խ.—(գնում է):

ԿԱՏ.—Մօտ ա վազում և ասում. «Ա՛խ, օրիորդ Կատինկա, շատ, շատ ուրախ եմ ձեզ տեսնելուս համար:» Ես էլ պատասխանելու տեղ մի լաւ մտիկ արի նրան ստքից մինչև գլուխը և սուս ու փուս անցայ, քիչ մնաց գետինը մտնի: Ասա, խնդրեմ, մի ինչ որ 40 մանէթանոց չինովիկ և յանկարծ համարձակում ա. «օրիորդ Կատինկա»... Հա, եղբայր Չան, մոռացայ քեզ մի նոր խաբար ասելու. երեք օրիորդներ են քեզ վրայ սիրահարւել:

Օվ.-Բ.—Չէ մի:

ԿԱՏ.—Աստուած վկայ. Մանիչկան, Սօնիչկան և Լիզան: Միայն թէ չասես ուրիշի, էդ գաղտնիք ա:

ԱՆ.-Խ.—(Դռներից) Կատինկա:

ԿԱՏ.—Գալիս եմ, մայրիկ, գալիս եմ: Չէ, շատ բաղդաւոր ես, եղբայր Չան: (Գնում է):

Օվ.-Բ.—Միանգամից երեքը, այ թէ ինչ

բան ա 200,000-ը: Երեք սիրտ միանգամից յաղթեցի: (Հայելուն նայելով): Ասենք ես Ապօլլոն չեմ, բայց և շատ էլ անճոռնի չեմ, ի՞նչ կայ որ, երես մաքուր, քիթս չափաւոր, հասակս միջակ... Էլ ի՞նչու չը սիրահարուեն վրաս: Մանիշկան ինձ շատ ա դուր գալիս, թուխ-թուխ աղջիկ ա, մէկ էլ Ֆրանսերէն լաւ ա խօսում... Երէկ պատահեցի բուշումը, հէնց որ տեսաւ ինձ, խնձորի նման կարմրեց:

## ՏԵՍԻԼ 7

ՕՎԱՆԷՍ-ԲԷԳ և ՈՒՆԱՆ-ԲԷԳ

ՕՎ.-Բ.—Ես էլ նրան տարայու բերայ. «որքան ուրախ եմ ձեզ տեսնելուս՝ համար: (Գլուխ է տալիս),

ՈՒՆ.-Բ.—(գլուխ տալով) Ես էլ Օվանէս-բէգ, շատ ուրախ եմ:

ՕՎ.-Բ.—(վեր թռչելով)—Ա՛խ, այդ դու ես, Ունան-բէգ, զարմանալի ս, ես զանգի ձայն չը լսեցի:

ՈՒՆ. Բ.—Ես, սիրելի Օվանէս-բէգ, բազի դաներով եկայ, շուգեցի գլուխդ ցաւացնեմ զանգակ տալով:

ՕՎ.-Բ.—Էդ ուրիշ բան ա: (Ժամացոյցին նայելով) Բայց դու, կարծեմ, շատ շուտ ես եկել:

դեռ սհաթի օխտն ա:

ՈՒՆ.-Բ.—(Ժամացոյցին նայելով) Ի՞նչ պէս... Ա՛յ տես, ութն ա:

ՕՎ.-Բ.—Քոնի վրայ 8 ա, իմի վրայ 7-ը: Քո սհաթը երևի վատ տեսակիցն ա, մէկ էլ որ ես դեռ չեմ հագնուել: Ասենք մէկ ա, նստիր—սպասիր:

ՈՒՆ.-Բ.—Ոչինչ, ոչինչ, նեղութիւն մի քաշիր, կը նստեմ մի անկիւնում ու պրծաւ-գնաց, ոչ ոքի չեմ խանգարիլ:

ՕՎ.-Բ.—Ընդհակառակը, շատ ուրախ եմ: (Նրա ձեռքը սեղմելով): Քանի տարի ա միասին ենք ծառայում:

ՈՒՆ.-Բ.—Նոյեմբերի 6-ին ուղիղ 18 տարին կը լրանայ:

ՕՎ.-Բ.—Դէ նստիր, ես գնամ հագնուեմ և ասեմ որ քեզ համար շայ բերեն:

ՈՒՆ.-Բ.—Նեղութիւն մի քաշիր, սամավարը նոր դրին, ես մտայ խոհանոցը և տեսայ:

ՕՎ.-Բ.—Խոհանոցը մտար:

ՈՒՆ.-Բ.—Հա՛, բա՛, հալա տեսայ էլ պովարը ոնց էր սօուս պատրաստում մայօնէզի համար: Չը նեղանաս, Օվանէս բէգ, ես շատ եմ հետաքրքրւում. որ 200,000ը տարար՝ ի՞նչ զգացիր:

ՕՎ.-Բ.—Ի հարկէ յուզեցի:

ՈՒՆ.-Բ.—Միայն է՞դ:

ՕՎ.-Բ.—Բա էլ ի՞նչ:

ՈՒՆ.-Բ.—Բաղդաւոր: Ձէ, ես կը մեռնէի, հէնց էնպէս վեր կընկնէի ու հոգոցն հանգուցելոց կը դառնայի: Դէ գնահ, հագնւիր, ժամանակ ա:

ՕՎ.-Բ.—Ներողութիւն, ես էս սհաթին: (Գնում է):

—

ՈՒՆ..Բ.—(նստում է երեսը հասարակութեան դարձրած, ւաւնսցենայի վրայ դրած մի բազկաթողի վրայ եւ ամեն մի ծայն լսելիս՝ վեր է կենում եւ ւստո՞ւտի նման գլուխ տալիս): 200,000ը տարել ա ու սող ա: Ես որ լինէի, հէնց էն սհաթին հոգիս կը տայի: Է՛հ, բաղդաւոր:

## ՏԵՍԻՒ 8

Նա, ԿԱՏԻՆԿԱ և ԱՆՆԱ ԽԱԹՈՒՆ

ԿԱՏ.—(հագնւած, ձեռքին հովհար) Մայրիկ, դէ հիմի տես ոնց ա նստում, լաւ ա: (շուռ ու մուռ է զալիս):

ԱՆ.-Խ.—Լաւ, շատ լաւ ա նստած, հատիկա ջան:

ԿԱՏ.—Ո՞չ մի տեղը փոտ չի նստում: Գըլուխս ոնց ա:

ԱՆ.-Խ.—Գլուխդ էլ լաւ ա:

ԿԱՏ.—Բեղ համար դիփ լաւ ա: Ձէ, շատ յիմարացայ, որ շորկարողիս էլ, պարիկմախերին էլ չը բերել տւի: Բա քայլածքս ոնց ա, շախո՞վ ա:

ԱՆ.-Խ.—Ինչ յիմար-յիմար բաներ ես հարցնում, դէ սրտեղից կը լինի շախո՞վքո քայլածքը:

ԿԱՏ.—Բա չէ՞ որ կօշիկներս նոր են:

ԱՆ.-Խ.—Շատ էլ նոր, յետո՞յ:

ԿԱՏ.—Յետոյ էլ էն, որ քայլածքս էլ պիտի շախո՞վ լինի: Մի սպասիր, ես մի քիչ անց ու դարձ անեմ: (Անց ու դարձ է անում հովհարելով իրան) չ՛ը, շախո՞վ ա:

ԱՆ.-Խ.—Իմ կարծիքով դու էծի նման թռչկոտում ես, պէտք ա էսպէս լողաս, լողաս:

ԿԱՏ.—Ինչ զարմանալի բաներ ես ասում, մայրիկ, բա ես ոնց լողամ, որ կրունկներիս ամեն մէկը 2 վերշոկ ա: Ձէ, դու բան չես հասկանում:

## ՏԵՍԻՒ 9

Առաջիններ և ՍՊԱՍԱՒՈՐ

ՍՊԱՍԱՒՈՐ.—Ներողութիւն, չայը ղոնաղներին համեցէք անե՞մ, թէ իրանք կը գան սեղանի մօտ:

ԱՆ.-Խ.—Ով որ չի մօտենայ սեղանին, նը-

բան համեցէք արէք:

ՍՊԱՍԱԻՈՐ.— Լսում եմ.

ԿԱՏ.— Լսիր, այ տղայ, մոմերը վառիր:

ՍՊԱՍԱԻՈՐ.— Հալա շուտ ա:

ԱՆ.— Խ.— Օրը ցերեկ ա, դու ճրագ ես վառել տալիս:

ԿԱՏ.— Ձէ, մայրիկ, դու բոլորովին ապրելու եղանակը չես իմանում. մենք ի՞նչ ենք սարքել էսօր. երեկոյթ. բա էդ սրտեղ ես տեսել երեկոյթը առանց ճրագների: Մէկէլ որ մենք հիմի էնքան հարուստ ենք, որ կարող ենք մի քանի աւելորդ մոմ վառել: Լսիր, դու ցած թող վարագոյրները և մոմերը վառիր:

ՍՊԱՍԱԻՈՐ.— Լսում եմ: (Կատարում է):

ԱՆ.— Խ.— Իսկ իմ շորը, Կատինկա ջան, լաւ մ նստած . . .

ԿԱՏ.— (Ըօրնետով նայելով) Էնպէս էլի:

ԱՆ.— Խ.— Գլուխս սնց:

ԿԱՏ.— Էնպէս էլի:

ԱՆ.— Խ.— Իէ տես, դի՛փ էնպէս, չը դովեցիր մի անգամ էլ մօրդ: Էդ ի՞նչու ես ձեռնոցներդ հագնում, ուզում ես որ յիմար ասեն քեզ:

ԿԱՏ.— Ախ մայրիկ, ոչ մի անգամ արիստոկրատների բալում չես եղել ու խօսում ես: Էդ երեկոյթներին դի՛փ, դի՛փ էլ ձեռնոցներով են լինում: Ձեռնոցներ, հովհար և լօրնէտ— ահա ե-

րեք բան, առանց որոնց ոչ մի կարգին կնիկ բալ չի գնալ:

## ՏԵՍԻԼ 10

Առաջիններ և ՕՎԱՆԷՍ-ԲԷԳ

ՕՎ.— Բ.— (Ֆրակով) Հ՛ը, պատրաստ էք:

ԿԱՏ.— Պատրաստ ենք, եղբայր ջան, ես հըրամայել եմ արդէն որ ճրագները վառեն:

ՕՎ.— Բ.— Շատ լաւ ես արել, թէ բալ ա, թող էն իսկական բալի նման լինի:

ԿԱՏ.— Ինչ սազում ա քեզ ֆրակը:

ՕՎ.— Բ.— Ղոթ ես ստում. մայրիկ, դորթ մ:

ԱՆ.— Խ.— Ամենքին խելքահան կանես:

ՕՎ.— Բ.— Ձէ մի, միայն թէ էս ինչո՞ւ կանատակերս հուպ տալիս:

ԿԱՏ.— Էդ նրանից ա, որ սովոր չես: Բայց շատ սազում ա է:

ՕՎ.— Բ.— Այ շապկիս օձիքն էլ ինչ որ խեղդում ա:

ԱՆ.— Խ.— Էդ ոչինչ, Օվանէս ջան, կը լայնանայ, երեկոն երկար ա:

ՕՎ.— Բ.— Իսկ ֆացած բաները իրա տեղն են: (Շուտ ու մուտ է գալիս):

ԿԱՏ.— Միայն այ, որ ման ես գալիս, կարծես թըջած հաւ լինես:

Օվ.-Բ.—Դու էլ կասես հա՛:

ԿԱՏ.—Ի հարկէ թրջւած հաւի ես նման. ման գալու ժամանակ կռներդ էնպէս ես թափահարում, կարծես քամու ջրաղաց լինի, ոտքերդ էնքան ես չոում և կողքից կողք օրօրւելով քայլում, որ մի շախութիւն չը կայ մէջդ: Ձգւիր, ձգւիր և էնպէս ման արի. այ մի նայիք ես սնց եմ ման գալիս. տեսնում ես:

Օվ.-Բ.—Տեսնում եմ, բայց անել չեմ կարող: (Ձանգակի ծայն) Էդ պիանինօ ածողն ա:

ԿԱՏ.—Վերջապէս եկա՛ւ: Քանի որ ոչով չը կայ, ես քեզ հետ մի վալս կը պար գամ, որ միտս լինի:

### ՏԵՍԻԼ 11

#### Առաջիններ և ԳԱՍՊԱՐ

Օվ.—Բ.—Է՞լի եկար. մայրիկ, դուրս արա՛սք, թող ջհաննամի տակը գնայ:

ԳԱՍ.—Բա ի՞նչ անեմ, սէր գնամ ախր. խոհանոց մտայ, էն սպիտակ փափախով մարդը փախցրեց, էստեղ եկայ՝ դու ես դուրս անում: Դուրս ես անում, էլ չես հարցնում, թէ ուր եմ եղել. նամակ ունես ախր, հիմի բերին: (Տալիս է):

ԱՆ.-Խ.—Գնա՛ իմ օթախը, էստեղ նստիր և

էլ չը դուրս գաս էստեղից:

ԳԱՍ.—Բալբա քո օթախում դի՛նջ մնամ: (գնում է):

Օվ.-Բ.—Էս էլ քեզ նոր խաբար:

ԱՆ.-Խ. } — Ի՞նչ ա, ի՞նչ ա պատահել:  
ԿԱՏ. }

Օվ.-Բ.—Պիանինօ ածողն ա գրում, որ սաստիկ հիւանդացել ա, ու չի կարող գալ: Հիմի սնց անենք:

ԿԱՏ.—Դու էլ դրկիր էն մէկը գայ:

Օվ.-Բ.—Նրան էլ էս գիշեր հարսանիք են տարել:

ԿԱՏ.—Այ տեսնում ես, եղբայր ջան, ինչ քան ա յետ ընկած քաղաքում ապրելը. սաղ քաղաքում երկու ածող կայ: Չէ, ինչ ուզում ես արա՛, ես էստեղ ապրող չեմ: Բոլորը կարգին ա, պարողներ կան, իսկ պիանինօ ածող չունինք: Հիմի մեր բալը ի՞նչ բալի նման կը լինի:

ԱՆ.-Խ.—Մեծ ցաւ չի, աղջկերանցից մէկն ու մէկը կածի:

ԿԱՏ.—Ո՞վ, մայրիկ, սի՛:

ԱՆ.-Խ.— Թէկուզ հէնց ինքը՝ Լիզան:

ԿԱՏ.—Բայց նա նոր ա ածելը սկսել, գամմաներից էն կողմը բան չի հասկանում:

ԱՆ.-Խ.—Ի՞նչ արած: Էդ էլ հերիք ա, պար կը գաք—ոչինչ:

ԿԱՏ.—Ի՞նչ ես ասում, մայրիկ Է... գամ-  
մաներով պար գալ կը լինի:

ԱՆ.-Խ.—Ի՞նչ անենք—անձարը կերել և  
բանջարը: Մանիչկան սնց:

ԿԱՏ.—Է՛հ, Մանիչկան էլ «Հանգիստ իմ  
անոյշ» երգն և միայն իմանում ածել: Մեր ազ-  
ջկերանցից ոչ ոք, ոչ ոք ածել չի իմանում:

ՕՎ.-Բ.—Տղերանցից բա ածող չը կա:

ԿԱՏ.—Է՛հ, քո տղերքն էլ. նրանք բուժիչ-  
կաների վրայ են լաւ ածում, իսկ պիանինոի  
վրայ ոչ: Ի՞նչ ես կարծում, եղբայր, չը թո՞ղ-  
նենք մեր երեկոյթը էգուցւան:

ՕՎ.-Բ.—Գժեւել Էս... դոնադներին կանչել  
ենք-պըծել, հիմի մի ինչ որ պիանինո ածողի  
պատճառով յԷ՛տ համեցէք անենք:

ԱՆ.-Խ.—Օվանէսը լաւ և ասում, Կատին-  
կա, հէնց մենակ պովարը ինչքան բան և շի-  
նել-պատրաստել:

ՕՎ.Բ.—Բա գեներալը. չեմ կարայ հօ գը-  
նամ նրան ասեմ՝ ձերդ գերագանցութիւն, մեր  
պիանինո ածողը հիւանդացել և, էսօր մի դաք,  
էգուց եկէք, որ յետ դառնայ ու ասի. ջհանգա-  
մը, թող սատկի էլ... ինձ ի՞նչ, Ով գիտա մէ-  
կին գտնենք. լաւ բան չի, ի՞նչ ասեմ, բայց  
ձարներս ի՞նչ: Դէ գոնեա զրկենք էն եաշչիկով  
մուգիկան բերել տանք մեր հարևանից:

ԿԱՏ.—Լաւ բալ և՛ խօսք չունիմ, դոնադ-

ները պիտի արգանով պար գան: (Զանգակի ձայն):

ՕՎ.-Բ.—Էս ինչ և՛, չը լինի դոնադներն են:  
(Ժամացոյցին նայելով) Ուղիղ օխտն և:

ԱՆ.-Խ.—Կատինկա, նստիր: (Յստում նն  
դիւանի վրայ):

## ՏԵՍԻԼ 13

Առաջիններ, ՄԻԽԱՅԻԼ-ԲԷԳ և ՍԱՐԳԻՍ-ԲԷԳ

ՍԱՐ.-Բ.—(դռները) Չէնք ուշացել հօ: Ան-  
նա-խաթուն, ձեռքդ, օրիորդ Կատինկա...

ՄԻԽ.-Բ.—Բաղդաւոր, բարով:

ՕՎ.-Բ.—Շատ ուրախ եմ, բարեկամներ: Ա-  
սենք դեռ սնաթի օխտն և:

ՄԻԽ.-Բ.—Մենք սնաթին մտիկ էլ չենք ա-  
րել, այ սա եկաւ ինձ մօտ թէ՛ արի գնանք...  
վեր կացանք ու եկանք: Բայց տունդ լաւ սար-  
քել ես, ոչինչ:

ՍԱՐ.-Բ.—Ասենք 200,000-ով էլ աւել կը  
սարքուի: (Զանգակի ձայն) Էդ երկի Մակար-բէ-  
գըն և:

ԱՆ.—Խ.—Կատինկա, նստիր: (Յստում են):

ՄԻԽ.-Բ.—Անպատճառ նա և: Օվանէս ջան,  
բանկ չէս խաղալու դու:

ՕՎ.-Բ.—Ես կեանքումս խաղաթուղթ չեմ  
ուճեցել սկի ձեռքումս:

ՍԱՐ.-Բ.—Այ սարսաղ ես խօսում, սարսաղ:

ՕՎ.-Բ.—Ձեզ համար ես ուրիշ բան եմ մըտածել:

### ՏԵՍԻԼ 14

Առաջինները և ՄԱԿԱՐ-ԲԷԳ

ՄԱԿ.-Բ.—Արդէն ճրագները վառել էք, ուրեմն լաւ եմ հասել էլի: Աննա-խաթուն, օրինորդ կատինկա... բարով, աղբեր ջան: Այ, Ֆրակըդ լաւ ան դուրս եկել, էդ սիւն ա կարել, էն հրէմն, մի շուռ եկ, մէկ էլ... չէ էդէնց շուտ շուտ չէ, կամաց շուռ արի, չէ, շատ լաւ ա նըստած վրադ: Էնէնց չի՞, տղերք:

ՄԻՆ.-Բ.—Հարուստը որ արիւրի քսակ էլ հագնի, վրան լաւ կը նստի:

ՄԱԿ.-Բ.—Տունդ—տեղդ էլ լաւ լազաթին ես սարքել: Քոծդ հօ լափ շաքարի կտոր ա... ճրտեղից ես բերել տւել՝ թիֆլիսից:

ԱՆ.-Խ.—Ո՞վ, քոծ՞ը... չէ, ստեղացի ա, մեր հարեաններինն ա, վարձով ենք վերցրել:

ՄԱԿ.-Բ.—Ձէ, ես մեքելի համար եմ առում... (նստում է) Սաղ քաղաքում հէնց քո մասին են խօսում ամենքն էլ:

ԿԱՏ.—Ո՛հ, զահլաներս գնաց բոլորովին:

ԱՆ.-Խ.—Խօսալը ոչինչ, էլ առանց ամօթի-

բանի ներս են թափուում, երեք անգամ զանգակը կտրել են:

ՄԻՆ.-Բ.—Բա չը գիտէք որ մեղրի վրայ ճանճեր կը հաւաքւեն: Իսկ դու էլ, Օվանէս, շատ մի նրանց երես ալ, փողերդ մի բաժանիլ:

ՕՎ.-Բ.—Ես ճարահատեալ թագ եմ կենում, բայց էլի չի օգնում, բան չի դառնում: (Շատ ուժեղ զանգակ):

ՄԻՆ.-Բ.—Էդ անպատճառ իմ կնիկն ա աղջկայ հետ:

ՍԱՐ.-Բ.—Գուցէ իմն ա:

ՄԻՆ.-Բ.—Ես նրա զանգ տալուցը ճանաչեցի, էնէնց հրամայողական զանգակ ա:

ԱՆ.-Խ.—Կատինկա, նստի՛ր: (Նստում են):

### ՏԵՍԻԼ 15

Առաջինները, ՎԱՌԻՆԿԱ-ԲԱՋԻ և ՄԱՆԻՉԿԱ

ՎԱՌ.-Բ.—Հոգեակս, Աննա-խաթուն, կատինկա հրեշտակս (համընդուն է):

ՄԻՆ.-Բ.—Հազարից իմ կնիկն կը ճանաչեմ իրա զանգակովը:

ԱՆ.-Խ.—Նստեցէք, խնդրում եմ, շատ, շատ ուրախ եմ:

ՎԱՌ.-Բ.—Օվանէս-բէգ, թանկագին բարեկամ, բարով: Իմ Մանիչկան էս գիշեր տեսել ա

ձեզ երազում: Դէ լաւ, ի՞նչ ես կարմրում, Մանիչկա:

ՕՎ.-Բ.—Ի՞նչ էք ասում—երազում: (Բարևում են մէկ մ'էկում):

ՎԱՌ.-Բ.—Նամիշտ ում որ շատ աս ուզում, երազումը տեսնում աս:

ՄԱՆ.—Մայրիկ:

ՎԱՌ.-Բ.—Դէ լաւ, սո՛ւտ եմ ասում, սիրելիս: Ա՛խ, որքան լաւ էք սարքել. էս ձեր հիւրասենեակն աս, շատ, շատ սիրուն էք սարքել. իսկ էն ի՞նչ աս, սեղանատո՞ւնն աս: (Սպասաւորը ներս է քերում ինքնատեղը միւս սենեակը) Շատ, շատ սիրուն աս: Մանիչկա, մտիկ արձ, նոր պիանինո էլ են առել, արի, հրեշտակս, երգիր մի «հանգիստն իմ անոյշը»:

ՄԱՆ.—Ա՛խ, ոչ, էսօր իմ ձայնը ինչ որ տեղը չի:

ԿԱՏ.—Իսկ մեզ հետ զիտէք ի՞նչ դժբաղդութիւն աս պատահել. մեր պիանինո ածողը հիւանդացել աս, իսկ միւսին հարսանիք են տալի: Չեմ իմանում թէ մենք ինչպէս ենք պարգալու:

ՕՎ.-Բ.—(Մանիչկին) Այ, եթէ դուք ածէիք:

ՎԱՌ.-Բ.—Չէ, Մանիչկան ինքն էլ աս ուզում պարգալ: Պէտք աս խնդրել տղամարդկանցից մէկն ու մէկին:

ԿԱՏ.—Ո՞ւմ: Մեր ծանօթներից ոչ ոք կար-

ծեմ ածել չը գիտի:

ՄԻՆ.-Բ.—Ի՞նչպէս թէ չը գիտի ոչ ոք, բա Նազրիբէզովը:

ԿԱՏ.—Ի՞նչպէս, նա ածում աս:

ՄԻՆ.-Բ.—Դումդումբացնում աս, ինչպէս չէ: Լաւ, վատ՝ չեմ հասկանում, բայց մի բան դումդումբացնում աս:

ԿԱՏ.—Ա՛խ ինչքան լաւ աս: Մենք նրան կը նստացնենք:

ՎԱՌ.-Բ.—Ի հարկէ:

ԿԱՏ.—Եղբայր ջան, դու նրան կանչել ես:

ՕՎ.-Բ.—Ի հարկէ: Ես սաղ մեր ուպրաւիւնին կանչել եմ:

ՍԱՐ.-Բ.—Գենեքա՛ն էլ պիտի գայ:

ՕՎ.-Բ.—Խօսք աս տուել: Ա՛յ, եթէ տեսնէիք ոնց ինձ ընդունեց:

ԿԱՏ.—Բարեւելիս հինգ մատն էլ միանգամից աս մեկնել:

ՕՎ.-Բ.—Լաւ միտս բերիք, նրա հետ վիճակ պէտք աս խաղաք:

ՍԱՐ.-Բ.—Բայց նա մի յիսուներորդից պակաս չի խաղում:

ՕՎ.-Բ.—Ինչ ուզում էք՝ արէք, ես նրան ասել եմ, որ իրա հետ խաղալու էք, Սարգիս բէզ, դո՛ւ, Միխայիլ բէզ, դո՛ւ, մէկ էլ, Մակար բէզ, դո՛ւ:

ՄԻՆ.-Բ.—Խաղալը կը խաղամ, բայց ցաւն

էն ա, որ պորտմանուս մկներ են խաղում:

**ՄԱԿ.-Բ.**—Իմուսն էլ:

**ՄԱՐ.-Բ.**—Բա իմը չէք ասում: Պէտք ա նրանից ներքին փոխառութիւն անել: (Օվանէս քէզի թերը ըննելով):

**ՄԻԽ.-Բ.**—Առանց դրան բան չի գլուխ գալ: (միւս թերը ըննելով): Մակար քէզ, սրա պորտմանը ճրտեղ ա:

**ՄԱԿ.-Բ.**—(նրա ծոցի գրպանից հանելով)

Ահա:

**ՕՎ.-Բ.**—Դուք շատ էլ չը վերառնէք:

**ՄԻԽ.-Բ.**—Ի՞նչ հարկաւոր ա որ, դու մեզ ձեռ տեղ ես դնում: Ես կարծում եմ մարդա-  
գլուխ 100ը հերիք ա:

**ՄԱԿ.-Բ.**—(300 հանելով) Ես կարծում եմ էզ էլ ամենայն դէպս: (Ջանգալ):

**ԱՆ..Խ.**—Կատինկա, նստիր: (նստում են):

## ՏԵՍԻԼ 16

Առաջիններ, ՄԱՐԻԱՄ-ԲԱԶԻ և ՍՕՆԻՉԿԱ

**ՄԱՐ.-Բ.**—Ասացի քեզ, Սօնիչկա, որ ուշա-  
ցել ենք... Աննա խաթուն, Կատինկա ջան, թո-  
ղէք, թողէք մի պաչեմ ձեզ... Թանկագին Օվա-  
նէս քէզ, ինչ ուզում են՝ ասեն, բայց ես քեզ  
էլ պէտք ա պաչեմ: (Ամենքին պուխ է տալիս եւ

Օվանէս քէզին համըրում) Ես քեզ էնքան եմ  
սիրում... Ա՛յ, Սօնիչկան քեզ կասի, թէ որքան:

**ՕՎ.-Բ.**—Շատ շնորհակալ եմ, Մարիամ բա-  
ջի, հաւատա որ ես այդ շատ լաւ եմ զգում,  
շատ... խնդրեմ նստեցէք: Մայրիկ ջան, շայ  
խմացրու զոնաղներին: (Ջանգալ):

**ԱՆ.-Խ.**—Իսկոյն, Օվանէս ջան, գանգ են  
տալիս: Կատինկա, նստիր: (նստում են):

## ՏԵՍԻԼ 17

Առաջիններ, ՄԱՌԱ ԽԱԹՈՒՆ և ԼԻՉԱ

**ՄԱՌ..Խ.**—Ես քեզ չասի՞, Լիզա, որ ամեն-  
քից վերջինը մենք կը լինենք: Իմ հրեշտակ,  
Աննա խաթուն. (համըրում է) Կատինկա ջան  
(համըրում է): Սիրելի Օվանէս-քէզ (համըր-  
ում է) Լիզա ջան, մի տես ինչ սիրունն ա է:

**ՕՎ.-Բ.**—Ի՞նչ էք ասում, ճրտեղի սիրունն  
եմ:

**ՄԱՌ.-Խ.**—Սիրունն ես, բա ինչ ես որ... Ա՛խ,  
Աննա խաթուն, երանի քեզ, նախանձում եմ,  
էնպէս խելօք ու համեստ տղայ ունիս, երեքն  
էլ ես ունիմ, մէկը մէկից վատ, բայց գոհու-  
թիւն Աստծոյ, դրա փոխարէն նա ինձ մի աղ-  
ջիկ ա տւել, որ հատը չը կայ, հատը...

**ՄԱՐ.-Բ.**—Դէ, ուրիշներէ աղջկերքն էլ քո-  
նից վատը չեն:

ՄԱՌ.Խ.—Էդ քոնը չը լինի:

ՄԱՐ.Բ.—Թէկուզ հէնց իմը:

ՕՎ.-Բ.—Մայրիկ ջան, դէ ղոնաղնեքին չայ  
խմացրու է: (Մարիամ ըաջու թենն առնելով, իսկ  
Աննա-խաթունը Սառա-խաթունի) Համեցէք, խնդ-  
րում եմ: (Գնում են սեղանատուն):

ՄԱԿ.-Բ.—Էս ա կը կուեն հա:

ՄԻԽ.-Բ.—Անպատճառ:

ԿԱՏ.—Պարոններ, բա դուք չայ չէք ու-  
զում:

ՄԱԿ.-Բ.—Խոնարհաբար շնորհակալ ենք, ա՛յ  
եթէ չայի տեղ մեզ մի մի ուրիշ օղի տայիք,  
էդ ուրիշ բան կը լինէր:

ՄԻԽ.-Բ.—Թէ չէ բալը բալի նման չի: Մա-  
մը շատ — օղին քիչ:

ԿԱՏ.—Էնտեղ-եղբօրս օթախում սարքած ա:

ՄԱԿ.-Բ.—Դէ շուտ ասէք էլի, տնաշէնի օ-  
րիորդ:

ԿԱՏ.—Միայն թէ մի բան եմ խնդրում, պա-  
րոններ, շուտով գեներալը կը գայ, էնպէս որ  
դուք մի քիչ... քաղաքավարի, չը հարբէք:

ՄԻԽ.-Բ.—Օ՛, հանգիստ կացէք, մենք շատ  
լաւ ենք իմանում, թէ մենք ով ենք և որտեղ  
ենք:

ՄԱԿ.-Բ.—Էդ ինքնըստինքեան յայտնի ա:  
Մենք էնէնց, մի սատանի գլուխը ջարդել ենք  
ուզում:

ԿԱՏ.—Դէ գնացէք—ջարդեցէք: (Նկող Օվա-  
նէս-բէգին) Եղբայր ջան, ընկերներդ մի մի ուրիշ  
կա օղի են ուզում: (Գնում է)

ՕՎ.-Բ.—Շատ լաւ, էստեղ համեցէք... իմ  
օթախը... Գիտէք, մեծ մեծ տներում մինչև ըն-  
թրիքը ընդունւած չէ օղի խմելը, ուտելը... դրա  
համար էլ ես իմ օթախումս եմ մի փոքրիկ սե-  
ղան պատրաստել, ցանկացողների համար, այ-  
սինքն էնէնց по секрету.

ՄԻԽ.-Բ.—Այսինքն հեռու մարդկային չա-  
բախօսութիւններից: Չէ, շատ լաւ ես մտածել,  
Օվանէս: Մակար, շատ զգոյշութեամբ բռնիր նրա  
կուռը և հայդա գնանք մեր բանին:

ՕՎ.-Բ.—Ես չէ, պարոններ առանց ինձ,  
ես աւելի լաւ ա յետոյ:

ՄԱԿ.-Բ.—Ի՞նչ ես յիմար, յիմար դուրս տա-  
լիս: Գնանք:

ՕՎ.-Բ.—Ճշմարիտ, գեներալը կը գայ ու...

ՄԻԽ.-Բ.—Քարշ տուր դրան, էդ բաղդաւո-  
րին: (Գնում են):

ՈՒՆ.-Բ.—(ըարձրանալով նայում է նրանց  
յետեւից)—Խմելու գնացին: Ո՛չ, ես աւելի լաւ  
է, կը սպասեմ մինչև ընթրիքը: Անյարմար է,  
գեներալը պիտի գայ:

(Մտնում է սպասաւորը, ձեռքին մատուցա-  
լան թէյով):

ՈՒՆ.-Բ.—Մ... Էստեղ եկէք:

ՍՊԱՍԱԻՈՐ.—Էս սհաթին:

ՈՒՆ.-Բ.—Էդ ի՞նչ չայ աս:

ՍՊԱՍԱԻՈՐ.—Սովորական, Պապովի:

ՈՒՆ.-Բ.—Ա. բա նրա մէջը բան ման չը կ'ա՞յ:

ՍՊԱՍԱԻՈՐ.—Ո՞նց չէ, երկու կտոր շաքար

կայ:

ՈՒՆ.-Բ.—Հէնց էդ. կօնեակ կամ ում չը

կ'ա՞յ:

(Չանգաղ):

ՏԵՍԻԼ 18

(Մտնում են երկու երիտասարդ պարոններ եւ անցնում սեղանատուն):

ՍՊԱՍԱԻՈՐ.—Էդպէս բաներ չը կայ: Կը հրամայէ՞ք:

ՈՒՆ.-Բ.—Չէ, հոգիս, ես աւելի լաւ է կը սպասեմ ընթրիքին: (Սպասաւորը գնում է):

ՏԵՍԻԼ 19

Առաջիններ, ԿԱՏԻՆԿԱ, յետոյ ՕՎԱՆԷՍ-ԲԷԳ և ՄԻ-ԽԱՅԻԼ-ԲԷԳ

ԿԱՏ.—Եղբայր, եղբայր:

ՕՎ.-Բ.—(մտնում է) Դու ի՞նչ ես կանչում: ԿԱՏ.—Այո: Նազրիբէկովը մինչև հիմա չի

եկել, չուղարկեմ նրա յետեից:

ՄԻԽ.-Բ.—(մտնում է ծամելով) Կը գայ, սի-րելի Կատինկա, գիտէք, Չահելների խելքը մի քիչ պակաս աս, երևի մտել աս պարիկմախերի մօտ ածիլուելու, հոպոպներ շինելու և ուշացել աս: (Սեղանատնից մտնում են Ղիզան եւ Սօնիչ-կան):

ԿԱՏ.—Կաւալերներ են եկել, օրիորդները պարել են ուզում, իսկ երաժիշտը չը կայ: Էդ Աստուած աս իմանում, թէ ինչի աս մասն:

ՕՎ. Բ.—Դէ, լաւ, ես ինչ եմ կարող անել որ, մի քիչ սպասենք:

ԿԱՏ.—Դու, եղբայր, պար կը գաս, չէ:

ՕՎ.-Բ.—Էդ որտեղից, ես բացի կադրիլից ուրիշ ոչինչ չեմ իմանում:

ԼԻՉԱ. } —(նրա թեւերից ընկելով) Ոչինչ, ՍՕՆ. } կադրիլ պար եկէք:

ՕՎ.-Բ.—Ես վախում եմ, որ խառնեմ, թան-կադին օրիորդներ:

ՍՕՆ.—Ոչինչ, մենք չենք թողնի:

ՕՎ.-Բ.—Որ էդպէս աս լաւ աս: Բայց առա-ջուց եմ ասում, որ ես կը խառնեմ:

ԼԻՉԱ.—Դուք դամա սենէք:

ՕՎ.-Բ.—Ե՛ս: Ես որտեղից դամա կուհենամ, երբ որ ես ամուրի եմ:

ՍՕՆ.—Չէ, կադրիլի համար եմ ասում:

ՕՎ.-Բ.—Ա՛խ, կադրիլի համար: Կարծեմ ոչ:

ԼԻԶԱ.—Դէ շուտ արէք, հրաւիրեցէք:

ՕՎ.-Բ.—Ո՛ւմ:

ՍՕՆ.—Նրան, ով որ ձեզ շատ է դուր գալիս:

ՕՎ.-Բ.—Ես, ճշմարիտն ասած, չեմ իմանում: Բոլոր օրիորդներն էլ էնքան սիրուն ու լաւն են, որ ես չեմ իմանում որին հրաւիրեմ: Մէկին հնձ տւէք:

ՍՕՆ.—Լաւ, ես կը լինեմ ձեր դաման:

ԼԻԶԱ.—Ի՞նչու դուք և ոչ ես:

ՕՎ.-Բ.—Օրիորդներ:

ՍՕՆ.—Կարծեմ, ես առաջ ասացի, որ Օվանէս-բէկի հետ ես եմ պարում:

ԼԻԶԱ.—Էդ ես էլ էի կարող ասել: (Զանգալ):

ՍՕՆ.—Բայց էլի ես ասացի առաջինը:

ԼԻԶԱ.—Էդ ոչինչ էլ չի նշանակում, էնպէս չի, Օվանէս-բէկ:

ՕՎ.-Բ.—Առաջինը ձեզ հետ, իսկ երկրորդը ձեզ հետ եմ պար գալիս:

## ՏԵՍԻԼ 20

Առաջիններ և ՆԱԶՐԻԲԷԿՈՎ (որ մտնում է հարեան սենեակը մազերը խուճուճ արած եւ պէսնէով):

ԿԱՏ.—Այ և Նազրիբէկովը:

ԼԻԶԱ. } —Նազրիբէկովը, վերջապէս:

ՍՕՆ. }

(Կատինկան գնում է, նրան հետեւում են Լիզան եւ Սօնիչկան):

## ՏԵՍԻԼ 21

Առաջիններ և ԱՆՆԱ-ԽԱԹՈՒՆ

ՕՎ.-Բ.—(նրան ղիմատրելով) Մայրիկ, դո՛ւնաղները եկել են, թող նրանց միւրգ տան:

ԱՆ.-Բ.—Իսկոյն, Օվանէս ջան, բայց մի բան ասեմ, լակէյներից երկուսը հարբած են, պէտք չէր բուժիկաները նրանց տայիլ բացելու:

ՕՎ.-Բ.—Ի՞նչ անես, մայրիկ, բալ ա՛. դո՛նաղներն էլ կը հարբեն, լակէյներն էլ:

ՏԵՍԻԼ 22

Առաջիններ և ՍՊԱՍԱԻՈՐ

Օվ.-Բ.—Է՛յ, էստեղ արի:

ՍՊԱՍԱԻՈՐ.—Ի՞նչ կը հրամայէք:

Ան.-Խ.—Մի շունչ քաշիր: Դու ի՞նչ բու-  
թիլկաներ ես բացել:

ՍՊԱՍԱԻՈՐ.—Կարմիր գինու:

Ան.-Խ.—Զարմանալի ա, իսկ քեզանից ա-  
րաղի հոտ ա գալիս:

ՍՊԱՍԱԻՈՐ.—Էդ երէկւանից ա, կլուրից:

Ան.-Խ.—Խնդրում եմ չը խմէք-հարբէք  
հա՛, մեզ խայտառակ կանէք:

ՍՊԱՍԱԻՈՐ.—Միրգ ամենք, թէ վախաը չի:

Օվ.-Բ.—Համեցէք արէք, յետոյ բերէք դը-  
րէք էստեղ, որ սվ ուզի-մօտենայ:

ՍՊԱՍԱԻՈՐ.—Լսում եմ: (զնում է):

ՏԵՍԻԼ 23

Բոլոր օրիորդները միւս սենեակից բոթելով բերում  
են ՆԱԶՐԻԲԷԳՈՎԻՆ, նրանց հետ են ՄԻԽԱՅԻԼ-ԲԷԳԸ  
և ՄԱԿԱՐ-ԲԷԳԸ: Առաջինները:

ԿԱՏ.—Լսել չեմ ուզում, դուք պէտք ա  
ածէք:

ՆԱԶ.—Օրիորդներ, տիկիներ և պարոն-

ներ, ես ածել չեմ իմանում ախար:

ՄԻԽ.-Բ.—Սուտ ա ասում, կոտորաւում ա:  
Ես ինքս եմ լսել, ոնց ա դմբդմբացնում:

ՆԱԶ.—Հաւատացնում եմ, որ ուրախու-  
թեամբ, բայց ես ածել չեմ իմանում:

ԿԱՏ.—Լսել չեմ ուզում, լսել... և չէք էլ  
ամաչում, երբ ամենքը խնդրում են, օրիորդ-  
ները և պարոնները:

Օվ.-Բ.—Ես էլ եմ խնդրում:

ՆԱԶ.—Բարով, Օվանէս Հարաբետովիչ, ես  
ուրախութեամբ, բայց միայն մի բան եմ ածում:  
ԲՈՂՈՐԸ.—Ի՞նչ:

ՆԱԶ.—Անդրանիկի մարշը:

ՄԻԽ.-Բ.—Զասացի որ ածում ա, իսկ ի՞նչ,  
ես ինչ իմանամ: Էդ ա, դուրս ա գալիս որ Անդ-  
րանիկի մարշն ա եղել:

ԿԱՏ.—Շատ գեղեցիկ, մենք էլ Անդրանիկի  
մարշով պար կը գանք կադրիլը:

ԱՄԵՆՔԸ.—Ի հարկէ պար կը գանք, շատ  
լաւ, շատ հրաշալի...:

ԿԱՏ.—Պարոն Նազրիբէգով, նստեցէք խնդ-  
րում եմ:

ՆԱԶ.—Իայց պարոններ, առաջւանից ձեր  
ներողութիւնն եմ խնդրում:

ՄԻԽ.-Բ.—Դէ, դու էլ մի կոտորաւիլ է,  
դմբդմբացրու պրծնի-դնայ:

Օվ.-Բ.—Ոչինչ, միայն թէ պինդ ածա:

**ՆԱԶ.**— Օ՛ր, էդ լաւ եմ իմանում: (Վերցնում է պէսանէն, նստում պիանինոի մօտ, աթոռը դրստում իրա տակը, սրբում ձեռքերը թաշկինակով եւ գլուխը թափ տալիս):

**ՍՕՆ.**— Բա մեր պարերի կառավարիչը ո՞վ պէտք ա լինի:

**ԿԱՏ.**— Իսկ որ է: Եկէք մէկին ընտրենք. ես կարծում եմ խնդրենք իմ եղբօրը, ի՞նչ էք սասում:

**ԲՈՂՈՐԸ.**— Ի հարկէ, խնդրում ենք, խընդրում ենք: (Այդ ժամանակ միւս սենեակից դուրս են գալիս եւ միւս հիւրերը):

**ՕՎ.-Բ.**— Ի՞նչ, բա ո՞ր տեղի կառավարիչն եմ ես:

**ԲՈՂՈՐԸ.**— Դուք, դուք, լսել էլ չենք ուզում:

**ՕՎ.-Բ.**— Դէ լաւ, թէկուզ էդ բանից հէշ գըլուխս չի դուրս գալիս: (Բարձր) Les cavaliers, prenez vos dames!

**ԿԱՏ.**— (մ'օտենալով նրան կամաց) „Engagez“, եղբայր:

**ՕՎ.-Բ.**— Այսինքն անգաժէ, ներողութիւն, սխալեցի: (Կանգնում են զոյգ-զոյգ, երկու երիտասարդները Մանիչկի եւ Լիզի հետ, Օվանէսը էզը Սօնիչկի, իսկ Սարգիսը-ըէզը Կատինկի հետ) Պատրաստէք: (Ժափ տալով) — Պարոն մուզիկ ածող, սկսեցէք premiere figure.

**ՆԱԶ.**— (տեղից քարձրանալով) Ներողութիւն, Օվանէս Հարաբետովիչ, ես մուզիկ ածող չեմ:

**ՕՎ.-Բ.**— Ներողութիւն, ես ուզում էի սեղ երաժիշտ:

**ՆԱԶ.**— Էդ ուրիշ բան ա: (Նստում է):

**ՕՎ.-Բ.**— (ժափ տալով) Premiere figure! (Նազրիէզովը յետ է գցում գլուխը եւ շատ քարձր նազում Անդրանիկի մարջը) — Les cavaliers, առաջ: (Պարում են):

## ՏԵՍԻԼ 24

(Պարերի սկզբից սպասաւորը մատուցարանը ձեռքին ուզում է անցնել միւս կողմը, քայց չի կարողանում եւ մնում է կանգնած: Գասպարը դուրս գալով եւ տեսնելով պարողներին, ինքն էլ է սկսում պարել մի կողմում: Ունան-ըէզը նստած տեղը սկսում է մատերով չըրթմա խփել):

**ՕՎ.-Բ.**— Medames, avancez! (Զանգակ):

**ԱՆ.-Խ.**— (դուրս է վազում):

**ՕՎ.-Բ.**— Բալանսէ:

## ՏԵՍԻԼ 25

(Սպասաւորը տեսնելով մտնող գեներալին Աննա-խաթունի հետ՝ վազում է դէպի նա թէյի մատուցարանի վրայ ածած միրգով, քայց կաշելով

պարողներին՝ փուում է գետին, ամեն ինչ վայր թափելով):

**ՍՊԱՍԱԻՈՐ.**— Գեներալը, գեներալը եկաւ:

(Բոլորը սկսում են միրգը հաւաքել, Գասպարը պարում է, Նազրիբէգովը նազում է, իսկ գեներալը նայում է այս տեսարանին):

## Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

Գ. Ա. Ր Ա. Ր Ի Ա. Ծ

Երկրորդ արարածի սենեակը

## ՏԵՍԻԼ 1

ԳԱՍՊԱՐ և ՕՎԱՆԷՍ-ԲԷԳ

**ԳԱՍ.**— (Նստած է ըստկաթոռի վրայ եւ վրան մի կանացի շալ գցած քնած է. խփում է ժամը 10ը):

**ՕՎ. Բ.**— (Խալաթով, գլուխը երեսարջիչով փաթաթած մտնում է) Թիւ, սատանան տանի, 40 տարի ապարուեմ աշխարհիս երեսին, բայց էդպէս ցաւ չեմ իմացել: Շատ խմեցինք, շատ, չափ ու սահման չը կար: Մի յիմարութիւն չեմ արել ես հօ: (Նստում է ըստկաթոռի վրայ) Շատ կարելի ա: Միայն էն ա միտս, որ երեք բաժակ շամպանսկիյ խմելուց յետոյ մէկի տեղ երեք գեներալ էր աչքիս երևում: Սհաթի տանն ա, բայց ամենքն էլ քնած են: (Գլուխը ընկնելով) Օ՛յ, կարծես մի մեծ շաքուճով զրմփացնում են կարկաժիս: 200,000 տանելը համ լաւ ա, համ վատ, շատ վատ: Մի երկու-երեք էդպէսի բալից յետոյ երևի միւս աշխարհը կը ճանապարհւեմ: (Գասպարին տեսնելով) Ըհր, տեսնես ով ա

իրա կնկան մոռացել մեր տանը. չէ, լաւ դոնադ-  
ներ են, երեւի էդ Միխայիլ-բէզն ա իրա կնկան  
թողել ու գնացել. շատ թիթրիկ մարդ ա, կամ  
գլխարկը կը թողնի, կամ կնկան, կամ ով ա ի-  
մանում ինչ... (Մօտենում է Գասպարին) Վա-  
ռինկա բաջի, կարծեմ էնքան էլ յարմար չի ձեզ  
համար: Գնացէք մէկէլ օթախը, կրեսլօն նըս-  
տելու համար շատ լաւ ա, բայց քնելու համար  
չեմ կարծում: Վառինկա բաջի...

ԳԱՍ.—(գլուխը ըստ ճրագնելով յօրանջում է)  
Օ՛ր...

ՕՎ.-Բ.—Գասպար... թիւ...

ԳԱՍ.—(նրան նայելով) Էս ի՞նչ մօլլա ա...  
(վեր թռչելով) բժ, սա աղան ա հօ:

ՕՎ.-Բ.—Էստեղ ի՞նչ ես շինում, էշի գլուխ:

ԳԱՍ.—Բա սրտեղ գնամ, խոհանոցում էն  
սպիտակ փափախով մարդն ա իրա տղերանցով  
վեր ընկել, քնել, հացուտելու օթախումը—լա-  
կէյները, դալանում լակէյները, բա ես մարդ  
չեմ, քնել չեմ ուզում որ...

ՕՎ.-Բ.—Դէ դուրս կորիր, էս սնաթին դուրս  
կորիր:

(Գասպարը գնում է մըթմըթալով):

ՕՎ.-Բ.— Չէ, երևում ա որ ամենքն էլ, ին-  
ձանից սկսած, հարբած են եղել: Էս էլ քեզ ա-  
րիստոկրատի բալ: (Նստում է ըստ ճրագնելով վրայ):

### ՏԵՍԻԼ 2

ՕՎԱՆԷՍ-ԲԷԳ և ԱՆՆԱ ԽԱԹՈՒՆ

ԱՆ.-Խ.—(Առաւօտայ կապտով) Գասպար,  
Գասպար... (Օվանէս ըէզին տեսնելով) Էդ ի՞նչ  
ես նստել յիմարի գլուխ, չե՞ս լսում, որ կան-  
չում եմ:

ՕՎ.-Բ.—Ո՞րտեղի Գասպարն եմ, էդ ես եմ:

ԱՆ.-Խ.—Օվանէս, Տէր Աստուած, էդ ի՞նչ  
չու ես գլխիդ էդ շալման փաթաթել:

ՕՎ.-Բ.—Գլուխս ա ցաւում, հասկանում  
ես:

ԱՆ.-Խ.—Դէ լաւ, մի բարկանար, դրանից  
աւելի վատ կը ցաւի: Երէկ մի քիչ աւել խմե-  
ցիր:

ՕՎ.-Բ.—Մենակ ե՞ս եմ խմել, լակէյներդ  
մինչև հիմա էլ քնած են. ի՞նչ էիր պահում,  
թողնէիր գնային, կորչէին էլի:

ԱՆ.-Խ.—Ո՞նց գնային, որ ոտի վրայ կանգ-  
նել չէին կարում:

ՕՎ.-Բ.—Դուրս արա, դուրս արա, թող էս  
սնաթին կորչեն, գնան:

ԱՆ.-Խ.—Կը կորչեն, կը կորչեն, միայն թէ  
մի բարկանալ:

ՏԵՍԻԼ 3

Առաջիններ և ԿԱՏԻՆԿԱ

ԿԱՏ.—(Առաւտեան կապրտով եւ հովհարով) Էդ ում էք կորցնում: Երևի էդ ինձ համար են բերել:

ՕՎ.-Բ.—Ի՞նչ են բերել:

ԿԱՏ.—Փունջ պիտի բերէին ինձ համար:

ՕՎ.-Բ.—Փունջ, բան չեմ հասկանում, ի՞նչ փունջ:

ԿԱՏ.—Նազրիբէգովը պիտի ղրկէր, նա չէ որ երէկ առաջարկութիւն արեց, էսօր էլ պիտի փունջ ղրկէր: Նա ինքն ստաց, որ կը ղրկի:

ՕՎ.-Բ.—Բան չեմ հասկանում. առաջարկութիւն, փունջ, նազրիբէգով, բոլորովին բան չեմ հասկանում:

ԿԱՏ.—Իսկ ես քեզ չեմ հասկանում: Մոռացար որ ինձ Գրեգուարը առաջարկութիւն արեց:

ՕՎ.-Բ.—Ի՞նչ Գրեգուար:

ԿԱՏ.—Օ՛խ, նազրիբէգովը, նազրիբէգովը, հասկացար:

ՕՎ.-Բ.—Նազրիբէգովը քեզ առաջարկութիւն է արել: Նա քո գոյգը չէ:

ԿԱՏ.—Ո՞նց թէ:

ՕՎ.-Բ.—Հէնց էնպէս: Նա էջ ա, իսկ դու յիմար:

ԿԱՏ.—Բայց չէ որ դու ինքդ երէկ համաձայնեցիր:

ՕՎ.-Բ.—Ե՞ս:

ԿԱՏ.—Ինքդ: Դեռ ստիպեցիր որ ինձ պաշի էլ:

ՕՎ.-Բ.—Բան չեմ յիշում: Ամենքի՞ առաջ պաշեց:

ԿԱՏ.—Ի հարկէ ամենքի: Դու ինքդ ամենքի առաջ չասացիր, որ ես նրա հարսնացուն եմ:

ՕՎ.-Բ.—Իմանում ես, ինչ կասեմ քեզ. 200,000 տանելը մեծ սարսաղութիւն ա: (Զանգաւ) Էդ շամպանսկին իմ հոգին հանեց:

ԿԱՏ.—Ամենսին ոչինչ չէր երևում, շատ ուրախ էիր երէկ իրիկուն: (Համարում է) Շատ շնորհակալ եմ:

ՕՎ.-Բ.—Էդ ի՞նչու յանկարծ:

ԿԱՏ.—50,000ի համար:

ՕՎ.-Բ.—(Վախեցած) Ի՞նչ 50,000

ԿԱՏ.—Որ խոստացար ինձ իբրև օժիտ:

ՕՎ.-Բ.—Ե՞ս... և էլի ամենքի՞ առաջ:

ԿԱՏ.—Ո՛չ, երբ որ նազրիբէգովը ինձ առաջարկութիւն արեց, դու ինձ քաշեցիր, մի անկիւն և ասացիր. սիրելի թանկագին քոյրիկ...

ՕՎ.-Բ.—Հա, եթէ անկիւնու՞մ ա եղել, էդ ուրիշ բան ա: Անիծւած շամպանսկի:

ԿԱՏ.—Հա, անկիւնում և յետոյ էլ խօսք տւիր մի օրում պսակել ինձ հետ միասին:

ՕՎ.-Բ.—(վեր թռչելով) Պսակէլ... Ձէ, ամենևին էլ պէտք չէր, որ ես 200,000 տանէի: Էդ սև վրայ պիտի պսակւեմ:

ԿԱՏ.—Ս'յ, էդ չեմ իմանում: Էդ արդէնքո գաղտնիքն ա:

ՕՎ.-Բ.—Ինչ ոտներիս գաղտնիքն ա: Խմել եմ, տրաքւել էդ զահրումար շամպանսկին ու տակից-գլխից դուրս տւել:

ԿԱՏ.—Ձէ, եղբայր, դու շատ լուրջ էիր խօսում: Ես հէնց եմ կարծում, որ դու Լիզին ես առաջարկութիւն արել:

ՕՎ.-Բ.—Դէ լաւ, մի սրտաձաք անիլ դու էլ ինձ Է... Փո՛ւ. (երեսսրճիչը գլխից քաշելով) Մինչև անգամ գլխիս ցաւը կտրւեց: Էդպէս բան չը կայ, ցանցառ, ցանցառ բաներ ես խօսում:

ԿԱՏ.—Կայ և էն էլ շատ, որովհետև երբ որ Լիզան տուն էր գնում, բռնեց ինձ և մի պինդ պաշեց: Ասենք Մանիչկան էլ, Սօնիչկան էլ շատ պինդ պաշեցին:

ՕՎ.-Բ.—Ձէ, ինչպէս երևում ա, դու ուզում ես բաղաքի բոլոր հարսնացուներին գլխիս կապել:

ԿԱՏ.—Դէ լաւ, մի ծածկիր: Մայրիկն էլ ա նկատել, որ դու շարունակ Լիզի հետ էիր խօսում, նրա հետ պար գալիս և մինչև անգամ նրա հետ գեներալին վեր գցեցիր:

ՕՎ.-Բ.—(վեր թռչելով) Ինչպէս թէ վեր գցեցի:

ԿԱՏ.—Վեր գցեցիր էլի. վախի ժամանակ, տաշեղի նման գետնովը տւիր նրան:

ՕՎ.-Բ.—Ձէ, հիմի որ ճաշ կեփւի. ճարս կտրւած, պաշտօնից պիտի դուրս գամ:

ԿԱՏ.—Դու իրիկուն նրան ասացիր, որ էլ չես ծառայելու:

ՕՎ.-Բ.—Ասեցի, տէր Աստուած:

## ՏԵՍԻԼ 4

Առաջիններ և ԳԱՍՊԱՐ

ԳԱՍ.—(մի կապոց նամակներ բերելով) Ա'յ էն նամակ բերողը տւեց, սաղ մի տարի հերիք ա քեզ, կարգն հա կարգն:

ՕՎ.-Բ.—Ձահլաս տարան էլի:

ԿԱՏ.—Դու էլ մի կարդալ:

ՕՎ.-Բ.—Ձեմ էլ կարդալու: Էդ անիծւած կազեթներումը գրեցին որ 200,000 եմ տարել, հիմի աշխարհի էս ծայրից մինչև էն ծայրը նամակ նամակի վրայ ա, որ գրում են, փող ուզում: (Մէկը քանալով) Ըհ... կարգն, տես... Տոնավարդից... ով ա իմանում, սկի էդպէս քաղաք էլ չը կայ աշխարհիս երեսին: (Չանգակ)

ԳԱՍ.—Երևի էլի նամակ են բերել, ըհ...)

բո ոտը կստրւի հա, եկող: (Գնում է):

ԿԱՏ.— Էդ երևի փունջն են բերել: (Դռնե-  
րի մօտ վազելով) Գասպար, էդ սվ ա, փսնջ են  
բերել, ախ, մի ինչ որ տղամարդ ա: (Վազում  
է մ'իւս սենեակը)

### ՏԵՍԻԼ 5

ՕՎԱՆԷՍ-ԲԷԳ և ԱԻԵՏԻՔԵԱՆ

Ա.Ի.— (կողրած թղթեր ձեռքին) Օվանէս-բէգ  
կարապետով: Շատ ուրախ եմ: Աւետիքեան:

ՕՎ.-Բ.— Ներեցէք, ես հագնւած չեմ... Ի՞նչ  
կը հրամայէք:

Ա.Ի.— (նստելով) — Ես գործի համար եմ ե-  
կել: Նստեցէք խնդրում եմ: Կարճառօտ կը լի-  
նեմ: Ցանկանում էք միլիօն աշխատել:

ՕՎ.-Բ.— Միլիօն:

Ա.Ի.— Եւ այն էլ ոչ թէ մի, այլ մի քանի:  
Ես թռչելու մի գործիք եմ հնարել: Ահա նրա  
յատակագիծը: Դուք ինձ 20,000 բուբլի կը տաք,  
ես այդ թռչունը կը շինեմ և ձեզ հետ միասին  
կը թռչենք դէպի հիւսիսային բևեռը, կը գրա-  
նենք նրան և... միլիօնը գրպանդ կը դնէք:

ՕՎ.-Բ.— (վրդովւած) Դուք վեցերորդն էք  
նրանցից, որոնք եկան ինձ առաջարկելու իրանց  
հետ բևեռ թռչելու համար: Երկուսը հիւսիսա-  
յին, երեքը հարաւային:

Ա.Ի.— Ինձ համար միևնոյն է. եթէ ցանկա-  
նում էք, թռչենք դէպի հարաւային բևեռը:

ՕՎ.-Բ.— Ոչ մի տեղ թռչելու մտադրու-  
թիւն չունիմ, խնդրում եմ ինձ հանգիստ թողէք:

Ա.Ի.— Կը նշանակի դուք հաւատ չէ՞ք ըն-  
ծայում իմ հնարած գործիքին, նեղութիւն քա-  
շեցէք նայելու յատակագիծին:

ՕՎ.-Բ.— Ներողութիւն, ես հագնւած չեմ:

Ա.Ի.— Իմ նկարները օրիորդներ չեն, նրանց  
խալաթով էլ է կարելի նայել, մեծարգոյ Օվ-  
անէս բէգ:

ՕՎ.-Բ.— Ներեցէք, ասում եմ ձեզ: Ոչ մի  
բևեռ չեմ ցանկանում և ոչ մի կողմէ կ'էլ չեմ  
ստալ:

Ա.Ի.— (վեր կենալով) Զարմանալի է: Բոլոր  
կապիտալիստները միևնոյն տեսակի են: Ափսոս,  
չստ ափսոս: Ինչ որ գրողներին համար դուք  
կորցնում էք միլիօններ: Ես ունիմ մի ուրիշ  
թռչունի յատակագիծ, որ 10000 արժէ:

ՕՎ.-Բ.— Ներեցէք, պարոն, ես ձեր ազու-  
ւին 10,000 բուբլի չեմ տալ: Ցտեսութիւն:

Ա.Ի.— Հրմ... Այդ դէպքում ինձ հինգ բուբ-  
լի պարտք տւէք:

ՕՎ.-Բ.— Ուրախութեամբ: (Տալիս է նրան  
5 բուբլի) Գասպար, ձանապարհ դիր այս մար-  
դուն:

Ա.Ի.— Շատ շնորհակալ եմ: Grand merci!

բայց ափսոս, շատ ափսոս: (Գնում է: Զանգակ):

ՕՎ.-Բ.—Տեսնես էլի ով է: Զահլաս տարան էլի: Մայրիկ:

## ՏԵՍԻԼ 6

ՕՎԱՆԷՍ ԲԷԳ և ԱՆՆԱ ԽԱԹՈՒՆ

ԱՆ.-Խ.—Գալիս եմ, Օվանէս ջան, գալիս եմ:

ՕՎ.-Բ. էդ ցանցառ Գասպարին ասա, որ էլ ոչ մի թռչուն չը թողնի ինձ մօտ:

ԱՆ.-Խ.—Ի՞նչ թռչուն, սիրելիս, չը լինի ծտերն են ներս մտել պատուհանով:

ՕՎ.-Բ.—Ի՞նչ ծտեր, սատանան ա խաբար, նա ումն աներս թողնում: Մի քոծ էլ չը բռնեցիք, որ...

ԱՆ.-Խ.—Էսօր կը գայ, Օվանէս ջան, էլ էրբ բռնէինք, էն օր տեղափոխեցինք, երէկ էլ բալն էր...

## ՏԵՍԻԼ 7

Առաջիններ և ԳԱՍՊԱՐ

ԳԱՍ.—(Փռննջով) Կատինկա խանումի համար փռննջ են բերել, վեր առնեմ, թէ չէ: Մին մարդ բերել, ասում ա Զուռնաբէգով ա զրկել:

ՕՎ.-Բ.—Ախմախ, նազրիբէգով, ոչ թէ

Զուռնաբէգով: Դիր էդտեղ—սեղանի վրայ ու կորիր, չերևաս էլ աչքիս, թէ չէ... Ասուած ա իմանում, ինչ կանեմ:

ԳԱՍ.—Լսում եմ, լաւ ա, չեմ գալ: Դուք էլ զահլա տարաք էլի՞ ձեր 2000 մանէթով: (Գնում է: Զանգակ):

ՕՎ.-Բ.—Էլի զանգն են քաշում. էդ սր սատանան արաւ, որ 200,000 մանէթ տարայ, էլ մի ըոպէ հանգստութիւն չունիմ: Մայրիկ ջան, թէ էդ եկողը էլի թռչուն ա, վզակոթին տէք, դուրս արէք, ես գնամ մի շորերս փոխեմ: (Գնում է):

## ՏԵՍԻԼ 8

ԱՆՆԱ ԽԱԹՈՒՆ, յետոյ ՏՕՏՕՄԵԱՆ

ԱՆ.-Խ.—Իմ գլուխն էլ ցաւեց. առաւօտից մինչև երեկոյ գալիս են, հա՛ գալիս: Է՛ն, որ առաջ մեր տուն ոտ չէր դնի, հիմի ծէզը ծէզին ա գալիս: Մենակ վեց մանէթի սուջուխ են կերել էս շաբաթ:

ՏՕՏ.—(ժանյալ է) Պատիւ ունիմ, ինձ հարկաւոր է պարոն կարապետովի հետ խօսել:

ԱՆ.-Խ.—Նա կարծեմ դուրս ա եկել:

ՏՕՏ.—Ոչ, նա տանն է, նրա գլխարկն էլ, փայտն էլ տանն են և ձեր ծառան էլ ասաց, որ նա տանն է:

ԱՆ.-Խ.—Հա, մոռացայ, նա շորերն ա հագ-

նում. Խնդրեմ նստէք:

SOS.—Ներողութիւն, մի բան եմ ցանկա-  
նում հարցնել, դուք նրա ամուսինն էք:

ԱՆ.Պ.—Ոչ, մայրը:

SOS.—Ուրեմն նա դեռ շատ երիտասարդ է:

ԱՆ.Պ.—Շատ: Դուք գործի մասին էք ու-  
զում նրան տեսնել, թէ հէնց այնպէս: (Ոտից  
մինչև զլուխ նայելով) Ով գիտա, փող էք ու-  
զում պարտք վերցնել:

SOS.—Ի՞նչպէս ասեմ ձեզ:

ԱՆ.Պ.—Մենք պարտքով փող չենք տալիս:

SOS.—Չէք տալիս: Այդ դիպածում ես  
գործով եմ եկել:

ԱՆ.Պ.—Նա հիմի դուրս կը գայ: (Ժնծու-  
թով դուռը) Օվանէս ջան, քեզ մօտ են եկել  
գործով:

### ՏԵՍԻՒ 9

Առաջիններ, Օվանէս-Բէր, յետոյ ԳԱՍՊԱՐ

Օվ.-Բ.—(սիրտուկը հագնելով) Ո՞վ ա եկել:  
Ախ, ներողութիւն:

SOS.—(վեր կենալով) Թոյլ տէք ներկայա-  
նալ. Տօտօմեան, մայրաքաղաքի լրագրների աշ-  
խատակից: Մի շաբաթ առաջ մայրաքաղաքի լր-  
ագրներին հեռագիր ուղարկեցի, որ մեր քա-  
ղաքացիներին մէկը, ամենայնպէս պարոն Օ-

վանէս-Բէր կարապետովը տարել է 200,000  
լուբլի:

Օվ.-Բ.—Ուրեմն էդ դժուր էք տարածել սաղ  
Ռուսաստանի մէջ. շատ շնորհակալ եմ:

SOS.—Ես. համաձայնեցէք, որ այդպիսի  
բացառիկ դէպքի մասին անկարող էի լուր:

Օվ.-Բ.—Եւ դրա շնորհիւ ես հանգստու-  
թիւն չունիմ գիշեր-ցերեկ. մտիկ արէք, սեղա-  
նի վրայ մի կապոց նամակներ ա ընկած, իսկ  
դռնս առաջ հարիւրով աղքատ ա կանգնած:  
Իսկ հիմի ի՞նչ էք ուզում:

SOS.—Ես կուզէի մի քանի հարց տալ ձեզ՝  
լրագրում գրելու համար. գործընկալ խաղալու  
նախընթաց օրը ձեր նախագագմունքը ձեզ ի՞նչ  
էր ասում, մի աչքի ընկնող երազ չէք տեսել:

ԱՆ.Պ.—Ես, սիրելիս, այժ եմ տեսել ե-  
րագումս:

Օվ.-Բ.—Իսկ ես էշ:

SOS.—Այժ և էշ: Շնորհակալ եմ. թէպէտ  
այդ շատ տարօրինակ է, որ մայրը և որդին  
տեսել են խաղարկութեան նախընթաց օրը մի-  
միայն կենդանիներ: Այժմ ասացէք խնդրեմ,  
ի՞նչ գրացիք, երբ իմացաք, որ ձեր տոմսակը  
200,000 է տարել:

Օվ.-Բ.—Ուտել ցանկացայ. ներողութիւն,  
ես դեռ չայ չեմ իմել: Մայրիկ, ինձ չայ տուր:

ԱՆ.Ն.—Իսկոյն, Օվանէս ջան, իսկոյն:  
(Գնում է)

SOS.—Շատ լաւ եղաւ, մի բաժակ էլ ես  
կը խմեմ: Եւ այդպէս, թանկագին Օվանէս-բէգ,  
դուք ասում էք որ...

Օվ.-Բ.—Ես ասում եմ «ներեցէք», որով-  
հետեւ ժամանակ չունիմ: (Վեր է կենում):

SOS.—Միթէ չէք կարող նւիրել 10 ըոպէ:

Օվ.-Բ.—Ներեցէք, չեմ կարող... ես դեռ  
չեմ քնել—վերջացրել, և գործ ունիմ... և ցտե-  
սուլթիւն, ուրիշ անգամ շնորհ բերէք: Գասպար:

SOS.—Բայց ես կուզենայի իմանալ գոնէ  
ի՞նչ կեանք էիք վարում մինչև 200,000 տանելը:

Օվ.-Բ.—Գասպար:

SOS.—Մի անհանգստանաք, առանց Գաս-  
պարի էլ կը դնամ: Բայց թոյլ տէք մտնել միւս  
անգամ մի քանի ըոպէով...

Օվ.-Բ.—Միւս անգամ եկէք, իսկ այժմ նե-  
րեցէք: Ցտեսուլթիւն:

SOS.—Ցտեսուլթիւն, թանկագին Օվանէս-  
բէգ. էլի մի հարց, ձեր խաղատոմսը գրաւ դրած  
չէ՞ հօ:

Օվ.-Բ.—Գասպար: (Մտնում է Գասպարը)

Տուր պարոնին վերարկուն: Ցտեսուլթիւն:

SOS.—Ցըհաճելի տեսուլթիւն: (Գնում է,  
Գասպարը յետեւից):

Օվ.-Բ.—Էդ սատանան ա իմանում, թէ ինչ  
յանդգնութիւն ա. առանց ամօթի ներս են մըտ-  
նում թէ տունս և թէ դրպանս. (զանգակ) էլի...  
(վազում է դէպի դուրս եւ քղաւում) Գասպար,  
Գասպար, այստեղ արի... (ընում է նրա ձեռքը  
ու քաշում առաջ) ես քեզ հայերէն լեզուով ասա-  
ցի, կարծեմ, որ դու ոչ ոքի չընդունես:

ԳԱՍ.—Եւ չընդունեցի էլ. այ քո շորն էր  
բերել կարողը, չընդունեցի: Հրամայել են ոչինչ  
չընդունել՝ ասացի:

Օվ.-Բ.—Իսկ էն մարդը, որ ինձ մօտ էր  
հիմի, ի՞նչի ներս թողեցիր:

ԳԱՍ.—Բա դու ինձ ասացիր, որ ներս չը  
թողնեմ: Չընդունելու մասին ես ինձ ասել, իսկ  
ներս թողնելու մասին էս ա լսելս:

Օվ.-Բ.—Թիւ... քեզ պէս յիմարի հետ սկի  
խօսալ էլ չեմ ուզում:

ԳԱՍ.—Յիմար... տասը տարի ա ասըում  
եմ, խելօք էի, հէնց որ 2000 տարար—յիմար  
դառայ: Ո՛չ, յիմար չեմ. այ դու ասիր, որ  
էն սարսաղին վերարկու տամ. որ յիմար լինէի,  
վեր կառնէի ու թագա վերարկուդ կը տայի, ա-  
մա ես հինը տւի:

Օվ.-Բ.—Ի՞մ վերարկուն տւիր:

ԳԱՍ.—Բա ո՞ւմը:

Օվ.-Բ.—Ես ախար ասացի, որ նրա վերար-  
կուն տաս:

ԳԱՍ.—Բա նրան հրատեղից ա, նա առանց վերարկու էր եկել: Ես էլ հէնց գիտացի թէ տարած փողի խաթրու աղքատ ա—բախշում ես:

ՕՎ.-Բ.—Կորիւր աչքիցս, կորիւր... թէ չէ... (զանգաւ) Եթէ մի անծանօթի ներս ես թողել, էլ ոտդ էստեղ չը լինի, հասկացա՞ր: Կորիւր:

(Գասպարը զնում է):

ՕՎ.-Բ.—Ձէ, ոնց որ տեսնում եմ, ես պէտք ա փախչեմ էստեղից, էլ ապրելու հնար չը կայ: Մէկ էլ երէկւայ շամպանսկին, հր սատանան խելքիս փչեց էղքան խմել: Բոլորովին միտս բան չի գալիս. չը լինի դրթ ես առաջարկութիւն եմ արել լիզին. ասենք նա շատ լաւ աղջիկ ա, գեղեցիկ ա, բայց շատ յիմար բան ա առանց այլ և այլութեան վերցնել և առաջարկութիւն անելը: Թէկուզ սպանիր, բան չի միտս գալիս: Հարուստ լինելն էլ մի խաթաբալայա, ամեն սարսաղութիւն էլ կարելի ա անել: (Բեմի յետեւ աղմուկ) էլի ի՞նչ բան ա, տեսնես ո՞վ ա էլի ուզում ներս գալ: Սրա վերջը ե՞րբ պէտք ա լինի:

### ՏԵՍԻԼ 10

ՕՎԱՆԷՍ-ԲԷԳ, ՆԱԶԻԲԵԳՈՎ և ԳԱՍՊԱՐ

ՆԱԶ.—(ներս է վազում, Գասպարը ըննած է նրա Ֆրակի փէշից)—Թո՛ղ, քեզ ասում եմ, յի-

մարի գլուխ: Մի նայեցէք, խնդրեմ, փէշերս խօ պատուած չէն:

ՕՎ.-Բ.—Կարծեմ դեռ ոչ:

ՆԱԶ.—Շնորհակալութիւն: Բարի առաւօտ, Օվանէս-բէգ: (Սեղմում է նրա ձեռքը) Օրիորդ կատինկան անողջ է:

ՕՎ.-Բ.—Շնորհակալ եմ, հագնւում ա:

ՆԱԶ.—Իսկ Աննա-խաթունը:

ՕՎ.-Բ.—Նոյնպէս, շնորհակալ եմ, խոհանոցուհի ա:

ՆԱԶ.—Շատ ուրախ եմ: Ա՛, էդ կարծեմ իմ փունջն ա: (Վերցնում է եւ նայում) Աւելի լաւ, ես ինքս կը տամ նրան:

### ՏԵՍԻԼ 11

Առաջիններ, ԱՆՆԱ, ԽԱԹՈՒՆ (մի բաժակ թէյով)

ԱՆ.-Խ.—Չայը շատ էլ տաք չի: Էն սարսաղ Գասպարը կրակ չի գցել, որ տաքացնի: Ա՛, բարով պարոն Նազրիբէգով:

ՆԱԶ.—(համբուրում է նրա ձեռքը)

ԱՆ.-Խ.—Ես իսկոյն կասեմ կատինկին:

ՆԱԶ.—Մի անհանգստանաք, նա կարծեմ հագնւում ա:

ԱՆ.-Խ.—Ես իմանամ, պրծել ա թէ չէ: (Գնում է):

ՆԱԶ.—Ախ, Օվանէս-բէգ, եթէ իմանաք որ-  
քան ուրախ եմ երէկեանից սկսած:

ՕՎ. Բ.—(կողմ) Ինչ ախմախ ուէիս ա, Տէր  
Աստուած, չը լինի իմն էլ ա էդպէս դառնալու:

ՆԱԶ.—Շատ, շատ բաղդաւոր եմ: Ես այն-  
պէս եմ սիրահարւած ձեր քրոջ վրայ, այնպէս  
սիրահարւած: (Ձանգակ):

ՕՎ.-Բ.—էլի:

ՆԱԶ.—Այսինքն ինչպէս թէ էլի: Ներողու-  
թիւն, ես բացի Կատինկան ուրիշ ոչ ոքի վրայ  
երբէք սիրահարւած չեմ եղել:

ՕՎ.-Բ.—Ես քո մասին չեմ ասում: Ի՞նչ  
ես զահլա տանում քո սէրով:

ԱՆ.-Խ.—(զուռը ըացելով) Պարոն Նազրիբէ-  
զով, Կատինկան քեզ ա սպասում:

ՆԱԶ.—Թոչում եմ: (Վազում է):

### ՏԵՍԻԼ 12

Առաջիններ և ՄԻԽԱՅԻԼ-ԲԵԳ

ՕՎ.-Բ.—Ի հարկէ Միխայիլ-բէգն ա:

ՄԻԽ.-Բ.—Ես եմ բա՛: Վեր ես կացել հա,  
հա, հա... արի մի պաշեմ քեզ: (Համըռուով է)  
Չը, ինչպէս ես... քէֆդ ոնց ա, երէկ շատ լաւ  
էիր է, լաւ լազաթին:

ՕՎ.-Բ.—Ասում են:

ՄԻԽ.—էնպէս էր լեզուդ բացել, որ ես

դժւարութեամբ էի ճանաչում քեզ: Սա ի՞նչ բան  
ա, ասում էի, սա մեր սուս ու փուս Օվանէսն  
ա. ա՛յ, ասում էի, ինչ բան ա հարստութիւնը:

ՕՎ.-Բ.—Կարծեմ մի աւելորդ բան չեմ ա-  
րել երէկ... Բայց ա՛յ որ գեներալին վեր եմ զը-  
ցել, այդ լաւ չի, մէկ էլ որ շատ եմ խմել:

ՄԻԽ.-Բ.—Գեներալը չի նեղացել, բայց որ  
խմել ես՝ էդ էլ մի մեծ ցաւ չի, որովհետեւ պատ-  
ճառ կար. առաջին որ մեծ գումար ես տարել,  
երկրորդ որ բոլոր ընկերներդ էին հաւաքւել և  
երրորդ... բայց էդ ինչ ա, թթւած ես երևում,  
զլուխդ ցաւում ա:

ՕՎ.-Բ.— Ցաւում էր, բայց անցաւ: Ձան-  
լաս տարան էդ փող խնդրողները:

ՄԻԽ.-Բ.—Վզակոթներին տալով դուրս ա-  
րա: Դու, Օվանէս, հիմի փողերդ պիտի պահես  
իմ թոռների համար:

ՕՎ.-Բ.—Քո թոռների համար:

ՄԻԽ.-Բ.—Բա ի՞նչ էիր կարծում: Ասենք  
քո փողերի համար հոգս կը տանի հիմի կնիկդ:  
Մանիշկին երէկ ասում եմ. մտիկ արա, Մա-  
նիշկա, մարդուդ ձեռքիդ մէջ պահիր հա, թէ  
չէ նա թըջւած հաւ ա: Դու ինձ ներիր, ես ու-  
ղիդն եմ ասում:

ՕՎ.-Բ.—Ես չեմ նեղանում, բայց ինչ գործ  
ունի էստեղ քո աղջիկը:

ՄԻԽ.-Բ.—Ի՞նչպէս թէ գործ: Հա, հա, հա...

Ձէ, ինձ դուր ա գալիս. ի՞նչ գործ ունի նրա ա-  
պագայ կնիկը... հա՛, հա՛, հա՛...

Օվ.-Բ.—(վեր թռչելով) Մանիշկան իմ կը-  
նիկը: Դու գժեւել է՞ս:

Միւ.-Բ.—Ե՞ս եմ գժեւել. չէ, դու շատ հա-  
նաքչին ես. սրան նայեցէք, աղջկաս առաջար-  
կութիւն ա արել, և ես եմ գժեւել. հա՛, հա՛, հա՛...

Օվ.-Բ.—Ե՞ս եմ առաջարկութիւն արել:

Ձի կարող էդ լինել:

Միւ.-Բ.—Ձի՞ կարող լինել: (Արագ նրան  
ժօտենալով) Դու ի՞նչ ա, խելքից պակաս ես,  
խօսքդ յէտ ես վերցնում: Ձէ, կը պսակեմ,  
գուր ես չարչարուում:

Օվ.-Բ.—Գիտե՞ս ինչ կայ... ես կարծում  
եմ... էդ երևի չի եղել... այլ...:

Միւ.-Բ.—Ես գնամ, մի բերեմ կնկաս ու  
աղջկաս, տեսնենք էդ ոնց չի եղել:

Օվ.-Բ.—Լսիր, սպասիր...

Միւ.-Բ.—Ձէ, եղբայր, կատակը մի կողմ,  
դու ինքդ կը խօսաս նրանց հետ: Հսօր կըն-  
կաս հետ սող քաղաքում ամենքին պատմել ենք,  
որ դու մեր Մանիշկին ուզում ես, հիմի էդ ոնց  
թէ չի կարող լինել: Ես, եղբայր, կատակներ չեմ  
սիրում: (Գնում է):

Օվ.-Բ.—Լսիր, Միխայէլ... (ղոնջրում) Մի-  
խայէլ... չէ, գնաց: Ախ, անիծւած շամպանս-

կիյ... և ռը սատանան ա նրան հնարել... Վա՛յ,  
եթէ իսկապէս Լիզին էլ եմ առաջարկութիւն  
արել... Թիւ, մինչև անգամ գլուխս պտուեց  
(ծածկում է երեսը):

### ՏԵՍԻԼ 13

ՕՎԱՆԷՍ-ԲԷԳ, ԿԱՏԻՆԿԱ, ԱՆՆԱ. ԽԱԹՈՒՆ և ՆԱԶՐԻ-  
ԲԷԳՈՎ

ԿԱՏ.—Տես ինչ փունջ ա բերել ինձ հա-  
մար իմ Գրեգոււարը:

Օվ.-Բ.—(մեքենաքար վերցնում է, նայում,  
աչքերը ըացում եւ գլուխը թափահարում):

ԿԱՏ.—Ի՞նչ ա պատահել քեզ:

Օվ.-Բ.—Ոչինչ, մի թիւրիմացութիւն: (Տա-  
նելով քրոջը մի կողմ) Ճիշտն ասա, Կատինկա,  
հում եմ ես երէկ երեկոյեան առաջարկութիւն  
արել:

ԿԱՏ.—Ճշմարիտ միթէ՞ ոչինչ չես յիշում:

Օվ.—Բ.—Ոչինչ: Դուրս ա գալիս, որ կօշ-  
կակարի նման հարբած եմ եղել. այդ յիշում եմ:

ԿԱՏ.—Ես կարծում եմ, որ եթէ առաջար-  
կութիւն ես արել, երևի Լիզին:

Օվ.-Բ.—Դու հաւատացած ես:

ԿԱՏ.—Հաւատացած չեմ, բայց կարծում եմ:  
Լիզան տուն գնալիս ինձ էնպէս պաչեց, էնպէս  
պաչեց:

ՕՎ.-Բ.—(տնազեւրով) Էնպէս պաշեց, էնպէս պաշեց... Գնահ, կորիւր քո պաշերով, ես նրան լուրջ բան եմ հարցնում, իսկ նա ինձ ցանցառ: Մանիչկին ես առաջարկութիւն կարող էի անել, թէ չէ:

ԿԱՏ.—Մանիչկին էլ կարող էիր, նա էլ գընալուց ինձ էնպէս պաշեց, էնպէս...

ՕՎ.-Բ.—Դէ գնահ կորիւր դու էլ: Մայրիկ, մի ըոպէս...

ԱՆ.-Խ.—Էլի՞ չայ բերեմ:

ՕՎ.-Բ.—Մի դէն կորցրու քո չայն էլ է: Միայն էս ասա, ձեւ եմ երէկ առաջարկութիւն արել:

ԱՆ.-Խ.—Ոչ տեսել եմ, ոչ լսել: Եւ երբ տեսնէի, երբ որ լակէյները բալի վերջում էնպէս էին լակել, որ ես ամեն տեղ էլ կոխում էի քիթս:

ՕՎ.-Բ.—Բայց ի՞նչ ես կարծում, ձեւ կարող էի ես առաջարկութիւն անել:

ԱՆ.-Խ.—Իմ կարծիքով Սօնիչկին:

ՕՎ.-Բ.—Սօնիչկին... մայրիկ, իմ բանը բուրդ ա:

ԱՆ.-Խ.—Ի՞նչպէս թէ բուրդ ա:

ՕՎ.-Բ.—Կարծեմ ես բոլորին էլ առաջարկութիւն եմ արել:

ԱՆ.-Խ.—Ի՞նչ ես ասում, ի՞նչ ես ասում, Օվանէս ջան, բա էդ ի՞նչպէս էր կարող պատահել:

ՕՎ.-Բ.—Շամպանսկուց մենակ էդ չէր կարող պատահել. էդ դեռ քիչ ա, էդ զահրումարից ես կեանքումս սկի չեմ խմել, իսկ իրիկուն խմում էի, հա խմում... (զանգակ) էդ երեւի իմ գորանչներից մէկն ա: Մայրիկ ջան, սենեակումս չեմօղան կայ, յամենայն դէպս դիր նրա մէջ մի փոխնորդ սպիտակեղէն, մի ջուխտ կօշիկ և մի ձեռք հագուստ: Ով գիտա ի՞նչ ա պատահում:

ԱՆ.-Խ.—Ի՞նչ ա, ուզում ես գնալ:

ՕՎ.-Բ.—Ոչ որին խօսք մի ասիլ, ով գիտա, գուցէ վեր կենամ ու փախչեմ:

## ՏԵՍԻԼ 14

Առաջիններ և ՄԱՐԻԱՄ ԲԱՋԻ

(Բեմի յետեւ Մարիամ ըաջու ձայնը)

ՕՎ.-Բ.—Չորանչ առաջին համար:

ՄԱՐ.-Բ.—Բարի լոյս ձեզ, չը խանգանեցի հօ: (Համբուրում է կանանց):

ԿԱՏ.—Ամենևին, շատ ուրախ եմք:

ՄԱՐ.-Բ.—Ես մի ըոպէսով եկայ միայն. Սօնիչկի հետ գնացինք շոր կարողի մօտ, ու անց էինք կենում ձեր տան մօտով, ասի, Սօնիչկա, դու գնահ, ես իսկոյն քո յետևից կը հասնեմ, մի մտնեմ տեսնեմ ինչ քէֆի ես: Ա՛յ, բարով, պարոն Անդրանիկ:

ՆԱԶ.—Ներողութիւն, իմ ազգանունը Նազ-  
րիբէզով ա:

ՄԱՐ.-Բ.—Ներողութիւն, ես ձեզ մարշի հետ  
խառնեցի, իսկ երբ որ ես յուզուում եմ, միշտ  
ամեն բան խառնում եմ մէկ մէկու: Թանկա-  
գին Օվանէս-Բէզ... (վազում է զիրկը քաց ղէ-  
պի նա) Այս ի՞նչ ա, փունջ, և ի՞նչ սիրունն ա.  
մ, հասկանում եմ,

ՕՎ.-Բ.—(Կողմ) Բայց ես բոլորովին բան  
չեմ հասկանում:

ՄԱՐ.-Բ.—Դու ինչպէս մի սիրալիր փեսայ  
ուզում էիր ուղարկես նշանածիդ այդ փունջը.  
ի հարկէ այդ շատ քաղաքավարի վարմունք ա...  
(վերցնում է փունջը):

ՕՎ.-Բ.—Իմ նշանածի՛ն:

ՄԱՐ.-Բ.—Իհարկէ քո նշանածին, իմ աղ-  
ջկան՝ Սօնիչկին:

ՕՎ.-Բ.—Ասացի որ զոքանչս ա:

ԿԱՏ.—Ներողութիւն, Մարիամ բաջի, էդ  
իմ փունջն ա:

ՄԱՐ.-Բ.—Քոնն ա... ներողութիւն: Երևի  
Օվանէս բէզը ուրիշն ա պատւիրել:

ԿԱՏ.—Ուրեմն ահա ումն ես դու առաջար-  
կութիւն արել, եղբայր: Էլ ի՞նչու էիր թագոց-  
նում, դէ շնորհաւորում եմ:

ՆԱԶ.—(Միւս կողմից) Թոյլ տէք ինձ էլ:

ՕՎ.-Բ.—(Արան ընթելով) Շնորհակալ եմ:

ԿԱՏ.—Ա՛խ, ինչպէս գաղտնապահ ա իմ եղ-  
բայրը. այս առաւօտ նրան կպայ, խնդրեցի որ  
ասի, չասեց ու չասեց:

ԱՆ.-Խ.—Ա՛յ, տեսնում ես, Օվանէս, ինչպէս  
որ ասում էի, այնպէս էլ դառաւ: Շնորհաւո-  
րում եմ և ցանկանում եմ ամեն բարիք. մի  
բարձի ծերանաք, որդիք:

ՕՎ.-Բ.—Շնորհակալ եմ, մայրիկ ջան, բայց  
պայուսակս դարսելը չը մոռանաս:

ՄԱՐ.-Բ.—Սիրելի Օվանէս-բէզ, թոյլ տուր  
ես էլ կամպանիի համար պաշեմ քեզ, Ձէ, մենք  
կնանիքս թագցնել չը գիտենք ոչինչ: Գնում  
ենք էսպէս Սօնիչկի հետ և, հէնց կարծես դիտ-  
մամբ, շարունակ ծանօթներ են պատահում. ճա-  
րըդ կտրած կանգնացնում ես կառքդ և ասում.  
«Շնորհաւորեցէք Սօնիչկին, մարդու ա գնում,  
Օվանէս-բէզին:» Ա՛յ, այ... խօսքով բռնեցայ,  
իսկ խեղճ Սօնիչկան շոր կարողի մօտ ինձ ա  
սպասում:

ԿԱՏ.—Էնտեղից Սօնիչկի հետ ուղիղ եկէք  
մեր տուն:

ԱՆ.-Խ.—Եւ միասին էլ չայ կը խմենք:

ՄԱՐ.-Բ.—Գուցէ դուր չը գայ մեր սիրե-  
լի փեսային:

ՕՎ.-Բ.—Ընդհակառակը: (Ժամացոյցին նա-  
յելով) Միայն թէ շատ էլ չը շտապէք:

ՄԱՐ.-Բ.—Հասկանում եմ, հասկանում եմ,

երևի ուղղում ես Սօսիչկին սիւրպրիզ անել: Լաւ,  
լաւ...

ՕՎ.-Բ.— Հա, հա... սիւրպրիզ, սիւրպրիզ...  
(կողմ) հոգիս դուրս եկաւ:

ՄԱՐ.-Բ.— Դէ ցտեսութիւն, ֆիաս բարով  
չեմ ասում: (գնում է)

ԲՈՂՈՐԸ.— (ըստի Օվանէս-բէգից) Յետեութիւն:  
(Կատինկան և Եագրիբէգովը նրան ծա-  
նապարհում են մինչեւ դռները):

ՕՎ.-Բ.— (Մօրը մի կողմ քաշելով) Ինչքան  
կարելի ա, շուտ պատրաստիր չեմօդանս, մայ-  
րիկ ջան, շուտ, շուտ, ապա թէ ոչ խայտառա-  
կութիւն պիտի պատահի: Գնացքը մի սհաթից  
գնում ա, ես կը գնամ Թիֆլիս, իսկ էստեղից  
կը գրեմ ինչ անէք:

ԱՆ.-Խ.— Բայց, Օվանէս ջան, ի՞նչ պիտի  
անես հարսնացուիդ բանը:

ՕՎ.-Բ.— Ո՞ր հարսնացուի: Ես իրիկուն, ոնց  
որ տեսնում եմ, բանս շատ եմ փշացրել և վեր-  
ջը պիտի միանգամից հինգ աղջկայ հետ պսակ-  
ւեմ: Միխայիլ բէգն ասում ա, որ իրա աղջկան  
առաջարկութիւն եմ արել:

ԱՆ.-Խ.— Նա սուտ ա ասում:

ՕՎ.-Բ.— Սուտ ասել կարող ա, բայց որ  
ինձ կը խայտառակի սաղ քաղաքում, ամենքի  
բերանի մաստակը կը շինի— էդ ուղիդ ա: Չէ,

ոնց որ տեսնում եմ, ինձ փախչելուց զատ ու-  
րիշ բան չի մտում անելու և որքան կարելի ա  
շուտ, իսկ դուք էստեղ ամենքին կասէք, որ գոր-  
ծով Թիֆլիս եմ գնացել, որ շուտով կը վերա-  
դառնամ, իսկ յետոյ թող ինձ բռնեն, տեսնեմ  
որտեղ: Դէ գնա, մայրիկ, թէ չէ ինձ կտոր կը-  
տոր կանեն: (Աննա խաթունը գնում է. զանգակ)

ՕՎ.-Բ.— Չը լինի էլի մի ուրիշ գոքանչ ա:  
Ա՛խ, փող կտրող, վիզդ կտարւի:

ԿԱՏ.— Ես հաւատացած էի, եղբայր, որ դու  
Լիզի վրայ կը պսակւես:

ՕՎ.-Բ.— Ես էլ էդպէս էի մտածում, բայց  
չը գիտեմ ինչ որ թարս դուրս եկաւ ամեն բան:  
(Շկաֆից թղթեր հանելով, գրպանն է գնում):

## ՏԵՍԻԼ 15

Առաջիններ և ՍԱՌԱ ԽԱԹՈՒՆ

(Բեմի յետեւ Սառա խաթունի ձայնը)

ՕՎ.-Բ.— Կնկայ ձայն ա, ի հարկէ գոքանչ  
ա գալիս:

ՍԱՌ.-Խ.— Թանկագին Կատինկա, բարի ա-  
ռաւօտ. (համընդուն է) Պարոն Նազրիբէգով, բա-  
րով ձեզ, շատ լաւ սղայ էք, երէկ էնքան լաւ  
էիք ածում, որ բոլոր օրիորդները հիացել են:  
Էդ շատ գովելի ա, որ առաւօտից արդէն հարս-  
նացուիդ մօտն ես: Ուրեմն միանգամից երկու

հարսանիք կուենենանք, էլի՜:

ԿԱՏ.—Ուրեմն դուք էլ էք իմանում: Ամբողջ քաղաքը գիտի, իսկ դու, եղբայր, մեզանից ծածկում ես:

ՍԱՌ.-Խ.—Բա, իսկ ես նրան չեմ էլ տեսնում: Թանկագին... բարով... (համբուրում է) իսկ ես մի րոպէով եմ միայն եկել:

ԿԱՏ.—Ձը լինի թէ դուք էլ էիք շոր կարողի մօտ գնում:

ՍԱՌ.-Խ.—Ի հարկէ: Լիզա ջան, ասում եմ, արի դու գնա, իսկ ես կը մտնեմ փեսացուիդ մօտ և բարեզ նրան կը տանեմ:

ԿԱՏ.—Ի՞նչպէս... Ձեր Լիզան եղբօրս հարսնացունն ա՛, բայց նա կարծեմ ուրիշի վրայ ա ուզում...

ՍԱՌ.-Խ.—Ի՞նչպէս թէ ուրիշի... Կատինկա ջան, երէկ նա հէնց ահա էստեղ առաջարկութիւն արեց և ինձանից էլ հէնց էստեղ, ա՛յ, համաձայնութիւն ստացաւ, հասկանում էք, Կատինկա ջան, ինձանից:

ԿԱՏ.—Բա ի՞նչ կանես, եղբայր, Սօնիչկի հետ:

ՕՎ.-Բ.—Սօնիչկի հետ, նա ո՛վ է որ: Սօնիչկան՝ Սօնիչկա կը ֆնայ, Լիզան՝ Լիզա: Էդ շատ դատարկ բանն ա՛: Ես զարմանում եմ, քոյրիկ, ինչու դու էդ չես հասկանում: Ա՛յ, Սառա-խաթունը շատ լաւ ա հասկանում ամեն բան:

ՍԱՌ.-Խ.—Ոնց չէ, շատ լաւ եմ հասկանում:

ՕՎ.-Բ.—Շատ լաւ ա հասկանում: Ի՞նչպէս ա որ դու էլ չես հասկանում: Ուրեմն շոր կարողի մօտ էք գնալու, Սառա-խաթուն, էնտեղից ի հարկէ մեզ մօտ կը գաք... (ժամացոյցին նայելով)... չայ խմելու:

ՍԱՌ.-Խ.—Ի հարկէ: Լիզիս սիրտը ճաքում ա, ուզում ա շուտով քեզ տեսնի, մենք իսկոյն կը գանք: Ցտեսութիւն, հրեշտակս, Օվանէս ջան: (Գնում է):

ՕՎ.-Բ.—Ցտեսութիւն, ցտեսութիւն, ցտեսութիւն... մայրիկ ջան, չեմօգանս պատրաստ ա՛:

## ՏԵՍԻԼ 16

Առաջիններ և ԱՆՆԱ ԽԱԹՈՒՆ

ԱՆ.-Խ.—Հա, հոգիս, Օվանէս ջան, պատրաստ ա:

ԿԱՏ.—Գնում ես, եղբայր, ո՛ւր:

ՕՎ.-Բ.—Սո՛ւս, իսէր Աստուծոյ, սուս արէք: Գասպարը էստեղ հօ՛ չի:

ԱՆ.-Խ.—Նա էստեղ ա՛ դուրսը:

ՕՎ.-Բ.—Ուրեմն շատ լաւ, թէ չէ իսկոյն խաբարը կը տանի: Մայրիկ, քոյրիկ, իմ պազայ փեսայ, ես ձեզ հետ պէտք ա խօսեմ պարզ. ինձ մի մեծ դժբաղդութիւն ա պատահել: Առաջին՝ ես 200,000 եմ տարել...

ԿԱՏ.— Դէ էդ ի՞նչ դժբաղդու թիւն ա որ...

ՕՎ.-Բ.— Դրանից էլ հէնց սկսեց: Երէկ ես միանգամից երեք աղջկայ առաջարկութիւն եմ արել:

ԿԱՏ.— Երեք. սոյ, էդ չէի սպասում քեզանից:

ՕՎ.-Բ.— Ես էլ չէի սպասում և մինչև այժմ էլ չեմ հասկանում, թէ ոնց ա պատահել: Ինքներդ էլ գիտէք, որ երեքի վրայ միանգամից պսակել չեմ կարող. խայտառակել եմ, ոնց որ տեսնում էք և, յետոյ ով ա իմանում, կը վերցնեն և մի լաւ կը դմբղեն ինձ: Ես էլ ստիպւած փախչում եմ, Թիֆլիս եմ գնում, իսկ յետոյ ձեզ էլ կը տանեմ:

ԿԱՏ.— Ուրեմն մեր հարսանիքը Թիֆլիսում կը լինի:

ՕՎ.-Բ.— Միայն թէ ոչ ոքի չասէք առայժմ, թէ ուր եմ գնացել:

ԱՆ. Խ.— Ախ, Օվանէս ջան, էդպէս բան կը լինի:

ՕՎ.-Բ.— Ի՞նչ անես, մայրիկ ջան, բոլորի պատճառը էդ անիծւած 200,000-ն ա:

ԿԱՏ.— Ես քեզ խորհուրդ եմ տալիս բակի գոնով գնալ, թէ չէ Գասպարը կը տեսնի:

ՆԱԶ.— Ես ձեզ ճանապարհ կը գնեմ, չեմ ոգանը մինչև կառքը ես կը տանեմ, իսկ դուք յետևիցս կը գաք, իբրև թէ զբօսներու էք

գնում:

ՕՎ.-Բ.— Հրաշալի միտք ա: Դու էնքան էլ յիմար չես, ոնց որ կարծում էի: Տէք ինձ շլեատաս, փայտա և վերարկուս: (Նազրիբէգովը գնում է) Դէ, մայրիկ, ցտեսութիւն... էգուց ես Թիֆլիս տուն կը բռնեմ և ձեզ էլ նամակ կը գրեմ: Քոյրիկ, ցտեսութիւն: (Նազրիբէգովը հանաձ, ուզած իրերը ընրում է եւ օգնում է Օվանէս-ըէզին հազնել) Դէ, Նազրիբէգով, վեր սա չեմօղանը: (Նազրիբէգովը վերցնում է) Դէ, շտապէք, շտապէք, թէ չէ գոքան չնեքս վրայ կը հասնեն: Ցտեսութիւն ցտեսութիւն: (Դուրս են վազում):

ԱՆ. Խ.— Դէ, փառք Աստծոյ, գնացին: Կատինկա ջան, Գասպարին ասա, դռները բանայ, հիմի կարելի ա:

ԿԱՏ.— Բա որ եղբօրս տեսնէն:

ԱՆ. Խ.— Չեն տեսնի, բակի դուռը միւս փողոցն ա դուրս գալիս:

ԿԱՏ.— Ախ, այդ մոռացել էի: (Վազում է նախասենեակ. լսում են կանացի ձայներ):

## ՏԵՍԻԼ 17

Սուաջիհներ, ՄԱՐԻԱՄ ԲԱԶԻ և ՍԱՌԱ ԽԱԹՈՒՆ աղ-  
ջկերանցով:

ՄԱՐ.-Բ.—Դէ, սիրելի Աննա-խաթուն, էս  
լինչ բան ա, մի բացատրեցէք ինձ. ճանապարհին  
հանդիպում եմ էս մեր Սառա-խաթունին, ասում  
եմ իմ Սօնիչկին Օվանէս բէզը ուզել ա, նա էլ  
թէ՛ սխալում ես, իմ աղջկան ա ուզել, նա  
ա նրան գնում:

ՍԱՌ.-Խ.—Ի հարկէ, իմ Լիզան ա մարդու  
գնում, ոչ թէ քո Սօնիչկան: Աննա-խաթուն,  
աւելի լաւ է, դո՛ւ ինքդ ասա նրան:

ԱՆ.-Բ.—Ճշմարիտ, ես չեմ իմանում: Էդ  
Օվանէսի բանն ա:

ՄԱՐ.-Բ. } —Թող նա մի էստեղ գայ, ո՛ւր  
ՍԱՌ.-Խ. }   անա, մեր սիրելի Օվանէսը:

ԿԱՏ.—Եղբայրս տանը չի, նա գնաց բա-  
զար, բան-ման առնելու. մի երկու սնաթից կը  
գայ և էն ժամանակ ի հարկէ կասի ձեզ ամենը:  
(Զանգակ) Նստեցէք խնդրեմ, չայ չէք ուզում:  
(ընմի յետեւ ծայներ)—Ես իսկոյն կասեմ, որ  
սամովարը բերեն. (գնում է դէպի դուռը եւ քղա-  
ւում)—Ա՛յ...

## ՏԵՍԻԼ 18

(Ամենքից առաջ Գասպարը շեմօղանով, նրա  
յետեւից Օվանէս-բէզը, որի կոներից ըննած են  
Միխայիլ-բէզը իւր աղջկայ հետ, նրանց յետե-  
ւից Վառինկա-ըաջին եւ Նազրիբէզովը):

ՄԻՍ.-Բ.—Դոների մօտ բռնեցի: Չէ, Օ-  
վանէս, դու առաջ պսակւիր Մանիչկի հետ, իսկ  
յետոյ գնա՛, ուր որ քէֆդ տալիս ա, ման արի:

ՕՎ.-Բ.—Անիծւես դու հա՛... էս էլ քեզ  
200,000 (ըողորը դէպի նրան են վազում, ըացա-  
տրուծին պահանջելու, նա ձեռքերն է լծափա-  
հարում):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

# ԿԱՆԱՑԻ ՑԱՆՑԱՌՈՒԹԻՒՆ

Կասակ. 1 արար. Հեղ. Շչեգովի


Թարգմ. Գ. Ր. Ա. Ի. Ե. Ե. Ա. Ն.

Настоящая пьеса, подь заглавіемъ „Женская чепуха“, разрѣшена Г. И. Об. Главноначальствующаго для представленія на сценахъ края.

18 Марта 1903 г. г. Тифлисъ

Предсѣдатель Комитета Ганель

Секретарь Н. Меликъ Нубаровъ



Հիրասննեակ: Աջ, ծախ եւ մէջտեղ դռներ: Զախ պատուհան, աջ պիանինո, պատուհանի մօտ գրասեղան իրա պարագաներով:

## ՏԵՍԻԼ 1

**ՄԻՆԱՅԻԼ ՊԵՏՐՈՎԻԶ** (Փրակով նստած է բազկաթոռի վրայ եւ գիրք է կարդում)

**Մ. Պ.**—Սքանչելի է, որքան լաւ է հասկացել նեկրասովը կանանց բնաւորութիւնը: (Աջ դռնից դուրս է գալիս աղախինը, ձեռին մազեր ոլորելու ունելիք):

## ՏԵՍԻԼ 2

Աղախին և ՄԻՆ. ՊԵՏՐ.

**Մ. Պ.**—Տիրուհին պատրաստ է:

**ԱՂԱԽ.**—Այո: Այսինքն, ո՛չ, նա պատրաստ էր, միայն...

**Մ. Պ.**—Արդէն անտանելի է դառնում: Ի՞նչ է պատահել:

**ԱՂԱԽ.**—Տիրուհուն սկզբում դուր եկաւ սանրել սովորական ձևով, այսինքն դէպի վար, իսկ յետոյ դուր չեկաւ և...

Մ. Պ.— Դձեր չեկաւ:

Ա.ՂԱ.Խ.— Այո, դուր չեկաւ և նա ցանկացաւ սանրել նոր մօդայով, դէպի վեր:

Մ. Պ.— Ասացէք ձեր տիրուհուն, որ ես մի ժամ է սպասում եմ նրան և այլ ևս սպասելու մտադրութիւն չունիմ:

Ա.ՂԱ.Խ.— Լսում եմ:

Մ. Պ.— Ի դէպ՝ հարցրու շվէյցարից, չէ՞ սառել արդեօք կառապանը: Եթէ չէ սառել՝ թող նրան ասէ, որ մենք իսկոյն դուրս կը գանք: (Աղախինը գնում է միջին դռնով):

Մ. Պ.— Իսկ ռը ենք գնում. մի ինչ որ Ֆելիցատա Բերդեակայի մօտ, որին հազիւ միանգամ տեսած լինեմ՝ կեանքումս, որը իրա կիսախելագար ազգականին ամուսնացնում է մի ինչ որ օրիորդի հետ: Ի՞նչ գործ ունիմ ես նրանց հետ. ես նրա, այդ Ֆելիցատայի, ի՞նչն եմ: Յանկարծ կինս ահագին աղմուկ է բարձրացնում՝ գնանք, անպատճառ գնանք, անկարելի է, որ չը գնանք: Շտապով հագուստ է պատւիրում, կառք է վարձում, աղախինն դէս ու դէն է վագեցնում, կարծես տունը կրակ է ընկել և ամենագլխաւորը՝ ինձ էլ ստիպում է նեղւել այս ֆրակի մէջ ահա ամբողջ մի ժամ: Տեսէք, մինչև նա այնտեղ գուզուում է, ես ամբողջ նեկրասովը ծայրից-ծայր կարդացի: Իմ կարծիքով այդ հարսանիքները մի պատճառ են

նոր հագուստ կարելու համար: (Խփում է ժամը 7<sup>1/2</sup>) Օհօ, եօթ և կէսն է, մենք կուշանանք, անպատճառ կուշանանք:

(Բեմի յետևից լսում է Սօֆիի ձայնը՝ «Աննուշկա, Աննուշկա»)

### ՏԵՍԻԼ 3

Աղախին և ՄԻԽԱՅԻԼ ՊԵՏՐՈՎԻՉ

Մ. Պ.— չը, չէ՞ սառել հօ կառապանը:

Ա.ՂԱ.Խ.— Ո՛չ, չի սառել, բայց հայհոյում է շատ վատ խօսքերով:

Մ. Պ.— Յայտնիր տիրուհուն, որ եթէ նա այս բոպէին դուրս չը գայ, ես էլ կը սկսեմ հայհոյել կառապանի նման: (Բեմի յետևից լսում է Սօֆիի ձայնը՝ «Աննուշկան, Աննուշկա:» Աղախինը գնում է աջ):

Մ. Պ.— Կարող եմ ասել, հաւատացնում եմ, ես բոլորը կը ներէի կանանց. դաւաճանութիւնը, սիրահարի հետ փախչելը, գողութիւնը, մինչև անգամ մարդասպանութիւնը, բայց ի՞նչը չեմ կարող տանել, այդ՝ կանացի ցանցառութիւնները են, կանանց այդ անհասկանալի հրճանքները վրդովեցուցիչ հաւաքածուն, երևակայական տխրութիւնները, անտեղի կամակորութիւնները և զանազան ջղային սիւրպրիզները: Ապրում ես և ինքդ էլ չը գիտես թէ ինչ պէտք է լինի քեզ

հետ հինգ բոպէից յետոյ, հարսանիք քարշ կը տան, թէ զոքանչիդ հոգեհանգիստը կը ստիպեն կատարել տալ... Իմ կարծիքով այժմեան ջըղային և մօզնի կանանց հետ ապրելը միևնոյն է՝ թէ խելագարի հետ ընկերանալը: Երբեմն ուշինչ, խօսում, դատում են մարդավարի, յետոյ յանկարծ, մէկ էլ տեսնես՝ սկսեց: (Աջ դռնից դուրս է գալիս Սօֆին ըստի զգեստով եւ երկար սպիտակ ձեռնոցներով, նրան յետետում է աղախինը, տիրուհու վերարկուն ձեռին):

#### ՏԵՍԻԼ 4

ՍՕՖԻ, ԱՂԱԽԻՆ և ՄԻԽԱՅԻԼ ՊԵՏՐՈՎԻՉ

ՍՕՖԻ.—(ուրախ) Դէ, ես պատրաստ եմ, ես պատրաստ եմ, ես պատրաստ եմ: (Սկսում է հագնել վերարկուն):

Մ. Պ.—(վերցնելով ցիլինդրը սեղանի վրայից) Փառք Աստծոյ, կը նշանակի գնում ենք:

ՍՕՖԻ.—(Յանկարծ մի ըսն յիշելով) Դեռ ոչ, մի երկու երեք բոպէ էլ պէտք է սպասել:

Մ. Պ.—Էլի սպասենք դեռ:

ՍՕՖԻ.—Ես կարծում եմ, մի ժամ սպասելուց յետոյ երեք բոպէն մեծ բան չէ:

Մ. Պ.—Լաւ, ի՞նչ մի արտասովոր բան է պատահել...

ՍՕՖԻ.—Արտասովոր ոչինչ, այլ ես՝ յան-

կարծ յիշեցի, որ այսօր բժշկիս կնոջ անւանակոչութիւնն է և անհրաժեշտ է շնորհաւորական հեռագիր ուղարկել:

Մ. Պ.—Այդ ո՞ր բժշկի:

ՍՕՖԻ.—Բժշկիս, որ ամարանոցում ջղային հիւանդութիւնից ինձ բժշկում էր... Մակամէ-եվի, և ես ուզում եմ, որ ձիշտ ընթրիքի ժամանակ հասնի: Աննուշկա, դուք քիչ սպասեցէք, ես իսկոյն: (Ետում է զրասեղանի մօտ: Միխ. Պետր. տխրած նստում է քաղկաթոռի վրայ):

ՍՕՖԻ.—(վերցնում է թուղթը, գրիչը եւ արագ գրում է) «Պաւլովսկ. Կօնիլչեննայա, Տատեանա Մակամէևային... (ըարձը) ա՛յ, ի՞նչ արի:

Մ. Պ.—Ի՞նչ պատահեց:

ՍՕՖԻ.—Ես բոլորովին մոռացայ, որ հագիս ձեռնոցներ ունիմ, ա՛յ ձեռնոցս բոլորովին ապականեցի թանաքով: Պէտք է նոր ձեռնոցների յետևից ուղարկել, չեմ կարող ո՞՞ միայն ձախ ձեռքիս ձեռնոց ունենալ: (Հանում է ձեռնոցը):

Մ. Պ.—Ասա խնդրեմ, խելքդ ո՞ր է:

ՍՕՖԻ.—Այնտեղ, ուր ձերն է: Այժմ բարոյ կարգալու ժամանակ չէ, պէտք է շտապել, ապա թէ ոչ՝ կնշանանք հարսանիքին: (Փողաժանից փող է հանում): Ահա, Աննուշկա, տասն բուբլի, շուտով կառք նստիր, վազիր կամրջի մօտ, ձեռնոցների խանութը, դիտես:

Ան.—Թոյլ տուէք, ի՞նչպէս չը գիտեմ:

ՍՕՖԻ.—Կը գնէք նոյն այս տեսակից՝ 6<sup>1</sup>/<sub>4</sub>, 12 կոճակներով: Ի սէր Աստծոյ, միայն շուտ, որքան կարելի է շուտ, ապա թէ ոչ կուշանանք: (Աղախինը գնում է) Իսկ դուք ի՞նչ էք վազվզում անկիւնից անկիւն, աւելի լաւ կը լինէր, որ խոհանոց մտնէիք և ասէիք խոհարարուհուն, որ պատրաստւի հեռագրատուն գրնալու, կարծեմ հեռագիրը թեք չունի, որ ինքը թռչի: Գնացէք, մինչև ես էլ հեռագիրը պատրաստեմ: Իմացէք, որ մի բոլոր անգամ կորցնել անկարելի է, ապա թէ ոչ, մենք կուշանանք:

Մ. Պ.—(չարացած, դուրս է գնում ձախ դռնով):

ՍՕՖԻ.—(գրածը կարդալով) «Տատեանա Մակավէլեային, Տատեանա Մակավէլեային»... Է՛հ, յետո՛յ... (ծխախոտ է վառում եւ էլի դէն ձգում) «Թանկագին Տատեանա Նիկօլաննա, շնորհաւորում եմ և ցանկանում եմ ձեզ»... Ֆ՛սւ, որքան շաբլօն դուրս եկաւ, (Պատում է եւ ձգում զամբիւղը) Լաւ է այսպէս գրենք. «Թանկագին Տատեանային ամուր գրկում եմ և... և...» Ամուր գրկում եմ, այս էլ բաւականին մտերմական դուրս եկաւ, նրա ազգականն եմ ես, ի՞նչ է, այդպէս չեղաւ (պատում է): Աւելի լաւ է այսպէս... (Սկսում է գրել, քայց յանկարծ մի քան յիշելով, թողնում է եւ քացում սեղանի արկղը): Այս ո՛ր կո-

րաւ, ես դիտմամբ առաւօտեան մի բուրլի դրի այստեղ հեռագրի համար: (Փնտրում է) Այստեղ չէ, այստեղ էլ, այստեղ էլ... Լաւ, յետոյ կը փնտրեմ: (Գրում է եւ կարդում) «Համբուրելով և շնորհաւորելով, ուղարկում եմ ամենայն տեսակի ցանկութիւններ»... Ամենայն տեսակի, ոչ այդ էլ չեղաւ, կարող են ուրիշ տեսակ բացարել այդ «ամենայն տեսակ»-ին: (Պատում է) Աւելի լաւ է, ես կգրեմ... (մտածում է եւ վրձնական կերպով ննուցնում թուղթը) Աւելի լաւ է, ես ոչինչ չեմ գրել, այդ կարծեմ ամենից լաւ կլինի: Ի՞նչ յիմար բան է հեռագրով շնորհաւորելը, քանի որ կարելի է անձամբ ներկայանալ: (նոր ծխախոտ վառելով) Այո, անպատճառ վաղը կը գնամ Պաւլովսկ և անձամբ կը շնորհաւորեմ, նամանաւանդ որ ինձ հարկաւոր է մի շունչ քաշել, զգուցի միօրինակ կեանքից ամեն օր աչքիդ առջ հէնց միայն ամուսինդ է և ամուսինդ, խելագարւել կարելի է: (Շարտում է ծխախոտը եւ նորից սկսում փնտրել) Շատ զարմանալի է, ո՛ր կորաւ փողը: Միթէ՞ Աննուշկան...

## ՏԵՍԻԼ 5

ՄԻԽԱՅԻԼ ՊԵՏՐՈՎԻՉ և ՍՕՖԻ

Մ. Պ.—Գրեցիք հեռագիրը, խոհարարուհին պատրաստ է:

ՍՕՖԻ.—Ո՛հ, ես թողի մտադրութիւնս. ի՜նչ յիմարութիւն՝ հեռագրով շնորհաւորել. վաղը ես անձամբ կը գնամ Պաւլովսկ և ներողութիւն կը խնդրեմ... Հեռագիրը յիմարութիւն է, բանը այժմ դրանում չէ, արկղիկիցս մի ըուբլի է կորել:

Մ. Պ.—Ես չեմ գողացել հօ:

ՍՕՖԻ.—Ձեր կատակները շատ անտեղի են: Ես առաւօտեան դրի այստեղ և այժմ չկայ: Ո՛ւր կարող է կորած լինել:

Մ. Պ.—Ուր որ է, կը գտնւի: Արժէ՞ դատարկ բանի համար անհանգստանալ:

ՍՕՖԻ.—Ո՛հ, դատարկ բան չէ. այժմ մի ըուբլի է կորչում, վաղը կը կորչեն օղերս, միւս օրը պլիւշի վերարկուս... բաւական է, որ այդ անպիտաններին աչքի թող անես:

Մ. Պ.—Անպատճառ անպիտաններ, դարձեալ նրանով կը վերջանայ, որ քսաներորդ աղախինը կը վարձես:

ՍՕՖԻ.—Քսաներորդին, երեսուներորդին, քառասուներորդին կը վարձեմ, բայց գողութիւն իմ տանը թոյլ չեմ տայ: Շուտ ասացէք, օրէնքով ի՜նչ պատիժ է տրուում, երբ փակած սեղանից մի ըուբլի են գողանում:

Մ. Պ.—Ընդհանրապէս գողութեան համար...

ՍՕՖԻ.—Ընդհանրապէս գողութեան համար... Ձեր այդ յիմար «ընդհանրապէսը» թո-

ղէք, ցոյց տւէք օրէնքի յօդածը:

Մ. Պ.—Լաւ, կը նայեմ. յետոյ...

ՍՕՖԻ.—Յետոյ չէ, այլ այժմ. կը բերէք ինձ օրինագիրքը, թէ չէ:

Մ. Պ.—Ձարմանում եմ, ի՜նչ հարկաւոր է քեզ, քանի որ կանանց համար օրէնքներ չը կան սահմանած: (Սօֆին շարանում է, Միխ. Պետր. գնում է ձախ):

ՍՕՖԻ.—Տէր Աստուած, դարձեալ ստիպւած եմ հիասթափուել, իսկ ի՜նչպէս էի հաւատում այդ Աննուշկային, դեռ ուզում էի տօներին նրան հին կապոտս նւիրել: Ձարհուրելի է, երբ մտածում ես թէ որքան անբաւականութիւններ են պատահում մի օրւայ մէջ: Տեսնե՛ք, ով գիտէ ուրիշ բան էլ կայ պակաս. թանաքամանը այստեղ է, օրացոյցը տեղն է, ծծանը նոյնպէս... (վերցնելիս նրա տակը երեւում է մի ըուբլին) Ահա և ըուբլին, այդ ի՜նչպէս է, որ ես առաջ չը նկատեցի. ասենք այդ հարսանիքը այնքան շփոթեցրեց ինձ, որ զարմանալու չէ, որ գլուխս կորցրել եմ:

(Մտնում է Միխ.-Պետր. բաց զիւրքը ձեռքին կարդալով):

## ՏԵՍԻԼ 6

ՄԻՆԱՅԻԼ ՊԵՏՐՈՎԻԶ և ՍՕՖԻ

Մ. Պ.—Ահա, հազար չորս հարիւր...

ՍՕՖԻ.—(ուրախ, ուրախ) Բայց ես արդէն բուժուի՞նք գտայ և, երևակայիր, ահա, այստեղ, ծծանի տակը:

Մ. Պ.—(գիրքը շարտելով) Ասա, ի սէր Աստուծոյ, չէ՞ս ամաչում ինձ այդպէս շարշարելուդ համար: Քիչ է, կարծես, որ ես մի ժամից աւել է սպասում եմ հագնւելուդ, խոհանոց մը տայ խոհարարուհուն նախագգուշացնելու, պահարանը քրքրեցի օրինագիրքը գտնելու և բոլորը իզուր. ի՞նչ է, դ՞ճեր է գալիս քեզ ինձ տանջելը: Եթէ իմանայի, որ այդպիսի հիանալի բնաւորութեան տէր ես...

ՍՕՖԻ.—Եւ ի՞նչ, եթէ իմանայիր որ...

Մ. Պ.—Այդ ձեզ չէ վերաբերում, այդ իմ սեփական կարծիքն է:

ՍՕՖԻ.—Ես գիտեմ այդ ինչ կարծիք է. դուք զղջում էք որ չամուսնացաք Սօֆիա Պերֆիլովայի հետ, ոչինչ որ նրա մի աչքը շիւ է և ձեռները քրտնում են, գոնէ հայրը ահագին հարստութիւն ունի, տներ ունի: Ի՞նչու չէիք այն ժամանակ ասում, որ ձեզ քարէ տուն է հարկաւոր և ոչ կեանքի ընկեր—կին: Օ՛, Տօլստոյը

չատ անդար է, շատ, որ ասել է թէ բոլոր տղամարդկանց պէտք է կախել:

Մ. Պ.—Տօլստոյը և ոչ մի այդպիսի բան, ոչ մի տող չէ գրել:

ՍՕՖԻ.—Պէտք է շնորք ունենալ և տողերի մէջը կարդալ: Տէր-Աստուած, Տէր-Աստուած, և ես պէտք է ապրեմ այս մարդու հետ, որ ստել է մինչև պսակը, ստել է պսակի ժամանակ և ստում է պսակից յետոյ: Ո՛չ, աւելի լաւ է մեռնել, քան այսպիսի կեանքը տանել:

Մ. Պ.—Ի՞նչ, չլինի ուզում էք մորթել ձեզ:

ՍՕՖԻ.—Այո, թէկուզ հէնց մորթել. դուք կարծում էք, ես կը վախենամ: Իսկոյն, ահա հէնց այս դանակով: (Վերցնում է թուղթ կտրելու ոսկրէ դանակը):

Մ. Պ.—Այդ ի՞նչպէս, ոսկրէ դանակով:

ՍՕՖԻ.—Ինչով ուզում է լինի, միայն ես մոռացել եմ, թէ որ կողմն է գտնւում սիրտը՝ աջ թէ ձախ:

Մ. Պ.—Նեղութիւն մի կրէք փնտրելու, կանայք սիրտ չունեն:

ՍՕՖԻ.—Դուք ստոր մարդ էք, որ կարողանում էք այսպիսի բոպէին ծիծաղել մի կնոջ վրայ: (Վայր է ձգում դանակը): Լաւ, ես ինձ չեմ մորթիլ, բայց այս գիշեր ես կը կախւեմ. լսում էք, հէնց այս գիշեր: Տեսնե՞ք, ի՞նչպէս

կը ծիծաղէք դուք, երբ ինձ անա այս պատկերից կախած տեսնէք:

Մ. Պ.—Լաւ արիւր, որ նախազգուշացրիր, ես կը հրամայեմ Աննուշկային, որ վերցնի:

ՍՕՖԻ.—Միկնոյն է, դուքս կը նետուեմ պատուհանից: (Վազում է պատուհանի մօտ, Մ. Պ. նրան քաղաքավարի կանգնեցում է):

Մ. Պ.—Ձը նայած, որ երկտակ փեղկեր են:

ՍՕՖԻ.—Ա՛, դուք շարունակում էք... (շարունակելից սկսում է հազալ): Ուրախացէք, տեսէք ուր հասցրիք ինձ (հազում է). թոքախտի նշոյլներ կային միայն վրաս, բայց դուք գերեզմանին մօտեցրիք ինձ: (Հազալով ընկնում է թիկնաթոռի վրայ):

Մ. Պ.—Ճիշտ սր...

ՍՕՖԻ.—Հապա ի՞նչիցն է այդ հազը: Տեսէք մինչև անգամ խօսել չեմ կարողանում:

Մ. Պ.—Շատ պարզ է, ծխելուց է, շատ ես ծխում:

ՍՕՖԻ.—Լռեցէք, այդ ձեր գործը չէ:

Մ. Պ.—Լռում եմ:

ՍՕՖԻ.—(արտասուքով) Տէր Աստուած, մեռնել ծաղիկ հասակում, սեզօնի ամենալաւ ժամանակը, երեկոյթների ամենատաք միջոցին, նոր հագուստներով ոչոքին չերևցած... ոչոքին... (լալիս է, իստերիկա, Մ. Պ. հովհարում է):

Մ. Պ.—Դէ լաւ, լաւ, Սօֆի, Սօֆի, բա-

ւական է:

ՍՕՖԻ.—Ախ՛, Միկկի, ի՞նչպէս չէք ամաչում, որ ինձ այդպէս տանջում էք: Միթէ չը գիտէք որ այս բաները ինձ համար իզուր չեն անցնում. անա, հէնց այս բոպէին ես բոլորովին ուժասպառ եմ եղած: Դու չը նեղանաս, Միկկի, եթէ ես քեզ խոստովանեմ, թէ սիրտս այս բոպէին ինչ է ուզում:

Մ. Պ.—Ի՞նչ:

ՍՕՖԻ.—Ես... ես ուտել եմ ուզում:

Մ. Պ.—Ուտէ՛լ:

ՍՕՖԻ.—Այո, ուտել. ես ասացի քեզ չէ՛, որ ինձ համար այս տեսարանները իզուր չեն անցնում: Եւ գիտէս ես ի՞նչ կուտէի. սարդին, արտասահմանի լաւ սարդին:

Մ. Պ.—Բայց չէ՞ որ մենք պիտի ընթրենք հարսանիքատանը:

ՍՕՖԻ.—Ես այնտեղ չեմ ուզում ընթրել, ես հիմա եմ ուզում: Քաղցածութիւնից չեմ մեռնելու հօ: (Տնքալով) Ա՛խ Տէր-Աստուած, ինչպէս ուտել եմ ուզում. ինչպէս ես սարդին եմ ուզում: (Աղախինը մտնում է նոր ձեռնոցները քերելով):

ՏԵՍԻԼ 7

ԱՂԱԽԻՆ և առաջինները

ԱՂԱԽ.—Ահա ձեռնոցները:

ՍՕՖԻ.—Դիր այստեղ և իսկոյն գնա սարգին գնիր, մի տուփ արտասահմանի լաւ սարգին: Փողը բաւականութիւն կանի:

ԱՂԱԽ.—Ճիշտ այդքան է քնացել մօտս: Ո՞րտեղից գնեմ, ցածի հարևան խանութից, թէ դարձեալ կամրջի մօտ գնամ:

ՍՕՖԻ.—Ցածում թէ վերևում՝ միևնոյն է, միայն ի սէր Աստծոյ շուտ, անօթութիւնից սիրտըս գնում է: (Աղախինը գնում է):

ՍՕՖԻ.—Ի՞նչ անեմ տանջանքս մոռանալու համար, հ՛ը... մի բան կտորեմ, պատռեմ, ջարդեմ... Ի՞նչ անեմ, դաշնամուր նւագեմ, այ լաւ միտք: (Ծտում է պիանինօի մօտ):

Մ. Պ.—Իրան տուր տասնուչորս շահին:

ՍՕՖԻ.—Լաւ, ի՞նչ անեմ մինչև աղախնի գալը, ձեռքերս ծալած չեմ նստելու, ի՞նչի նման է մեր կեանքը առանց երաժշտութեան: Ա՛խ, ինչ ասես չէի տալ, գէթ մի անգամ ևս լսէի իմ հրաշալի Շոպէնհաուէրին:

Մ. Պ.—Դուք գուցէ Րեդէնհաուէր էիք ուզում ասել, որովհետև Շոպէնհաուէրը փրկափայ է և ինչքան ինձ յայտնի է՝ երբէք համերգներ չէ տւել:

ՍՕՖԻ.—Բոլորովին անուշի մէջ չէ բանը, այլ բանը նրանումն է, որ... մուզիկան մեր կեանքի ամենաբարձր ուրախութիւնն է, նա զովացնում է մեր հոգին և հանգստացնում ջղերը, բացում...

Մ. Պ.—Ախորժակը:

ՍՕՖԻ.—Այո, և ախորժակը: Այդ միայն դուք չէք սիրում մուզիկան: (Սկսում է նսագել)

Մ. Պ.—Նայած թէ ինչ մուզիկա է:

ՍՕՖԻ.—Ինչ տեսակ էլ որ լինի: Մինչև անգամ վայրենիները չեն կարողանում առանց մուզիկայի ապրել: Ա՛յ, մի քանի որ առաջ „Нива“-ի մէջ մի պատկեր կար, Պիկօ... Պիկօ... Տէր-Աստուած, ինչպէս է նրանց անուշը: Պիկօ... Պիկօ... (զրգուած) Ի՞նչպէս է ամենավայրենի մարդկանց անուշը:

Մ. Պ.—Չգիտեմ. Պապուա...

ՍՕՖԻ.—Ամենևին ո՛չ: Եթէ չը գիտէք, կարելի է, կարծեմ, բառարանում նայել:

Մ. Պ.—Չէնց մյս ըօպէիս է քնացել, կարծեմ վաղն էլ կարելի է:

ՍՕՖԻ.—Այո, անպատճառ այս ըօպէին, որովհետև մինչև վաղը կարող եմ մոռանալ: Չէ որ դու ինքդ էիր ասում, թէ պէտք է ինքնակրթութեամբ պարապել: Մի գուցէ դուք ուզում էք, որ ձեր կինը տգէտ քնայ:

Մ. Պ.—Ամենևին էլ չեմ ուզում, որ...

**ՍՕՖԻ.**—Ուրեմն իսկոյն և եթ զնացէք և բա-  
ռարանում գտէք նրանց անունը, ապա թէ ոչ  
կը փշրեմ այս ըոպէին այս վազան: (Յոյց է տա-  
լիս պիանինոյի վրայի վազան):

**Մ. Պ.**—Ի՞նչ տանջանք է (զնում է ձախ)

**ՍՕՖԻ.**—(մ'իայնակ) Տէր-Աստուած, ի՞նչ վայ-  
րենիների մասին կարգացի: (Գլաւիշները փոր-  
ձելով) Պիկօ... Պիկօ... Պիկօ... (յանկարձ յիշե-  
լով) հա՛, հա՛, Զուլու, գուլու, գուլու... (Վալս է  
նւագում եւ երգում) գուլուներ, գուլուներ...

**Մ. Պ.**—(մտնում է հաստ գիրքը ձեռքին):

## ՏԵՍԻԼ 8

ՄԻՆ. ՊԵՏ և ՍՕՖԻ

**Մ. Պ.**—(չարացած) Պ. տառով և ոչ մի  
վայրենի անուն չը գտայ, այլ միայն թթւա-  
ծինների և հանքերի անուններ (կարդալով) Պի-  
կօլին, Պիկրոմլին, Պիկրոտոսկին, (ըղաւելով որ  
պիանինոյի ձայնը խլացնէ) Պիկրօմին, Պիկրօֆիլ,  
Պիկրօլիտ:

**ՍՕՖԻ.**—(Դադարում է նւագելը եւ ամուս-  
նուն տնագելով, նոյն տոնով ըղաւում) Պարագիտ,  
պամպուլի...

**Մ. Պ.**—(գիրքը ցոյց տալով, չարացած) Այս-  
տեղ դրանք չըկան, չըկան այստեղ դրանք:

**ՍՕՖԻ.**—Ո՛չ, այդ դու ես պամպուլին, դու,  
ի՞նչ ես կանգնել և մունետիկի նման գոռում,

ինչ որ վայրենի անուններ տալիս, ումն են հար-  
կաւոր դրանք, մի հարցնող լինի:

**Մ. Պ.**—Բայց չէ՞ որ դու ինքդ խնդրեցիր  
բառարանում գտնել ամենավայրենի մարդկանց  
անունը:

**ՍՕՖԻ.**—Չէ՞ որ ամենավայրենի մարդիկը  
աշխարհիս երեսին Զուլուներն են. լսում էք  
զուլուները:

**Մ. Պ.**—Բայց չէ՞ որ դու ասացիր, որ փնտրեմ  
Պ. տառով և ոչ Զ:

**ՍՕՖԻ.**—Այդ էրբ:

**Մ. Պ.**—Երկու ըոպէ առաջ: (Մտնում է ա-  
ղախինը մատուցարանի վրայ սարդին):

## ՏԵՍԻԼ 9

ԱՂԱԽԻՆ և առաջինները

**ՍՕՖԻ.**—Երկու ըոպէ առաջ շատ բան կա-  
րող էր պատահել: Դէ այժմ սարդինը բերին,  
ուրեմն հարկաւոր է ուտել և ոչ թէ վիճել: Մի  
մոռանաք, որ ուղիղ 8 ժամին է հարսանիքը:  
(Բոլոր զրքերը թափում է ձախ սեղանից, որի  
վրայ եւ դնում է աղախինը մատուցարանը) Այդ-  
պիսով մենք կուշանանք: (Սկսում է ազահու-  
թեամբ ուտել):

**Մ. Պ.**—(Յետ ու առաջ է ման գալիս չարա-  
ցած: Պաուզա:)

**ՍՕՖԻ.**—Չը, ի՞նչ ես աչքերդ չոել վրաս:

**Մ. Պ.**—Ոչինչ, այնպէս, նայում եմ և մը-

տածում, թէ ինչպէս Նեկրասովը լաւ է հասկացել ձեզ-կանանց:

ՍՕՖԻ.—Այդ ինչպէս է հասկացել:

Մ. Պ.—(գետնից վերցնելով գիրքը) Ահա, հէնց այս բոպէին շատ յարմար է այս կտորը.

Ամուսինը վախվախելով դիտում է,

Մտածում և չարացած է,

Ինչպէս կնոջ շղերը հանգստանում

եւ ախորժակն է բացւում:

Հը, չը հաւանեցի՞ք:

ՍՕՖԻ.—Յիմարութիւն: Բայց սարդինը, ա՛յ հիանալի է, միշտ կօնսերվը պէտք է վերցնել ցածի հարևան խանութից. (ուտելով) ճիշտ, սքանչելի սարդին է: Ուտել չե՞ս ուզում, մի հատ, փոքրիկը:

Մ. Պ.—Այդ էր պակաս: (Յետոյ յանկարծ կակոզելով) Լաւ, մի հատ կարելի է, դու այսօր ինձ բոլորովին ուժասպառ արիր: (Նստում է նւերկուան էլ ուտում են)

ՍՕՖԻ.—Վաղուց պէտք է այդպէս անէիր: Ա՛խ, Միկկի, ինչքան լաւ է այսպէս խաղաղ նստել և չը վիճել, չը կուել:

Մ. Պ.—Բայց չէ որ, Սօֆիկ, միշտ դու ես առաջինը սկսում:

ՍՕՖԻ.—Ոչ, դու, միշտ դու:

Մ. Պ.—Դէ, այժմ վիճելու ժամանակ չէ, հարկաւոր է վերջապէս գնալ: (Սրբում է ընրա-

նը եւ վեր կենում: Պատուա) Ասա խնդրեմ, երկամր պէտք է զբաղուես դրանով:

ՍՕՖԻ.—Զարմանալի հարց. ի՞նչ, ուզում ես որ ես ճանապարհին վայր ընկնեմ, թէ եկեղեցուց ուշաթափ դուրս բերեն: Մի՞նչ և այժմ էլ գլուխս պտտուում է:

Մ. Պ.—Յոյս ունիմ որ անօթութիւնից չէ այդ:

ՍՕՖԻ.—Միևնոյն է: Անպատճառ պէտք է մի հանգստացուցիչ բան ընդունել, ապա թէ ոչ, ով գիտէ, յանկարծ մէկ էլ տեսար հիւանդացայ: Ամենալաւը իմ կարծիքով վալերիանի կաթիլներն են: Աննուշկա, Աննուշկա. (Աղախիւնը զալիս է):

## ՏԵՍԻԼ 10

ԱՂԱԽԻՆԸ և առաջինները

Մ. Պ.—Խելքի եկէք, ի՞նչ էք անում, սարդինից յետոյ ո՞վ է լսել վալերեանի կաթիլներ:

ՍՕՖԻ.—Ես մեղաւոր չեմ, որ դուք բոլորովին շղերս քայքայեցիք: Աննուշկա, զնացէք ննջարանս և սեղանի վրայից վերցրէք կաթիլները սրահը և բերէք: Զմոռանաք և զինու բաժակով ջուր բերել: (Աղախինը գնում է):

Մ. Պ.—Կարելի՞ է յուսալ, որ կաթիլներինց յետոյ վերջապէս կը ճանապարհուենք:

**ՍՕՖԻ.**—Անպատճառ, միայն առաջ մի բիշ կվաս կը խմեմ, յետոյ:

**Մ. Պ.**—Կվան... կվան... կվան:

**ՍՕՖԻ.**—Այո, ինչո՞ւ այդպէս կվկվացիք յանկարծ: Կարծեմ, երեխայ չէք, որ չը հասկանաք թէ աղի բանը միշտ մարդու ծարաւը գրգռում է: Օ՛հ, ինչպէս խմել եմ ուզում, ճի, ինչպէս կվաս եմ ուզում:

## ՏԵՍԻԼ 11

ԱՂԱԽԻՆԸ և առաջինները

**ԱԶԱԽ.**—Ահա կաթիլները:

**ՍՕՖԻ.**—Կորիք քո կաթիլների հետ միասին. նախ կվաս բեր ինձ համար, շուտ, ճաշից մի շիշ մնացել է: Կարծեմ դու պէտք է գիտենաս իմ սովորութիւնը, որ աղի բան ուտելուց յետոյ, ես միշտ պէտք է կվաս խմեմ:

**Մ. Պ.**—Լսիր, ասա դռնապանին, թող կառապանին նախազգուշացնի, որ իսկոյն գնում ենք: (Աղախինը գնում է):

**ՍՕՖԻ.**—Մենք վաղուց գնացած կըլինէինք, եթէ դու ամեն մի չնչին բանի համար վիճել չը սկսէիր:

**Մ. Պ.**—Ես չէի վիճում, միայն զարմացայ քո անժամանակ սարդին ուտելուդ վրայ: (Ուղ-

ղում է հայելում փողկապը, Սօֆին սկսում է հագնել ձեռնոցները):

**ՍՕՖԻ.**—Իսկ ինքդ ախորժակով կերար չորս հատ

**Մ. Պ.**—Երեք:

**ՍՕՖԻ.**—Ո՛չ, չորս:

**Մ. Պ.**—Երեք:

**ՍՕՖԻ.**—Չորս, չորս, չորս... Ա՛յ...

**Մ. Պ.**—Էլի ի՞նչ պատահեց:

**ՍՕՖԻ.**—Տեսէք, ձեր պատճառով ձեռնոցս տրաքւեց:

**Մ. Պ.**—Իսկ ձեր պատճառով իմ համբերութիւնը:

## ՏԵՍԻԼ 12

ԱՂԱԽԻՆԸ և առաջինները

**Մ. Պ.**—Չ՛ը, պատրաստ է կառապանը:

**ԱՂԱԽ.**—Կառապանը չարացաւ և կառքը քշեց գնաց:

**ՍՕՖԻ.**—Հապա կվանոր:

**ԱՂԱԽ.**—Կվանոր, կվասը թափւեց:

**Մ. Պ.**—Ի՞նչ անենք այժմ:

**ՍՕՖԻ.**—Ոչինչ, պիտի ուղարկել գելտերեան ջրի համար խանութը:

**Մ. Պ.**—Ո՛չ, այդչեմ ասում, մենք ի՞նչ պիտի

անենք առանց կառքի:

ՍՕՖԻ.— Ոտքով կը գնանք:

Մ. Պ.— Բայց չէ որ կուշանանք:

ՍՕՖԻ.— Բոլորովին էլ չենք ուշանալ, որովհետև հարսանիքը նշանակած է ուղիղ 9 ժամին:

Մ. Պ.— Բայց չէ որ ինքդ ասացիր ուղիղ 8-ին:

ՍՕՖԻ.— Այդ ի՞նչպէս կասէի, քանի որ հրաւիրատոմսի վրայ նշանակած է 9-ին:

Մ. Պ.— Հրաւիրատոմսը ես չեմ տեսել, բայց կասկածում եմ որ այդպէս ուշ լինի նշանակած:

ՍՕՖԻ.— Դուք ուղղակի անտանելի բնաօրութիւն ունիք, փառք Աստուծոյ, որ տոմսակը պահել եմ, ահա ինքնեքդ կը համոզուէք, որ հարկաւոր չէ իզուր տեղը վիճել (փնտրում է սեղանի վրայ) Այս ի՞նչ եղաւ (փնտրում է զամբիւղի մէջ եւ գտնում) Ահա կարգացէք. «Յելիցատա Անդրէկնան խոնարհաբար խնդրում է Ձեզ շնորհ բերել»... (կանգ է առնում, փոքր մտածում եւ յանկարծ ծիծաղում) Հա՛, հա՛, հա՛...

Մ. Պ.— Ի՞նչ պատահեց դարձեալ:

ՍՕՖԻ.— Չես ասիլ հարսանիքը եղել-պըրծել է:

Մ. Պ.— Ի՞նչպէս:

ՍՕՖԻ.— Այո, երէկ է եղել, ես թւերը խառնել եմ: Ա՛յ, ծիծաղ կլինէր, եթէ յանկարծ շը-

նորհ բերէինք, հա՛, հա՛, հա՛... (Աւելի քարձր է ծիծաղում, Մ. Պ. սկզբում չարացած, յետոյ ինքն էլ է սկսում ծիծաղել: Աղախինը փրթկացնում է գոզնոցում: Պատկեր):

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

На основаніи авторскихъ правъ, при постановкѣ настоящихъ 6 пьесъ, изданныхъ Галустьяномъ, съ каждаго акта взывается по три рубля. Неуплатившіе авторскихъ, будутъ преслѣдоваться на основаніи Цензурнаго устава. Адресъ для переводовъ: Тифлисъ, Магазины Гуттенбергъ, для Гр. Аветянь.

Гр. Аветянь

Հեղինակների օրէնքների համաձայն պ. Գալուստեանի հրատարակած այս 6 պիէսները ներկայացնելու համար, ամեն մի արարւածը վարձատրվում է երեք ռուբլիով: Չվճարողները պատասխանատուութեան կենթարկւեն ցենզուրային կանոնադրութեան համաձայն: Փոխադրելու համար հասցէն է. Тифлисъ Магазины Гуттенбергъ для Гр. Аветянь.

Գր. Աւետեան



Գ. ԳԱԼՍՏԵԱՆԻ  
ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Պոմպէյի վերջին օրերը, Յ. Միրզայեանի . 1 50
2. Ասպետ, Վ. Փափազեանի . . . . . — 15
3. Կեանքը ծովերի խորքում. 50 պատկերով Լուսկելիչի, Թարգմ. Ստ. Մալխասեանի . . . . . — 30
4. Տրիլբի, դրամա 4 ար., Թ. Լ. Մելիք-Աղամ. — 25
5. Եադ-աստ, վօդ. 1 արար. Յ. Ղազարեանի . — 25
6. Դարվիներգմ, Դարվիների պատկերով, Ս. Բալազեանի. Բ. տպագր. . . . . — 50
7. Աղնիւ գող, Յ. Մ. Դոստոեվսկու, Թ. Ն. Չ. — 10
8. Ինքնավարութիւն և Զեմստվո, Բէլլոհոնսկու. Թարգմ. Կ. Զալալեանի . . . . . — 15
9. Տնտեսագիտական գրոյցներ. Կարիշևի. Թարգմ. Կ. Զալալեանի. . . . . — 40
10. Къ введенію на Кавказѣ Земскаго Самоуправленія, Кн. Г. М. Туманова. . . . . — 20
11. Գերականութիւն մայրենի լեզուի, Ա. Բ. և Գ. մաս միասին. Ստ. Պալասանեանի . . . . . — 75
12. Ընդհանուր պատմ. Հին-Դար, Վինոգրադովի, Թարգմ. Գ. Խաթակի. . . . . 1 —
13. Եւրոպա և Հայաստան, Ամֆիտէատրովի Թարգմ. Ա. Մխիթարեանի . . . . . — 10
14. Փուչ զաւակ, դրամա 5 գործ. Գ. Ղարաջեանի. — 50
15. Արիւնի աւետարանը, Թարգմ. Տ. Զաւէնի — 25

16-18. Գծագրութեան օրինակներ, Գ. Լեոնեանի  
Ա. մաս. 20 կ. Բ. մաս. 20 կ. և Գ մաս. . — 35

19. Դասագիրքը ընդհանուր աշխարհագրութեան,  
քաղաքական մաս, կազմեց Լ. Բարայեան. — 65

20. Начальная книжка для армян. школь.  
С. Мандиняна. . . . . — 55

21. Կառապան Հենշել, թարգմ. Լ. Բարայեան . — 50

22. Հող և նրա մշակութիւնը, Գ. Ղազարեանի. — 20

23. Դասագիրքը ընդհանուր աշխարհագրութեան,  
Եւրօպա. կազմեց Լ. Բարայեան . . . — 50

24. Սերմ և ցանք, Գ. Ղազարեանի. . . . . — 25

25. Գիքորը, պատկերազարդ մանկական գիրք  
Յովհ. Թումանեանցի . . . . . — 20

26. Ժողովրդական դպրոցների մեթոդիկա, Ռու-  
դէի, գերմ. փոխ. Յ. Տէր. Միրաքեանի 1 50

27-29. Հայկական վայելչագրութիւն և գեղա-  
գրութիւն, Գ. Լեոնեանի, տետրակ Ա. 40 կ.  
տետր. Բ. 40 կ. և Գ. . . . . — 40

30. Ընդհանուր աշխարհագր. դաս. Արեղեանի — 70

31. Սենեօբօս, Համառօտ պատմութիւն քաղա-  
քակրթութեան ամենահին ժամանակ-  
ներից մինչև մեր օրերը. Փրանս. թարգմ.  
Մ. Նուպարեան . . . . . 1 —

32. Հայոց եկեղեցական տարրական դպրոցների  
ուսումնական ծրագիրը. խմբագր. Սիր.  
Տիգրանեանի . . . . . — 40

33. Կլէյն. Գործնական կաթնասնտեսութիւն  
48 նկարով, թարգմ. Ա. Մխիթարեան — 50

34. Բօկլ. Անգլիայի քաղաքակրթութեան պատ-  
մութիւնը, թարգմ. Վարդգէս Աղանեանց . — 75

35. Լոսնկեիչ. Նախամարդու կեանքը, պատկե-  
րազարդ թարգմ. Յ. Թադէոսեան . . . — 25

36. Ընդհ. աշխարհագրութեան դասագիրք. ընա-  
կան մաս, 85 նկարով, Լ. Բարայեանի (յար-  
մարեցրած է և ինքնուսուցման համար) . — 60

37. Ախիլ Լօռիա. Սօցիօլօգիա. Pessimist. — 60

38. Փոթորկից առաջ, վէպ Արխ. Յովհաննիս-  
եանի . . . . . 1 —

39. Գրաբառի հոլովումը և խոնարհումը Ստ.  
Մալխասեանի . . . . . — 25

40. Մովսիսի Խորենացւոյ պատմութիւն Հայոց 1 —

41. Мысли старого служаки, Шеварднадзе . — 25

42. Դասագիրքը ընդհանուր պատմութեան Վի-  
նօզրադովի, մասն Բ. թարգմ. Գ. Սաժակ 1 —

43. Այվազեան Բ. Անիի կործանումը . . . . . 1 —

44. Ժողովրդական թատրօն Արաքսեանի. Ժողո-  
վածու մասն Ա., բովանդակութիւն: 1. Թան-  
գագին համբոյր. 2. Յանկալին և անսպասե-  
լին. 3. Լուսանկարչութեան պատուհաս. 4.  
Բարեւոնեան խառնԱւիետսթիւճ.կուան.  
աղա. 6. Շփոթուած ծառայ . . . . . 1 —

45. Ժողովրդական թատրօն. Արաքսեան. Ժողո-  
վածու մասն Բ., բովանդակութիւն: 1. Գող.  
2. Պաշտօնս է խոմփալ. 3. Զոքանչի գա-  
լուստը. 4. Կրէչինսկի իւրկայով. 5. Սիրա-  
հարուած մայիօր. 6. Արեան դէպք. . . . . 1 —

46. Հայոց գրականութեան պատմութիւն Վ. Փա-  
փազեանի . . . . . 1 50

47. Երիտասարդութեան մեղքեր, Համմոնդի, թ.  
Արայ Արայեան . . . . . 1 —

48. Շարլ Մէրէ, Հիդրա. դրամա, թարգմ. Վ. Փափազեանի . . . . .	— 50
49. Դասագիրք ընդհ. պատմութեան, Վինօգրադովի, մասն գ. թարգմ. Գ. Սաթակ. . . . .	1 25
50. Հասարակական գաղափարները Ռ. Պատկանեանի և Ս. Շահազիզի բանաստեղծութիւններէ մէջ Բ. Իշխանեանի . . . . .	1 —
51. Կենսագրութիւն «Գուտտենբերգի» (մամուլի տակ)	
52. Հայերէն գրագիտութիւն ուսուցանելու բանաւոր նախապատրաստութեան մասին ուսուցիչներէ համար Ղ. Աղայեանի . . . . .	— 10
53. Աղա-Նեզրի. Բանաստեղծութիւններ, թարգմ. Յ. Յակոբեանի երկու հատոր . . . . .	— 50
54-55. Դասընկեր, Ռաշմաճեանի և Զիլիհարեանի Ա. մաս. 50 կ. Բ. մաս. . . . .	— 50
56. Հայ գրողներ Ա. մաս, կաղմ. Ահարոնեան, Աղայեան, Թումանեան և Փափազեան . . . . .	2 —
57. Հայ գրողներ Բ. մաս, կաղմ. Աղայեան, Թումանեան և Փափազեան . . . . .	2 —
58. Ֆօն-Պօլէնց, Գիւլպցի Բիւտնէրը. թարգմ. Ս. Թառայեանց . . . . .	1 25
59. Աստուածապաշտութիւն. 7-րդ տպ. Գիւտ ա. ք. Աղանեանի . . . . .	— 50
60. Նամակագիրք, Գ. ք. Աղանեանի . . . . .	— 60
61. Տէրն ու բանւորը, Տօլստօյի, թարգմ. Ռ. Սան-Ազատ . . . . .	— 20
62. Հայոց Պատմութիւն, մասն. ա. Սանազատի և Վարդանեանի . . . . .	— 50

Միրթօ. Գործը գործ է պահանջում, կատ. երեք գործ. թարգմ. ընագրից Կ. Զալախան . . . . .	40
» Ժօրժ Դանդէն կամ շփոթուած ամուսինը, կատակ. երեք արար. թարգմ. Գ. Սունդուկեան . . . . .	40
» Կատակերգը. թարգմ. Նուպարեան 2 հատ. Մարիկ Լէօ Դարայեան, դրամա մէկ գործ. Շէքսպիր, Արքայ Լիր, ողբ հինգ արար. թարգմ. Մասեհեանցի . . . . .	5 40
» Մակբեթ, ողբերգ. հինգ արար. թարգմանեց Ս. Մալխասեաց . . . . .	20
» Վենետիկի վաճառականը, թատերադրութիւն հինգ ար. թարգմ անդ. Յ. Սան Մասեհեան . . . . .	50
» Ինչպէս կուզէք . . . . .	40
» Օտէլլօ, ողբեր. 5 արար. Շէքսպիրի կենսագր. Թ. Ս. Սուլխանեանց . . . . .	60
Շիլլեր Աւագակներ, ողբերգութ., գերմ. թարգմանուած. Փ. Վարդանեան . . . . .	50
Շիրվանզադէ, Պատուի համար. դրամա 4 գ. Շանթ. Եսի մարդը, դրամա հինգ արար. Պշիբըշևսկի. Երջանկութեան համար, դրամա երեք գործ. թարգմ. Ս. Շխեանց . . . . .	60
Սարգու. Ոգեհարցութիւն, թատերգ. երեք արարուածով, թարգ. Մելիք-Աղամեանց . . . . .	50
Սարգարեան-Արևշատեան. Երազ կամ Օսկան Պետրովիչն Եղեմուճ, ֆէյերիա 1 գոր. . . . .	20
Սունդուկեան Գ. Էլի մէկ գործ, կոմեդիա 5 ար. . . . .	1 »
» Պէպօ, կատակ. երեք արարուած . . . . .	50
» Ամուսիններ, կատակ. չորս արարուած . . . . .	1 »
» Օսկան Պետրովիչն էն կեանքումը, 1 արար. . . . .	30
» Դիշերվան սաբըր խէր է, կատակ. մէկ ար. . . . .	30
» Սաթարալա, կատակ. 4 ար. և 6 պատկ. . . . .	50
» Բանդած օջախ, կատակ. երեք արար. . . . .	50
» Բաղնիսի Բօխչա, կատակ. երկու արար. . . . .	40
» Եւ այլն կամ նոր Դիոգինէս, 2 արար . . . . .	40
Սումբատով, Դաւաճանութիւն, դրամատ. լեզունդա 5 արար. թարգմ. Ալ. Մատուրեան . . . . .	50
Վարդանեան Ա. Անարխիստը, վոդըվիլ 1 ար. . . . .	15
Տրիբլի, դրամ 4 ար. թ. Լ. Մելիք-աղամեան . . . . .	25
» Մեծն Վարդան, ողբերգութիւն 5 գոր. . . . .	50
Ցագարելի, «Սիբիրական» կոմեդիա չորս գործող. թարգմ. Գ. Միրաղեան . . . . .	50
Փանակէս, Նիսիա, վոդըվիլ մէկ արար . . . . .	40
Փափազեան Վ. Ժայռ, դրամա չորս գործ . . . . .	1 »
Փրզրի, Փառանձեմ, կօմ. 4 արար . . . . .	1 »
Արաքսեան, Սիւրպրիզ. վոդըվիլ 1 արար, Հասարակ. կատակ. 2 արար . . . . .	20

467



Դիմել՝ Թիֆլիս, Գուտտեմբերգ պրավաճառանոց

«Ազգային գրադարան»



NL0167515

